ԳԵՎՈՐԳ Դ

ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ - 2014

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ
ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ
ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ
ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ
ԿԱԹՈՒՂԻԿԷ
ԷՋՄԻԱԾՆԻ, ՍԻՆՕԴԻ ՍՐԲՈՅ
ԷՋՄԻԱԾՆԻ ԾԱՆՈՒՑԵՄՔ.

ԸՆԴ ԱՄԲԱՌՆԵԱԼ ՄԵՐ Ի ԳԱՀ
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՅԱՄԻ ՓՐԿՉԱԿԱՆ
1867 ԱԿՆԱՐԿԵԱԼ ՈՒՂԻԻ ՄՏԱՅ Ի
ԿԱՐԵՒՈՐԱԳՈՅՆ ՊԷՏՍ Ի ԺԱՄԱՆԱԿԻՍ
ՅԱՅՍՄԻԿ ՈՒՆԵԼՈՅ ՋՈՒՍԵԱԼ
ՋԲԱՆԻԲՈՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԻՐԹ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆՍ ՄԻ ԲԱՐԻՈՔ
ՅԱՆՁԱՆՅՈՒՄՆ ԵՒ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ
ՀՈԳՒՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ ՀՕՏԻՍ ՄԵՐՈՅ
ՍԻՐԵԼԻՈՅ, ԵՒՍ ԵՒ Ի ՊԱՅԾԱՌՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ, ԵՒ Ի
ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՎՃՏԱԳՆԵԱԼ ՍՐՏԻ
ՄԵՐՈՅ, ՓՈՒԹԱՅԱՔ ՉԵՌՆԱՐԿԵԼ
ՅԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻ Ի ՇԻՆՈՒԱԾ
ՃԵՄԱՐԱՆԻ: ԹԷՊԷՏԵՒ ԻՆՉ ԻՆՉ ԽՈՉՔ
ԽԱՓԱՆՐԿՈՒՔ ՀԱԿԱՌԱԿ ՄԵՐՈՅՍ
ԱԿՆԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱՂՁԱՆԱՅ ԵՒ
ԱՆԽՈՆՋ ՓՈՒԹՈՅ ՄԵՐՈՅ
ՅԱՐԴ ՅԱՄԵՑՈՒՑԻՆ ՁԿԱՏԱՐՈՒՄՆ
ԱՋԳՕԳՈՒՏ ՍԿՍՈՒԱԾՈՅՆ. ՍԱԿԱՅՆ
ԱՀԱ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ ԲԱՐՁՐԵԼՈՅՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԲԱՋՄԻՄԱՍՏ ՁԱՆԻՒՔ
ԵՒ ՏՔՆՈՒԹԵԱՄԲՔ ՄԵՐՈՎՔ ՅԱՒԱՐՏ
ՀԱՆԵԱԼ ՁՆԻՒԹԱԿԱՆ ՎԱՅԵԼՁԱԿԱՆ
ՇԻՆՈՒԱԾ ՆՈՐԻՆ, ՁԱՐԴԻՍ ԸՂՁԻՒ
ՄԵԾԱՒ ՁՀԵՏ ԼԵԱԼ ԵՄՔ՝ ՁԻ ԲԱՅՑԻ
ԱՅՆ ԱՆՇՈՒՇՏ ՅԱՌԱՋԻԿԱՅ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ ՏԱՐԻՈՅՍ,
ԱՌ Ի ՏԵՍԱՆԵԼ ՎԱՂ ԱՒՈՒՐԲՔ
ՁԿԱՏԱՐՈՒՄ ՄԵՐՈՅՍ ՆՊԱՏԱԿԻ:

ՀՐԱՄԱՆԱՒ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԻՈՐԳ Դ.
ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. էջմիածնի ժառանգաւորաց Գէորգեան Ճեմարանի քսանեւհինգամեայ տարեդարձի առթիւ:

Գրեց
Մ. Աբեղեան

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՏՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
1899

9(47.925)
Ա-13
h2
գրբ 2277.25
5761

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

ԳԵՎՈՐԳ Դ
ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Գ հրատարակություն

Սուրբ Էջմիածին
2014

ՀՏԴ 941(479.25):23/28
ԳՄԴ 63.3(2Հ)+86.37
Ա 134

Աշխատասիրել և ծանոթագրել է
Պետրոս Հ. Հովհաննիսյանը

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

Ա 134 Գևորգ Դ. Մեծագործ Կաթողիկոս Ամենայն Հայոց/ Մ. Աբեղյան; Աշխտ. և ծանոթ.՝ Պ. Հ. Հովհաննիսյան.- Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014.- 272 էջ:

Հայ ականավոր լեզվաբան, գրականագետ Մանուկ Աբեղյանի (1865-1944) առավել քիչ հայտնի սույն աշխատությունը հարգանքի ու անսահման սիրո տուրք է ԺԹ դարի կեսերի ամենանշանավոր Հայոց կաթողիկոսներից Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճյանի (1813-1882) խնկելի հիշատակին: Միևնույն ժամանակ այն Գևորգյան Ճեմարանի հիմնադրման թեև համառոտ, սակայն արժանահավատ պատմության վավերագիրն է:
Հասցեագրվում է Հայոց Եկեղեցու և դպրոցի պատմությամբ հետաքրքրվողներին, ընթերցող հանրությանը

ՀՏԴ 941(479.25):23/28
ԳՄԴ 63.3(2Հ)+86.37

Տպագրվում է մեկենասությամբ

ՄԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ

ISBN 978-9939-59-142-1 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2014

ԳԵՎՈՐԳ Դ
ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՎԻՐՎՈՒՄ Է
ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐՈՒՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ
140-ԱՄՅԱԿԻՆ

ՄԵԾԱԳՈՐԾ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿԵՆՍԱԳՐԱՏՈՒՄԸ

Իբրև եկեղեցական, մտավորական ու անհատ՝ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ. Քերեստեճյանը (1866–1882) յուրահատուկ տեղ է գրավում Հայոց Եկեղեցու ու մշակույթի դարավոր պատմության ուղեծրում: Իր օրերում նա անկանգ գնաց հայությանը հուզող մարտահրավերներին ընդառաջ և փորձեց գտնել այնքան անլուծելի ու անհույս թվացող, հայությանը հուզող ամենագլխավոր հարցերը՝ հայապահպանության երաշխիքն ու գոյատևման բանալին: XIX դարի 60-ական թվականներին հայ հասարակական միտքը որոնումների մեջ էր՝ ո՞րն էր ապագայի միակ ու ճիշտ ուղին: Դեռևս պատրիարքության և այնուհետև կաթողիկոսության տարիներին Գևորգ Դ-ն հստակորեն մատնանշում էր այդ ուղին՝ դպրոցը, գիրքը, լուսավորությունը, ազգային ու ընտանեկան անբասիր կյանքն ու գիտակցությունը: Վեհափառ Հայրապետը հիանալիորեն էր պատկերացնում, որ ռազմական սակավաթիվ ներուժ ունեցող ազգի ապագան կարող է առժամանակ լինել ինքնաճանաչողությունն ու ազգային ինքնագիտակցությունը: Իսկ դրանք, նրա կարծիքով, հնարավոր էր ձեռք բերել միմիայն դպրոցի, լուսավորության ու Եկեղեցու միջոցով:

Իր ամբողջ գործունեության ընթացքում նա փորձում էր ընդօրինակել մեծ նախորդների՝ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և Մովսես Տաթևացու ուղեգիծը՝ դպրոցը դարձնել պետականազուրկ, վտանգներով շրջապատված ժողովրդի փրկության ու գոյատևման երաշխիք:

Եվ Վեհափառ Հայրապետն անվարան գնաց այդ շավղով: Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվելուց հետո նա Ս. Էջմիածնի միաբաններից ստեղծել է Ուսումնական հանձնաժողով, որը գործող ու բացվելիք դպրոցների համար մշակել է կանոնադրություն: Իր հայրապետական գործունեության 16 տարիների ընթացքում Գևորգ Դ-ն գյուղական բնականավայրերում հիմնադրել է 100-ից ավելի դպրոցներ: Նրա դպրոցաշինարար գործունեության թագն ու պսակը 1874 թ. հիմնադրված Գևորգյան Ճեմարանն էր՝ բարձրագույն տիպի առաջին դպրոցը հայ իրականության մեջ:

Հայ դպրոցի և մշակույթի պատմության մեջ Գևորգյան Ճեմարանը առանձնահատուկ տեղ է գրավում: 40 տարուց ավելի այն կրթել ու դաստիարակել է բազմաթիվ սերունդներ: Անհնարին է պատկերացնել XIX դ. վերջերի և XX դ. առաջին կեսի հայ մտավոր կյանքն ու Եկեղեցին առանց Գևորգյան Ճեմարանի գործունեության: Այն ըստ էության արևելահայ ամբողջ մշակույթն է, մանկավարժությունն ու դպրոցը, գիտությունն ու հասարակական-քաղաքական կյանքը, ազատագրական պայքարը, Եկեղեցին ու հոգևոր կյանքը: Չկա որևէ բնագավառ, որտեղ Ճեմարանը թողած չլինի իր գործունեության հետքերը: Գևորգյան Ճեմարանը միանգամից բարձրացրել է հայ ժողովրդի մտավոր մակարդակը՝ հասցնելով բարձրագույն, եվրոպական չափանիշներին:

Մանուկ Աբեղյան (1904)

Անկասկած է, որ Գևորգյան Հոգևոր Ճեմարանը երբեք նեղ կրոնական ուսումնական հաստատություն չի եղել, այն շատ ավելին էր, քան անվանումը: Ճեմարանում լայնորեն տեղ էին գտել նաև աշխարհիկ մտայնությունն ու դաստիարակությունը: Եվ պատահական չէ, որ նրա շրջանավարտների մեծ մասը գնաց դեպի դպրոցները, մյուսներն ընտրեցին գիտությունը, մշակույթը, հասարակական-քաղաքական կյանքը և միայն մի փոքր մասը՝ հոգևոր ասպարեզը: Ճեմարանի շրջանավարտների անդուլ, հետևողական աշխատանքի շնորհիվ է, որ ուսումնական հաստատությունը դարձավ հայագիտության ամենաերևելի կենտրոնն աշխարհում: Այստեղ են ստեղծվել բանասիրական, պատմագիտական, բնագրագիտական, աստվածաբանական բազում երկասիրություններ, որոնք դարձել են հայագիտության ոսկե ֆոնդի մնայուն արժեքներ: Հատկապես նշանակալից է Ճեմարանի դերը մանկավարժության ասպարեզում: Նշված պատմաշրջանում Արևելյան Հայաստանի, Անդրկովկասի և Ռուսաստանի հայկական գաղթավայրերի դպրոցների ուսուցիչների գերակշիռ մասը Ճեմարանի շրջանավարտ է եղել:

Գևորգյան Ճեմարանն է Հայոց Եկեղեցին համալրել աստվածաբանական բազմակողմանի կրթությամբ օժտված հոգևորականներով: Վերջին դարերի ընթացքում երբեք Հայոց Եկեղեցին չէր ունեցել նման քանակությամբ ու որակով բարձրակարգ աստվածաբան հոգևորականներ: Ճեմարանավարտ բազում քահանաներ նվիրումով գնացին դեպի քաղաքներն ու գյուղերը՝ նոր և թարմ լիցք հաղորդելու մեր ժողովրդի հոգևոր կյանքին:

Հանրահայտ է Գևորգյան Ճեմարանի սաների դերը նաև գրականության, թատրոնի, գեղանկարչության, երաժշտա-

կան արվեստի, ռազմագիտության, ճշգրիտ գիտությունների և այլ բնագավառներում:

Գևորգյան Ճեմարանը Գևորգ Դ-ի գաղափարների իրականացման հիանալի արդյունքն էր և, հիրավի, ամբողջությամբ արդարացված է նրան տրված «Մեծագործ» պատվատիտղոսը: Սակայն արդարացված չէ այդ պատվատիտղոսը հիմնավորել միմիայն Գևորգյան Ճեմարանի իրողությամբ: Վեհափառի գործունեության ոլորտները բազմազան էին ու նշանակալից և դրանք էլ նույնպես նրան ապահովեցին փառք ու մեծարանք:

Օծվելուց անմիջապես հետո Գևորգ Դ-ն զարկ է տվել եկեղեցաշինությանը: Հանգանակություն է կազմակերպել Մայր Տաճարի վերանորոգության համար և ձեռնամուխ եղել նորոգման աշխատանքներին: 1868 թ. Տաճարի արևելյան կողմում նրա ողջ լայնությամբ կառուցել է կցաշենք՝ եկեղեցապատմական թանգարանի համար, որտեղ ի պահ են տրվել եկեղեցական կիրառական արվեստի բացառիկ արժեքներ: Առաջին ցուցանմուշները տրամադրել է ինքը՝ Վեհափառը: Նորոգել է տվել Ս. Գայանե վանքը, այստեղ կառուցել կամարակապ դարպասը, միաբանների բնակելի շենքերը: Բյուրականում կառուցել է (1872) կաթողիկոսական ամառանոց: Նոր հորինվածքով, միանգամայն նոր եկեղեցի կառուցել Օշականում գտնվող Ս. Մեսրոպ Մաշտոց խոնարհված եկեղեցու տեղում (1873-1879), հուշակոթող կանգնեցրել Վահան Ամատունու գերեզմանի վրա, վերանորոգել տվել բազմաթիվ եկեղեցիներ:

Մյուս բնագավառը, որ անմիջապես հայտնվել է Հայրապետի ուշադրության կենտրոնում, դա անցյալի հայ հոգևոր ժառանգության քիչ հայտնի կամ ընդհանրապես չտպագրված երկասիրությունների հրատարակության անհրաժեշտության հրամայականն էր: Այսպես, նա է հոգացել և նպաստել Զաքարիա սարկավագ Քանաքեռցու «Պատմագրութիւն» (հատ. 1-3, 1870), Աբրահամ Կրետացու «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր շահին պարսից» (1870), Սիմեոն Ապարանցու «Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի եւ Մամիկոնեացն սեռի» (1870), «Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին» (1871), Ուխտանես եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց» (1871), Սիմեոն Երևանցու «Ջամբռ» (1873), Մխիթար Գոշի «Դատաստանագիրք Հայոց» (1880) պատմագրական երկասիրությունների հրատարակությունները:

Անգնահատելի է Վեհափառ Հայրապետի վաստակը կրոնագիտական ու եկեղեցագիտական երկասիրություններ հրատարակելու ուղղությամբ: Նրա հոգողությամբ ու հրամանով են տպագրվել «Նոր Կտակարան» (1867), «Ճաշոց» (1872), «Աւետարան Իւղաբերից չորից Սուրբ Աւետարանչաց» (1875), «Ժամագիրք» (1878), «Մաշտոց» (1879), «Պարտէզ հոգեւոր» (1882) գրքերը:

Գևորգ Դ կաթողիկոսը հմուտ ձայնագրագետ էր: Նա ձեռնամուխ է եղել Հայոց Եկեղեցու բուն եղանակները փրկելու նվիրված գործին: Հայրապետը հետևողական աշխատանք է տարել հայկական բոլոր եկեղեցիներում միակերպ ժամերգություն մտցնելու ուղղությամբ: Նրա անմիջական մասնակցությամբ (ինքն էր երգում) հայտնի ձայնագրագետ – երգահան Նիկողոս Թաշճյանը ձայնագրում է հայոց հոգևոր երգերի ձայնագրյալ գրքերը՝ «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (1874), «Ձայնագրեալ Շարական հոգեւոր երգոց» (1875, 1884), «Ձայնագրեալ քաղուածք օրհնութեանց» (1882):

Նշված վիթխարի աշխատանքներն իրականություն դարձնելու համար Հայրապետը նախապես բարեկարգել է Մայր Աթոռի վթարային ու անխնամ տպարանը, այն

համալրել Վիեննայից, Փարիզից, Ամստերդամից բերված տպագրական ամենանորագույն սարքավորումներով, տառատեսակներով և որակյալ տպագրական թղթով: Իրենց որդիական նվիրվածությամբ Վեհափառին նյութական օգնության ձեռք մեկնեցին Մկրտիչ Սանասարյանը և Հովհաննես Հովնանյանը Մոսկվայից, Հարություն Խալիպյանը Թեոդոսիայից, երիտասարդ Ալեքսանդր Մանթաշյանը Թիֆլիսից: Արդեն 1868 թ. մայիսին նորոգյալ տպարանը սկսում է իր գործունեությունը: Նույն ժամանակ լույս է տեսնում Մայր Աթոռի կրոնական, պատմագիտական, բանասիրական ու բարոյական «Արարատ» ամսագիրը, որը շուտով դարձավ հայագիտական, աստվածաբանական լավագույն հանդեսներից մեկը գիտական աշխարհում: Այն իր շուրջն է համախմբել նախանձախնդիր ու կարող ուժերի: Վեհափառի նախաձեռնությամբ հոդվածագիրներին վճարվել է հոնորար՝ միանգամայն նորություն հայ մտավոր կյանքում:

Հիրավի, վիթխարի ու անսակարկ ծառայություն պաշտելի ժողովրդին և նույնքան էլ համարժեք ուշադրության ու գնահատականի բացակայություն: Անտարակույս, Գևորգ Դ-ի ամբողջական գործունեության վերաբերյալ շրջանառության մեջ գտնվող արձագանքները[1] միայն մտավոր պատկերացում կարող են հաղորդել նրա թողած վիթխարի ժառանգության վերաբերյալ[2], թերևս բացառյալ

1 Տես «Նուագ ի հանդիսավեհ օծումս Տեառն Գէորգայ սրբազնագոյն կաթողիկոսի Ամենայն Հայոց», Սիմֆերոպոլ, 1867: «Հանդէս տօնախմբութեան անուան Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Դ. եւ 2-րդ տարեդարձի բացման Ճեմարանի Մայր Աթոռայ Սրբոյ Էջմիածնի», Վաղարշապատ, 1876: **Վահրամ եպս. Մանկունի**, Գէորգ Դ. եւ իւր ժամանակը (1812-1882), «Վեմ» ամսագիր, Փարիզ, 1933-1937 թթ. հատորները (ծրագրի համաձայն առաջիկայում որպես գիրք կներկայացվի տպագրության) և այլն:

2 «Մուղնի» հրատարակչության կողմից 2004 թ. լույս ընծայված «Վավե-

Մանուկ Աբեղյանը Գևորգյան ճեմարանի սան (1878)

յության դոկտորի աստիճան: Նույն թվականին էլ Գևորգյան Ճեմարանի վարչության կողմից հրավեր է ստացել դասավանդելու հայոց հին և նոր գրականության պատմություն: Այս երկրորդ անգամ Աբեղյանը Ճեմարանում պաշտոնավորել է 16 տարի, ընդհուպ մինչև 1914 թվականը: Մի կարճ շրջանում էլ (1907 և 1909 թթ.) նշանակվել է Ճեմարանի տեսչի ժամանակավոր պաշտոնակատար:

1914 թ. ընդմիշտ թողնելով Էջմիածինն ու Գևորգյան Ճեմարանը՝ Մ. Աբեղյանը հեռանում է Թիֆլիս: Հեռանում է առ Ճեմարանը պատկառանքի ու երախտագիտության զգացումով, հեռանում է լիուլի մարելով իր պարտամուրհակները և որպես օրինաց դաս սերունդներին կտակելով Հայրապետի կենսապատումը:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանի Ուսումնական խորհրդի և Պատմական աստվածաբանության և հումանիտար առարկաների ամբիոնը Ճեմարանի 140-ամյակի նվիրված հոբելյանական միջոցառումների ծիրից ներս երաշխավորելով Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցու երբեմնի սանի՝ Մանուկ Աբեղյանի սույն գրքի հրատարակությունը, լիահույս են, որ դրան կհետևեն նաև Մեծագործ Հայրապետին նվիրված այլ ուսումնասիրությունների ու վավերագրերի ժողովածուների հրատարակություններ:

Իր ժամանակների համար մեծ անհատը մեծ է նաև բոլոր ժամանակների համար: Ասվածն իրավամբ ու ամբողջապես վերաբերում է նաև Գևորգ Դ. Քերեստեճյանին:

Պետրոս Հ. Հովհաննիսյան

Գևորգ Դ.
Մեծագործ կաթողիկոս
Ամենայն Հայոց

Ա.

ԾՆՈՒՆԴ ԵՒ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Գէորգ Դ. կաթողիկոսը ծնուած է 1813 թուի յուլիսի 5-ին Կ. Պոլսի Սամաթիա արուարձանում, մի արհեստաւոր ընտանիքի մեջ: Հայրն էր ատաղձավաճառ (քերեստեճի) Գրիգորի որդի մահտեսի Պետրոս, որ պարապում էր իբրև մինթանճի՝ ենիչերիների համար վերնագգեստ (մինթան) կարելով, իսկ մայրը կոչուում էր մահտեսի Սրբուհի: Բարեպաշտ և ջերմեռանդ ծնողներն իրենց զաւակին տղայ տարիքից մեծացնում էին կրօնական ոգւով, այնպես որ մանուկ Գրիգոր Քերեստեճեանն եօթնամեայ հասակում արդեն, ինչպէս և ժամանակի շատ մանուկներ, բերան գիտէր եկեղեցական շատ աղօթքներ:

1820 թ. սկսուում է Գրիգորի դպրոցական դաստիարակութիւնը Հովսէփ դպրի ձեռով, որը իւր տանը մասնաւոր ուսումնարան էր պահում. երեխաները շաբաթական վարձ տալով դպրին, սովորում էին գրել կարդալ, քրիստոնէական վարդապետութիւն, ժամասացութիւն և շարական երգել:

Աղքատիկ ուսումը, միացած թուաբանական ու քերականական չնչին տեղեկութիւնների հետ, մանուկ Գրիգորի մեջ պիտի զարգացնէր միայն սէր առ եկեղեցին: Եօթ տարի յետոյ Ցարութիւն ամիրայ Պեզճեանի (1) հոգացողութեամբ ու ծախքով: Կարապետ պատրիարքի (2) հսկողութեան տակ, բացուում է Գումգափուի պատրիարքական

եկեղեցու Ժառանգաւորաց վարժարանը, ուր դասախոսում էր ժամանակի հռչակաւոր գիտնական վարժապետ Գրիգոր պատուելի Փեշտիմալճեան (3): Վարժարանը բացուած էր քահանայութեան պատրաստուող պատանիների ու հասակաւոր դպիրների համար: Երկու տարի, 1827-1829 թթ., Գրիգոր Քերեստեճեանն ևս ուրիշների հետ յաճախելով այդ դպրոցը, ուր և ցերեկը ճաշում էին Պեզճեանի հաշուով, իսկապէս այստեղ ստանում է պատուելի Փեշտիմալճեանից իւր բարոյական ու մտաւոր կրթութիւնը և կրօնական եկեղեցական ծանօթութիւնները, թեպէտև, անշուշտ, շատ սահմանափակ ու միակողմանի:

Ուսման ընթացքում իւր ուշիմութեամբ, ջանասիրութեամբ ու համեստութեամբ այնքան գրաւում է իւր պատուելիի և Կարապետ պատրիարքի առանձին սէրն և վայելում նոցա խնամքը, որ 1830 թ. մայիսի 25-ին, երբ արդեն Գրիգորն իւր ուսման ընթացքն աւարտած էր և ստացած իւր վկայականը՝ պատրիարքի ոսկեգիր կոնդակով ու կնիքով, կարգուում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքական փոխանորդարանի քարտուղար և ամենայն ժրաջանությամբ վարում է իւր պաշտօնը չորս տարի, Առաքել աւագ քահանայի (4) և ապա Պրուսացի Պօղոս վարդապետի (յետոյ Կ. Պոլսի Հայոց պատրիարք) փոխանորդութեան (5) օրով:

Բ.
ՎԱՐԴԱՊԵՏ ԵՒ ՔԱՐՈԶԻՉ

Տղայ հասակից ստացած բարեպաշտական կրթութիւնը, որ ետոյ աւելի ևս զարգացած էր իւր դպրոցական շրջանի մեջ, ծնեցնում է պատանի Գրիգորի մեջ ձգտում ու ցանկութիւն հոգևոր կոչման, և նա ուխտում է իւր կեանքը նուիրել իւր եկեղեցու և ժողովրդի ծառայութեանը, ընտրելով յատկապես կուսակրօնութիւնը: Այդ միջոցին հրաժարուում է պատրիարքութիւնից Կարապետ արքեպիսկոպոսը, որի տեղ պատրիարք է ընտրուում Պրուսացի Ստեփանոս արքեպիսկոպոսը, Աղաւնի կոչուած (6): Սա ևս, ինչպէս իւր նախորդը, առանձին հովանաւորում է երիտասարդ Գրիգորին, որին և, նորա ցանկութեան համեմատ, 1834 թուի ապրիլի 7-ին պատրիարքական եկեղեցու մեջ ձեռնադրում է սարկաւագ, իսկ 1835 թուի սեպտեմբերի մէկին կուսակրօն քահանայ՝ Գէորգ անունով:

Գէորգ աբեղան իւր հոգևոր գործունեութիւնն սկսում է քարոզչութեամբ և շատ շուտով կարողանում է իւր ճարտարաբան լեզուով գրաւել ունկնդիրների համակրութիւնը: Նոյն թուի դեկտեմբերի 9-ին պատրիարքը եկեղեցու մեջ, խիստ հաւանելով նորա մի քարոզին, տալիս է նորան վարդապետական գաւազանի մասնաւոր իշխանութիւն:

Գէորգ վարդապետն աւելի ևս մեծ եռանդովը շարունակում է քարոզել Գումգափուի մայր եկեղեցում և ուրիշ եկեղեցիներում: Հազիւ իւր ձեռնադրութեան տարին բոլորած, այնքան վայելում է Կ. Պոլսի ամիրաների և իշխանների սերը, որ նոցա խնդրելով Ստեփանոս պատրիարքը նորան Խասգիւղի Ս. Ստեփանոս եկեղեցու քարոզիչ է նշանակում, նորան յանձնելով միանգամայն և Խասգիւղի եկեղեցին և դպրոցը կառավարելու հոգ:

Այստեղ ահա՛ առաջին անգամ Գէորգ վարդապետի համար բացուում է գործունէութեան ընդարձակ ասպարէզ, և որոշուում է նորա բոլոր գործունեութեան բնաւորութիւնը, որով պիտի ընթանար նա իւր ամբողջ կեանքի ընթացքում, այն է եկեղեցի բարեկարգել, քարոզներով ու մասնաւոր խօսքերով զարթեցնել ժողովրդի մեջ սէր դէպի եկեղեցի, և որ գլխաւորն է՝ ժողովրդի դաստիարակութիւնը մանուկ սերնդի կրթութիւնից սկսել. մի բան որ յետոյ նորան պիտի տար «Դպրոցների պաշտպան» անունը: Անշուշտ շատերն ունեցել են և նոյն այդ ձգտումն ու ցանկութիւնը, բայց շատ քչերին է տրուած այն մաքրակրօն կեանքը, մնացած հոգեբուխ խօսքերի շնորհքի հետ, որ վառում է քարոզչի ունկնդիրներին աստուածային կրակով, և նորա խօսքերը իբրև դատարակ ծնծղայ չեն հնչում, այլ գործի են փոխանակուում: Եթէ մի կողմից Գէորգ վարդապետի քարոզչական համբաւը խուռն բազմութիւն էր միշտ բերում եկեղեցի լսելու նորան, միւս կողմից նորա խօսքը թափանցում է լսողների սիրտը և շատերը յօժարակամ յանձն են առնում իրենց կարողութիւնից մաս հանել յօգուտ եկեղեցու շինութեան և կրթութեան: Այսպէս յիշենք միայն, որ Խասգիւղի գլխաւոր ամիրաներից մեկը, Մկրտիչ Ճեզաիրլեան (7), Գէորգ վարդապետի խօսքից յորդորուած իւր հովանաւորութեան տակ է առնում դպրոցը, շէնքը շինում. իսկ Գէորգ վարդապետը

իւր հասկացութեան չափով բարեկարգում է դպրոցը, ըստ կարելւոյն պիտանի ուսուցիչներ կարգում և դպրոցը խալիֆայական դրութիւնից հանում, լեզուներ և ուրիշ ուսմունքներ մտցնելով և գրադարան բանալով: Բայց որ գլխաւորն է, նա հոգ է տանում և աղջկերանց կրթութեան համար, բաց է անում և օրիորդաց դպրոց, և այս այնքան վաղ ժամանակներում, երբ աղջիկների կրթութիւնն աւելորդ և նոյն իսկ վնասակար բան էր համարուում:

Գէորգ վարդապետն այն կուսակրօն բնաւորութիւններից չէր, որոնք վստահ չլինելով իրենց վրայ, երկար ժամանակ մի տեղում ու մի պաշտօնի մեջ չեն սիրում մնալ, այլ թափառում են այսօր այստեղ, վաղն այնտեղ, ոչ մի գործի հիմք չդնելով, կամ չյարատևելով իրենց սկսած գործի մէջ և գլուխ չհանելով իրենց աշխատանքը: Նա սիրով երկար տարիներ և գուցէ իւր ամբողջ կեանքը, կըմնա Խասգիւղում, հոգալով այնտեղի ժողովրդի հոգևոր պիտոյքը, բայց հանգամանքը փոխուում է և չորս տարուց յետոյ նա ստիպուած է լինում թողնելու իւր գործը:

Այդ ժամանակները բողոքական քարոզիչները Ամերիկայից առաջին անգամ եկել էին Կ. Պոլսի քրիստոնեայ հայերի մեջ քրիստոնէութիւն քարոզելու: Նոր դադարած էր այն շարժումը, որ Հայոց մէջ մի քանի տարի առաջ ուղղուած էր կաթոլիկութեան ուղղութեան դեմ՝ յարուցանելով հայ եկեղեցուց անջատուածների համար հալածանք և աքսոր 1827- 1828 թուին: Ռուս-տաճկական պատերազմից յետոյ Ադրիանապոլսի դաշնագրութեամբ ապահովուած հռովմէական հայերն աքսորից վերադարձել էին և մինչև անգամ իրենց առանձին գլուխն ու քիչ յետոյ, 1835-ին, իրենց պատրիարքն ունէին (8): Հայերի աչքը վախեցած էր օտար եկեղեցիների որոսորդութիւնից, և այժմ իրենց բոլոր ուշադրութիւնը դարձրին նորեկ բողոքականների վրայ:

Սոցա դէմ մաքառելու համար յատկապէս պատրիարք էր ընտրուած Մարգուանի առաջնորդ Յակովբոս եպիսկոպոսը (9): Սա, չխրատուած նոյն իսկ քրիստոնէութեան պատմութիւնից, որ հալածել կնշանակէ տարածել, և ոչ իսկ իւր մօտիկ ժամանակակից, թէ ինչպէս կաթոլիկ հայերի հալածանքը նորանով վերջացաւ, որ կաթոլիկների համայնքը Հայոց եկեղեցուց անջատուեցաւ, բողոքականութեան առաջն առնելու համար նոյնպէս խստութիւնների դիմեց, նզովեց հրապարակաւ բողոքականութիւնն ու Լութերի վարդապետութիւնն և բողոքականութեամբ խմորուածներին Փոքր Ասիա աքսորելու տուաւ: Գէորգ վարդապետն այդ բուռն միջոցներին համամիտ չէր իւր բնածին լուսամիտ հասկացողութեամբ, այլ ընդհակառակն բողոքականութեան դէմ մաքառելու բուն զենքը համարում էր դպրոցն ու ժողովրդի դաստիարակութիւնը, որով և բողոքականներն էին գործում հայոց մեջ և գրաւում հայերին: Պետք էր կանոնաւոր դպրոցներ բանալ և ձրի ուսում տալ աղքատ հայ մանուկներին, աղքատներին ու որբերին խնամել, անգործներին պաշտօն տալ: Սակայն պատրիարքն սկզբում այս կրթական զենքը ձեռ չէր առնում, այլ միայն պատուհասող գաւազանը:

Գէորգ վարդապետը, որ չէր գործադրում խիստ միջոցներ, կասկածելի դարձաւ պատրիարքի աչքին, իբրև բողոքականութեան դէմ անտարբեր մնացող մէկը և երբ նա պատրիարքի ձեռը չմատնեց բողոքականութեան հարողներից մի քանիսին՝ աքսորելու համար, պատրիարքը հրամայեց նրան իբրև աքսոր երթալ Պերա քարոզչութեան, որ այդ ժամանակ պատուաւոր պաշտօն չէր համարուում: Գէորգ վարդապետը պատրաստ էր իւր նոր պաշտօնատեղին փոխադրուելու, լաւ իմանալով, որ պաշտօնը չէ, որ մարդուս փառաւորում է, այլ մարդն է, որ պաշտօնը բարձրացնում է, երբ մի կողմից Խասգիւղի ամիրաներն ու ժողովուրդը գրգռուեցան, չուզելով բաժանուել իրենց սիրելի վարդապետից, և դիմեցին պատրիարքին իրենց թողնել իրենց վարդապետին, իսկ միւս կողմից Միջագիւղի ամիրաներն ու իշխաններն ուզելով օգտուիլ հանգամանքից և Գէորգ վարդապետին իրենց քարոզիչ ունենալ, խնդրեցին պատրիարքին իրենց համար քարոզիչ նշանակել նորան: Պատրիարքն տեսնելով այս համակրանքը, որ ունէր Գէորգ վարդապետը ժողովրդի մեջ, յետ կանգնեց նորան Պերա աքսորելու հրամանից, բայց և միանգամայն իւր պատիւը պահելու համար չթողեց վարդապետին իւր հին պաշտօնի մեջ, այլ 1840 թ. մարտի 2-ին ուղարկեց Միջագիւղ, որն այդ ժամանակ ամիրաների բնակավայրն էր, ինչպէս և Խասգիւղը:

Շուտով Յակոբոս պատրիարքն էլ, երբ Անգլիայի դեսպանը պաշտպան կանգնեց բողոքականներին, համոզուեցաւ, որ բողոքականութեան դէմ կռուելու համար հարկաւոր է դպրոցներ բանալ, որոնց կարիքն արդէն 18-րդ դարու վերջերից սկսած զգացուել էր Կ. Պոլսի հայոց մեջ, և կրթութեան, գործն այնքան առաջ էր գնացել, որ մինչև անգամ հիմուել էր Իսկիւտարում 1838-ին, մի բարձրագոյն դպրոց Ս. Երուսաղէմայ ճեմարանը: Այս դպրոցի պահպանութեան և զարգացման համար շատ էր աշխատում պատրիարքը, բայց ժամանակի ամիրաները թշնամութիւն ունենալով ճեմարանի հիմնադրի, Պալեան Կարապետ ամիրայի (10) դէմ, ոչ մի նպաստ չեն տալի, իսկ երբ պատրիարքը արհեստաւորների օգնութեանն է դիմում, ամիրաները բոլորովին հրաժարվում են արհեստաւորների հետ մանակցութիւն ունենալուց, դպրոցի պահպանութեան մէջ: Սկսուում է ժողովրդի հասարակ դասակարգի և ամիրաների մէջ կռիւ, որը վերջը պիտի Տաճկահայոց սահմանադրութեան տա-

նէր, բայց որի անմիջական հետևանքն այն է լինում, որ Յակոբոս պատրիարքը ստիպում է հրաժարուել: Իւր նախորդ Ստեփանոս պատրիարքը վերստին կոչւում է այդ պաշտօնին 1840 թ. հոկտեմբերի 28-ին, և Գէորգ վարդապետն Ազգային Գերագոյն ժողովի որոշմամբ գնում է Արմաշ իբրև հրաւիրակ պատրիարքի, իսկ նոյն թուի դեկտեմբերի 12-ին նոյն ժողովի ընտրութեամբ և պատրիարքի հաւանութեամբ ստանձնում է պատրիարքական փոխանորդութեան պաշտօնը, որը վարում է մինչև 1843 թ. յունուարի 22-ը: Սակայն երիտասարդ Գէորգ վարդապետը իւր այս նոր պաշտօնի մէջ չի թողնում իւր հին պաշտօնը, Միջագիւղի քարոզչութիւնը և այստեղի դպրոցի հոգաբարձութիւնը, որով յաջողվում է նորան գրաւել Միջագիւղի ամիրաների սէրն ու յարգանքը, ինչպէս և ունէր արդէն Խասգիւղի ամիրաներինը: Իսկ իւր մեծաւորի, Ստեփանոս պատրիարքի համակրութիւնն արդէն շատ վաղուց վայելում էր, այնպէս, որ 1841 թ. յունուարի 15-ին պատրիարքը տալիս է նորան վարդապետական ծայրագոյն իշխանութիւն և եպիսկոպոսութեան վկայական, թէպէտ և անմիջապէս չի յաջողվում նորան գալ Ս. Էջմիածին ձեռնադրուելու համար: Նոյն սէրը վայելում է նաև Աստուածատուր պատրիարքից (11) և ապա Մատթէոս պատրիարքից (12), որ և մեծ ժողովրդականութիւն ունէր և կոչուած էր այդ դժուար պաշտօնին՝ ժողովրդի և ամիրաների միջև՝ ազգային գործերը պատրիարքի հետ միասին վարելու իրաւունքի համար ծագած խռուութիւնն իւր ժողովրդականութեամբ վերացնելու:

Գ.

ՊՐՈՒՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Գէորգ վարդապետը Մատթէոս պատրիարքի օրով չկարողացաւ վարել իւր փոխանորդութեան պաշտօնը: Նա հիւանդանում է, և պատրիարքը Միջագիւղի Մաքսուտ և Ճանիկ ամիրաների (13) խորհրդով ուղղարկում է նորան Պրուսա, հանքային ջերմուկները՝ բժշկուելու: Այստեղ կարճատև ժամանակ մնալով՝ վարդապետն այնքան շուտով կարողանում է գրաւել քաղաքացոց սէրը, որ նոքա հանրադրութեամբ խնդրում են Մատթէոս պատրիարքին նորան իրենց առաջնորդ կարգել: Պատրիարքը ընդունում է ժողովրդի խնդիրը և Գերագոյն ժողովի հաւանութեամբ 1844 թ. օգոստոսի 2-ին Գէորգ վարդապետը Պրուսայի առաջնորդ է կարգուում, ուր և ուղևորուում է նա հոկտեմբերի 7-8-ին՝ սուլթան Աբդիլ Մեջիդի (14) հրովարտակն ստանալուց յետոյ: Ընդունելութիւնը լինում է մեծ հանդիսով ու թափորով. խուռն բազմութիւնն ընդառաջում է. տեղի նահանգապետի կողմից նորա թիկնապահը առաջնորդի առաջն է բերում, ըստ սովորութեան, ոսկեթել ծածակոցով զարդարած նժոյգ առաջնորդի համար:

Գէորգ վարդապետը Կ. Պոլսի ամիրաների ու ժողովրդի սէրը վայելելուց յետոյ իւր գործունէութեամբ, այստեղ արդէն գտել էր իւր բուն պաշտօնավայրը, ուր նա պիտի

մնար, մինչև իր կաթողիկոս ընտրուիլը, մի անգամ միայն կարճատև միջոց թողնելով այդ պաշտօնը Կ. Պոլսի պատրիարքութիւնը վարելու համար:

Իր ժամանելու երկրորդ օրը պաշտօնական այցելութիւններ տալով նահանգապետին, Ռուսաց, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպաններին և փոխայցելութիւններն ընդունելուց յետոյ անմիջապէս սկսում է հովուել իր հօտը:

Ինչ է առաջնորդի պարատականութիւնը: Իր բանաւոր հօտը կառավարել նորա կարիքների համեմատ: Պրուսան մեծ մասամբ մի թրքախօս քաղաք էր, ուր հայ քահանաներն անգամ լաւ հայերէն խօսել չգիտէին, և ուր հայ ժողովրդի հայութիւնը մեծ մասամբ միայն հայ քրիստոնէական եկեղեցու հետ սերտ կապուած լինելովն էր որոշուում: Հասկանալի է, որ սրտացաւ ու հասկացող առաջնորդի հոգսն այն պիտի լինէր, որ միջոցներ ձեռք առնէր իր հօտի մէջ հայախօսութիւն մտցնելու: Այս է եղել Գէորգ վարդապետի առաջին ու մեծ հոգսը Պրուսայում, և այդ թրքախօսութեան դէմ դարմանն անշուշտ դպրոցով պիտի լինէր: Ոչ շատ տարիներ առաջ նոյն դարմանն էր գտել նոյն ժամանակի ամենամեծ մարդը, հոգելոյս Ներսէս կաթողիկոսն իր եպիսկոպոսութեան օրով մի ուրիշ մեծ թեմի համար (15): Նոյնը գտնում է և Գէորգ վարդապետը իր թեմի համար:

Արդարև, կային Պրուսայում երկսեռ դպրոցներ, բայց ողորմելի նախնական դրութեան մէջ: Հայ մանուկները թիւրքական ձևով ժողովուած մի սենեակի մէջ, որ դպրոցի ամբողջ շէնքն էր կազմում, հազիւ հայերեն տառերը ջոկել էին սովորում, առանց հասկանալու կարդացածի իմաստը և առանց հայերեն լեզուով մի երկու նախադասութիւն կազմել կարողանալու: Վաճառականներն և արհեստաւորները մի երկու տարի դպրոց ուղարկելուց յետոյ իրենց զաւակներին, շտապում էին դպրոցից հանել արհեստաւորի կամ վաճառականի մօտ ուղարկելու: Գէորգ վարդապետն իր գործն սկսում է երկսեռ դպրոցները բարեկարգելով, որին նա արդէն վարժ էր Խասգիւղի քարոզչութեան ժամանակից: Հարկաւոր էր նախ դպրոցի համար շէնք: Դրամ գտնելը դժուար չէր նորան, ինչպէս ամեն մեծ մարդու համար: Նա Կ. Պոլսում շատ ծանօթ ու բարեկամ հարուստ ամիրաներ ունէր, որոնք նորա համար պատրաստ էին իրանց օժանդակութիւնը չխնայելու: Եւ շուտով նոցա նուիրաբերութեամբ յաջողում է վարդապետին դպրոցի վայել երկյարկանի շէնք կառուցելով, ութ յարմարաւոր սենեակներով: Դպրոցի համար, ժամանակի համեմատ՝ քիչ ու շատ պատրաստուած վարժապետներ ու վարժուհիներ են բերել տրուում Կ. Պոլսից: Բայց այդ ամենը դեռ գրաւական չէին յաջողութեան համար: Հարկաւոր էր հոգի, եռանդ ու ոգևորութիւն ներշնչել թէ՛ վարժապետների, թէ՛ աշակերտների և թէ՛ ծնողների մէջ, և Գէորգ վարդապետն այդ եռանդն ունէր ուրիշին տալու համար ոչ միայն եկեղեցու բեմից քարոզելով, այլ և ընտանիքների մէջ և ուրիշ տեղերում ուսուցանելով:

Ամենայն օր դպրոց այցելելով իր ներկայութեամբ ազդում էր նա ուսուցիչների պարապմունքների վրայ, անձամբ հարցումներ տալիս և յատուկ ուշադրութիւն դարձնում հայախօսութեան վրայ, յառաջադէմներին գովում, թոյլերին խրախուսում: Ուսումն ամենքի համար էր հարկաւոր. աղքատ աշակերտներին պէտք էին դասարանական պիտոյքներ՝ տալիս էր, այլ և դրամ ու հանդեռ:

Ասել չի ուզիլ, որ առաջնորդի այս առանձին հոգացողութիւնը առանձին սէր է զարթեցնում ժողովրդի մէջ դէպի դպրոցը, և դպրոցի աշակերտների թիւը կրկնապատկվում է: Բայց այդ դեռ բաւական չէր հայախօսութիւնը քա-

ղաքի մէջ տարածելու. դեռ շատ ու շատ երեխաներ կային որոնք, ոչ թէ ծնողների աղքատութեան, այլ տգիտութեան պատճառով դպրոց չէին յաճախում և անկիրթ էին մնում. և ահա Գէորգ վարդապետը իւր քարոզներով այնքան կարողանում է ազդել ժողովրդի վրայ, որ արհեստաւորներին ու վաճառականներին համոզում է որոշում կայացնելու՝ որ մինչև դպրոցը չաւարտեն և առաջնորդի ստորագրութեամբ վկայական չունենան, այնպիսի տղայոց չընդունեն իրենց մօտ աշակերտ: Այս առաջին մեծ քայլն էր. այնուհետև արդէն հեշտ էր երկրորդ մեծ քայլն անել, յանդիմանելով և նոյն իսկ կրօնական պատիժ նշանակելով այն ծնողների համար, որոնք հոգ չէին տանում իրենց որդւոց կրթութեան վրայ, յաջողել հայոց դպրոցում ուսումը պարտադիր դարձնել ամենքի համար:

Այդ անդուլ գործունէութեան ու եռանդի հետևանքն այն է լինում, որ կարճ ժամանակում տղայոց դպրոցի աշակերտների թիւը 500-ից անցնում է, իսկ օրիորդաց դպրոցինը՝ 400-ից: Մեր ժամանակ մեր երկրի համար այդ շատ մեծ գործ չէ: Բայց պէտք է երևակայել, թէ մի թիւրքական քաղաքում ինչքան մեծ ջանք պիտի գործ դրած լինի վարդապետն այն ժամանակում, որպէսզի այդքան աղջիկներ մի տեղ ժողովէ: Եւ Գէորգ վարդապետը ոչ մի բան ձեռից բաց չէր թողնում ուսումը ժողովրդի մէջ սիրելի դարձնելու համար: Նա շատ լաւ գիտէր, թէ ինչպէս ամեն հայ ծնող մխիթարուում էր, երբ տեսնում էր ժամում իւր զաւակի փոխ ասելը, կամ լսում նորա շարականը: Որչափ ևս առաւել մեծ պիտի լինէր այդ մխիթարութիւնը, երբ առաջնորդը հրամայե, որ Հռիփսիմեան և Գայիանեան կոյսերի տօներին աղջիկները երգեն ժամերգութեաբ ու պատարագի միջոցին, կամ Ծննդեան և Զատկի ճրագալուցին տղաների հետ կարդան Դանիէլի գիրքը, որի ընթերցումն ամեն հայ ծնողի

Գևորգ վարդապետ Քերեստեճյան
(Պրուսայի հոգևոր առաջնորդ)

փափաքելի է իր զաւակի համար: Այս ամենի հետևանքն այն է լինում որ շուտով դպրոցի շէնքը բաւականութիւն չէ տալիս և կարիք է զգացուում, ուրիշ նոր երկսեռ դպրոց բանալու: Արդարև, այդ դպրոցների մէջ շատ բան չէին սովորեցնում, գրել կարդալ, սրբազան պատմութիւն, թուաբանութիւն, վայելչագրութիւն, աղջկերանց նաև ձեռագործ, և ապա, իբրև առանձին դաս հայերէն խօսակցութիւն: Բայց այդ ևս քիչ չէր իր ժամանակի և տեղի համար, մանաւանդ, երբ այդ լինում էր բարեկարգ ձևով: Շուտով հայ դպրոցների բարեկարգութեան համբաւը հռչակուում է ամբողջ քաղաքի մէջ, այնպէս որ տեղում ապրող եւրոպացիք, հիւպատոսներ և նոյնիսկ հարուստ յոյները՝ իրենց դպրոցներն ուղարկելու տեղ հայոց դպրոց են ուղարկում, իրենց զաւակներին, միանգամայն նիւթապէս նպաստում հայոց դպրոցներին: Գէորգ վարդապետը սիրելի էր ոչ միայն հայերին, այլ և օտարներին: Երկու տարուց յետոյ առաջնորդի բարի անունն ու բարեկարգ կառավարութեան համբաւը այնքան բարձրանում է, որ 1846 թ. յունիսի 11-ին սուլթան Մեջիդից ստանում է Իֆթիխարի (գոհունակութեան) ականակուռ շքանշան:

Աշակերտների հոգևոր բարոյական կրթութեան հետ մեծ ուշադրութիւն է դարձնում աշակերտների միջոցով և ընտանիքների մէջ հայախօսութիւն մտցնելու: Բայց այդ հեշտ չէր: Դպրոցը նոյն իսկ իր սաներին, որոնք մանկութիւնից տանը, փողոցում և նոյն իսկ դպրոցում թուրքերէն էին խօսում, հեշտութեամբ չէր կարող հայերէն խօսել սովորեցնել, ինչքան էլ ուսուցիչները պատուիրէին հայերէն խօսել և թիւրքերէնն արգելէին: Բայց Գէորգ վարդապետը դորա բնական դարմանը գտել էր: Դպրոցում հայախօս երեխաների թիւը շատացնելու համար, իր հովուութեան առաջին տարին հենց, իր վիճակի հայաբնակ գիւղերն այ-

ցելելուց յետոյ, հետը տասներկու մանուկ էր բերել Պրուսա, իւր հաշուով պահելու: Նոքա պետք է սովորէին դպրոցում, իրենց գիտերը վերադառնալու համար, բայց և միանգամայն հայախօս լինելով՝ պետք է թիւրքախօս երեխաների հետ խաղի ժամանակ հայերէն խօսէին և բնական ճանապարհով տարածէին հայ լեզուն: Երբ դպրոցի մէջ հայախօսութիւնն արդէն մտել էր, սկսում է առանձին ուշադրութիւն դարձնել ժողովրդի հայախօսութեան վրայ: Նախ քահանաներին խստիւ արգելում է թիւրքերէն խօսելը, և առաջ տանելով՝ փիլոն և աւագութիւն է տալիս նոցա, որոնք քաջ հայերէն խօսում էին և նախանձախնդիր էին հայախօսութեան: Մանուկներին պատուիրում է, որ տանը իրենց փոքր եղբայրներին ու քոյրերին և նոյն իսկ ծնողներին հայերէն սովորեցնեն, և այնուհետև իւր եկեղեցական իշխանութիւնը ձեռք առնելով՝ խստիւ արգիլում է և նոյն իսկ եկեղեցական պատիժ է նշանակում՝ եկեղեցում և առաջնորդարանում թիւրքերէն խօսելու համար: Անշյուշտ, ընտանիքի մէջ և շուկայում խօսողների համար պատիժ դնել ու հրաման տալ չէր կարող, բացի հայրական յանդիմանութիւնից և յորդորից, որով և նորան յաջողում էր միշտ իւր նպատակը գլուխ հանել, մանաւանդ այն շրջանների մէջ, ուր անձնական երթևեկութիւն ունէր նա:

Իւր այս գործունէութեան մէջ, հարկաւ, առանց արգելքների պատահելու չէր: Հայ ժողովրդի մէջ հնուց տարածուած մի ախտ է, որ երբ մի տեղ մի վարդապետ առաջնորդ է դնում, ինչքան էլ բարի ձգտումներ ու գործ ցոյց տայ, որովհետև ամենքի խաթրով գնալ չի կարող, պատրաստ ունի հակառակորդներ, այս կամ այն աղան, որոնք գրգռում են ժողովրդին, շփոթութիւն հանում, մտքեր պղտորում, ստորագրութիւն ժողովում առաջնորդին հեռացնելու համար: Նոյնը հանդիպեց և Գէորգ վարդապետին իւր առաջնորդութեան առաջին տարիները հենց: Բայց դեռ խռովարարները, որոնք արժանի չեն անունով յիշուելու, իրենց դժգոհութիւնը չէին ատակած (չէին կարողացել) պատրիարքին յայտնելու, որ Գէորգ վարդապետի բարեկամներին յաջողում է խռովութիւնը վերացնել, և նա մնում է ժողովրդի սիրելին և իւր տեղում:

Դ.

ԵՊԻՍԿՈՊՈՍ

Շուտով ժողովուրդը ցանկանում է իւր սիրելի առաջնորդին եպիսկոպոսացած տեսնել: Եւ Գէորգ վարդապետն, որ արդէն 1841 թուից իվեր ունէր պատրիարքից ստացած եպիսկոպոսութեն վկայական, այժմ 1847 թուին Պրուսայի ժողովրդից ստացած հանրադրութեամբ նոր ուղեւորուում է Կ. Պոլիս այնտեղից Ս. Էջմիածին գնալու, որ եպիսկոպոս ձեռնադրուի՝ իբրև Պրուսայի ժողովրդի առաջնորդ: Շատերն են այդ հանրագիր վկայականով գալիս եպիսկոպոս ձեռնադրուելու մի վիճակի համար, ուր նոքա այլ ևս երկար չեն մնում, գերադասելով վիճակի առաջնորդի ծանր լծից Կ. Պոլսից մի եկեղեցու քարոզչութիւն: Բայց Գէորգ վարդապետը դոցանից չէր: Նա Պրուսայի վիճակի վրայ էր ձեռնադրուելու և այնտեղ էլ պիտի մնար, մինչև պատրիարք ընտրուիլը. պատրիարքութիւնից յետոյ էլ այնտեղ պիտի վերադառնար, մինչև ազգը աւելի մեծ պաշտօնի կոչէր:

Յունիսի 7-ին մեկնում է Կ. Պոլսից Տրապիզոնի, Կարինի և Ալեքսանդրապոլի վրայով Ս. Էջմիածին գալու: Յունիսի 29-ին հասնում է Ալեքսանդրապոլ և երեք օր, ժանտախտի պատճառով, կարանտինում է մնում: Այդ միջոցին երջանկայիշատակ Ներսէս Ե. կաթողիկոսը Թիֆլիսում էր: Գէորգ

վարդապետն Ալեքսանդրապոլի առաջնորդարանում է բնակում, ուղարկելով կաթողիկոսին Պրուսայի ժողովրդի հանրագիրն և Ստեփանոս ու Մատթէոս պատրիարքների տված եպիսկոպոսութեան վկայականները:

Մի քանի օրից յետոյ կաթողիկոսից կոնդակ է ստանում, որով վարդապետի ազատ կամքին էր թողնում, թէ ուզում է՝ Ալեքսանդրապոլ մնար մինչև իւր վերադառնալը Թիֆլիզից, թէ չէ՝ Էջմիածին կամ Թիֆլիզ գնար: Վարդապետը պատասխանում է. «Ես պարտիմ զիրաման Ձեր պաշտել և ոչ զկամս իմ, հրամայեցէք ինձ բացարձակ զբարեհաճ կամս Ձեր»: Կաթողիկոսն, որի սուր հայեացքից ժամանակի ոչ մի անցք ու գործք չէր փախչում, արդէն վաղուց գիտէր Գէորգ վարդապետի մասին և կամենում է շուտով տեսնել նորան, ուստի և յուլիսի 27-ին ինքնագիր կոնդակով նորան իւր մօտ Թիֆլիզ է հրաւիրում: Վարդապետը գնում է. Մեծ Կաթուղիկոսը ոտքի կանգնելով գրկում, համբուրում է ապագայ կաթողիկոսացուին, ասելով. «Յառաջ քան զմարմնոյդ ծանօթութիւն, հոգի քո և սխրագործութիւնք ծանօթ են ինձ»: Իրօք ծանօթ էր Կաթողիկոսին նորա հոգին, որ Հայաստանից դուրս մի հեռաւոր վիճակում նոյն շաւղով էր ընթանում, որով ինքը Կաթողիկոսն էր ընթացել իւր եպիսկոպոսութեան ժամանակ, և ապա կաթողիկոսական աթոռի վրայ ևս նորա շաւղով պիտի ընթանար, շարունակելով Մեծ Կաթողիկոսի ձեռնարկութիւնները:

Տասնումեկ ամիս Կաթողիկոսը պահում է վարդապետին իբրև հիւր Թիֆլիսում, միշտ սեղանակից անելով իրեն և իւր այցելութիւնների ժամանակ հետը տանելով նորան՝ ինչպէս Վրաց մայր թագուհուն՝ հայազգի Թամարին և իշխան Վորոնցովին (16) այցելելիս, և ապա 1848 թ. յունիսի 24-ին իրեն հետ նորան, մի կառքով միասին, ճանապարհ է ընկնում դեպի Էջմիածին, ուր յաջորդ ամսի 11-ին ձեռնա-

դրում է նորան եպիսկոպոս Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մէջ:

Գէորգ եպիսկոպոսը, ինչպէս և շատ եպիսկոպոսներ, որ Թիւրքեայից եկած նոր ձեռնադրուում են, մեծ ցանկութիւն և փափաք ունէր ուխտի գնալու Մայր Աթոռի մերձակայ սրբավայրերը, բայց Վաղարշապատի տօթագին եղանակից տենդով բռնուում է, ուստի և շտապում է հեռանալ Այրարատեան դաշտից, ճանապարհ ընկնելով վերադառնալու իւր վանքը:

Տենդի պատճառով գիշերում է Օշականում, համբուրում է Ս. Մեսրոպի գերեզմանը, անցնում է Աշտարակ, ուր Ներսէս կաթողիկոսի տանը կաթողիկոսի հրամանով հիւրասիրուում է իրեն ճանապարհ դնող չորս եպիսկոպոսի ու երեք վարդապետի հետ, և ապա Մուղնու Ս. Գէորգի վանքն ուխտ անելով՝ ճանապարհ է ընկնում Ալեքսանդրապոլի, Կարսի, Կարնի ու Տրապիզոնի վրայով, ուր 12 օր կարանտին է մնում, և սեպտեմբերի 28-ին հասնում է իւր վիճակը: Ընդունելութիւնն այս անգամ աւելի հանդիսաւոր ու շքեղ էր, օտարների և եւրոպացիների մասնակցութեամբ, քան առաջին գալուստին: Հօտն արդէն ճանաչում էր իւր սիրելի հովուին, որի երկար-ժամանակեայ բացակայութիւնից վերադարձին էր սպասում անհամբեր:

Գէորգ եպիսկոպոսն այժմ աւելի մեծ եռանդով շարունակում է իւր գործը: Ամենքը գոհ էին նորանից: Ոչ մի գժտութիւն հովուի և իւր հօտի մէջ: Սակայն նոյն խաղաղութիւնը չէր վայելում մերձակայ Կուտինայի (Քեօթահիա) վիճակը, որ ծփում էր սովորական խռովութեան մէջ: Պատրիարքարանը Գէորգ եպիսկոպոսին է յանձնում և այդ վիճակի առաջնորդութիւնը 1851 թ. մայիսի 10-ին: Նա ընդունում է սիրով և յաջորդ տարին այցելելով այս վիճակին, իւր խաղաղարար բնաւորութեամբ վերացնում է յուզումը, հաշտեցնում է հօտը իւր հովիւ Պետրոս վարդապետի հետ, որին և յանձնուում է դարձեալ այդ վիճակի կառավարութիւնը, ու վերադառնում է Պրուսա:

Առաջնորդն իւր հօտի դէտն ու տեսուչն է և հոգևոր շինութեան հոգացողը: Նա, ինքն անարատ լինելով, ամենայն օր արթուն ու պատրաստ պիտի լինի կրթելու իւր հօտը անարատ բարոյականութեան մէջ, տգէտներին ուսուցանելով, թշուառներին ու վշտահարներին մխիթարելով: Ամենքի աչքը նորան են դարձած խեղճութեան մէջ, մանաւանդ ժողովրդական մեծ աղէտների ժամանակ և այսպիսի երկու մեծ աղէտ ունեցաւ Պրուսան Գէորգ եպիսկոպոսի առաջնորդութեան օրով, մեծ երկրաշարժ ու հրդեհ:

Եպիսկոպոսը բացակայ էր իւր հօտից, երբ 1855 թ. փետրուար և մարտ ամիսներում սոսկալի երկրաշարժից փլատակներ են դառնում Պրուսայի շատ շէնքեր. եկեղեցի ու մզկիթ, կամուրջ, տուն կործանուում է, և աւերմունքից ազատուած ժողովուրդը մնում է աղքատ և առանց պատսպարանի, մերկ ու քաղցած: Բազմաթիվ հայ ընտանիքներ երկրաշարժից վտանգուած, թողնում են Պրուսան ու Պոլիս լցուում: Հարկաւոր էր, թէ Պոլիս եկած այս թշուառներին օգնել և թէ քաղաքում մնացողներին: Ո՞րտեղից: Եպիսկոպոսն ինքը հարստութիւն չունի, որ բաժանէ, և ժողովրդի մէջ եղբայրներին օգնելու գիտակցութիւնն այնքան զօրեղ չէ: Պէտք էր կակղեցնել Կ. Պոլսի հարուստ ամիրաների քարեղէն սրտերը, դռնէդուռ շրջելով, սորան ու նորան անձամբ դիմելով և իւր հօտի թշուառ ու անել դրութիւնը նկարագրել պէրճախոս լեզուով: Եւ Գէորգ եպիսկոպոսը սակաւ նեղութիւն չկրեց ու սակաւ ժամանակ չաշխատեցաւ, հարուստների դռները բախելով: Բայց շնորհիւ այն սիրոյ ու համակրանքի, որ ունէր նա Կ. Պոլսի ժողովրդի մէջ, և յատկապէս իւր բարեկամ Ճանիկ ու Մաքսուտ ամրիաների

ձեռնտուութեամբ, կարողացաւ նոյն իսկ մի յանձնաժողով կազմել, մի նորութիւն հայոց մէջ, Պրուսայի կարոտեալներին օգնելու համար: Այնուհետև շտապեց իւր վիճակը հոգեպէս միսիթարելու իւր հօտն ու կրթութեան հոգը տանելով: Կամուրջները խորտակուած էին, երկու թաղերի հաղորդակցութիւնը կտրուած, իսկ դպրոցն ու եկեղեցին գետի մի կողմում էին: Մինչև դանդաղ կառավարութիւնն քաղաքի երթևեկութիւնը վերականգնելու հոգը կտանէր, հարկաւոր էր միւս թաղում դպրոցի համար առանձին շէնք վարձել, որպէս զի մի գուցէ ուսման ընդհատումը իւր սկսած գործի յառաջադիմութեանը խանգարէր և այնուհետև սկսեց հոգալ եկեղեցու վերանորոգութեան համար, որի կամարները կործանուած էին: Քիչ հոգսեր չէին այդ, բայց և հենց այդ հոգսերն էին, որ Գէորգ եպիսկոպոսի անունն ավելի բարձրացրին, այնպէս, որ նա 1858 թ. մայիսի 18-ին Մատթէոս կաթուղիկոսի հետ կաթուղիկոսական կանդիտատ ընտրվելու բարձր պատուին արժանացաւ: Սակայն այնուհետև էլ երկար չմնաց Պրուսայում:

Ե.

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔ

Հասարակ դասակարգի և ամիրաների միջև Յակոբոս պատրիարքի օրով ծագած կռիւը շարունակուում էր և նորա յաջորդների՝ Ստեփանոս, Աստուածատուր ու Մատթէոս պատրիարքների օրով: Արհեստաւորը կամենում էր իւր իրաւունքն ինքը բանեցնել, իսկ ամիրան իւր դարևոր իրաւունքից պատրիարքական գործերի վրայ ազդելու և առաջնորդներ նշանակելու արտօնութիւնից հրաժարուել չէր ուզում: Խռովութիւններն մերթ մեղմանում, մերթ սաստկանում էին. բանդարկութիւն, աքսոր միացած էին այդ ժողովրդական յուզումներին: Արդարև, ժողովրդական Մատթէոս պատրիարքին առժամանակ յաջողեցաւ 1844 թուին կուսակցութիւնները յաշտեցնել և ամիրաներից ու արհեստավորներից կազմուած մի վարչական ժողով հաստատել, և շնորհիւ մեծ ազդեցութեան տէր Ճէզաիրլեան Մկրտիչ ամիրայի, հակառակ միւս ամիրաների ցանկութեան, կարողացաւ առժամանակ մնալ պատրիարք և մինչև անգամ 1847 թուին Բ. Դռան հրամանով եկեղեցականներից Հոգևոր ժողովը և ամիրաներից, արհեստաւորներից ու վաճառականներից Գերագոյն կոչուած ժողովը հաստատել տուաւ, և այսպիսով ազգային սահմանադրական և ընտրողական վարչութեան հիմը դրաւ, բայց շուտով

նա ևս պէտք է ամիրաների դրդելով՝ Բ. Դռան ստիպմամբ հրաժարուէլ, որովհետև աւելի ժողովրդի կողմն էր բռնում, քան ամիրաների: Սակայն ժողովուրդը իւր իրաւունքները ձեռք էր բերել արդէն , ուստի և Մատթէոսը պատրիարքի տեղը, հակառակ ամիրաների ցանկութեան, ընտրուեցաւ վերստին Յակովբոս պատրիարքը, որ և ժողովրդի իրաւունքների պաշտպան էր և տասը տարի, մինչև 1858 թ. վարեց իւր պաշտօնը: Արդէն Մատթէոսը կաթողիկոսը ընտրուած և հաստատուած էր, որ Յակովբոս պատրիարքն ևս հրարժարուեցաւ ծերութեան պատճառով, և 1858 թ. հոկտեմբերի 17-ին, մի ընդհանուր ժողովով, որին ներկայ էր նորընտիր Մատթէոս կաթողիկոսը, պատրիարք ընտրուեցաւ Գէորգ եպիսկոպոսն և տասն օից յետոյ, տէրութիւնից հաստատուած, մեծ հանդիսով Պրուսայից Պոլիս բերուեցաւ: 1461 թուականից ի վեր, երբ առաջին անգամ սուլթան Մեհեմմէդ Բ-ի (17) օրով Պրուսայի առաջնորդ Յովակիմ եպիսկոպոսը Օսմանեան պետութեան հպատակ հայոց հոգևոր և աշխարհական գլուխ կարգուեցաւ, այս առաջին անգամն էր,- ինչպէս Գէորգ պատրիարքը սուլթան Աբդիլ Մեջիդին ներկայացած ժամանակ ասում է,- Պրուսայի առաջնորդը հրավիրում է անմիջապէս առաջնորդութիւնից պատրիարք լինելու:

Հեշտ ժամանակում չէր կոչուած Գէորգ եպիսկոպոսը պատրիարքութեան պաշտօնին: Մատթէոսի վերջին տարուց արդէն, ինչպէս ասացինք, հաստատուած էր մի տեսակ սահմանադրական վարչութիւն՝ Հոգևոր և Գերագոյն ժողովներով, որոնց անդամներն երկու տարին մի անգամ պետք է փոխուէին: Բայց գրեթէ ամեն անգամ էլ ընտրուում էին նոյն մարդիկը, որոնք կարծես, սեփականել էին ազգային վարչութիւնը: Սահմանադրութիւնը շատ տարրական էր և առանց որոշ կազմակերպութեան ու կանոնադրու-

Գևորգ եպիսկոպոս Քերեստեճյան
(Կ. Պոլսի Հայոց պատրիարք)

թեան, ուստի և ոչ մի փոփոխութիւն չէր մտցրել ազգային վարչութեան եղանակի մէջ: Իշխանութիւնը դեռ շարունակ ամիրաների ձեռքին էր մնում: Ապարդիւն էին անցնում Յակովբոս պատրիարքի օրով եղած փորձերը՝ այդ ժողովի իրաւունքներն ու պարտականութիւնը որոշող կանոնադրութիւն կազմելու համար: Գէորգ պատրիարքին էր մնում ջանալ սահմանադրական կանոնադրութիւնը կազմել և հաստատել տալու գործը: Նա այդ նպատակով մի քանի անգամ ժողովի հրաւիրեց ամիրաներին, արհեստաւորներին ու վաճառականներին՝ եկեղեցականների հետ, և վերջապէս յաջողեց կազմել ժամանակի հասկացող եկեղեցականներից ու աշխարհականներից մի մեծ հանձնաժողով, որ պիտի պատրաստեր Ազգային Սահմանադրութեան կանոնադրութեան ծրագիրը: Մեծ մասամբ լուսամիտ երիտասարդներ էին այդ յանձնաժողովի անդամները՝ Նիկողայոս Պալեան, Գրիգոր Օտեան, Գրիգոր Աղաթոն, Կարապետ Իւթիւճեան և ուրիշները , որոնք մեծ եռանդով աշխատեցին, և 1860 թուականի սկզբին արդէն պատրաստ էր մշակուած ծրագիրը, որի մէջ որոշուած էին պատրիարքի, առաջնորդների, վարչական ժողովների իրաւունքներն ու պարտքերը, ինչպէս և իրար հետ յարաբերութեան եղանակը: Իրաւունքը տրուած էր ամբողջ հայ ժողովրդին: Ժողովների անդամներին ընտրութիւնն ամեն դասակարգից պիտի լինէր անխտիր:

Մինչ այդ՝ կրքերը յուզված էին: Քսան տարուց ի վեր սկսուած կռիւը հասարակ դասակարգի և ամիրաներիկ միջև՝ իւր վախճանին պիտի հասնէր: Ամիրաները ամբողջ երկու հարիւր տարիների ընթացքում պատրիարք նշանակել տալու ու փոխելու, առաջնորդներ նշանակելու և հանելու, մի խօսքով սուլթանների՝ յանուն Հայոց եկեղեցու տուած եկեղեցական ու աշխարհական առանձնաշնորհումները բա-

նեցնելու իրաւունքներն իրենց ձեռն էին ժողովել: Այժմ նոքա պիտի զրկուէին այդ իրաւունքից: Վերջին ճիգը պետք էր թափել, որ գլուխ չգար Սահմանադրութիւնը, որ վերջ պիտի տար շահախնդիր կամայականութեանը: Եւ այդ ճիգը թափեցին: Կազմուեցաւ երկու կուսակցութիւն. Սահմանադրութեան պաշտպանները, մեծ մասամբ երիտասարդներ, իրենց **լուսաւորեալ** էին կոչում, իսկ Սահմանադրութեան հակառակորդներին, մեծ մասամբ ամիրաներ, **խաւարեալներ**: Այս վերջինների բոլոր ջանքն ուղղուած էր պատրիարքի դէմ. կարծում էին, որ եթէ պատրիարքին հարաժարեցնեն, Սահմանադրութիւնը գլուխ չի գալ:

Շատ ժողովներ ու աղմուկներ անելուց յետոյ, վերջապէս մարտի 18-ին 1860 թ. մի ժողովի մէջ վճռում են պատգամաւորներ ուղղարկել պատրիարքին, որ հրաժարուի: Պատրիարքը հարաժարուելու պատրաստակամութիւն է յայտնում, ձանձրացած աղմուկներից ու ամիրաների կողմից կրած ընդդիմադրութիւնից իւր ջանքերի համար, մանաւանդ, որ «լուսաւորեալների» կուսակցութիւնն էլ գոհ չէր պատրիարքից. որովհետև նա, թեպէտ և սահմանադրութեան կուսակից, հակառակ էր պատրիարքական որոշ իրաւունքներ կրճատելուն, ինչպես ծրագրուած էր կանոնադրութեան մէջ: Նա յաջորդ օրն իսկ անմիջապէս ուղարկում է Բ. Դռանը իւր հրաժարականը, որը, սակայն, ուշադրութեան չի առնուում: Յուզումը սաստկանում է. հասարակ դասակարգը, մանաւանդ Միջագիւղցիք, Խասգիւղցիք, ու գաւառի պանդուխտները, չեն ուզում պատրիարքին հրաժարուած տեսնել, իսկ միւս կողմից շուտով լինում է պատրիարքարանում խռովայոյզ ժողով՝ պատրիարքութեան համար խորհելու: Եւ հենց այդ ժողովի վերջում էլ, երբ ծեծ ու ապտակների վրայ՝ ժողովականներից շատերը հեռացած էին, ընտրում են Ադրիանուպօլսեցի Սարգիս եպիսկոպոսին պատրիարք (18), չնայելով, որ Բ. Դուռը դեռ չէր ընդունած Գէորգ պատրիարքի հրաժարականը և մտադիր էլ չէր ընդունելու: Դրութիւնն աւելի խճճւում է: Նոր պատրիարք էր ընտրուած, իսկ հին պատրիարքը դեռ պաշտօնի մէջ էր և պատրիարքարանումն էր բնակուում: Սակայն Գէորգ պատրիարքը խռովութիւններին վերջ տալու համար ապրիլի 20-ին գնում է Բ. Դուռը և անձամբ խնդրում, որ իւր հրաժարականն ընդունեն, ու այնուհետև պատրիարքարան չդառնալով՝ իւր քրոջ տանն է ապրում:

Բ. Դուռը, տեսնելով պատրիարքի պնդելն իւր հրաժարականի վրայ, վերջապէս ապրիլի 28-ին ընդունում է նորա հրաժարականը: Սուլթանի կողմից 2000 դահեկան ամսական թոշակ է սահմանուում նորան, և ապա յուլիսի 25-ին սուլթանից ստանում է Մէճիդիէի շքանշանի երկրորդ աստիճանը: Սարգիս եպիսկոպոսը հաստատուում է պատրիարքութեան մէջ և 1860 թ. մայիսի 24-ին Ընդհանուր ժողովի մէջ եկեղեցականների ու աշխարհականների խուռն բազմութեան ներկայութեամբ, ընդունում է Սահմանադրութիւնը: Թեպէտ և այնուհետև շատ շուտով, տարի ու կէս չանցած հակասահմանադրական ընթացքի պատճառով, ստիպուում է հրաժարուել: Աթոռը բաւական ժամանակ թափուր է մնում, մինչև Զմիւռնիայի առաջնորդ Պօղոս եպիսկոպոս Թաքթաքեանն (19) ընտրուում է պատրիարք (1863 թ.):

Զ.
ԿՐԿԻՆ ՊՐՈՒՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Գէորգ արքեպիսկոպոս պատրիարքութիւնից հրաժարուելուց յետոյ՝ մի առժամանակ հանգստանալու համար մնում է Կ. Պոլսում, մի քանի ամիս վարելով սահմանադրութեամբ հաստատուած Կրօնական ժողովի նախագահութիւնը, և այնուհետև 1861 թ. հոկտեմբերի 31-ին կրկին ստանձնում է Պրուսայի առաջնորդութիւնը, ինչպէս մեկնելու ժամանակ այնտեղի ժողովրդին խոստացել էր, պատրիարքութիւնից հրաժարուելու դէպքում այնտեղ վերադառնալ:

Պրուսան կարիք պիտի ունենար շուտով այդպիսի քաջ հովուի, որովհետև երկու տարուց յետոյ՝ 1863 թ. սեպտեմբերի 27-ին այդ քաղաքը ենթարկուում է իւր երկրորդ մեծ աղէտին: Մի օրուա մէջ կրակը լափում է քաղաքի մեծ մասը. համայնական շէնքերից Հայոց Ս. Աստուածածին եկեղեցին, առաջնորդարանը, մօտակայ միւս եկեղեցական շէնքերը, Գէորգ եպիսկոպոսի շինած ուսումնարանը, երկսեռ ծխական դպրոցները ոչնչանում են. աւելացրէք դորա վերայ և հայ բնակիչների 506 տուն: Թշուառութիւնը մեծ էր: Հարկաւոր էր մխիթարել և օգնել տարաբախտներին և ամենայն ինչ նորից շինել: Ուստի առաջնորդը յաջորդ տարին ամբողջ Կ. Պոլսում է անց կացնում դարձեալ հարուստների

դռան մուրալու իւր հօտի կարիքների համար: Աղետեալներին առաջին օգնութիւնը հասցնելուց յետոյ, ամենից առաջ ուշադրութիւն է դարձնում կրկին դպրոցի վերայ. պէտք էր չընդհատել ուսումը: Կիսաւեր եկեղեցին ժամանակաւոր յարմարեցրած դպրոց է դառնում, մինչև 1865 թուին ամենից առաջ ձեռնարկում է դպրոցի եռահարկ շէնքին: Առաջնորդի ժողովարարութիւնը յաջող էր անցած: Նոյն իսկ սուլթան Աբդիլ Ազիզը (20), որ արդէն 1862 թուի ապրիլին Պրուսայում եղած ժամանակը հայոց առաջնորդի կատարած շքեղ ընդունելութեան հանդեսի համար[1] մեծ ընծաներ էր տուած առաջնորդին և նուէրներ հայոց դպրոցներին, այժմ էլ 50. 000 դահեկան է նուիրում ի նպաստ Պրուսայի հայոց դպրոցի շինութեան, որ 1866 թ. փետրուարին արդէն պատրաստ, օրհնուում է, յանուն իւր շինողի Գէորգեան կոչուելով: Այժմ դպրոցն է դառնում ժամանակաւոր եկեղեցի, և առաջնորդը ձեռնարկում է եկեղեցու շինութեան կից թանգարանով, գանձարանով ու փոքրիկ զանգակատնով: Եկեղեցու խախտուած շէնքը քանդել է տալիս ու նորից հիմնարկում: Տաճիկ կառավարութիւնից յաջողվում է եկեղեցու շինութեան համար նոյնպէս ձրի ստանալ արքումի մերձակա անտառից հարկաւոր փայտեղէնը: Շատ կարճ ժամանակու այդ գործն ևս գլուխ է գալի. քանի որ եկեղեցու շէնքի վրայ հին սովորութեամբ անձամբ աշխատում էր ոչ միայն քրիստոնեայ ժողովուրդը՝ տղամարդ, կին, աղջիկ, երեխայ, այլ և հենց ինքը առաջնորդը հասարակ բանուոր դարձած՝ քար էր կրում: Հարկաւոր էր շտապել և տարի-

[1] Գէորգ եպիսկոպոսն այդպիսի շքեղ ընդունելութիւն էր արած և 1845 թ. Ռուսաց մեծ իշխան Կոստանդին Նիկոլայեւիչին, արժանապէս հրաւիրելով նորան յունիսի 24-27-ին Պրուսայի Հայոց առաջնորդարան: Մեծ իշխանն ի նշան սիրոյ եւ համակրանքի նուեր է տալիս առաջնորդին մի ձուաձեւ, մեծադիր եւ ականակուռ թանկագին մատանի, որ այժմ պահուում է Մայր Աթոռի թանգարանում:

ների գործը ամիսների ընթացքում գլուծ բերել, որովհետև եկեղեցու շինութեան ընթացքում Գէորգ արքեպիսկոպոսը, որի անունն արդէն մեծ էր մանաւանդ իւր հօտի այս վերջին աղէտի ժամանակ ցոյց տուած ջանքերով, ոչ միայն օգոստոսի սկզբին Կ. Պոլսի Հայոց կաթողիկոսական ընտրելի էր դարձած, այլ և 1866 թուի սեպտեմբերի 17-ին Մայր Աթոռում գումարուած համազգային ժողովի մէջ միաձայն Ամենայն Հայոց Կաթուղիկոս էր ընտրուած (21): Դեկտեմբերի 2-ին Կ. Պոլսի Ռուսաց դեսպանը՝ Իգնատիև (22), որին Գէորգ արքեպիսկոպոսն անձամբ ծանօթացել էր մի ամիս առաջ սեպտեմբերի 1-ին, դեսպանի Պրուսայում եղած ժամանակ այցելելով նորան և փոխադարձ այցելութիւն ստանալով,- յայտնում է Հայոց պատրիարքարանին, թէ Գէորգ արքեպիսկոպոսը հաստատուած է Ռուսաց կայսեր կողմից Ամենայն Հայոց Կաթողիկոս: Պէտք է երևակայել իւր առաջնորդին սիրող ժողովրդի ոգևորութիւնը, երբ նորընտիր Կաթողիկոսը իւր ձեռքով այդ ամսի 11-ին օրհնում էր նորակառոյց եկեղեցին: Թէպէտ և ցաւում էր հօտը, որ իւր հովուից պիտի զրկուեր. բայց և ուրախ էին, որ նա կոչուած էր լինելու Լուսաւորչի արժանաւոր ժառանգ, որ Հայաստանեայց եկեղեցու հոգսերի բոլոր բեռը պիտի կրէր և լուսոյ Մայր Աթոռից արթուն հսկէր իւր մեծ հօտին:

Է.

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԳԱԼԸ

Գէորգ արքեպիսկոպոսի ընտրութիւնը 1866 թ. նոյեմբերի 23-ին հաստատում է Ալէքսանդր Բ կայսրը շնորհելով հայրապետին վեղարի ականակուռ խաչ և Ալէքսանդր Նևսկու կայսերական ասպետական շքանշանը: Հայոց պատրիարքարանի խնդրով սուլթանն իսկոյն արձակում է օսմանեան հպատակութիւնից Կաթողիկոսին, և պատրիարքարանն շտապում է յատուկ ծանուցագրով պատուիրուել, որ ամենայն տեղ յիշուի Հայրապետի անունը: Պրուսայում Կաթողիկոսի անուան յիշատակութիւնը լինում է դեկտեմբերի 9-ին, իսկ Ս. Էջմիածնի Մայր տաճարում բաւական ուշ՝ 1867 թուի յունուարի 1-ին, Կովկասի փոխարքայի գլխաւոր կառավարութիւնից դեկտեմբերի 29-ին գրած թուղթը ստանալուց յետոյ:

Հայոց պատրիարքարանից յատուկ հրաւիրակներ են ուղարկուում Պրուսա Կաթողիկոսին Կ. Պոլիս հրաւիրելու, իսկ Ռուսաց դեսպանատան կողմից, որ աշխատաւում է Կաթողիկոսի գալուստը Պրուսայից Կ. Պոլիս փառաւոր անել, գնում է Կ. Պոլսի դեսպանատան թարգմանը: Յունուարի15-ին, մեծ հանդիսով, որին մասնակցում էր Պրուսայի կուսակալն իւր պաշտօնեաներով, պետութիւնների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Աւստրիայի հիւպատոսները, և

խուռն բազմութիւն, Հայոց Կաթողիկոսը Ռուսաց դեսպանատան շոգենաւով ճանապարհ է դրուում Կ. Պոլիս: Այստեղ ևս ընդունելութիւնը փառաւոր է լինում: Քաբաթաշի նաւամատոյցից առաջնորդուում է Պերայի Սուրբ Երրորդութեան եկեղեցին, ուր յունուարի 16-ին Կ. Պոլսի հայ ժողովրդին իւր առաջին ողջոյնն և օրհնութիւնն տալուց յետոյ, իջևանում է Յակովբ Նորատունկեանցի (23) տանը: Այցելութեան է գալիս յաջորդ օրը Ռուսաց դեսպան Իգնատին, որ մատուցանում է Ռուսաց կայսեր շնորհած վեղարի խաչը, կայսերական ինքնագիր նամակով: Կաթողիկոսն առժամանակ մնում է Կ. Պոլսում: Փետրուարի 12-ին Ս. Էջմիածնի հրաւիրակները՝ Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանը (24) և Գրիգոր վարդապետ Մուշեղեան, հասնում են Կ. Պոլիս, բերելով Կաթողիկոսին հայրապետական խաչն ու գաւազանը: Իսկ Կովկասի փոխարքան, Մեծ Իշխանն Միքայէլ Նիկոլայևիչ (25), ուղարկում է Ս. Էջմիածնի հրաւիրակների հետ զօրապետ Ջինովիևին, որի ձեռով Մեծ իշխան իւր սիրալիր ողջոյններն ու ուրախակցութեան խօսքերն է ուղարկում Կաթողիկոսին: Այնուհետև Ռուսաց և Պարսից դեսպանների տուած ճաշի հիւրասիրութիւնը վայելելուց յետոյ՝ մարտի 1-ին ունկնդրութիւն է ստանում սուլթան Աբդիւլ Ազիզից, որ իւր ձեռով շնորհում է Կաթողիկոսին Մէճիդիէի առաջին կարգի շքանշանը. և նոյն ամսի 28-ին Ռուսաց տէրութեան մատուցած յատուկ շոգենաւով, ուղեկցութեամբ 4 տաճկահայ պատուիրակների և Ս. Էջմիածնի հրաւիրակների, մեկնում է Մայր Աթոռը գալու համար: Հասնելով Փոթի, Քութայիսի, Գորու, Մցխեթի վրայով, որ Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից ճաշ է տրուում, ժամանում է Թիֆլիս ապրիլի 7-ին: Ընդունելութիւնը մեծ հանդիսով է լինում. հնչում են Հայոց, Ռուսաց և Վրաց եկեղեցիների զանգակները: Կաթողիկոսը մտնում է

քաղաք Մեծ իշխան փոխարքայ Միքայէլ Նիկոլանիչի կառքով, որ Մեծ իշխանը Կաթողիկոսին պատուելու համար ուղարկած էր ընդառաջ. և Վանքի մեծ եկեղեցու մօտ հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդուում է եկեղեցի, և ապա առաջնորդարան, ուր եկած էին ուրիշ պաշտօնեաների հետ և Նորին Կայսերական մեծութեան թագաւոր կայսեր և Մեծ իշխան փոխարքայի կողմից առանձին պաշտօնեաները, Կաթողիկոսի ընդունելութեան համար: Երկու օրից յետոյ, ապրիլի 10-ին, այցելում է Կովկասի փոխարքայ Մեծ իշխան Միքայէլ Նիկոլայևիչին, որից ստանում է կայսերական հաստատութեան ոսկեղիր հրովարտակը և Ս. Ալէքսանդր Նևսկու շքանշանը: Եւ ապա Զատկի օրը, ապրիլի 16-ին, պատարագ անելուց և Մեծ իշխան փոխարքայի հիւրասիրությունը վայելելուց յետոյ՝ մեկնում է մայիսի 4-ին և 12-ին հասնում է Մայր Աթոռը: 21-ին մեծաշուք հանդիսով ստանում է ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսութեան օծումը, ստանձնելով միանգամայն հայրապետութեան սրբազան և ծանրաբեռն լուծը:

Բ.

ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Ի՞նչպէս վարեց Գէորգ կաթողիկոսն իւր դժուար պաշտօնը 16-ամեայ հայրապետութեան ժամանակ և որքա՞ն կարողացաւ նա հայ եկեղեցուն և ազգին ծառայութիւն մատուցանել:

Այդ անցեալը դեռ շատ մօտիկ է, և մարդիկը մեծ մասամբ դեռ կենդանի են: Իսկ այդպիսի մօտիկ անցեալը, որ իսկապէս դեռ նոր պիտի անցնէ, դատելը շատ հեշտ չէ և շատ դեպքերում նոյնիսկ կարելի չէ: Բայց ի՞նչ էր պահանջուում այդ ժամանակ կաթողիկոսից և որքա՞ն աշխատեց նա և կարողացաւ այդ պահանջներին լրացում տալ: Կ. Պոլիս մտնելուց քիչ յետոյ բազմաթիւ եկեղեցականների, խմբագիրների և ժողովրդի ներկայութեամբ, 1867 թուի յունուարի 16-ին «Ժամանակ» հանդեսի խմբագրապետ Ստեփան Փափազեանը (26) ի դիմաց Կ. Պոլսի վեց հայ խմբագիրների[1] և յանուն ժողովրդեան արտասանում է մի ուղերձ, որի մէջ յիշուում են Հայրապետի պարտիքը իւր ժամանակի

[1] Ուղերձին ստորագրած են Կ. Չուխաճեան՝ խմբագիր «Ծիածանի», Կ. Ս. Իւթիւճեան՝ խմբագիր «Մասիսի», Մարկոս Աղաբեկեան՝ խմբագիր «Ծիլն Աւարայրի», Ստեփան Փափազեան՝ խմբագիր «Ժամանակի», Ա. Ալաճաճեան՝ խմբագիր «Փունջի» եւ Կ. Փանոսեան՝ խմբագիր «Մանզումէի»:

մէջ՝ մանրամասն որոշ շեշտուում են երեք կէտեր միայն. «**Նախ** պահպանութիւն և ամբողջութիւն Հայաստանեայց ուղղափառ եկեղեցւոյ, անխախտ և ամրապինդ պահելով Քրիստոսադիր կարգ ու կանոն, Առաքելական և Լուսաւորչական աւանդութիւնք և արարողութիւնք, որ ի նախնեաց մերոց ի սրբոց Հարց... ջնջելով ու վերացնելով այն ամեն նոր ու եկեղեցւոյ և ազգի վնասակար կարգադրութիւնները, որոնք տգէտ, շահախնդիր և թոյլ անձերու ձեռօք ներմուծուած ու զօրութիւն գտած են»: **Երկրորդ** «երաշխաւորեալ պահպանութիւն Ազգիս, ազգային և անհատական իրաւանց ապահովութիւն յուրաքանչիւր բարեխամ կառաւարութեանց ներքև, որոնց հպատակ կգտնուին հայ ազգի զաւակները», որովհետև կաթողիկոսը ընդհանրական տեսուչ և հովիւ է ազգի «հայրենաւանդ ու կրօնին, եկեղեցւոյն, աւանդութեանց, սովորութեանց, ազգային և անհատական ամեն իրաւանց, պաշտպանը»: **Երրորդ** ... «ազգային դաստիարակութեան ծաւալումը, այն է սրտով մտքով և հոգւով հայեր պատրաստել», «քանի որ Հայաստանեայց Ս. Եկեղեցին և հայոց ազգը մեծ կարօտութիւն ունի քաջութեան, հոգելից, վերջապէս արժանաւոր եկեղեցականներու և աշխարհականներու»: Եւ այնուհետև երկրորդաբար յիշեցնում են վանքերի մեծ մասի ողբալի վիճակը և Սսոյ ու Աղթամարի մասնաւոր կաթողիկոսութեանց մէջ գործուած «քստմնելի սրբապղծութիւնք և անլուր ու անխիղճ գայթակղութիւնք», որոնցից Հայաստանեայց եկեղեցին «զերծ պահելու փոյթ պիտի տանի» Կաթողիկոսը, հետևելով արժանաւոր նախորդնորին, մանաւանդ Աշտարակեցի հեգելոյս Ներսէս Կաթողիկոսին: Աւելացնենք այս երեք պահանջի վրայ և այն, որ ազգային ժողովը կաթողիկոսի ընտրութիւնից դեռ առաջ զբաղուած լինելով Հայաստանեայց եկեղեցու կանոնադրութեան վերաքննութեան

խնդրով՝ Պողոս պատրիարքի ձեռով ներկայացնում է Կաթողիկոսին իւր վերաքննութեան որոշումը, խնդրելով նորան, որ Ս. Էջմիածին հասնելուց յետոյ ջանայ բառնալ և փոփոխել տալ եկեղեցական կանոնադրութեան մի քանի կետեր, որոնք «անհամաձայն են նախնի հարազատ դրութեան հայրենի Ս. Եկեղեցւոյ»:

Իսկ եթէ դառնանք Ռուսաստան, խիստ բազմաթիւ են Հայրապետի գալստեան ժամանակ և ապա Ս. Պետերբուրգ գնալիս ու գալիս և ուրիշ ճանապարհորդութիւնների ժամանակ, յայտնի ու կրթուած մարդկանց կարդացաց ուղերձները. բոլորը փքոցուռոյց ու ճարճատուն բառերով և նոյնն են ասում՝ Կաթողիկոսին, ինչ որ Կ. Պոլսի խմբագիրները: Նոյնը յիշեցնում են նորան և նշանաւոր հայազն մարդին նամակներով: Ամենից պարզ արտայայտուած է այդ բաղձանքը 1870 թ. մայիսի 24-ին Թիֆլիսում Կաթողիկոսի օծման տարեդարձի օրը կարդացուած մի ուղերձի մէջ: Ստեփանոս աւագ քահանայ Մանդինեան (27), կրոնագիտութեան և հայոց եկեղեցականութեան ուսուցիչը Ներսիսեան դպրոցում, ասում է այդ ուղերձի մէջ. «Երից իրաց պէտս ունիմք՝ շինութեան և բարեկարգութեան եկեղեցւոյ ի վերայ սկզբնական հիմանց իւրոց, բարեկարգութեան հոգևորականաց և հիմնելոյ ուսումնարանս, ուր գոն պակասութիւնք, և զեղեալսն որչափ մարթ է, ըստ ներելոյ միջոցաց պահպանել և կանոնաւորել»: Ահա երեք պահանջներ, որ շարունակ կրկնուում են Հայրապետի ականջին և իբրև պարտք դնում են նորա վերայ ամեն մի առիթը պատահած ժամանակու ամեն տեղ և՛ խմբագիր, և՛ ուսուցիչ, և՛ ամեն կրթուած մարդ: Եւ մենք կարող ենք ասել, որ մեր Հայրապետն այդ պահանջները իրագործելուն իսկապէս նուիրել է յարատև իւր բոլոր ժամանակն ու ջանքը և կարող էր իրաւամբ պատասխանել Կ. Պոլսի խմբագիրների ուղերձին.

Կաթողիկոս Ամենայն Հայոց
Գևորգ Դ. Քերեստեճյան

«Ձեր այդ գրածներն իմ սրբազան պարտականութիւններս են և Ձեր այդ զգացածներն իմ ալ զգացմունքներս են»:

Կաթողիկոսն, անշուշտ, շատ բան կարող է անել, բայց ամենակարող չէ: Ոչ մի յառաջադիմութիւն մի ազգի ընդհանուր եկեղեցական կեանքի մէջ Կաթողիկոսի կոնդակով միայն և նորա բոլոր բարի ցանկութիւններով չէ կարող կատարուել մի քանի տարվայ ընթացքում: Հարկաւոր էին Կաթողիկոսի քաջ մտածած ու կշռուած հրամանները կատարող ստորադրեալներ, որոնք հասկանային նոյն ձևով իրենց պարտքն ու կոչումը, ինչպէս Գէորգ Կաթողիկոսն էր հասկանում. բայց դժբախտաբար նա, որ իւր ժամանակակիցներից շատ բարձր էր կանգնած, այդ շրջապատը չուներ: Նա ևս թէպէտ ոչ յաճախ, սրտի ցաւով տեսնում էր, որ իւր հրամաններն առանց գործադրուելու են մնում: Բնաւորութեամբ լինելով անգամ խստապահանջ և գիտնալով առանց աչառութիւն անելու արժանաւորին վարձատրել և քաջալերել, իսկ անարժանին և զանցաւորին պատժել, լինէր դա նոյն իսկ եպիսկոպոս ու Սինոդի անդամ, նա չէր կարող, սակայն, մեծ արդիւնքներ ցոյց տալու համար, չեղած տեղից կարճ ժամանակում եկեղեցու արժանաւոր սպասաւորներ, հրամանը սրբութեամբ կատարողներ յարուցանել: Նրան մնում էր միայն շատ բանի սկիզբն դնել քաջ իմանալով որ, ինչպես Ստեփանոս Նազարեանցն (28) Կաթողիկոսին ուղղված մի ուղերձի մեջ ասում է «Ամենայն անդաստան, ևս առաւել իմանալին անդաստան որև է ազգի, հարուստ ժամանակս ամայի և անմշակ թողեալ ոչ է բնաւորեալ նոյն ժամայն արդիւնս մեծամեծս գործել. աստ ուրեմն աշխատասէր երկրագործին հարկ ի վերայ հասանէ նախ և առաջ արօրս կազմեալ, լուծս յօրինել ակօսաբեկ պատառել զկորդացեալն անդաստան, մինչև հնար իցէ գալ ի սերմնարկութիւն կարօտ գոյ դարձեալ ժրաձեռն

ջուրտուութեան և բազմադիմի խնամոց մինչև յուրումն ժամանակի ի վեր երևիլ ակնկալելոցն արգասեաց»: Գէորգ Կաթողիկոսն ահա այդ սերմնարկողն էր և նա շատ բարի և բազմազան սերմեր է ցանել Հայոց եկեղեցու կորդացեալ անդաստանի մեջ, որոնց արգասիքն առժամայն չէր կարող երևալ զալ, այլ միայն յաջորդների «ջուրտուութիւնից» և խնամքից յետոյ:

Թ.

ԱՆԴՐԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ ԵՒ ՉԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆԵՐԸ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Նորա ընդհանրական անդրանիկ կոնդակը հենց, որ գրում է ձեռնադրութիւնից յետոյ Ս. Էջմիածնում 1867 թուի մայիսի 27-ին, բովանդակում են ժամանակի պահանջների վերևում յիշած երեք կէտերը, որ և իւր գլխաւոր հոգացուղութեան առարկան է դարձնում: Ըստ այնմ պատուէրներ է տալի պատրիարքներին ու եպիսկոպոսներին, քահանաներին ու ժողովրդականներին անարատ և անտխեղծ պահպանութիւն ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, թոյլ չտալ, որ «եւ ոչ նշանախեց մի անգամ փոխիցի ի նմին», եկեղեցու կարգ ու կանոնները հաստատուն պահել, մերազնեաներից եւ օտարներից սպրդած նորաձեւութիւնների առաջն առնել: «Սուրբ եկեղեցին անխախտ յիւրում ուղղափառութեան մնաց և մնացէ յաւիտեան»,- այս էր նորա նշանաբանը, որ գրում է մի կոնդակի մեջ 1873 թուին:

Իւր կանոնական կոնդակների մէջ ոչ թէ ընդհանուր խօսքերով է հրաման տալի, այլ, իբրև ժամանակի դրութիւնը հասկացող, որոշ մատնանիշ է լինում հին կանոնների և նորամուտ սովորութիւնների վրայ. օրինակ հրամայում

է. 1. Թոյլ չտալ ժողովրդին հաղորդվել մեծ պասի օրերին, հետևելով ուրիշ ազգերի, այլ Հայոց եկեղեցու հին սովորութեամբ մեծ պասին հաղորդուել միայն այն ժամանակ, երբ բաց պատարագ է լինում: 2. Պատուիրում է քահանաներին ամուսնութեան Սուրբ խորհրդին ամենայն սրբութեանբ վերաբերել և, ըստ մեր եկեղեցու հնաւանդ կարգի, պսակ չկատարել, մինչև որ փեսացուն ու հարսնացուն իրար տեսած ու ճանաչած չլինին և փոխադարձ հաւանութիւն տուած: Օրինաւոր նշանադրութիւնից յետոյ միայն պսակի խորհուրդը կատարել և երբեք միմիայն ծնողների հաճութեամբ նշան չօրհնել: 3. Երբեք եկեղեցու մէջ աշխարհաբար կամ օտար լեզուով Աւետարան չկարդալ, այլ միմիայն գրաբար, որ մեր եկեղեցու՝ մեր սուրբ հայրերից նուիրագործուած կանոնական լեզուն է, իսկ քարոզներն և Աւետարանի մեկնութիւնը միայն այն լեզուով կարող են լինել, որ ժողովուրդը հասկանում է[1]: 4. Մկրտութեան Ս. խորհուրդը տանը չկատարել, այլ միայն եկեղեցում. երկար միջոց առանց մկրտութեան չթողնել երեխաներին, այլ ըստ հին սովորութեան 8 օրում մկրտել: 5. Չորրորդ պսակ թոյլ տալ միայն նոցա, որոնց ամուսինները երիտասարդ հասակում են մեռել և որոնց տարիքը, մարդունը 60-ից, իսկ կնոջը 40-ից անց չէ, ունենալով և բժշկի վկայական ամուսնացողների ամուսանական ընդունակութեան համար: 6. Վերացնել բաշլղի քրդական սովորութիւնը հարսանիքի ժամանակ, որով աղջիկն իբրև ապրանք, հակառակ Ս. Եկեղեցու օրէնքի, գնուում է իւր ծնողներից, և վէճերի ու կռիւների աղբիւր է դառնում: Եւ այլ այսպիսինները:

«Ամենայն ուրեք նոյն ձև և ոճ փայլեցվի անթերի յաստուածային պաշտամունս», - գրում է նա իւր ընդհանրա-

[1] Գէորգ կաթողիկոսի կանոնական կոնդակի այս կէտն ուղղուած է այն նորելուկների դէմ, որոնք չհասկանալով թէ ինչ նշանակութիւն ունի մեր եկեղեցու այս հնաւանդ կարգը պահելը. մարոզու էին թէ պետք է ժամերգութիւնն աշխարհաբար լինի:

կան կոնդակի մէջ: Նա շատ լաւ գիտէր, որ այդ իրագործելու համար հարկաւոր էր միատեսակ ոգով կրթուած եկեղեցականներ ունենալ. բայց այդ ժամանակի խնդիր էր, որի համար նա, ինչպէս կտեսնենք, գլխաւոր ուշադրութիւն էր դարձնում: Իսկ ինչ որ առժանակ կարող էր անել Կաթողիկոսն՝ արաւ: Մեր ժամագրքի ու եկեղեցական երգերի և շարականների ամենքի համար պարտաւորիչ խմբագրութիւնն անել էին տուել մեր մեծ կաթողիկոսները, որոնցից վերջինն էր Երևանցի Սիմէօն կաթողիկոսը (29): Այդ կէտն արդէն հաստատուն էր մեր եկեղեցու մէջ: Սակայն այսպէս չէ եկեղեցական երգեցողութիւնը, երգերի եղանակը: Ամեն քահանայ ու դպիր իւր ուղղած նորանոր եղանակով է երգում: Իսկ յայտնի է, թէ եկեղեցու համար որքան մեծ նշանակութիւն ունի երգեցողութիւնը. մէկ եկեղեցում ոչ միայն միատեսակ երգեցողութիւն պիտի իշխէ ինչպէս և միևնոյն աղօթքներն ու երգերն, այլ և եկեղեցու բարեզարդութեան համար հարկաւոր է կանոնաւոր և ներդաշնակ երգեցողութիւնը: Գէորգ կաթողիկոսը հոգ է տանում միատեսակ երգեցողութիւն և կանոնաւոր ժամասացութիւն մտցնելու եկեղեցու մէջ, որքան կարելի է, հին եղանակները ձայնագրական արուեստով հաստատուն դարձնելով:

Հայկական ձայնագրութիւն իսկապէս գոյութիւն չունէր. մեր շարականների վրայ խազերը կորցրել էին իրենց նշանակութիւնը, սակայն 1834 թուից Պապա Համբարձումի (30) ձեռքով, Ստեփանոս Աղաւնի մականուանուած պատրիարքի օրով, սկսուել էր Կ. Պոլսում հին խազերով մի նոր ձայնագրական արուեստ, որ իմացողների մէջ պահուում էր իբրև մենավաճառութիւն: Կաթողիկոսն այդ բանին տեղեակ էր: Նա հրաւիրում է ձայնագրագէտ Նիկողայոս Թաշճեանին (31) Մայր Աթոռը, և 1873 թ. յունիսին առանձին կոնդակներ գրելով առաջնորդներին և յաջորդներին,

նոցա ձեռքով Ռուսաստանի 6 թեմերից 30 չափահաս, քաջառողջ ընդունակ ու քաղցրաձայն դպիրներ է ժողովում Մայր Աթոռը, ուր նոքա Աթոռի հաշուով ապրելով՝ ինն ամսուայ ընթացքում սովորում են ձայնագրութեան արուեստը՝ Ս. Էջմիածնի երիտասարդ միաբանների, սարկաւագների ու դպիրների և Ժառանգաւորաց դպրոցի աշակերտների հետ: Առաջին անգամ դեկտեմբերի 14-ին երգուում է Մայր Տաճարի մէջ ձայնագրութեամբ: Այդ երեսունին, նոցանից պատրաստներին քահանայ ձեռնադրել տալով, յետ է ուղարկում թեմերը, ուր նոքա պատրաստ էին դպրոցներում դաս տալու, աշակերտներ պատրաստելով ձայնագրութեան արուեստը տարածելու համար: Շուտով և քահանայացուների համար պարտադիր ուսում է դարձնում այդ արվեստը: Մինչ մի կողմից ձայնագրութեամբ երգելու արուեստն իմացողներ էր պատրաստում, միւս կողմից հոգ է տանում եկեղեցական երգերն ու շարականները ձայնագրել և տպագրել տալու: Ունենալով երգեցողութեան յաջող ձայն և մանկութիւնից սովորած լինելով շարականների եղանակը Գում Գափուի Մայր եկեղեցու դպիրներից, որոնք իրենց եղանակը Երևանցի Սիմէօն կաթողիկոսի Թէոդորոս դպրից էին սովորած: Շատ շարականներ ինքը Կաթողիկոսը երգում է և Ն. Թաշճեանին կամ նորա հմուտ աշակերտներին ձայնագրել տալի: Կարճ ժամանակում Մայր Աթոռի տպարանում հրատարակում են ձայնագրուած շարականներ, ժամագիրք ու Սուրբ Պատարագի երգեցողութիւնք (32):

Անշուշտ, այդ ձայնագրութեան արուեստը կատարեալ չէ և չնայելով Կաթսողիկոսի բոլոր ջանքերին՝ ամեն տեղ մեր եկեղեցիների մէջ մուտք չգործեց, և չէր էլ կարող մի քանի տարուայ գործ լինել այդ. զի եթէ շարականների և ժամագրքի միատեսակ խմբագրութիւնն ու տպագրուածն եկեղեցիներին ուղարկելով Սիմէօն Կաթողիկոսը կարող էր միատեսակութիւն մտցնել, նոյն հեշտութեամբ, հասկանալի է, կարող չէր երգեցողութեան միատեսակութիւն ու ազգայնութիւն գլուխ գալ: Այստեղ հարկաւոր էին արուեստը եւրոպական կատարելութեամբ իմացողներ, որոնք երկար տարիների ընթացքում պէտք է պատրաստուէին: Բայց և այնպէս գործն սկսուած էր. յաջորդներին էր մնում միայն շարունակել և եւրոպական արուեստով եղանակները զտելով հաստատուն հիմքի վրայ դնել այն, որ ձեռնարկած է Մեծագործ Կաթողիկոսը:

Եթէ մի Կաթողիկոսը նշանախեց անգամ փոխել չցանկանալով եկեղեցու ուղղափառութեան մէջ՝ ներքին և արտաքին բարեկարգութիւնների վրայ էր մտածում, միւս կողմից նա խիստ նախանձախնդիր էր Հայոց եկեղեցու և Հայրապետութեան անկախութեանն ու իրաւասութեանն, թէ՛ արտաքին եկեղեցիների վերաբերմամբ և թէ՛ մեր եկեղեցու միւս կաթողիկոսութիւնների: Արտաքին եկեղեցիների նկատմամբ նորա նախանձախնդրութիւնը շատ գեղեցիկ երևան է գալիս 1869 թուին Կ. Պոլսի Պօղոս պատրիարքին գրած կոնդակի մէջ: Պիոս Թ. պապը (33) հայոց պատրիարքներին ու եպիսկոպոսներին հրաւիրում է ներկայ գտնուել 1869 թուի դեկտեմբերի 8-ի ժողովին, որի մէջ իւր անսխալականութիւնը պիտի որոշուէր: Կ. Պոլսի Պօղոս պատրիարքը իւր և իւր եպիսկոպոսների ձեռնահասութիւնից վեր համարելով պապի հրավիրագիրը քննադատելն ու պատասխան տալը, խնդրում է Կաթողիկոսին անել՝ ինչ որ արժան է. իսկ Կաթողիկոսը զգուշացնում է ամենքին չմասնակցել ժողովին, այդ բանին մէջ Հայոց եկեղեցու անկախութեան և իրաւասութեան դէմ ոտնձգութիւն տեսնելով:

Հայոց Հայրապետական իրաւունքների պաշտպանութեան մի փորձ էր Կ. Պոլսում նուիրակութեան պաշտօնը

վերահաստատելու խնդիրը: Հայտնի է, Հայոց եկեղեցու հնաւանդ սուրբութիւն է եղել որ կաթողիկոսները օրհնութեան կոնդակներով նուիրակներ են ուղղարկել ամեն կողմի հայերին, որոնց Ս. Միւռոնն տանելով՝ քարոզում էր նուիրակը և Մայր Աթոռի համար նուէրներ ժողովում: Կ. Պոլիսը լինելով թիւրքահայոց կենդրոն և հայութեամբ բազմամարդ, Հայոց կաթողիկոսի նուիրակները յաճախ տարիներով և ապա մշտապէս մնում էին այնտեղ և իբրև կաթողիկոսի ներկայացուցիչ՝ ունենալով ժողովրդի յարգանքը մեծ դիրք և ձայն ունեին եկեղեցական գործերի մէջ: Սակայն 1828-1829 թթ. Ռուս-թիւրքական պատերազմից յետոյ՝ Օսմանեան կառավարութիւնը ոչ միայն նուիրակութիւնն արգելեց, այլ և Ամենյան Հայոց Կաթողիկոսի անունը յիշել Հայոց եկեղեցիներում, վախենալով, որ ռուսական կառավարութիւնը նուիրակների և կաթողիկոսի միջոցով կարող էր հակառակ օսմանեան շահերին ազդել թիւրքահայոց վրայ: Մատթէոս պատրիարքի (1844 թ.) նշանաւոր գործերից մէկն էլ այն է, որ իւր առաջին պատրիարքական պատարագի ժամանակ հիշատակում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ներսէս Ե-րդի անունը և յետոյ հոգևորականներից և աշխարհականներից մեծ ժողով անելով Մայր եկեղեցում, որոշում են վերսկսել Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը եկեղեցիներում յիշելը: Սակայն այդ ժողովով որոշուում է, դժբախտաբար, նաև այն, որ նուիրակութիւնը վերացուի և Կ. Պոլսի պատրիարքը համարուի Ամենայն Հայոց Կաթողիկոսի փոխանորդը թիւրքահայոց համար և նորա ձեռքով ժողովուին նուէրներ Մայր Աթոռի համար և Ս. Էջմիածնից բերած Միւռոնը բաշխուի եկեղեցիներին:

Գէորգ Դ. իւր կաթողիկոսութեան երկրորդ տարին՝ 1868 թ. փորձում է եկեղեցու այս հնաւանդ սովորութիւնը, որ մեծ կապ էր հանդիսանում Մայր Աթոռի և իւր վիճակների մէջ Թիւրքիայում, վերականգնել: Նա Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանին ռուսաց կառավարութեան հաճութեամբ կարգում է նուիրակութեան պաշտօնի մէջ, և յանձնելով նորան նաև Սսոյ և Աղթամարի կաթողիկոսական խնդիրը լուծելու պաշտօնը, ուղարկում է Կ. Պոլիս, միաժամանակ թղթեր գրելով մեծ եպարքոս Ֆուադը փաշային և Ռուսաց դեսպանատանը, խնդրելով որ սա պաշտպան կանգնէ Հայոց Կաթողիկոսի իրաւունքներին Տաճկաստանում: Պօղոս պատրիարքին, Ազգային և Կրօնական ժողովին, որ աշխատեն պաշտպանել Կաթողիկոսի իրաւասութիւնը և յաջողեցնեն Օսմանեան կառավարութեանը ընդունել տալու նուիրակութիւնը: Սակայն Կաթողիկոսի Օսմանեան կառավարութեան հետ ունեցած բարեկամութիւնն անգամ այս դէպքում չի օգնում, շնորհիւ կաթոլիկ եկեղեցուն, որ Հայոց Կաթողիկոսի ազդեցութիւնն արևմտեան հայերի վերայ թուլացնելու համար՝ յաջողում է ֆրանսիական դեսպանի միջոցով համոզել Բ. Դռանը չընդունել նուիրակին, Սարգիս եպիսկոպոսի դէմ մի քանի շահամոլների ձեռով ամբաստանութիւն յարուցանելով, թէ քաղաքական նպատակներով է Կ. Պոլիս եկած: Օսմանեան կառավարութեան ցանկութիւնն էլ հենց այդ էր: Նա մերժում է ճանաչել նուիրակի պաշտօնը, հիմուելով նոյնիսկ այն բանի վրայ, որ հայերն իրենք Մատթէոս պատրիարքի օրով որոշել են վերացնել նուիրակութիւնը: Սակայն Կաթողիկոսի այս անյաջող փորձը գոնէ այն մեծ օգուտն է ունենում, որ Բ. Դուռը արտաքին գործոց մինիստրի՝ Սաֆվէթ փաշայի, Կաթողիկոսին այս առթիւ գրած պատասխանի մէջ, պաշտօնապէս ճանաչում է Կ. Պոլսի Հայոց պատրիարքին իբրև փոխանորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Փ.

ՍՍՈՅ ԵՒ ԱՂԹԱՄԱՐԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆՑ ԽՆԴԻՐԸ

Կաթոլիկ եկեղեցու հանած արգելքները միայն նուիրակութեան պաշտօնի մերժումով չեն վերջանում: Ամենայն Հայոց Կաթողիկոսի ազդեցութիւնը Թիւքիայում ոչնչացնելու կամ թուլացնելու համար, նոյն իսկ Սսոյ եպիսկոպոսներից, որոնք Ամենայն Հայոց Կաթողիկոսին չեն ենթարկուում, կամենում են Գ. Պոլսի պատրիարք ընտրել տալ: Թէպէտ և այս բանի մէջ յաջողություն չեն ունենում, բայց և այնպէս Հայոց եկեղեցու թշնամիների ձգտումը հակառակ Ամենայն Հայոց Կաթողիկոսի զօրացնել Սսոյ կաթողիկոսութիւնը՝ մեծ աղմուկների ու խռովությիւնների տեղիք է տալի, որի հետևանքները մինչև այսօր ևս տեսնում ենք: Այս խնդրի մէջ Գէորգ Կաթողիկոսն ամենայն արիութեամբ և խոհականութեամբ պաշտպանում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրաւասութիւնը և մեր եկեղեցական սահմանադրութիւնը: 1865 դեկտեմբերի 24-ին արդէն Ազգային Ընդհանուր ժողովի կողմից յանձնվուած էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան մասին ծրագիր կազմող յանձնաժողովին նաև Աղթամարի և Սսոյ աթոռների Մայր Աթոռի հետ ունենալիք յարաբերութեանց վիճակը կանոնաւորելու խնդիրը: 1866 թ. մայիսի 27-ին Ազգային Ընդհանուր ժողովն, ընդունում է յանձնաժողովի

մշակած ծրագիրը և որոշում է, յարուցանելով այդ երկու կաթողիկոսութեանց բարձման խնդիր «զանոնք երկուքն ալ ազգային գերագոյն իշխանութեան պատկառելի ընդհանուր ժողովոյ խնամոցը ենթարկել», և ապա որոշում է «օգուտ քաղել այս անգամ թէ սոյն երկու կաթողիկոսութեանց աթոռներուն և թէ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան Ս. Էջմիածնի գերագահ Աթոռոյն երեքին մէկէն թափուր մնացած գտնուելէն, երեքին ալ գահակալներն ընտրելու առթիւ, երեքին մէջ պատշաճաւոր և ներդաշնակաւոր յարաբերութիւն հաստատելով»: Սոյն մտքով որոշում է Սսոյ և Աղթամարայ կաթողիկոս չընտրել, այլ մինչև որ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընտրուի, այդ երկու աթոռներն օրինաւոր տեղապահների ձեռով կառավարել: Իսկ այս կաթողիկոսների Մայր Աթոռի հետ ունենալիք յարաբերութեան որոշումը թողնուում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնից յետոյ կաթողիկոսի հաւանութեամբ անել:

Սակայն այդ միջոցներում այս երկու կաթողիկոսական թեմերը մեծ զեղծումների են ենթարկուում երկու ինքնընտիր կաթողիկոսների ձեռով: Սսոյ կաթողիկոսությիւնը ժամանակից ի վեր մի տեսակ ժառանգական էր դարձած Աջապահեան ցեղին, որի վերջին մնացորդն էր Նիկողայոս եպիսկոպոսը, որ Կիրակոս Բ-ի մահից յետոյ ազգային կենդրոնական վարչութեան խառն դրութիւնից օգտուելով, ինքնընտիր է լինում. 1866 թ. յունիսի 11-ին գիշերով գողունի օծուում է Յարութիւն անունով մի եպիսկոպոսի ձեռով, որը նոյն ամսի մէջ հենց մահմետականութիւն է ընդունում: 1866 թ. յուլիսի 12-ին Եկեղեցական Վիճակային ժողովը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի թեկնածուների եօթնանուն ցանկը պատրաստելուց յետոյ, Նիկողայոս եպիսկոպոսի կաթողիկոսութիւնը, որ կարճ ժամանակում մեծ զեղծում-

ներ էր արել, անվաւեր է ճանաչում, ինչպէս նաև Խաչատուր եպիսկոպոսի կաթողիկոսութիւնը, որ Աղթամարի հանգուցեալ Պետրոս կաթողիկոսի կենդանութեան ժամանակ ինքն իրեն Աղթամարի կաթողիկոս էր օծել տուել: Ազգային ժողովը յուլիսի 22-ին ընդունում է այս որոշումը և Սսոյ ինքնընտիր Նիկողայոս եպիսկոպոսը պատրիարքարանի պահանջմամբ Բ. Դռան միջոցով Կ. Պոլիս է բերուում: Շուտով Ամենայն Հայոց Գէորգ Կաթողիկոսը, հաստատվելուց յետոյ, Կ. Պոլիս է գալիս: Պողոս պատրիարքը Սսոյ և Աղթամարայ խնդիրները ներկայացնում է նորան ի տնօրենութիւն (34): Կազմուում է 1867 թ. փետրուարի 6-ին մի եկեղեցական յանձնաժողով Սսոյ և Աղթամարայ կաթողիկոսների յարաբերութիւնները Մայր Աթոռի հետ որոշելու համար. ծրագրուում է վեց յօդվածից մի կանոնադրութիւն, որ և ընդունում է Գէորգ Կաթողիկոսը: Սակայն այդ որոշումը չէ ընդունուում Ազգային ժողովի կողմից: Այնուհետև Խառն ժողովն Ազգային ժողովի 1867 թ. հոկտեմբերի 20-ի վճռով մի նոր կանոնադրութիւն է կազմում, որ իւր տեղեկագրի հետ տպագրում է: Կանոնադրութեան մի տպագիր օրինակը հասնում է Գէորգ Կաթողիկոսին, որ մանրակրկիտ քննադատութեամբ մերժում է՝ Պողոս պատրիարքին 1867 թ. ապրիլին գրած մի կոնդակով, որովհետև այդ տեղեկագրի մէջ յայտնած էր թէ Սսոյ աթոռը երբեմն հակառակ աթոռ և «երբեմն հաւասար աթոռ ճանչուած է նոյն իսկ Մայր Աթոռոյ կողմէն», և ձգտած էր Սսոյ Աթոռը Ս. Էջմիածնի Աթոռին համապատիւ դարձնել, այն աստիճանի, որ Սսոյ կաթողիկոսի անունը, թէպէտ և Ս. Էջմիածնի Կաթողիկոսի հաւանութեամբ, պէտք է յիշէին բոլոր պատարագիչները Ս. Էջմիածնի Կաթողիկոսի անունը յիշելուց յետոյ, և նմանները: Գէորգ Կաթողիկոսը պաշտպանում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի իշխանութեան գերագահ

իրաւասութիւնը, և պահելով հին օրէնքը՝ թոյլ չէ տալիս, որ Ս. Էջմիածնի վիճակները Սսոյ կամ Աղթամարի կաթողիկոս ընտրեն, թէ չէ այդ կաթողիկոսները պիտի դառնային այդպիսով իսկապես Թուրքիայի Ամենայն Հայոց կաթողիկոսներ. նա թոյլ չէ տալի նաև որ Սսոյ կամ Աղթամարայ կաթողիկոսներն իրենց վիճակից դուրս իշխանութիւն բանեցնեն կամ Ս. Էջմիածնի եպիսկոպոսներից իրենց կաթողիկոս ընտրեն: Կաթողիկոսը իր հիմունքները բերելով պատմութիւնից, ցոյց է տալի, թէ ինչպէս այդ երկու կաթողիկոսները «հակաթոռք և ապստամբք են» անուանուել միշտ, մինչդեռ ծրագրած կանոնադրությունն այդ կաթողիկոսներին ոչ միայն օրինաւոր էր ուզում ճանաչել, այլ նոյն իսկ հաւասար Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այդ կոնդակը շատ գեղեցիկ արտայայտութիւն է, թէ ինչպէս Գէորգ կաթողիկոսը հասկանում էր կաթողիկոսական իրաւասութիւնը և իշխանութեան նշանակութիւնը պաշտպանել և միանգամայն ազգային եկեղեցու միութեան համար հոգալ. այդ միութիւնը ոչ թէ երեք համահաւասար իրաւունքներով կաթողիկոսների մէջ տեսնելով, այլ որ միւս երկու մասնաւոր կաթողիկոսները պիտի ենթարկուէին Ս. Էջմիածնի Կաթողիկոսին, «զի հպատակական յարաբերութիւն պահպանէ ի միութեան զազգն», թէ չէ, գրում է Կաթողիկոսը, նոցա «պարտաւոր եմք թողուլ ըստ առաջնոյն ի թիւս հակաթոռ և ապօրինաւոր կաթողիկոսաց»: Վերջը հրամայում է պատրիաքին, բոլոր եպիսկոպոսներին, վարդապետներին ու քահանաներին, հայրապետական միութեան և եկեղեցական կանոններին և իրաւունքներին պաշտպան ու նախանձախնդիր լինելով՝ «մի երբէք խառնել կամ լինել ձեռներէց յայնպիսի իրողութիւնս, որ հային ի քակտումն սահմանաց և իրաւանց սրբոց հարց մերոց Հայրապետաց», և պատուիրում է իւր այդ կոնդակը բոլոր եկեղեցիներում կարդալ տալ:

Կաթողիկոսի հեռատես կոնդակն իւր ազդեցությունն անում է և խառն ժողովի ծրագիրն էլ անհետևանք է մնում:

Այնուհետև Կաթողիկոսը, որպէս զի Հայոց Հայրապետական իրաւունքները պաշտպանելու համար մօտից հսկել կարողանայ Սսոյ կաթողիկոսական խնդրին, որ կարող էր ցաւալի վախճանի և նոյն իսկ կաթողիկոսական պառակտման յանգել, յարուցանում է նուիրակութիւն հաստատելու խնդիրը, որի ինչ հետևանք ունենալն արդէն տեսանք: Սսոյ և Աղթամարի կաթողիկոսութեանց և 1866-ի մարտի 20-ից ի վեր դադարած Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը՝ միացած մի քանի այլ խնդիրների հետ, ինչպէս և Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանի իբրև նուիրակ չհաստատուելը՝ հետզհետէ դժգոհութիւն են ծնեցնում Պօղոս պատրիարքի դեմ, որ 1869 թ. մարտի 17-ին ստիպուած հրաժարուում է պատրիարքութիւնից: Սեպտեմբերի 4-ին Պատրիարք է ընտրուում Մկրտիչ եպիսկոպոս Խրիմեան (35), որն Գէորգ Կաթողիկոսը կոնդակով շնորհում է արքեպիսկոպոսութիւն և հաստատելով միանգամայն նորա ընտրութիւնը, պատուիրում է «ի կարևոր դէպս նախանձախնդիր հանդիսանալ նախնական իրաւանց և օգտից Մայր Աթոռոյս», մանաւանդ որ պատրիարքի առաջ կար Սսոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց «բազմակնճիռն խնդիրը», և հրամայում է թոյլ չտալ, որ Սսոյ և Աղթամարի եպիսկոպոսները Ս. Էջմիածնի թեմի մէջ իրաւունք բանեցնեն կամ պաշտօն վարեն, և ջանալ, որ վերաքննեալ Սահմանադրութեան մէջ որոշ մտնէ այն կետը թէ, ինչպէս ի հնուց օրէն է, Կ. Պոլսոյ պատրիարքները Ս. Էջմիածնի եպիսկոպոսներից են ընտրուում: Այս կէտը, որ միշտ գործադրուած է, շատ կարևոր էր:

1870 թուի սկզբին ազգային սահմանադրական իրաւունքը Բ. Դռնից նորից տրուում է հայերին, Սահմանադրութեան վերաքննութիւնը շարունակելու պայմանով: Նորակազմ Ազգային ժողովը օգոստոսի 28-ից սկսած վեց նիստում ընդհանուր ժողովների քննութեան առարկայ է դարձնում Սսոյ և Աղթամարի կաթողիկոսների խնդիրը և վերջապէս քուէների բացարձակ առաւելութեամբ որոշում է. «Սահմանադրապէս իբրև գաւառական առաջնորդի մը ընտրութիւն, Աղթամարայ և Սսոյ վանահայր առաջնորդաց կամ վիճակաւորաց ընտրութիւնը գաւառին, վաւերացումը կենդրոնին է»: Եւ այնուհետև կազմուում է մի յանձնախումբ, որի ձեռով նախ Էջմիածնի կաթողիկոսի, պատրիարքի, Սսոյ և Աղթամարի կաթողիկոսութեանց իրարու հետ ունենալիք փոխադրձ յարաբերութեանց սահմանը պէտք էր ճշտուէր օրինօք և հաստատուէր և ապա ընտրութիւններ լինէին և վաւերանային: Բայց այդ յարաբերութեանց խնդիրը դեռ չորոշված, Քաղաքական ժողովը շտապում է, հակառակ Ընդհանուր ժողովի վճռին, Սսոյ կաթողիկոսական ընտրութիւն անել տալ: 1871 թ. հոկտեմբերի 27-ին ընտրուում է Բերիոյ առաջնորդ մարաշցի Մկրտիչ եպիսկոպոսը (36): Սակայն այդ ընտրութիւնը հակառակ էր մեր եկեղեցու հնաւանդ սովորութեանը, որով Ս. Էջմիածնի եպիսկոպոսը, ինչպիսին էր մարաշցի Մկրտիչը, կարող չէր Սսոյ Աթոռի վրայ բարձրանալ. Քաղաքական ժողովի և պատրիարքի իրաւասութիւնից բարձր էր այդպիսի բան թոյլատրել. միւս կողմից այդ նորընտիր կաթողիկոսի հաստատութիւնը կենդրոնից՝ պիտի չլինէր, մինչև յարաբերութեանց խնդիրը չորոշուէր. բայց Ազգային Ընդհանուր ժողովն առանց այդ յարաբերութիւնների խնդիրը որոշելու, իրեն հակասելով, վաւերացնում է ընտրութիւնը: Գէորգ Կաթողիկոսը տեղեկանալով այդ ընտրութեան մասին, որ Հայաստանեայց եկեղեցու սահմանադրութեան խանգարումն էր իւր մի նշանաւոր հեռագիրն է ուղղում 1871 թ.

դեկտեմբերի 11-ին Կ. Պոլսի պատրիարքին. «Ժողովն Կոստանդնուպօլսոյ ընդ Ձերով նախագահութեամբ անդր քան զիւր Սահմանադրութիւն և զիրավասութիւնն՝ յուզէ և լուծէ զեկեղեցական փափուկ խնդիրս, որպիսի է Սսոյ և Աղթամարայն, և որ ցաւալին է՝ Սրբազնութիւն Ձեր ընդ քօղով մերս Փոխանորդութեան՝ ընդդէմ նուիրական աւանդութեանց սրբոց Հարց և իրաւանց Մայր Աթոռոյս յօժարի գործել յանուն մեր՝ առանց մեր գիտութեան և զայնպիսի խնդիրս և զնոր Սահմանադրուիւնս յանձնապաստան ձեռն արկանէ, որ միմիայն անկ է ընդհանուր ժողովոյ ըստ եկեղեցական օրինի գումարելոյ ընդ նախագահութեամբ Կաթողիկոսի Ամենայն Հայոց: Ուստի նուիրական կանոնք եկեղեցւոյ և մեք ոչ կարեմք օրինաւոր ճանաչել զայդպիսի որոշում, և առ ի զառաջս առնուլ ազգավնաս հետևանաց յապագային, ազդ առնեմք Ձեզ զգուշանալ ի շեղելոյ ի շաւղաց հարց սրբոց»: Միւս կողմից Կաթողիկոսը երեք օրից յետոյ գրում է կոնդակով Սսոյ ընտրեալ Մկրտիչ եպիսկոպոսին, յիշեցնելով նորան այն ուխտն ու երդումը, որ նա, ինչպէս և ամենայն եպիսկոպոս, ձեռնադրուելիս Կաթուղիկէ Մայր Տաճարի մէջ տուել էր «հաւատարիմ կալ և մնալ յամենայնի իրաւանց և ծայրագոյն իշխանութեան Մայր Աթոռոյս և Գահակալի նորին և յաջորդացն», և ցանկանում է, որ նա յարգէ «զսահմանս և զկանոնս նախնեաց մերոց սրբոց» և չնդունէ Սսոյ հակաթոռ կաթողիկոսութեան պաշտօնը, որ տրուում էր նորան Կ. Պոլսոյ երեսփոխանական ժողովի «պարականոն վճռով»:

Սակայն Կաթողիկոսն այդ նշանաւոր հեռագրով և կոնդակով միայն իւր վերջին պարտքն էր կատարում, զի Մկրտիչ եպիսկոպոսը մի անգամ, հակառակ Հայոց եկեղեցու Սահմանադրութեան, Սսոյ կաթողիկոս դարձած և Ազգային ժողովի կողմից անկանոն կերպով հաստատուած,

այնուհետև ոչ միայն Մայր Տաճարի մէջ տուած իւր ուխտն ու երդումն է մոռանում, այլ նոյն իսկ Գէորգ Կաթողիկոսին Ամենայն Հայոց Կաթողիկոս չէ անուանում, - չնայելով, որ սորա ընտրութեանը մասնակցել էին նոյն իսկ Սսոյ թեմի պատգամաւորները և Սսոյ կաթողիկոսական տեղակալի փոխանորդը, - և աշխատում է ունենալ այն իրաւունքները և իրաւասութիւնը, որ ունի միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Այնուհետև Գէորգ Կաթողիկոսի բոլոր ջանքն այդ խնդիրը կանոնաւորելու համար՝ նորա երկու պատգամաւոր պահանջելը Կ. Պոլսի պատրիարքարանից, որ գան Ս. Էջմիածին և խնդիրը պարզեն իրեն, ապարդիւն են անցնում: Մինչ այդ՝ Մկրտիչ պատրիարքը հրաժարուում է, և 1874 թ. փետրվար 20-ին պատրիարք է ընտրուում Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան (37), որ թէպէտ և Սսոյ եպիսկոպոսներից էր, բայց Ս. Էջմիածնում, 1872 թ. մայիսի 17-ին, ըստ հնաւանդ սովորութեան, Ամենայն Հայոց Կաթողիկոսին և նորա յաջորդներին հաւատարմութեան երդումը տալուց յետոյ, ընդունուած էր Ս. Էջմիածնի միաբանների թուի մէջ: Թէպէտ և Ազգային Ընդհանուր ժողովն այժմ Գէորգ Կաթուղիկոսին տուած բացատրութիւնների մէջ յայտնում է, թէ ամենևին նպատակ չէ ունեցել «եղծանել զվաղնջուց սովորութիւնս Ազգին և անցանել ըստ սահման իրաւասութեան Հայրապետութեան Ամենայն Հայոց», բայց զեղծումն արդէն եղած էր, և Գէորգ Կաթողիկոսն ստիպուած էր Սսոյ Մկրտիչ կաթողիկոսին, իբրև Էջմիածնի երդմնադրուժ եպիսկոպոսի, հեստեալ անուանել, և, ինչպես իւր նախորդները, Սսոյ աթոռը հակաթոռ ճանաչել:

Եւ այսպէս այս բոլոր վէճերն ու խռովութիւնները, որ մի կողմից մեր երեք կաթողիկոսների յարաբերութիւնն որոշելու շատ բարի դիտմամբ եղած էր, ուրիշների կողմից

Սսոյ կաթողիկոսական իրաւունքները զօրացնելու, կամ թէ պահպանելու համար, ոչ մի արդիւնաւոր հետևանք չեն ունենում, բայց եթէ այն, հակառակ եկեղեցական աւանդութեանց, Սսոյ վիճակն ստանում է Ս. Էջմիածնի եպիսկոպոսներից մի «հեստեալ և հակաթոռ», բայց և անարժան կաթողիկոս: Իսկ Աղթամարի կաթողիկոսական խնդիրը շնորհիւ Ներսէս պատրիարքի յաջող ելք է ունենում. Աղթամարի խաչատուր կաթողիկոսից (38), Գէորգ Կաթողիկոսի ցանկութեան համեմատ՝ Կրօնական ժողովը խոստմնագիր է առնում, որ, Ս. Էջմիածնի Կաթողիկոսին ճանաչելով իբրև օրինաւոր Կաթողիկոս Ամենայն Հայոց և հոգևոր հնազանդութիւն խոստանալով նորան, պատարագի ժաման ինքը և իւր եպիսկոպոսներն ու վարդապետները յիշեն Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը. Ս. Էջմիածնի թեմերի համար եպիսկոպոսներ չձեռնադրէ, այլ միայն Աղթամարայ տան համար, և մի քանի այսպիսիք:

ԺԱ.
ԵԿԵՂԵՑՈՒ ՇՀՀԵՐԻ ԵՒ ԳՈՅՔԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Մի անգամ Ամենայն Հայոց Կաթողիկոս դարձած՝ Տ. Գէորգ Մայր Աթոռը արդէն իւր սեպհական տունն է համարում և ամեն կերպ ջանում է նորա ոչ միայն բարոյական, այլ և նիւթական շահերը պաշտպանել: Դեռ Կ. Պոլսում եղած ժամանակ գրում է Զմիւռնիա, հաշիւ պահանջելով Թագւոր Չիլիկեանից Մայր Աթոռի կալուածների, ծառատունկների և ըստ կտակաւանդութեանց գոյացած նուէրների, գանձանակադրամների, որոնց հաշիւը շատ ժամանակից ի վեր չէր տրուած, և պատուիրում է, որ մանրամասն հաշուի հետ շուտով իրեն հասցնէ բոլոր հասոյթները: Նոյն պատուէրը տալիս է նա 1867 թ. ապրիլի 18-ին Թիֆլիզից Ս. Սինոդին, որ իրեն մանրամասն տեղեկութիւն տրուի Մայր Աթոռի և Ռուսաստանի վեց վիճակների եկեղեցական վարչութեան մասին՝ Սինոդի անաւարտ, աթոռային և վիճակային և սրբանուէր արդիւնքների ելումուտքի մասին, Սինոդի գանձարանում եղած առձեռն պատրաստի դրամների և Ներսէս Կաթողիկոսի մահից յետոյ մնացած կայք ու գոյքի մասին: Այդ, անշուշտ, միայն տեղեկութիւն ունենալու համար չէր, այլ ամենայն բանի անձամբ վերա-

հասու լինելու և Մայր Աթոռի շահերը պաշտպանելու համար, որովհետև եթէ նա մտածում էր Մայր Աթոռի համար Կ. Պոլսից և Տաճկաստանի թեմերից նուէրներ և նպաստներ ստանալու մասին, որչափ ևս առաւել նոյն իսկ Մայր Աթոռի եկամուտները կարգաւորելու և նիւթական միջոցներն ապահովելու համար:

Իւր առաջին ուշադրութիւնը դարձնում է Մայր Աթոռի այս նիւթական դրութեանը, որ շատ էլ նախանձելի չէր: Կային շատ կտակներ և եկեղեցական սեպհականութիւններ, որոնք անհոգութեան մատնուելով կարող էին կորչել: Այդպիսիներից յիշենք միայն Ամստերդամի Հայոց եկեղեցին, որ անցեալ դարու սկիզբներին 1714 թ. երբ այդտեղ հայ վաճառականների գաղութ կար, շինուած էր Էջմիածնի նուիրակների ձեռով: Ժամանակով այլ ևս հայ չկար այդ քաղաքում, և եկեղեցին անտէր մնալով՝ անցել էր իւր գոյքով Հոլլանդական կառավարութեան ձեռը: Ներսէս Ե. և ապա Մատթէոս Ա. Կաթողիկոսն աշխատել էին այդ սեպհականութիւնը ձեռք բերել, բայց անյաջող: Գէորգ Կաթողիկոսն չկամենալով Հայոց եկեղեցու սեպհականութիւնն օտարների ձեռին թողնել վէճը, թէպէտ և անյուսալի էր, նորոգում է և իւր անխոնջ բնաւորութեամբ շարունակելով, վերջը յաջողում է ստանալ Մայր Աթոռի այդ սեպհականութիւնը, եկեղեցին վաճառելով և շարժական գոյքն ամբողջ Ս. Էջմիածին փոխադրելով:

Թէ նա, որ աստիճանի հաւատարիմ էր Հայաստանեայց եկեղեցու հին կարգերին և պաշտպանում էր Մայր Աթոռի շահերը, այդ երևում է փոքրիկ բաների մէջ անգամ: Բազմութիւններից մի օրինակն աւելորդ չենք համարում դնել այստեղ: Հին սովորութիւն է, որ Մայր Աթոռից պատրիարքներին ու եպիսկոպոսներին տրուած պատուանշանները՝ կոնքեռ, խաչ և պնակէ, ստացողների մահից յետոյ՝

յետ են դառնում Մայր Աթոռի գանձարանը: Այս սովորութիւնը գործադրուում է մինչև 1850 թ., որ ժամանակից անհոգութեան է մատնուում Թիւրքիայի եպիսկոպոսների վերաբերմամբ, և այդ պատուանշանները մնում են կամ մեռնողների ժառանգների ձեռին, կամ եկեղեցիներում ու վանքերում: 1867 թուի մարտի 17-ին Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցու թաղական խորհուրդը խնդրում է Կաթողիկոսից, որ հանգուցեալ Յակովբոս պատրիարքի կոնքեռը իբրև յիշատակ մնայ նոյն եկեղեցու մէջ: Բայց Գէորգ Կաթողիկոսը թոյլ չէ տալիս այդ, չկամենալով «հակառակ ընկալեալ օրինաւոր սովորութեանց նորաձևել», և յիշեցնում է, որ հանգուցեալ Յակովբոս պատրիարքի յիշատակի համար Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցին ունի մի գեղեցիկ դպրոց, աւելացնելով «եթէ ջան անձին տարեալ խնամ անձանձրոյթ զնովաւ ունիցիք միշտ և հանապազ՝ լիցի Ձեզ անմահացուցանել զանուն նորա, և ուրախ առնել զսիրտ մեր տեսանելով զպտուղս բանաւորս ազգասէր ջանից ձերոց»: Եւ ապա նոյն թուով յունիսի 2-ին, առաջարկում է Կ. Պոլսի Պօղոս պատրիարքին, որ հոգ տանի 1850 թուից ի վեր մնացած բոլոր պատուանշանները ժողովելու և ուղարկելու Մայր Աթոռը: Փոքր բան է, բայց հենց այս փոքրի մէջ երևում է Կաթողիկոսի հայեացքը հին սովորութեան վերաբերմամբ, և թէ նա ինչպէս Մայր Աթոռի շահերը պաշտպանելով հանդերձ գեղեցիկ կերպով գիտէ ժողովրդին դպրոցի հոգատարութիւնը սիրելի դարձնել:

Բայց նա միայն Մայր Աթոռի ստացուածքների մասին չէր այդպէս հոգում, այլ և ամենայն եկեղեցական ստացուածքի: Յայտնի է Պերայի գերեզմանատան խնդիրը, որ Մակար կաթողիկոսի օրով ևս նորոգուեցաւ, Պերայի թաղապետութիւնը 1864-ին այնտեղ մեռել թաղելը արգելելուց յետոյ՝ 1872-ին ձգտում է նոյն իսկ գրաւել գերեզմա-

նատունը, որ քաղաքի մեծարժէք տեղերից մէկն է: Գէորգ Կաթողիկոսը լսելով այդ՝ հեռուից պաշտպան է կանգնում եկեղեցական սեպհականութեանը, մի կողմից Ռուսաց Կ. Պոլսի դեսպանին խնդրելով, որ պաշտպանէ Հայոց եկեղեցու իրաւունքը, միւս կողմից գրելով պատրիարքին, որ Բ. Դռանը յայտնէ թէ հայոց բոլոր գերեզմանատներն անծածկոյթ եկեղեցի են, և թէ՝ որովհետև Պերայի գերեզմանատունը գտնուում է Ամենայն Հայոց Յակովբ Դ. Կաթողիկոսի գերեզմանը (39), ուստի և այդ գերեզմանատունն իբրև կրօնական սրբավայր, Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրաւասութեանն է ենթարկուում: Հայ եկեղեցականները, Կաթողիկոսի կոնդակով քաջալերուած, նոյն բովանդակութեամբ խնդիր են տալիս Սուլթան Ազիզին՝ սորա մզկիթ գնալիս, և նա հրամայում է չդիպչել Հայոց եկեղեցական իրաւունքներին (40):

Շատ մանրամասների մէջ կը մտնենք, եթէ այսպիսի դէպքեր և նոցա հետևանքները յիշենք Թիւրքիայի և Պարսկաստանի նկատմամբ: Աւելի լաւ է մասնաւորենք մեր ասելիքը համառօտ կերպով Մայր Աթոռի ու նորա բարեկարգութեան վրայ:

Բարեկարգութիւնը Գէորգ Կաթողիկոսն երեք տեսակ էր հասկանում, ա) վանքի նիւթական շահերը պաշտպանելով, եկամուտները բարեկարգել և մեծացնել, բ) վանքի արտաքին բարեզարդութիւն և նորոգութիւն, գ) հոգևոր բարեկարգութիւն՝ վանական կեանքի և վանականների մտաւոր և բարոյական զարգացման համար:

Անշուշտ, այդ երեք կողմն ևս այնպէս կապուած են միմեանց հետ, որ մէկը կարելի չէր անել առանց միւսի, և Կաթողիկոսը իւր առաջին օրերից երեք կողմի վրայ ևս միաժամանակ ուշադրութիւն է դարձնում:

Ս. Էջմիածնի տնտեսական դրութիւնը նորա առաջին տարիներում, ինչպէս ասացինք, շատ նախանձելի վիճակի մէջ չէր, վիճակային, աթոռային և ամեն տեսակ կալուածքների կառավարութիւնը կամ անփորձների, կամ անհաւատարիմների ձեռը յանձնուած. գանձարանում մի քանի հազար ռուբլի միայն առձեռն պատրաստ դրամ մնացած Ներսէս և Մատթէոս կաթողիկոսների խնայածից: Մայր Աթոռի տարեկան եկամուտը առ առաւելն 25-30 հազարի չափ միայն, որ հազիւ միաբանների և Վեհարանի ամենակարևոր պիտոյքները կարող էր հոգալ, և մանաւանդ թէ Մատթէոս Կաթողիկոսի մահից յետոյ կաթողիկոսական ընտրութեան և ճանապարհորդութիւնների պատճառով ծախքը հետզհետէ աւելանալով՝ իսկ մուտքն աւելացնելու վրայ հոգ չտարուելով, Մայր Աթոռը սկսել էր արդէն պարտքի տակ ընկնել: Կաթողիկոսը շուտափոյթ խելացի տնօրէնութիւններ է անում այդ վտանգաւոր դրութեան առաջն առնելու համար, և նորա տուած նոր մղումից հետզհետէ կալուածական ու վիճակային եկամուտներն այնքան կանոնաւորուում են, որ մուտքը շուտով կրկնապատկուում է, և Կաթողիկոսի վերջին տարիներում եռապատկուում է, և նոյն իսկ աւելի ևս:

Վանքի եկամուտներն աւելացնելու համար մտածում է նաև վանքապատկան ընդարձակ ամայի հողերը մշակել տալ, սակայն ջուրը պակաս էր: Հրազդանից (Զանգուից) ջուր բերելու նպատակով առաջին տարին հենց հրամայում է Սարգիս եպիսկոպոս Ջալալեանին Հրազդանից մինչև Էջմիածին Դալմայ ասուած առուն հանել, բայց դժբախտաբար, մինչդեռ վանքի ղորուղը (արօտատեղի) ձեռք բերելու համար եղած աշխատանքը յաջողութեամբ է պսակուում, Դալմայի առուն, 7-8 հազար ռուբլի (որի մի մասը Նոր-Նախիջեւանից էր ժողոված Կաթողիկոսն իւր այնտեղ եղած

ժամանակը) ծախք նստելուց յետոյ, չի յաջողուում տեղ հասցնել հակառակ Կաթողիկոսի ցանկութեանը:

Կային շատ կտակներ և գումարներ ևս, որոնց գանձելու համար հոգ պետք էր տանել. ինչպէս են՝ վերևում յիշած Ամստերդամի եկեղեցու խնդիրը, Յովհաննես Կարբեցի Կաթողիկոսի (41) Մոսկուայում Կայսերական բանկում շահեցողութեան տուած գումարը, Աստրախանում Սերովբէ եպիսկոպոսի անուամբ մնացած գումարն ու գոյքը, Կարապետ եպիսկոպոս Կարնեցու գումարն ու գոյքը, Գէորգ Մանուկեան Կալկաթեցու կտակած 25 հազար ռուփի մշտնջենաւոր գումարի քառասուն և աւելի տարիների տոկոսը, որ մնացել էր գանձելու, և ուրիշները, որոնց մեծ մասը վիճելի էին և մեծ հոգս ու աշխատանք էին պահանջում: Այդ բոլոր գումարները նա իւր կաթողիկոսութեան առաջին տարիները յաջողութեամբ գանձում է, և ապա վանքի նորոգութեան համար Ռուսաստանի և Պարսկաստանի ու Հնդկաստանի հայոց մէջ ընդհանուր հանգանակութիւն է բաց անում:

Առձեռն պատրաստ դրամագլուխ ունենալուց յետոյ՝ անմիջապէս ձեռնարկում է վանքի արտաքին բարեզարդութեանը: Նա նորոգութիւնն սկսում է Մայր Տաճարից, որի արևելյան կողմի պատը խախտուած լինելով՝ կարիք ունէր վերաշինութեան: Տաճարն ունէր միայն երկու փոքրիկ խորան, ուր եկեղեցական սպաս, զարդ, անօթ, սրբոց նշխարներ, եկեղեցական զանազան հնութիւններ իրար վրայ խառնիխուռն դարսուած պահուում էին. այնտեղ էին և եկեղեցականների զգեստներն, ուր և զգեստաւորուում էին կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ: Ձեռագրատունն ևս շատ լաւ վիճակի մէջ չէր: Մատթէոս Կաթողիկոսի օրով, արդարև, որոշ չափով կանոնաւորուած էր: Գէորգ Կաթողիկոսն այդ սկսած գործը շարունակում է՝ շէնքն ընդարձակելով, առանձին նոր ցուցակ կազմել տալով: Իսկ վանքի այն

միւս հնութիւնների կանոնաւոր պահպանութեան համար, 1868 թ. մայիսի 15-ին Տաճարի արևելեան կողմի պատը նորոգել ձեռնարկելով՝ միանգամայն երեք մեծ յարմարաւոր խորան է շինել տալիս արևելեան կողմից: Թանգարանի, ինչպէս կոչուում են այդ երեք խորանները, հարաւային սենեակը լուսարարապետի տեսչութեան տակ յատկացնում է ամենօրեայ գործածութեան համար որոշուած զգեստներին ու սպասներին. միջին խորանում, աւագ սեղանից արևելք, հրամայում է պահել սրբոց մասունք՝ Ս. Լուսաւորչի աջը, Ս. Գեղարդը և այլ եկեղեցական սրբութիւններ, իսկ հիւսիսային խորանում զանազան եկեղեցական թանկագին հնութիւններ, որոնք բոլորը կանոնաւոր ցուցակագրուած և դասաւորուած զգուշութեամբ պահուում են երեք խորաններում՝ ընկուզեայ պահարանների մէջ: Կաթողիկոսն իր ունեցած հնութիւնները նուիրելով Մայր Աթոռին՝ հետևում է ուրիշ տեղերից ևս եկեղեցական հնութիւններ ժողովելու. ինչպէս Կ. Պոլսից, Աստրախանից, Նոր-Նախիջեւանից, նոյնպէս Ամստերդամի եկեղեցու հնութիւններն և Կաթողիկոսի յորդորներով եկած ուրիշ զանազան նուէրներ: Այժմեան հնութիւնների մեծագոյն մասը Գէորգ Կաթողիկոսի ջանքով են ժողովուած:

Այնուհետև, մինչ մի կողմից Կաթողիկոսը հրամայել էր պատրաստութիւն տեսնել միաբանների բնակութեան համար նոր սենեակներ շինելու, որը չգիտենք ինչու չձեռնարկուեցաւ, թէպէտ և այդ մտադրութիւնը մինչև իւր մահուան տարին էլ ունէր նա, միւս կողմից Ներսէս Ե. Կաթողիկոսի ձեռնարկած գործը կատարելագործելու ետևից եղաւ, պատուիրելով ծերունազարդ Մկրտիչ վարդապետին, որ Ներսես Ե-ի ժամանակ վանքի լճակը շինելու համար աշխատել էր, լճակի շուրջը հողաթումբ լցնել ու երկու կարգ ստուերախիտ ծառեր տնկել, ճեմելիքներ պատրաստելով միա-

բանութեան, հասարակաց և ուխտաւորների զբօսանքի համար: Ապա միաժամանակ առանձին խնամք տանելով Ներսես Ե-ի տնկել տուած անտառին, շրջապատել է տալի հողէ պարիսպներով, որոնց հետքերն այժմ հազիւ են երևում, և արևմտեան կողմից բաւական ընդարձակ տեղ նոր անտառ ձգել տալով՝ մեծացնում է անտառը, որ և շատ պիտանի է լինում և է Մայր Աթոռին:

ԺԲ.

ՎԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՀՈԳՍ

Գալով վանական կեանքի բարեկարգութեանը և վանականների մտաւոր և բարոյական յառաջադիմութեանը՝ պէտք է նկատել, որ այդ կողմն ևս Գէորգ Կաթողիկոսից առաջ շատ բարւոք վիճակի մէջ չէր: Ամենայն մեծ հաստատութիւն, և աւելի ևս վանական հաստատութիւն, իւր որոշ սկզբունքներն և կարգ ու կանոններն ունի, որոնց ճշտութեամբ պահպանութեան մէջ միայն հաստատութիւնը պէտք է որոնէ իւր յառաջադիմութիւնը: Հարկաւ, շատ կարգեր ժամանակի պահանջի ու պիտոյքի համեմատ պէտք է փոփոխուին, բայց որոշ կարգեր կան, որոնց փոփոխուելովը և աւելի ևս զեղծուելովը՝ հաստատութիւնը կորցնում է իւր գոյնը և իբրև այդպիսին՝ նաև իւր գոյութեան իրաւունքը:

Արդ, թէպէտ և Ս. Էջմիածնի Մայր Աթոռը, ինչպէս գրում է Կաթողիկոսը, իբրև կենդրոն ազգային եկեղեցական գործերի ծայրագոյն վարչութեան, իւր վրայ յառած ունի ամենքի աչքն, որոնք փափագալից սրտով յոյս ունին կենդրոնի մէջ տեսնելու առաքինական գործերի աղբիւր, գեղեցիկ բարեկարգութիւն, նախնեաց նուիրական աւանդութեանց անթերի պահպանութիւն, սակայն ցաւելով տեսնում էր նա, որ այդպէս չէր, այդ պայմանները չէին պահպանուում:

Ս. Աթոռի ներքին և արտաքին վարչութեան գործերը աղաւաղուած և խանգարուած էին, որով և Աթոռը նիւթական և մանաւանդ բարոյական կորուստ էր ունենում: Ուստի և Կաթողիկոսը իւր ձեռնադրութիւնից քիչ յետոյ, 1867 թ. յունիսի 8-ին հրամայում է Սինոդին միաբանութեան բոլոր ուխտը ատեան հրաւիրել և իւրաքանչիւրին արժանի խրատն ու յորդորը տալ, «զի ի բաց քերեալ յանձանց զամենայն ախտս, և ընդ հակառակն բերցեն յանձինս ազգս ազգս առաքինութեանց»: Արգելում է գինեմոլութիւնը, զեխութիւն և վատշուէր կենցաղավարութիւն, որ անվայել է ոչ միայն կրօնաւորական կոչմանը, այլ և ամեն քրիստոնեայի. անվայել է գտնում վանականների համար և «չար սովորութիւն ծխախոտոյ», արբեցուցիչ ըմպելիք գործածելը, տարադէպ սրօսանքները, դատարկաշրջիկ լինելն և յաճախելն արտաքս վայրապար: Իսկ եթէ կարևոր լինի շուկայ կամ Վաղարշապատ գնալ, կամ ուրիշ տեղ, նախ պէտք է Կաթողիկոսից և կամ նորա այդ նպատակով կարգած վերակացուից թոյլտուութիւն ստանալ: Պարապոյ ժամերը պէտք է ուսմամբ անց կացնեն սուրբ և արտաքին գիտութեանց մէջ վարժուելով, շարադրութիւն և հեղինակութիւն անելով, որով և եկեղեցական կոչման պատիւ կրբերեն: Պէտք է հանդերձների մէջ ևս չափաւորութիւն պահեն, անպաճոյճ և անսեթևեթ զգեստներ հագնելով: Հասարակաց կենցաղավարութեան մէջ պէտք է սէր և խաղաղութիւն պահպանեն, ընկերներին ու հաւասարներին յարգեն, մեծերից ակնածեն: Ամենքը, մեծից մինև փոքրը, պարտաւոր են արիութեամբ յաճախել եկեղեցի, առաւօտեան և երեկոյեան, «Եկեսցէի»[1] ժամանակ: Արգելում է, որ ոչ ոք իւր

[1] Այս ժամերգութիւնը յետոյ Կաթողիկոսը վերացրեց, որով եւ բոլոր եկեղեցիներում վերացաւ. մինչեւ այժմ պահուում է, ասում են, միայն Սեւանի վանքում:

բնակութեան սենեակներում առանձին խոհանոց չունենայ, և հրամայում է մառանապետին և գինետան վերակացուին և բոլոր պաշտօնատար անձանց, որ միաբաններին նիւթեղէն չտան սենեակներում գործածելու կամ եփելու համար: Այլ ամենքը պէտք է ճաշեն և ընթրեն հասարակաց սեղանատանը, որի բարեկարգութեան համար առանձին խնամք տանելով, հրամայում է, որ ամենայն օր պատրաստած կերակուրներից իրեն մատուցանեն ճաշակելու և տեսնելու լաւ են, թէ չէ: Սակայն եպիսկոպոսների համար կարգում է առանձին խոհանոց և սեղանատուն, ուր նոքա միասին, եկեղեցու ստորին պաշտօնեաներից առանձին, պէտք է ճաշէին: Խստիւ արգելում է անչափահաս ծառայ պահելը, և հրամայում է, եթէ այդպիսիք կան, անմիջապէս արձակուին:

Գէորգ Կաթողիկոսն իւր այս հրամաններն այնուհետև ևս մի քանի անգամ կրկնում է մի քանի փոփոխութիւնները և իրօք խստիւ հետևում է սոցա գործադրութեանը, անհնազանդներին և անկարգներին պատժելով: Սակայն վանական կեանքի «խաթարումն» այն աստիճանի էր, որ հեշտութեամբ չէր կարող Մեծագործ Կաթողիկոս ամենայն ինչ կարճ ժամանակում բարեկարգութեան վերածել:

ԺԳ.

ՎԱՆԱԿԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ, ՏՊԱՐԱՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԵՒ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳԻՐ

Եթէ մի կողմից սեղանատան և միաբանների կեցութեան բարեկարգութեամբ վանքի ծախսն աւելանում էր, միւս կողմից, սակայն, Կաթողիկոսը շարունակում էր տնտեսութիւնը կանոնաւորելու գործը և յատկապէս այդ նպատակով յարմար է դատում, Սինոդի դիւանի «ծանր ու ճապաղ գրագրութեանց» պատճառով, Աթոռի տնտեսութեան գործը տարորոշել Սինոդի գործերի շրջանից. մի քանի անդամներից առանձին ժողով կազմել Մայր Աթոռի վանական տնտեսութեան համար: Այսպիսով կազմուում է այժմեան Վանական կառավարութիւնը:

Գէորգ Կաթողիկոսի այդպիսի հաստատութիւններից մէկն է և Տպարանական ժողովը: Ս. Էջմիածնի տպարանը վաղուց ի վեր գոյութիւն ունէր, բայց, ինչպէս ամեն ինչ, շատ աննախանձելի վիճակի մէջ: Ո՛չ յարմարաւոր մամուլ, տպարանական գործիքներ, ո՛չ ձուլարան և կամ հարկաւոր տառեր: Կաթողիկոսն իւր ճանապարհորդութիւններից վերադառնալիս հետը բերում է տպարանի հարկաւոր տառերը և մարտի 1-ին 1868 թ. հրամայում է Ս. Սինոդին անյապաղ հոգալ պատրաստելու տպարանի միւս կարևոր

պակասաւոր պարագաները և, բարեկարգ կառավարութեան համար, կազմել մի փոքրիկ յանձնաժողով, ուսման տեղեակ արժանաւոր եպիսկոպոսներից և վարդապետներից: Շուտով ժամանակի կարիքի չափով բարեկարգուում է տպարանը. ձեռք են բերուում մայր տառեր, ձուլիչ մեքենաներ, տպագրական մամուլ, սակայն առանց ծանրանալու վանքի վրայ, որովհետև ամենը լինում են նուէրներ Մկրտիչ Սանասարեանի (42) և Յովհաննէս Յովնանեանի (43):

Բարեկարգ տպարանի միջոցով Մայր Աթոռի ծայրագոյն կենդրոնական վարչութիւնը ոչ միայն հնար պիտի ունենար իւր կրօնական գրքերը տպագրելու, այլ և մի պարբերական թերթ հրատարակելու, որի մէջ այդ վարչութեան կարգադրութիւնները պիտի տպագրուէին, և հոգ պիտի տարուէր եկեղեցական հնութիւնները երևան հանելու, և միանգամայն Ս. Էջմիածնի միաբանութիւնը հնար պիտի ունենար երևան բերելու իւր գրաւոր աշխատանքները, որոնց համար յորդորում էր ուսումնասէր Կաթողիկոսը: 1868 թ. Մայիսի 1-ից, տպարանի բարեկարգութիւնը դեռ չվերջացած, սկսում է հրատարակել իւր տնօրենութեամբ, Աբել եպիսկոպոսի (44) խմբագրութեամբ «Արարատ» ամսագիրը կրօնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելեաց, ապագայում կիսամսեայ լրագիր դարձնելու նպատակով: Այս մի շատ անհրաժեշտ բան էր ազգային կրօնական դաստիրակութեան և Ս. Էջմիածնի դիրքի և բոլոր վարչական գործերի համար: Բոլոր միաբանները պարտաւորուում են իրենց կարողութեան չափով աշխատակցելու «Արարատ»-ին, քանի, որ դա հրատարակուում էր իբր «Աշխատասիրութիւն միաբանից Ս. Էջմիածնի»: Յատկապէս ութ անձինք որոշուում են իբրև խմբագրութեան անդամներ, որոնք պարտաւոր էին հոգալ «Արարատ»-ի համար. իսկ միաբանութեան միւս ձեռնհաս անդամները

պարտաւոր էին ամսէ ամիս յօդուածները արտագրելու, կամ թէ տպագրութեան սրբագրութիւնն անելու: Մի խօսքով բոլոր միաբանութիւնը, նոյն իսկ Ս. Էջմիածնից բացակայ առաջնորդներն ու վանահայրերը, քանի որ նոքա ևս Ս. Էջմիածնի միաբան են և «Արարատը» Ս. Էջմիածնի միաբանութեան աշխատութիւնն է, պարտաւոր էին հոգ տանել ամսագրի համար:

ԺԳ.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

«Արարատ»-ի հենց առաջին համարի մէջ «Ազգային բարեկարգութիւն» վերնագրի տակ կարդում ենք, որ մեր ազգի մէջ նախնական կանոն է եղած, որ կուսակրօն հոգևորականների ստացուածները նոցա մեռնելուց յետոյ ժառանգութիւն էր մնում այն վանքին, որին նոքա միաբան էին, և վախճանուածի մերձաւոր և հեռաւոր ազգականներից ոչ ոք իրաւունք չունէր ժառանգութեան ձեռնամուխ լինելու: Սակայն այդ կանոնը խանգարուած էր. վանականների ստացուածքը վանքի տեղ իրենց ազգականներն էին ժառանգում, որով վանքերն ու միաբաններն աղքատանում էին և նոյն իսկ քանդվածները նորոգելու անկարող գտնուում: Գէորգ Կաթողիկոսն այդ բանի առաջն առնելու և վանքերը շէնացնելու համար, ինքն իբրև առաջին օրինակ, իւր գոյքը թողնում է Ս. Էջմիածնին ժառանգութիւն և յորդորելով՝ միաբանութիւնից, եպիսկոպոսներից մինչև դռնապան, ստանում է գրաւոր ստորագրութեամբ ուխտ և պայման, որ նոքա, իրենց անձը վանականութեան նուիրած լինելով, չունենան իրաւունք իրենց գոյքն ու ստացուածքն ըստ հաճոյից բաժանելու իրենց բարեկամներին և ազգականներին, իսկ նոցա մահից յետոյ իրենց գոյքը պիտի մնայ իբրև սեպհականութիւն Ս. Էջմիածնի գանձարանին,

կամ այն վանքերին, որոնց միաբան են նոքա: Աստուածահաճոյ կտակները միայն, որոնք լինում են յօգուտ Ս. Աթոռին, վանքերի, կամ վանական դպրոցների, մնում են անփոփոխ:

Այս կարգադրութիւնն ու ուխտը, որ մեծ էր շատ և կարևոր, հարկաւոր էր օրէնքով ևս ապահովել: Ռուսաստանի Հայոց եկեղեցական կանոնադրութեան (պալաժենիա) մէջ մտած էր մի կէտ, որով եկեղեցականների ժառանգները նոցա ազգականներն էին: Եկեղեցականների մահից յետոյ, այդ ժառանգները տիրանում էին ոչ միայն իրենց ազգական եպիսկոպոսների կամ վարդապետի գոյքերին, այլ և յաճախ, շնորհիւ իրենց եկեղեցականների անհոգութեան, այդ գոյքերի հետ խառն և բուն վանական գոյքերին: Պալաժենիայի այդ հոդուածը փոփոխելու համար առաջին անգամ օրինաւոր ճանապարհով խնդիր էին յարուցել Հնդկաստանի հայերը. Գէորգ Կաթողիկոսն երբ առաջին անգամ 1867 թ. հոկտեմբերի 14-ին Ս. Պետերբուրգում ներկայացաւ Նորին Կայսերական Մեծութեան Աղէքսանդր Բ-ին, խնդրեց ներքին գործոց մինիստր Վալուևի միջոցով Պալաժենիայի մի քանի յօդուածների փոփոխութիւնը: Կայսրը բարեհաճեցաւ փոխել կուսակրօն եկեղեցականների ժառանգութեան վերաբերեալ յօդուածները՝ վերևում յիշատակած իմաստով՝ յօգուտ Մայր Աթոռի ու վանքերի:

Եկեղեցականների մահից յետոյ նոցա ստացուածքի ժառանգութիւնն ապահովուած էր այսպիսով: Նոյն օրինական ապահովումը, սակայն, չէր կարող Կաթողիկոսը ձեռք բերել միաբանութեան ուխտի և պայմանի այն կէտի վերաբերմամբ, որով կուսակրօնները պարտաւորուում էին իրենց կենդանութեան օրով ըստ հաճոյից չբաժանել իրենց ստացուածքն իրենց բարեկամներին ու ազգականներին: Այս չար սովորութեան առաջն առնելու համար արդէն հարկաւոր էր, որ կուսակրօններն իրենք կատարէին իրենց ուխտն ու երդումը, և այնքան բարոյական հասկացողութիւնն, անշուշտ, մի քանի տարուայ մէջ ձեռք բերելու բան չէր. հարկաւոր էր մեծ խնամքով մշակել երկար ժամանակ ամայի և անմշակ թողած մտաւոր անդաստանը. հարկաւոր էր կրթութիւն: Եւ մենք մտնում ենք Գէորգ Կաթողիկոսի գործունեութեան ամենամէծ կողմի նկարագրի մէջ, որը ցաւ է, չենք կարող շատ մանրամասն անել:

Թ.
ԴՊՐՈՑՆԵՐ

«Ուսումնարաններ, ուսումնարաններ և միշտ ուսումնարաններ» փրկարար ձայնը հասնում է անդադար հայերի ականջին», այսպէս էր գրում «Հայկական աշխարհ» օրագրի խմբագրող Ստեփանոս Ստեփանէն (այժմ Խորէն եպիսկոպոս - 45) իւր մի ուղերձի մէջ 1870 թուին: Այդ խօսքերը շողոքորթութիւն չէին, այլ իրականութեան արձագանգ: Գէորգ Կաթողիկոսն իւր վարդապետութեան և եպիսկոպոսութեան ժամանակ արդէն, ինչպէս գիտենք, իւր հոգացողութեան առարկայ դարձրած էր դպրոցներ բանալ և եղածները բարեկարգել: Եւ մի՞թէ կարելի է նոյն իսկ երևակայել, որ նա իւր կաթողիկոսութեան ժամանակ ամենամեծ ուշադրութիւն չդարձնէր այդ բանին: Նա քաջ համոզուած էր, որ ազգի ու եկեղեցու յառաջադիմութեան էական պայմանը ուսումն է, և, իրեն իբրև օրինակ դրած միշտ Հայոց եկեղեցու պատմութեան Ե. դարը, ցանկանում էր լինել «Պարագլուխ և նահապետ հայկական լուսաւորութեան, երկրորդ Սահակ Պարթև, քաջալերող, պաշտպանող և ժողովող ուսման և գիտութեան»:

Ե. դարու այս օրինակը միշտ մտքի մէջ ունենալով էր, որ ձեռնարկում է հիմքից նորոգել Օշականում Ս. Մեսրոպ թարգմանչի գերեզմանի վերայ եղած եկեղեցին: Ամօթ և նախատինք համարելով, որ այդպիսի մարդու յիշատակն

այդպէս անշուք դրութեան մէջ լինի: Փոքրիկ, բայց գեղեցիկ եկեղեցին ժողովրդականների օժանդակութեամբ շուտով կանգնում է, և 1879 թուին հոկտեմբերի 21-ին Ս. Թարգմանչաց տօնի օրը կատարում է եկեղեցու նաւակատեաց հանդէսը: Բայց Կաթողիկոսը հակառակ ցանկութեան, հիւանդութեան պատճառով, չի կարողանում անձամբ կատարել իւր սիրած հայ ուսման և գրականութեան նախահայր Ս. Մեսրոպ թարգմանչի եկեղեցու օծումը, Ս. Մեսրոպի, որի սկսած գործը շարունակելու փոյթ ունէր նա իւր ամբողջ կեանքի ընթացքում:

Անդրանիկ ընդհանրական կոնդակի մէջ հենց առանձնապէս յանձնարարարում է պատրիարքներին ու եպիսկոպոսներին, մենաստանները պայծառացնել վարժատներ հաստատելով այն տեղերում. գիշերօթիկ դպրոցներ բանալ երևելի, մանաւանդ առաջնորդանիստ քաղաքներում, նոյնպէս և գիւղերում ժողովրդական մանր դպրոցներ: Իսկ ժողովրդականներին բարոյական խրատներ տալուց յետոյ՝ առանձնապէս պատուիրում շարունակ Ս. Գիրքը կարդալ և դաստիարակել իրենց զաւակներին, տղայ թէ աղջիկ:

Դպրոցներ բանալը, արդարև, ժամանակի պահանջ էր և ժողովուրդը ինքն այդ կարիքն զգալով սկսել էր այդ մասին հոգ տանել, բայց և այնպէս մի ընդհանուր քաջալերող էր հարկաւոր, ոգի և եռանդ ներշնչող, որպէս զի այդ զարթնած գործն առանձին զարկ ստանար և արագ քայլերով առաջ ընթանար: Եւ այդ զարկը հսկայաբար տուաւ Մեծագործ Կաթողիկոսը: Շատ մանրամասնութեանց մէջ մտնել չէնք կարող, թէ ո՛ր և ո՛ր դպրոցը նորա յորդորով բացուեցաւ, և ո՛ր ու ո՛ր դպրոցի բացումն ու ապահովումը նորա յորդորով աւելի արագացաւ, կամ ո՛ր և ո՛ր բացուած դպրոցն իւր հովանաւորութեան տակ առաւ: Նորա ճանապարհորդութիւնը Կ. Պոլսից Էջմիածին, Էջմիածնից Ս. Պետերբուրգ և յետ

դէպի Էջմիածին կարծես թէ մի առաքելութիւն էր միայն դպրոցներ բանալու և մայրենի լեզուի ու կրօնի ուսման համար: Որտեղով անցնում էր, ետևից իւր ներկայութեամբ չեղած տեղը դպրոցներ էին կանգնում: Նորա սերմանած խօսքն անապատի մէջ կամ ժայռերի վերայ չէր ընկնում, համայնք կամ համայնքի միջից հարուստ ծխականներ իսկոյն ձեռնարկում էին դպրոցների շէնք կանգնելու[1]:

Միայն դպրոցներ բանալը չեր հոգը. հարկաւոր էր այդ դպրոցների կառավարութիւնը, նիւթականի և մտաւորի վարչութեանը կանոնաւոր ձև և ընթացք տալ. հոգալ թէ ի՞նչ և ի՞նչպես պէտք է ուսանէին այդ դպրոցների մէջ: Ժողովուրդը զարթնած էր և ուզում էր դպրոց ունենալ, բայց թէ ի՞նչպէս պէտք է լինէր այդ՝ նա չգիտէր, և չկային էլ այդ ժամանակ շատ ուսում առած և գործից տեղեակ մարդիկ, որ կարողանային առաջնորդող հանդիսանալ: Կաթողիկոսը նոյն իսկ, որ թէպէտ և իւր բնական խելքով և փորձառութեամբ շատ բանի խորն էր թափանցում, չունէր իւր ձեռքին բանիբուն մարդիկ, որոնցով գործն առաջնորդէր, բայց և այնպէս նա եղածով պէտք է բաւականանար:

Ս. Սինոդից և առջնորդներից թեմերում եղած դպրոցների վիճակագիրն ուզելով, թէ որտեղ ինչ դպրոց կայ, որ թուականին է հիմնուել, ինչ ուսուցիչներ, քանի աշակերտ ունին, ինչ ու քանի տարի են ուսուցանում և ինչ նիւթական միջոցներ ունին, յորդորելով միանգամայն նոր դպրոցներ բանալու գործը առաջ տանել, 1867 թ. յունիսի 14-ին հենց Էջմիածնի միաբաններից կարգում է մի ***Ուսումնական Յանձնաժողով***, *որի* պարտականութիւնն էր հոգալ ուսումնարանների ամենայն պիտոյքների մասին և մշակել Հայոց եկեղեցական դպրոցների համար մի ընդհանուր կանոնադրութիւն: Սակայն Կաթողիկոսի բացակայութեան ժամանակ այդ Ուսումնական Յանձնաժողովի անդամները գործի նորութեան պատճառով չեն կարողանում մի բան գլուխ բերել և յաջորդ տարին ճանապարհորդութիւնից վերադառնալուց յետոյ, Կաթողիկոսը վերակազմում է Ուսումնական Յանձնաժողովի, որի նախագահն է լինում Անդրէաս արքեպիսկոպոս (46), անդամները՝ Թադէոս վարդապետ, Կ. Վասակեան (Սինոդի պրոկուրոր), Ս. Թաղիանոսեան (Սինոդի ատենապետ), Ն. Տ. Ցովսէփեան (կաթողիկոսի անձնական թարգման, յետոյ Սինոդի պրոկուրոր) և Ս. Մարութեան: Դոքա էին Էջմիածնում եղած ժամանակի հասկացող մարդիկը: Վիճակներից ու հոգևոր կառավարութիւններից հարկաւոր տեղեկութիւններ ստանալուց յետոյ, կազմում են դպրոցների համար կանոնադրութիւն, որ և հրատարակւում է առանձին տետրակով: Կանոնների հետ տալիս են և երկու առանձին մանկավարժական հրահանգ, թէ ծխական դպրոցների մէջ, ո՛ր առարկան ո՛ր չափով և ինչպէս պէտք է աւանդել: Դպրոցները բաժանուում են երեք կարգի՝ Ծխական, Վանական և Թեմական, որոնց համար առանձին կանոնադրութիւններ են մշակում: Ուսումնական Յանձնաժողովը այնուհետև ևս Կաթողիկոսի ղեկավարութեամբ շարունակում է վարել դպրոցների գործը: Սակայն այդքանով գոհ չէր Մեծագործ Կաթողիկոսը. նա կամենում էր, որ միանգամից ուսումն անմենայն տեղ տարածուի, ուստի նորա գրած կանոններից մեկն էր. «Ամենայն եկեղեցիք, որ ի քաղաքս և ի գիւղօրէս, պարտին ունել ի սրահի իւրեանց զմի ծխական դպրոց», և որպէս զի այդ նպատակին հասնէ 1873 թուին կարգում է առանձին թեմական վերատեսուչներ, որոնք իբրև առաջնորդների օգ-

[1] Ականատեսի բերնից պատմուում է, որ երբ Նոր-Նախիջեւանում Նիսուիթա գիւղի պատգամաւորները ներկայանում են Կաթողիկոսին եւ յայտնում, որ իրենց գիւղացիք նոր եկեղեցու հիմն են ձգել, Կաթողիկոսը հարցնում է թէ Դպրոց ունին: Երբ նոքա պատասխանում են, որ չունին, Կաթողիկոսը հրամայում է նախ դպրոց շինել եւ ապա եկեղեցու շէնքը շարունակել:

նականներ առանձին հրահանգով պիտի շրջէին ամենյան քաղաք և գիւղ, դպրոց եղած տեղերում բարեկարգելով և կանոնադրութիւնը գործադրել տալով, իսկ չեղած տեղերում յորդոր կարդալով ժողովրդին, որ ջանք դնեն երկսեռ դպրոցներ բանալու:

Այդ ժամանակներում, 1873 թուի նոյեմբերի 22-ին բարձրագոյն հաստատութեամբ փոփոխութեան է ենթարկուում Կովկասի ուսումնարանական մասի կանոնադրութիւնը և Կովկասեան փոխարքայութեան սահմանների մէջ գտնուած բոլոր ուսումնարանները, ինչպէս արքունական, նոյնպէս և հասարակական, և մասնաւոր, և ռուսաց եկեղեցու, և այլ եկեղեցիների ծխական դպրոցները ենթարկուում են նոյն կանոնադրութեանը: Կարգուում են առանձին տեսուչներ, իսկ Թիֆլիզի նահանգում վերատեսուչ, որոնց պարտականութիւնն էր հսկելու ժողովրդական դպրոցների մէջ բարձրագոյն հաստատած կանոնադրութիւնը գործադրելուն: Այս կանոնադրութեամբ հայոց ծխական դպրոցներն ևս, բացի հոգևոր դպրոցներից (սեմինարիա), որոնք եկեղեցականներ պատրաստելու նպատակ ունին, ենթարկուում են Կովկասի ժողովրդական դպրոցների տեսուչներին, որ և Կովկասի փոխարքայի գլխաւոր կառավարութիւնը 1874 թ. յունուարի 12-ին առանձին պաշտօնագրով յայտնում է Կաթողիկոսին: Այդ առթիւ լինում է մի քանի գրութեանց փոխանակութիւն կաթողիկոսի և Կովկասի փոխարքայի գլխաւոր կառավարութեան մէջ, գլխաւորապէս այն մասին, թէ արքունի տեսուչների Հայոց դպրոցների վրայ ունեցած վերահսկողութեան պաշտօնը ինչպիսի պիտի լինէր, և վերջը յունիսի 1-ին 1874 թ. դիմում է Կաթողիկոսը Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ իշխան Միքայէլ Նիկոլայևիչին, Կովկասի փոխարքային խնդրելով թողնել Հայոց դպրոցները, որոնք բոլորը եկեղեցական են, իրենց

նախկին դրութեան մէջ՝ Կաթողիկոսի իշխանութեան տակ: Նորին Կայսերական Բարձրութեան՝ փոխարքայի բարեհաճութեամբ ներքին գործոց մինիստրն այդ հանգամանքն ներկայացնում է Նորին Կայսերական Մեծութեամ Թագաւոր-Կայսեր տեսութեանը, ու Բարձրագոյնս բարեհաճում է յուլիսի 19-ին, - ճշտապէս որոշելու համար արքունի տեսուչների պարտքն ու յարաբերութիւնը հայոց եկեղեցական ծխական դպրոցների վերաբերմամբ և նոցա հսկողութեանը յատկացրած առարկաները, - յաստատել՝ կանխապէս Մէծ Իշխան փոխարքայից հաւանութիւն գտած երեք կանոն. ա) Հայոց եկեղեցական դպրոցների կառավարութիւնը, ըստ տնտեսականին և ըստ ուսումնականին թողնել նախկին դրութեան մէջ, հայոց հոգևորականութեան ձեռին. բ) արքունի տեսուչների պարտականութիւնն է հսկել նախ, որ այն ամեն դպրոցներում, որոնց մէջ աւանդում են ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն՝ աւանդուին նաև Ռուսաց պատմութիւն և Ռուսիայի աշխարհագրութիւն ռուսաց լեզուով. երկրորդ՝ այդ դպրոցների այդ դասատուները լինին Ռուսաց հպատակ և պարտ ու պատշաճ բարոյական յատկութիւններ ունենան, և գ) այն դպրոցները, որոնք նպատակ ունի եկեղեցականներ պատրաստելու, չենթարկուին արքունի տեսուչների հսկողութեանը, և այս դպրոցների ուսման ընթացքի և ներքին կառավարութեան մասին կանոնները պետք է առաջարկուին ի Բարձրագոյն հաստատութիւն:

Կայսերական Բարձրագոյն հրամանը, որով պարզ և որոշ նշանակուում են արքունի տեսուչների վերահսկողութեան պարտականութիւնները, ներքին գործոց մինիստրը օգոստոսի 8-ին յայտնում է Կաթողիկոսին, որ և շտապում է գործադրել տալ իւր իշխանութեան տակ գտնուած բոլոր դպրոցներում:

ԺԶ.

ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՃԵՄԱՐԱՆ

Ամեն տեղ դպրոցներ բանալու և բարեկարգելու խնդրով զբաղուած Կաթողիկոսը պիտի չմոռանար, հարկաւ, և հոգևոր ծայրագոյն իշխանութեան կենդրոնի, Մայր Աթոռի Ժառանգաւորաց դպրոցը: Եթէ կենդրոնը Ս. Էջմիածինն էր, դպրոցների կենդրոնն ևս Ս. Էջմիածնում պիտի լինէր, և այնտեղից պիտի ելնէին եկեղեցու ուսեալ պաշտօնեաներ և դպրոցների համար վարժապետներ:

Ս. Էջմիածնի դպրոցը, վերահաստատուած ԺԷ դարում Մովսէս Սիւնեցի Կաթողիկոսի (47) ձեռքով, երբեմն ծաղկելով, երբեմն յետադիմելով, իւր ժամանակին կարևոր և բարձր ուսում ստացած շատ պաշտօնեաներ է նուիրել Հայոց եկեղեցուն: Ներսէս Ե Կաթողիկոսը, որ նոյնպէս հասկանում էր դպրոցի մեծ նշանակութիւնն, աւելի ուշադրութիւն էր դարձնում իւր հիմնած Ներսիսեան դպրոցի վրայ. և թէպէտ մտադիր է եղած Ս. Էջմիածնում մի մեծ դպրոց հիմնելու կամ, լաւ ևս ասած, Ս. Էջմիածնի դպրոցը, ուր ինքն ուսած էր. ընդարձակելու, բայց չէր կարողացել մտադրութիւնն իրագործել: Մատթէոս Կաթողիկոսին ևս չէ յաջողուում դպրոցը բարեկարգել, թեպէտ նա փորել է տալի նոր դպրոցի հիմքը վանքի պարսպի ներսում արևելեան կողմը,

ուր այժմ միաբանութեան համար սենեակներ են շինուած. բայց այդ փորուածքով ևս վերջանում է գործը:

Գէորգ Կաթողիկոսն իւր օծումից առաջ, Մայր Տաճարին այցելելուց յետոյ, առաջին այցելութիւնը Ժառանգաւորաց դպրոցին է տալի: Այդ այցելութիւնը դառն տպաւորութիւն է թողնում ուսումնասէր Կաթողիկոսի վրայ: Դպրոցն իսկապէս դպրոցի անուն էր միայն կրում: Ոչ կանոնաւոր ուսելիք ու հագնելիք, ոչ մտաւոր ու բարոյական սնունդ. օրական երկու երեք ժամ անկանոն դասաւանդութիւն՝ հայոց և ռուսաց լեզուի, եկեղեցական երգեցողութեան ու քրիստոնէական վարդապետութեան. ոչ մի հսկողութիւն աշակերտների վարքի և բարքի վրայ, որոնք թուով 20-30 հոգի, Ս. Էջմիածնի շրջակայքից ժողովուած, իրենց սանձարձակ անկարգութեան էին մատնուած: Կենդանի ականատեսները շատ տխուր բաներ են պատմում այդ դպրոցի ներքին կեանքից:

Կաթողիկոսի առաջին գործն եղաւ ջանալ առժամանակեայ բարեկարգութիւն մտցնել այդ դպրոցի մէջ, մինչև որ իրեն յաջողէր հիմնովին կերպարանափոխել այն: Կարգադրեց սրբազան պատմութեան, հայոց պատմութեան, աշխարհագրութեան, թուաբանութեան, ինչպէս և ֆրանսերէն լեզուի դասեր աւելացնել: Առանձին մասնախումբ կարգեց դպրոցը կառավարելու համար Անդրէաս եպիսկոպոսի հսկողութեան տակ և յատուկ ուշադրութիւն դարձրեց դպրոցական կարգապահութեան և աշակերտների ապրուստի վրայ: Այդ բարեկարգութեան ժամանակի աշակերտներն են այժմեան չափահաս եկեղեցականների մեծ մասը: Սակայն և այնպէս այդ բարեկարգութիւնը, թէպէտ և ժամանակի համար աչքի ընկնող, մեծ բան չէր, որովհետև Կաթողիկոսին պակասում էին բանիբուն ու գիտուն վարժապետներ, ոչ միայն այդ դպրոցի համար, այլև սարկա-

ւագների և երիտասարդ աբեղաների ուսման ու կրթութեան համար բացած առանձին երկու դասարանի համար: Կային արդարև երկու վարդապետ: Խորէն Գալֆայեան (48) և Գաբրիեալ Այվազեան (49), որոնք կարող էին այդ պաշտօնը վարել, սոցա առանձնապէս փայփայելով և եպիսկոպոսական աստիճան տալով, Կաթողիկոսը կամենում էր Ս. Էջմիածնում պահել վանքի դպրոցում դասախօսելու և տպարանի կառավարութեան համար: Սակայն շուտով յուսախաբ է լինում այդ եպիսկոպոսներից, կարճ ժամանակ սարկաւագներին և աբեղաներին դասախօսելուց յետոյ՝ նոքա դժուարանում էին մնալ Ս. Էջմիածնում:

Իւր ճանապարհորդութեան ժամանակ Աստրախանում՝ Սերովբէ եպիսկոպոսի անուամբ մնացած գումարը ստանալուց յետոյ՝ արդէն ունէր Կաթողիկոսը հարկաւոր դրամը Ժառանգաւորաց դպրոցի շէնքի հիմնարկութեան վրայ մտածելու համար: Ուստի և անմիջապէս գրում է իւր տեղակալ Սարգիս եպիսկոպոս Ջալալեանին, որ սկսէ դպրոցի շինութեան համար հարկաւոր նիւթերը պատրաստել: Այնուհետև Կաթողիկոսը, որ մի անգամ իւր առաջնորդութեան ժամանակ Օսմանեան կառավարութիւնից Պրուսայի եկեղեցու շինութեան համար ձրի փայտ էր ստացել, այժմ էլ Ս. Էջմիածնից դիմում է Օսմանեան պետութեանը և թոյլատուութիւն է ստանում Սողանլուի անտառներից հազար կաղնի մեծ գերաններ ձրի ստանալու Ս. Էջմիածնի դպրոցի շինութեան համար: Ռուսաց. կառավարութիւնն ևս այն շնորհն է անում, որ թոյլ է տալիս գերաններն առանց մաքսի ներս մտցնել: Գերանները բերուում են Կարսայ գետի, Արփայ չայի և Երասխի վրայով մինչև Մարգարայ գիւղը, որտեղ գետից հանուելով փոխադրուում են Ս. Էջմիածնի: Տախտակամածների, դռների և պատուհանների հարկաւոր տախտակներն էլ այս գերաններից են քաշում:

Երկար տատանում էր Կաթողիկոսը, թէ դպրոցի շէնքը որտեղ շինէ: Ս. Էջմիածնում շինելու համար խորհուրդ տուողները շատ սակաւաւորներ էին. մեծ մասամբ խորհուրդ էին տալիս շինել Ս. Էջմիածնից հեռու՝ մերձակայ զովասուն գիւղերից մեկում, կամ նոյնիսկ Թիֆլիզում: Նա մի առ ժամանակ հակուում է Գետարգելայ վանքի հողերում կամ Քանաքեռ գիւղում շինելու, բայց վերջ ի վերջոյ բարեբախտաբար վճռում է դպրոցը Մայր Աթոռից չհեռացնել և 1869 թ. մայիսի 25-ին, իւր օծման երկրորդ տարեդարձի օրը, պատարագից յետոյ եկեղեցական թափորով, Թարգմանչաց շարականը երգելով գալիս է շէնքի հիմնարկութիւնն օրհնելու: Իւր ձեռով հիւսիսային արևմտեան անկիւնի առաջին հիմնաքարը դնում է, ասելով. «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէր, և զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ». իսկ երկրորդ հիմնաքարը դնելիս. «Տաո Մեսրոպեան և ուսումն տան կեանս հայուն հաստատուն»:

Ճարտարապետ հրաւիրուած էր Կ. Պոլսեցի Յարութիւն Աբգարեան (50), որին Հայրապետն անձամբ ծանօթ էր, բայց դժբախտաբար այդ փորձուած ու հմուտ ճարտարապետի ձեռքով շենքը չվերջացաւ: Երկու յարկանի քար ու կիր շէնքը 1870 թ. արդէն բարձրացել և հողածածկ տանիքով ծածկուած էր և յոյս կար, որ յաջորդ տարին շինութիւնը յաւարտ ելնէր, որ նոյեմբեր ամսի մէջ ճարտարապետը սպանուում է: Կիսակատար շէնքն առանց ճարտարապետի մնալով աշնան անձրևի և ձմեռուայ ձիւնի տակ՝ վնասուում է բաւական: Կաթողիկոսը Կ. Պոլսից Սարգիս Պալեան (51) արքունի ճարտարապետից խնդրում է նոր ճարտարապետ, որ և գալով շուտով մեռնում է. գալիս է երրորդ ճարտարապետը, որ և վերցնում է հողածածկ տանիքը, օրորոցաձև սրածայր տանիք է շինում, թիթեղներով ծածկելով և շատ փոփոխութիւնների մտցնելով: Ճարտարապետների

այս փոփոխութիւնը շատ աւելորդ ծախսեր է պատճառում: Այնուհետև շինութեան շարունակութիւնը և աշակերտների կամ կարասիների պատրաստութիւնը բաւական դանդաղ է առաջ գնում, մինչև 1874 թուին ամեն ինչ պատրաստուում է: Շէնք կառուցուած էր 75 հոգու համար, բայց և այնպէս այս սակաւ թուի համար ևս բաւական դպրոցական յարմարութիւն չունէր. առանձնապէս վառարանների և պատուհանների փեղկերի պակասաւորութիւնն էր աչքի ընկնում:

Կաթողիկոսը մտադիր էր սկզբում մի միջնակարգ ուսումնարան միայն կարգել այդ շինութեան մէջ, ուր հայոց բոլոր թեմերից ընտրութեամբ ժողովուած տղայք պիտի կրթուէին եկեղեցական դաստիարակութեամբ: Բայց յետոյ մտադրութիւնը փոխում է և որոշում է բանալ մի բարձրագոյն դպրոց, ***Ժառանգաւորաց Ճեմարան*** անունով: Յունիս ամսին Վահան վարդապետ Բաստամեանը (52), Արիստակէս վարդապետ Մեդրակեան (53) և Գէորգ վարդապետ Սուրէնեան (54) ուղարկուում են Ռուսաստանի վիճակները աշակերտներ ընտրելու, իսկ Տաճկաստանից և Պարսկաստանից աշակերտներ ուղարկելու համար գրուում է Կ. Պոլսի պատրիարքին և Ատրպատականի, Պարսկաստանի ու Հնդկաստանի առաջնորդներին: Սեպտեմբերի սկզբներին արդէն 60-65 աշակերտ ժողովուած էին: Նոյն ամսի 28-ին, Կաթողիկոսի անուանակոչութեան օրը, Ս. Գէորգ զօրավարի տօնին կատարուում է դպրոցի բացման հանդէսը ուխտաւորների և ժողովուած հանդիսականների բազմութեան ներկայութեամբ:

Քիչ դժուարութիւն չէր կրում Կաթողիկոսը ճեմարանի համար տեսուչ և վարժապետներ գտնելու համար: Մարդիկ չկային: Միակ յարմար տեսչացուն Գաբրիէլ եպիսկոպոս Այվազեանն էր համարուում, բայց նա ևս դժուարութիւններ էր յարուցանում այդ պաշտօնը հանձն առնելու համար և



Գևորգյան ճեմարան
(1880)

միայն այն ժամանակ համաձայնեց, երբ խոստացան իրեն տալ Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդութիւնը: Եպիսկոպոսն իր փառասիրութեան մէջ չէր բաւականանում ճեմարանի տեսչի սոսկ պաշտօնով: Ուստի Կաթողիկոսը ժամանակաւորապէս տեսչի պաշտօնակատար է կարգում Պարզեան Սուքիաս վարդապետին (այժմ եպիսկոպոս - 55): Երկուշաբթի առաւօտեան, սեպտեմբեր 30-ին սկսուում են դասերը: Սակայն, աւաղ բախտին, երկու շաբաթ յետոյ, հոկտեմբերի 16-ին առաւոտեան ժամն 8-ի մօտերը հրդեհը լափում է Ճեմարանի գեղեցկաշէն հանդիսարանը՝ իւր ներքին մասով, երկու ննջարանները, հանդերձատունը, խոհանոցը, մի խոսքով ամբողջ արևմտեան մասը. Նիւթական վնասը քսան հազարից աւելի էին հաշուում: Աղէտը մեծ վիշտ ու ցաւ պատճառեց բոլոր ողջամիտ հայերին, և աւելի ևս Հայրապետին, որ ամբողջ տասներկու ժամ. «բոլորովին երեսաց գոյնը շրջած՝ քայլելոյ կարողութենէ զրկուած՝ սրտաթունդ և դողդոջուն՝ իսպառ դիւրազգեաց սրտիւ՝ մարելոյ վտանգի մէջ տագնապելով՝ աչքերը արտասուօք լցուած՝ ամենեցուն կաղաչէր և կը յորդորէր աշխատել և միջոցներ ցուցանելով կը ջանայր կրակին առջևն առնուլ». և ականատեսների վկայութեամբ, եթէ չբռնէին իրեն, նոյն իսկ քանի անգամ պիտի ձգէր իրեն կրակ ու բոցի մէջ իւր շինած ուսման տաճարը փրկելու համար: Ծնորհիւ Վաղարշապատի բնակիչների և միաբանութեան անձնազոհ քաջութեանը՝ շէնքի կէսը գոնէ հրդեհից ազատուում է: Մեծ էր հարուածը, բայց այդ հարուածը միայն նիւթական էր, և Հայրապետը, որ մի ուրիշ անգամ ևս հրդեհի դէմ կռուած էր, չպիտի ընկճուէր հրդեհի առաջ. «ընդհակառակն, առաւել ևս ոգևորուելով և գօտեպնդուելով՝ պէտք է ջանար իւր նպատակը և ձեռնարկած մեծ գործը՝ առանց ընդհատելոյ և թուլանալոյ՝ շարունակել և արդիւնաւորել»: Մանաւանդ որ,

ինչպէս ճեմարանի բացման ժամանակ բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ ու նամակներ էին ստացուած, այժմ ևս այդ ձախորդութեան ժամանակ մխիթարական հեռագիրներն ու նամակները շատ էին, և նոյն իսկ կամաւոր նպաստներ հաւաքուում էին: Այդ մեծ մխիթարութիւն ու քաջալերութիւն էր:

Աշակերտներն ամբողջապէս փոխադրուում են Ղազարապատ և Ժառանգաւորաց դպրոց, ուր դասերը շրունակուում են: Մի երկու օրից հրաւիրուում է Երևանի արքունի ճարտարապետը (56), որի հետ պայման է կապուում եօթն ամսուայ ընթացքում այրուած մասը վերաշինել, և հենց Ճարտարապետին էլ տրուում է կապալը: Վերաշինութիւնը լինում է մի և նոյն ճաշակով, միայն հանդիսարանը, հակառակ Կաթողիկոսի կամքին, աւելի պարզ և հասարկ է շինուում[1]: 1875 թ. յունիս 10-ին աշակերտներն արդէն տեղափոխուում են ճեմարանի շէնքն: Նոյն օրը և Գաբրիէլ եպիսկոպոս Այվազեանը կարգուում է ճեմարանի տեսուչ:

1874 թ. մայիսի 11-ին Կաթողիկոսն հաղորդում է Նորին Կայսերական Բարձրութեան, Մեծ Իշխան Միքայէլ Նիկոլայևիչին, Կովկասի փոխարքային, ճեմարանի բացման մասին, ուղարկելով միանգամայն ճեմարանի հիմնական ծրագիրը, որ իսկապէս շատ աղքատ էր: Այդ ծրագիրը ներկայացուում է կենդրոնական կառավարութեան ի քննութիւն և ի բարձրագոյն հաստատութիւն: Կայսերահաստատ նոր ծրագրով դասընթացը որոշուում է ինն տարուայ համար: Ճեմարանն բաժանուում է երկու մասի, վեց դասարանեան դպրոցական մաս (սեմինարիա) և երեք լսարանական և միանգամայն ինն տարուայ փորձառութիւնից յետոյ՝ պէտք

[1] Հրդեհի պատճառով եղած այս վերաշինութիւնը 30 հազար ծախք է նստում, որով շէնքի ծախքը միայն բարձրանում է 96,319 ռուբլու: Սկզբում 50 հազար ռուբլու նախահաշիւ է կազմուած եղել. մնացած աւելորդ ծախսն առաջ է եկել ճարտարապետների փոփոխուելուց եւ հրդեհից կրած վնասից:

էր ընդարձակ կանոնադրութիւն կազմել և մատուցանել բարձրագոյն հաստատութեան:

Կաթողիկոսն իւր սովորութեամբ շարունակ այցելում է ճեմարան դասերի և քննութիւնների ժամանակ և քաջալերում է աշակերտներին: Հետզհետէ բացուում են դասարաններն ու լսարանները և աշակերտների թիւը մեծանում է. 75 աշակերտի համար որոշուած շէնքը բնականաբար չպիտի կարողանար իւր մէջ տեղաւորել շատերին: 1876 թուին արդէն շինում է Կաթողիկոսն առանձին հիւանդանոց իւր փոքրիկ դեղատնով: Բայց և այնպէս տեղի նեղուածքութիւնը մեծ էր: Հարկաւոր էր աշակերտների համար առանձին ննջարան և սեղանատուն ևս շինել, հին շէնքը յատկացնելով միայն ուսումնական մասին: Կոնդակներով դիմում է Ռուսաստանի հարուստ հայերին, նպաստներ խնդրելով այդ նպատակի համար. և նուիրակ Խորէն վարդապետ Ստեփանէի ձեռքով նուիրաբերութիւններ հաւաքելով, Ճեմարանի շէնքի արևելեան կողմում 1879 թ. ապրիլի 30-ին հիմնարկում է այժմեան ննջարանի յարմարաւոր և ընդարձակ շէնքը, որ իսկապէս սեղանատան և լուացարանի համար էր որոշուած. իսկ երկրորդ յարկը պիտի լինէր ննջարան: Սակայն 1879-1880 թուի մեծ թանգութիւնը (մի փութ ցորենը 10 ռուբլի էր) և Մայր Աթոռ հաւաքուած սովեալներին խնամելու մեծ հոգսը թոյլ չտուաւ երկրորդ յարկը ամբողջ շինելու: Երկրորդ յարկի երկու ծայրերում հանդերձատներ շինելով, թողեց, որ ապագայում ինքը կամ իւր յաջորդ հայրապետներից մէկը երկրորդ յարկը լրացնէ: Բայց և այնպէս այս շինութիւններն արդէն բաւական յարմարութիւններ էին տալի 200-ից աւելի գիշերօթիկ ու ձրիավարժ աշակերտներ պահելու, և կաթողիկոսը տեսնելով իւր գործի օրէցօր ծաղկումը՝ մխիթարուում էր ի սիրտ և ի հոգի, ոչ մի ջանք և նիւթական միջոց չխնայելով այդ իսկապէս

մեծ գործի բարգաւաճման համար, որ իւր բոլոր գործերի թագն ու պսակը պիտի լինէր և միանգամայն Մայր Աթոռի պարծանքն ու հաստատութեան սիւնը: Որովհետև շուտով ճեմարանը պիտի անցնէր ժառանգաւորաց դպրոցի տեղը, որը, միաժամանակ ևս պահելով 1882-ին փակեց և այնուհետև Ժառանգաւորաց Ճեմարանը պիտի տար ժառանգաւորներ Մայր Աթոռին, քանի որ նոյն նպատակով իսկ շինուած է, ինչպէս այդ երեւում է կոմդակներից, որին կենդանի վկայ է և Ճեմարանի շէնքի հիւսիսային կողմի ճակատին փորագիր արձանագրութիւնը[1]:

[1] Ողորմութեամբ Աստուծոյ ազգասէր Կաթողիկոսն Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ Դ. Կ. Պոլսեցի յոգնաջան աշատութեամբ կառոյց զայս ճեմարան վասն Ժառանգաւորաց Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի արդեամբք վիճակին Աստրախանայ եւ օժանդակութեամբ Հայոց բնակելոց ի սահմանս Ռուսաստանեայց յամի Փրկչի 1871, Հայոց ՌՅԻ:

ԺԷ.
ԱՐԹԱՆԱՒՈՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾ ՀՈԳՍԵՐԸ

Ի՞նչ արեց Կաթողիկոսը հայ եկեղեցականների և յատկապէս քահանաների մտաւոր դրութիւնը բարձրացնելու համար, մի պահանջ, որ հին է և մինչև այժմ էլ մնում է: Դարձ է պատասխանը: Վարդապետ ու քահանայ, բարոյական ու մտաւոր պատրաստութեամբ, երկնքից միանգամից պատրաստ պիտի չիջնէին: Երբ Կաթողիկոսը վանական, թեմական դպրոցների և Ս. Էջմիածնի Ժառանգավորաց Ճեմարանի հոգն էր տանում, նորա աչքի առաջ միշտ այն էր կանգնած, որ այդ դպրոցներով պիտի առաջանար եկեղեցականների վերանորոգութիւնը: Բայց այդ մի քանի տարուայ խնդիր չէր: Ամբողջ սերունդներ պէտք է փոխուէին, մինչև որ այդ ցանկալի վերանորոգութիւնը գլուխ գար: Շատ միամիտներ ու հակառակամիտները կարող են կարծել, որ Կաթողիկոսն առանց դպրոցի կարող էր մի քանի կոնդակներով մի անգամից կերպարանափոխ անել մեր եկեղեցականութիւնը:

Կուսակրօն եկեղեցականութեան մէջ, որ իւր անմիջական հսկողութեան տակ էր, բացի Ժառանգաւորաց դպրո-

ցում սովորած մի քանիսից, երկար տարիներ շարունակ ոչ մի նոր տգէտ ու անուս չէր ընդունում, քաջ իմանալով, որ այդ տգէտ ու անկիրթ դոնապանները, ժամհարներն ու ծառաները, եթէ վնասակար իսկ չլինէին եկեղեցուն, իրենցով եկեղեցու վրայ պիտի ծանրանային միայն: Նա սպասում էր իւր Ժառանգաւորաց Ճեմարանի սաների աւարտելուն: Իսկ միւս կողմից նոյն արգելքը շատ էր աշխատում դնել և քահանաների վերաբերմամբ, կանոնական կոնդակով հրամայելով Սինոդին և առաջնորդներին, որ քահանայ չձեռնադրեն, մինչև այդ քահանայացուները գոնէ վանական դպրոցներում ուսած չլինէին: Սակայն Կաթողիկոսի հրամանը գործադրող և հասկացող սերունդ պէտք էր, որ գոյութիւն չունէր: Իրաւունքն ու իշխանութիւնն այնպիսի սերնդի ձեռին էր, որ ո՛չ Կաթողիկոսի հրամանն էր հասկանում և ո՛չ իսկ իւր կոչման և իշխանութեան նշանակութիւնը: Այդ սերնդի ձեռով հակառակ Կաթողիկոսի 1868 թ. կանոնական կոնդակին, տգէտ քահանաների թիւն աւելանում է, ուստի նա 1872 թ. յունուարի 27-ին յատուկ կոնդակով կրկին պատուեր է տալի Ս. Սինոդին քահանայացուների մասին: Նախ ինչպէս սովորաբար իւր բոլոր կոնդակների մէջ յիշեցնում է Սինոդին մեր եկեղեցու հին բարի կարգերը, վանքերի նշանակութիւնը՝ Ոսկեդարից սկսած քահանաներ և ուսեալ եկեղեցականներ պատրաստելու համար, ապա ցաւում է, որ ներկայումս այդպէս չէ, քահանաներն առանց պատրաստութեան են լինում: «Պարզապէս տեսանեմք, - գրում է կաթողիկոսը, - յօրագիրս Սինոդիդ՝ ի հարցաքննութեան թերթից քահանայացու դպրաց, զի առաջնորդք վիճակաց կողմանցս և յաջորդք նոցին, մանաւանդ Երևանայ վիճակին, յակամայից ստիպեալ ի կարևորութենէ քահանայի՝ առաջի առնեն զձեռնադրելի անձինս ի Սինօդ առ ի լնուլ զհոգևոր պէտս ժողովրդեանն: Բայց տեսանելով

մեր, զի փոխանակ յառաջադիմութիւն անդր փութացուցանելոյ զժողովուրդն՝ բարոյական կրթութեամբ, օր ըստ օրէ տգիտութեան տան պատճառս՝ զանուսումս և զտխմարս ձեռնադրելով ի քահանայ. ուստի առ ի զառաջս առնուլ այնպիսի անկարգութեանց պատճառելոց ի տգիտութենէ ձեռնադրելի գիւղական դպրաց՝ ի բարոյական վնասումն ուղղութեան պարզամիտ ժողովրդեան և բարեկարգութեանց Եկեղեցւոյ, առաջադրեմք Սինօդիդ, փութացուցանել զպատուէր հրամանի առ ամենայն առաջնորդս և յաջորդս վիճակաց, զի յատուկ վերահասութեամբ իւրեանց պարտաւորեսցեն այսուհետև զամենայն քահանայացու դպիրս, որ չիցեն ուսեալք ի հոգևոր դպրոցս, մանաւանդ գիւղօրէիցն, անշուշտ նախ քան զսկզբնաւորութիւն գրագութեանց, որ վասն ձեռնադրութեանն, ուսանել քաղաքացի ընծայացուաց ի հոգևոր դպրոցս, իսկ գիւղացոցն ժողովեալ ի վանօրայս մէն մի գաւառաց ուսանիցին ի վանական դպրոցին զհարկաւորն քահանայական կոչման գիտելիս յընթացս գոնէ երից ամացս»: Այնուհետև աւելի մանրամասնելով ձեռնադրութեան պայմանները, առաջարկում է ***խստիւ պատուիրել*** առաջնորդներին ու յաջորդ եպիսկոպոսներին՝ «չձեռնադրել երբէք զոք յաստիճան քահանայութեան, սարկաւագութեան և կղերիկոսութեան առանց լուծման և տնօրինութեան Սինօդի», որպէս զի զեղծումներ չլինին:

Սորանից աւելի պարզ ու գովանի կարգաւորութիւն չէր կարող լինել: Բացի այդ՝ 1868 թ. կանոնական կոնդակի Գ. Ե. և Զ. յօդուածներով օրինադրում է նաև, որ իւրաքանչիւր համայնք հանրադրութեամբ ընտրէ իւր եկեղեցական դպիրներից արժանաւորներին քահանայական կոչման համար և ընտրուածի վարք ու բարքի մասին վկայութիւն տայ հանրագրի մէջ: Կաթողիկոսի նպատակն էր այսու առաջն առնել այն զեղծումների, որոնցով հակառակ Հայոց եկեղե-

ցու աւանդութեան, առանց ժողովրդի ընտրական մասնակցութեանը, առաջնորդ եպիսկոպոսները հարկից ազատ քահանայորդիներին իրենց հաճոյքով միայն քահանայ էին ձեռնադրում, կամ թէ այս կամ այն աղայի ազդեցիկ մարդու դրդմամբ քահանայ էին տալիս ժողովրդեան, որով և ժողովրդի իրաւունքը բռնաբարուում էր:

Նոյն կանոնական կոնդակի մի երրորդ նշանաւոր կէտն էլ այն էր, որ, երբ մի անգամ քահանան ժողովրդի հաճութեամբ էր ընտրուում, ժողովուրդը պարտաւորուում էր քահանայի ձեռնադրութիւնից յետոյ նիւթապէս ապահովել նորան և երբեք չպահանջել հոգևոր կառավարութիւնից քահանային հեռացնել՝ իւր ծուխից փոխադրելով ուրիշ տեղ: Քահանան ցմահ մի որոշ ծուխի և եկեղեցու հետ կապուած էր, այդ էր մեր եկեղեցու հին կարգը:

Բոլորը բարի ու քաջ մտածուած կարգադրութիւններ: Սակայն ցաւելով պէտք է ասել, որ օրէնքը գործադրողներից և նոյն իսկ Կաթողիկոսին շրջապատողներից ու մերձաւորներից շատերը, որոնց վստահացած էր Կաթողիկոսը, փոխանակ նորա դրած կանոնների ճիշտ գործադրութեանը հսկելու, այդ կանունները դարձրին մի առժամանակ սիմոնականութեան (57) աղբիւր: Կանոնական կոնդակով ժողովրդի քահանայ ընտրելու իրաւունքը վերահաստատուած էր: Այս հանգամանքի ճիշտ գործադրութեանը հսկելու միջոցն ունէր Կաթողիկոսը. մէջտեղում պիտի լինէր ժողովրդի հանրագիրը ստորագրուած ու պետական կնիքով վաւերացուած, որ և Կաթողիկոսը միշտ, հարկը պահանջելիս պէտք է տեսնէր: Այստեղ խաբէութիւն անելը դժուար էր. խաբողն ու կեղծողը օրէնքի խստութեամբ կարող էր պատժուել: Սակայն այդպէս հեշտ չէր Կաթողիկոսի համար անձամբ վերահասու լինել կանոնների միւս երկու կէտերի գործադրութեանը:

Գևորգյան ճեմարանի միջանցքը երկրորդ հարկում (1880)

Ժողովրդից պահանջուում էր որոշ չափով կրթուած և ուսեալ քահանայացու ընտրել և ապա ապահովել նորան: Ժողովուրդը դժուարանում էր թէ՛ ուսեալ քահանայացու ճարել և թէ՛ նորա ապահովութեան համար հոգալ: Միւս կողմից, միշտ կային բազմաթիւ տգէտ ու ցոփ մարդիկ, մեծ մասամբ քահանայորդիք, որոնց համար ժառանգական էր դարձած շահաւէտ քահանայութիւնը, որոնք և պատրաստ էին միամիտ ժողովրդին խաբելու, նորա վրայ նիւթապէս չծանրանալու խոստումով: Եւ ահա իւր կրթուած քահանաներին նիւթապէս ապահովելու գործից փախչող անգէտ ժողովուրդը պատրաստ էր այդպիսիների համար հանրագիր տալու: Եւ սոքա, «յուսացեալ ի քահանայորդի լինել իւրեանց, - ինչպէս գրում է Կաթողիկոսը, - ոչ ուսանին ի ժամանակին զհարկաւոր գիտելիս և ոչ պատրաստեն զինքեանս ըստ արժանւոյն քահանայութեան, այլ անցուցանելով զցոփական կեանս բազմատեսակ մոլութեամբք՝ ի ձեռնադրութեան պահու ստացեալ ի ժողովրդոց ոմանց զվկայագիր դիմեն առ առաջնորդս»:

Ձեռնադրող եպիսկոպոսների, առաջնորդների և Սինոդի պարտքն էր այդպիսիներին յետ դարձնել, իբրև քահանայութեան անարժան մարդիկ. և Կաթողիկոսի սահմանած օրէնքի ճիշտ գործադրութեանը հսկելով, պէտք է հասկացնէին ժողովրդին, թէ որչափ կարևոր է պատրաստութիւն ունեցող ու լաւ վարքի տէր քահանայ ընտրելը, և թէ հարկաւոր էր այդպիսի քահանային ապահովել: Սակայն նոքա, որոնց ձեռքը տրուած էր օրէնքի գործադրութիւնը, փոխանակ իրենց այդ պարտքը կատարելու, տարիներ շարունակ, մանաւանդ Կաթողիկոսի ծերութեան վերջին տարիները, այդ դրութիւնը դարձրին շահաւէտ աղբիւր իրենց համար, այդ տխմարներին ու ցոփերին սիմոնականութեամբ քահանայ ձեռնադրելով: Կար մէջ տեղում ժողովրդի անրա-

գիրը քահանայացուի ընտրութեան, նորա բարի վարք ու բարքի և նորան նիւթապէս ապահովելու համար, իսկ միւս կողմից կար և առաջնորդ եպիսկոպոսի կամ նոյն իսկ Սինոդի վկայականը քահանայացուին իբր քննած ու արժանի գտած լինելուն: Կաթողիկոսն ի հարկէ անձամբ չէր կարող քահանայացուներին քննել ու ճանաչել: Եւ մինչդեռ նա հաւատացած էր, որ սահմանած կանոնները ըստ կարելւոյն գործադրուում էին, օրէնքն այդպէս չարութեամբ գործադրողները, ինչպէս ասում են, հետզհետէ աւելի ընդլայնում են իրենց եկամուտների աղբիւրը՝ ոչ միայն ժողովրդի հանրագիտութեամբ եկած ցոփերին ու տխմարներին արծաթով արժանի համարելով և ձեռնադրելով, այլ և, ինչպէս պատմում են, Կաթողիկոսի հիւանդութեան վերջին տարիները, առանձին գործակալների ձեռքով, նոյն իսկ հարկաւոր չեղած տեղը քահանայացուներ ստեղծելով ու ձեռնադրելով: Թէ ով էին քահանայութեան շնորհքն այդպէս արծաթով վաճառողները և ինչպէս էին նոքա իրենց վաճառքը կատարում, այդ ապագայ պատմաբանին ենք թողնում:

Տգէտ ու տխմար քահանաների թիւը հետզհետէ աւելանում է, և այդ քահանաները մի անգամ փողով քահանայ դարձած լինելուց յետոյ, աշխատում են ժողովրդից յետ ստանալ իրենց տուած փողը, թէպէտ և հանրագիր կազմելու ժամանակ խոստանում էին ժողովրդին չծանրանալ նորա վրայ: Սկսուում են կռիւներ այդ քահանաների և իրենց ծխականների մէջ. առաջանում են շատ անախորժ դէպքեր: Հետզհետէ շատ խնդիրներ ու բողոքներ են գալիս Սինոդին ծխականներից քահանաների չարաբարոյութեան համար, ու խնդրում են քահանաների տեղափոխութիւններ, և կամ հենց իրենք այդ քահանաները գոհ չլինելով իրենց վիճակից, խնդրում են իրենց տեղափոխել ուրիշ տեղեր: Խնդիրը վերջ ի վերջոյ հասնում է Կաթողիկոսին, և 1881

թուականի ամառը, ինչպէս պատմում են, Կաթողիկոսի համար բացուում է իւր շրջապատողների սիմոնական արարքը: Այդ դէպքը եկեղեցու բարին ցանկացող և ամեն բանի սրտացաւ Կաթողիկոսի համար շատ մեծ հարուած էր: Նա տեսնում է իւր բոլոր բարի կարգադրութիւններն այդ մասին ի չար գործ դրուած, և այս հանգամանքն այնքան ծանր տպաւորութիւն է գործում նորա վրայ, որի առողջութիւնը վերջին տարիներին արդէն բոլորովին խանգարուած էր, որ նա չէ դիմանում այդ վշտին, և, պատմում են, այդ դէպքի ազդեցութեան տակ ստանում է կաթուած:

Այնուհետև նոյն 1881 թուին, Կաթողիկոսի հրամանով Սինոդն, իբրև այդ անկարգութեանց առաջն առնելու համար, հրամանագրում է ամենայն վիճակաւոր առաջնորդներին, թեմական ատեաններին, յաջորդներին և հոգևոր կառաւարութիւններին ճիշտ գործադել Կաթողիկոսի 1868 թուի կոնդակը. բայց այդ միայն քահանաների տեղափոխութեան խնդրին էր վերաբերում: Պէտք էր ***որոշ խմբագրութեամբ*** խոստմնագիր առնէին ժողովրդից, որ նախ՝ «ամենայն անաչառութեամբ, անկողմնապահութեամբ և խղճմտանօք» առաքինի վարքի տէր և ուսեալ անձեր ընտրէին քահանայացու. երկրորդ՝ ընտրող ժողովուրդն այլ ևս իրաւունք չունենար խնդրելու հոգևոր իշխանութիւնից որ և է պատճառով հեռացնել կամ տեղափոխել իւր քահանային, այլ անբաւականութեան դէպքում գանգատել միայն հոգևոր իշխանութեանը, որ կը պատժէր յանցաւորին, և երրորդ՝ գրով ու ստորագրութեամբ պիտի պարտաւորուեր ժողովուրդը նիւթապէս ապահովել իւր քահանային «տրօք և վարելահողովք»: Իսկ քահանայացուներից խոստումն պէտք է առնէին մինչև կեանքի վերջը մնալու ըստ եկեղեցական կանոնադրութեան, այն եկեղեցու մէջ, որի վրայ ձեռնադրուած է: Իսկապէս կարևոր կարգադրու-

թիւններ, որոնց լաւ գործադրութիւնը կարող էր ապագայի շատ անկարգութեանց առաջն առնել, բայց Կաթողիկոսի կանոնական կոնդակի այդ կրկնութիւնն արդէն ձեռնադրուած տխմարների խնդիրը չէր կարող բարեկարգել: Այս դժուար գործը գլուխ հանելու համար հարկաւոր էր Կաթողիկոսի առաջին տարիների առողջութիւնն ու եռանդը, որ այլ ևս, դժբախտաբար, չունէր նա: Պատմում են, որ իբր ձեռով արդէն գրած է եղել կոնդակի սնագրութիւնն, որով պիտի արգելէր որոշ տարիների ընթացքում նոր քահանաներ ձեռնադրելը, մինչև որ եղածների խնդիրը որոշ կարգի մէջ մտցնէր. բայց այդ կոնդակը չհրատարակուեցաւ, որովհետև Կաթողիկոսն այլ ևս իւր առաջուայ կամքի ոյժը չունէր:

ԺԸ.

ԱՆԻՐԱՒ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻՑ ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՐԱԾ ՎՇՏԵՐԸ ԻՒՐ ԿԵԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Եւ այսպէս Մեծագործ Կաթողիկոսը, որ իւր բոլոր մարմնական ու մեծ հոգեկան կարողութիւնները գործ էր դրել իւր եկեղեցու վրայ, քահանաների այս խնդրի պատճառով, թէ՛ իւր մերձաւոր շրջապատողներից և թէ՛ հայ հասարակութիւնից դառնացած սրտով պիտի իջնէր գերեզման: Որովհետև հասարակութիւնը տեսնում էր քահանաների ձեռնադրութեան մէջ կատարուած զեղծումները, և մոռանալով կամ անգիտանալով Մեծ Հայրապետի գործերը, փոխանակ օրինաւոր կերպով չարիքի առաջն առնելու մասին հոգալու, անդուռն բերանից լուտանքներ էին միայն թափում և քարոզում անհաւատարմութիւն և անվստահութիւն առ Կաթողիկոսն և Մայր Աթոռը: Եւ այդ լուտանքներն այն աստիճանի էին հասնում, որ մինչև անգամ կասկած էին յարուցանում կարօտեալների համար ժողովուած դրամների մասին, որոնք նոյն իսկ Կաթողիկոսի ձեռին չէին, այլ Սինոդի հրամանի տակ Մայր Աթոռի (որ և միևնոյն Սինոդի) գանձապահի ձեռին, աւանդապահութեան արդեանց մատենի մէջ գրուած, ինչպէս էր, օրինակ յօգուտ Ալաշկերտի գաղթական հայերի ժողովուած գումարը:

Մարդիկ որ գուցէ իրենց կեանքում լումայ անգամ չեն ձգած աղքատի գանձանակը, համարձակում էին Հայրապետի դէմ բարբանջել, այն Հայրապետի դէմ, որ իւր կեանքի մէջ շատ նեղեալների միսիթարող և սփոփիչ էր հանդիսացել, ոչ միայն իւր վարդապետութեան և առաջնորդութեան ժամանակ, այլ և իւր կաթողիկոսութեան օրով, հեռաւոր և մերձաւոր կարօտեալներին օգնութեան ձեռք կարկառելով: Այսպէս, 1870 թ. մայիսի 24-ին, Ազգային Սահմանադրութեան տարեդարձի օրը, առաջացաւ Պերայի մեծ հրդեհը, այրելով 7000-ից աւելի շէնքեր և 1500-ի չափ կենդանի զոհեր տանելով: Այդ ժամանակ Կաթողիկոսը Թիֆլիսում էր: Զգացուած թշուառ հայերի վիճակով, նա անձամբ Թիֆլիզում և առաջնորդների ձեռով վիճակներում հանգանակութիւն է բանում և կարճ միջոցում տասն հազար ռուբլուց աւելի նպաստ է հասցնում Ռուսաց դեսպանատան միջոցով կարօտեալ հայերին:

Մի տարի յետոյ հարկաւոր էր Պարսկաստանի մեծ սովի ժամանակ օգնել թէ՛ Պարսկաստանում սովեալ հայերին և թէ՛ սովի ձեռից Արարատեան դաշտը գաղթողներին: Հրամայում է Սինոդին վերջիններիցս շատերին Մայր Աթոռի ագարակում պատսպարել և ամիսներ շարունակ կերակրել, մինչև մի աշխատանքի դուռ գտնեն,- նա տարիներ շարունակ ձրիակեր դատարկապորտներ պահելու մտքից հեռու էր,- իսկ մնացած կարօտեալների համար պատուիրել առաջնորդներին հանգանակութիւն անել վիճակներում և ժողովուած նպաստն առանձին յանձնաժողովի միջոցով բաժանել թէ՛ Պարսկաստանում եղածներին և թէ՛ Ռուսաց սահմանները գաղթածներին:

Երեք չորս տարի յետոյ 1875 թ. սոսկալի սովն սպառնում է Փոքր Ասիայում Գաղատիայի, Եօզղատի և այլ տեղերի հայերին: Կաթողիկոսը շտապում է դարձեալ կառավարութիւնից թոյլտուութիւն ստանալու հանգանակութեան համար. առաջնորդների միջոցով նպաստներ ժողովելով՝ Սինոդի ձեռով ուղարկում է Կ. Պոլսի մասնաժողովին սովեալներին օգնելու:

Գալիս է 1877-1878 թուի ռուս-թիւրքական պատերազմը: Ա. Տէր – Ղուկասովը (58) նահանջում է, և Ալաշկերտի ու Բագրևանդի բնակիչներից տասնեակ հազարաւոր հայեր թողնում են իրենց տունն ու տեղը և մերկ ու քաղցած գաղթում են Արարատեան աշխարհը յունիս ամսի շոգերին: Էջմիածինն և շրջակայ գիւղերը լցուում են կարօտեալներով, և Կաթողիկոսը իբրև ժողովրդի հայր, շտապում է նորից օգնութեան հասնելու: Որքան հնար է շատերին տեղաւորում է Ղազարապատում, վանքի ագարակում, մերձակայ վանքերում, Վաղարշապատում, հազարաւորներին ամեն օր վանքի շտեմարանից հաց և միաբանութեան սեղանատնից կերակուր տալով, այլ և ըստ կարելւոյն, հին հանդերձներ, հիւանդների խնամքի համար բժիշկ է կարգում, հարկաւոր դեղեր տալով: Բայց ի՞նչ կարող էր անել Կաթողիկոսը կամ Մայր Աթոռը միակ՝ այդ հազարաւորներին խնամելու համար: Բարեբախտաբար հետզհետէ զարթնում էր այդ ժամանակ մեր ժողովրդի մէջ թշուառին օգնելու զգացումը: Ձմեռը վրայ է հասնում, և Կաթողիկոսը կոնդակներով դիմում է Վաղարշապատի շրջակայ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նոր-Բայազիտի գաւառի հայ բնակիչների գթասրտութեանը, յորդորելով, որ իրենց տարաբախտ եղբայրներին ապաստանի տեղի տան և այդ թշուառներին Սինոդի յանձնարարական թղթերով խումբ-խումբ ուղարկում է գիւղերը, միւս կողմից ընդհանուր հանգանակութիւն է բանում նոցա համար: Շուտով վերջանում է պատերազմը, տեղի է ունենում Բերլինի դաշնադրութիւնը. այժմ պէտք էր աշխատել առանց յապաղելու այդ տարաբախտ գաղթականնե-

ին վերադարձնել իրենց աւերուած հայրենիքը, յթողնել նոցա, որ մեր կողմերում անգործ թափառելով անբարոյականանային: Այդ աշխատանքը, հարկաւ, միայն Կաթողիկոսի վրայ չէր ծանրացած, բայց և Կաթողիկոսն իւր չափով օգնում է: Նա ժողովրդի հետ գաղթած քահանաների ձեռը ոչ թէ ժողովարարութիւն անելու համար յանձնարարական թղթեր է տալիս, այլ հրամայում է ամենքին, որ առաջնորդ հանդիսանան ժողովրդի վերադարձին, և երբ յետ դառնալ չէին ցանկանում շատ քահանաներ, խստիւ հրամայում է չընդունել գիւղերում այդպիսիներին: Նոքա ստիպուած էին վերադառնալ:

Գաղափարով հակառակ լինելով գաղթելուն, Մեծագործ Կաթողիկոսը գաղթականութեան գլխաւոր պատճառը ոչ այնքան պատերազմից առաջացած նեղութիւնների մէջ էր տեսնում, - Գեներալ Լազարեւը (59) հօ մեծ արգելք էր հանդիսացել Կարսի կողմից գաղթողներին, և սոքա չէին կոտորուել չգաղթելով, - որքան ժողովրդի տգիտութեան մէջ: Հարկաւոր էր ժողովրդին լուսաւորել: Ուստի հանգանակութեամբ ժողովուած 17. 476 ռուբլուց 1118 ռուբլին Սինոդի ձեռով բաշխելով իբրև նպաստ վերադարձողներին, մնացած 16. 358 ռուբլիով տոկոսաբեր թղթեր է գնում և հրամայում, որ Մայր Աթոռի աւանդատանը պահելով, տոկոսները գործ դնեն Իւչքիլիսէի քայքայուած վանքը նորոգելու և այրուած դպրոցը վերաշինելու համար՝ Բագրեւանդի առաջնորդ Հովհաննէս վարդապետի ձեռով, որին յատուկ այդ նպատակի համար Էջմիածին է կանչում կարևոր խրատներ տալու: Բայց որքան լուտանքի տեղիք չէր տուած ուսումնասէր Կաթողիկոսի այս բարի ու խոհական հրամանը, որով ալաշկերտցոց համար ժողովուած փողը նոյն ալաշկերտցոց լուսաւորութեան համար էր գործ դրուում:

Սակայն Կաթողիկոսը այն թեթև բնաւորութիւններից չէր, որոնց համար մեծ նշանակութիւն ունի թէ ուրիշները կամ աւելի ևս լրագիրները ինչ կասեն: Նա իւր որոշ համոզմունքներն ունէր և որոշ ու գծած ճանապարհով ևս անխափան ընթանում էր առաջ: Լրագիրները որքան խօսէին և ինչ որ խօսէին, հայրաբար ներում էր նոցա անգիտութեանը և իւր հասկացածը գործադրում և շարունակում տառապեալներին օգնելու հրաւերը կարդալ իւր հօտին, ինչպէս շուտով վերայ հասնող Վասպուրականի սովի ժամանակ, 1879-1880 թուին, երբ համաճարակ թանգութիւնը նոյն իսկ Երևանի նահանգից հարիւրաւորներ և հազարաւորներ բերում էր Մայր Աթոռը, ուր նոցա կերակրելու հոգսը պէտք էր տանել: Մայր Աթոռի շտեմարանները արդէն դատարկուած էին, և մինչ Կաթողիկոսը, որ իւր անձի մասին չէր մտածում, մի կողմից արդէն հոգատանջութեան մէջ էր, թէ ինչպէս պէտք է կերակրեր իւր միաբանութիւնն ու Ժառանգաւորաց Ճեմարանի երկու հարիւր սաներին, եթէ այդ սովն ու թանգութիւնը մի տարի ևս տևէր, միւս կողմից նորան դառնացնում էր եկեղեցու դէմ աւերիչ հոսանք հանողների աղմուկը:

ԺԹ.

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ ԵՒ ԱՅԼ ՄԱՆՐ ՈՒՂԵԳՆԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒ ՕԳՈՓՈՒԹԻՒՆՆԵՐ. ԲԻՒՐԱԿԱՆԻ ԱՄԱԹԱՆՈՅ

Գէորգ Դ. Կաթողիկոսը, միշտ գործով զբաղուած լինելով, Մայր Աթոռից անտեղի բացակայել չէր սիրում և չէր էլ կարող, քանի որ ամենայն բանի հոգն ու վերահսկողութիւնն անձամբ պիտի անէր և Սինոդը նորա հրամանի տակ էր: Իւր կաթողիկոսութեան միայն առաջին տարին երկար բացակայեց Էջմիածնից, կարևոր գործերի համար Ս. Պետերբուրգ գնալով՝ Նորին Մեծութեան կայսր Ալէքսանդր Բ-ին ներկայանալու համար: Յուլիսի 11-ին, տեղակալ կարգելով Սարգիս եպիսկոպոս Ջալալեանին և հրաման տալով, որ առ ժամանակ քահանայի և աբեղայի ձեռնադրութիւնը չլինի՝ մինչև ձեռնադրութեան համար անելիք իւր կարգադրութիւնը, որ վերևում տեսանք, 13-ին ճանապարհ է ընկնում և այդ ճանապարհորդութիւնից օգտուելով՝ միանգամայն այցելութիւն է անում Ռուսաստանի, Լեհաստանի և Աւստրիայի մէջ ցրուած բազմաթիւ հայ գաղթականներին: Մի քանի տեղ Ս. Էջմիածնի սեպհականութեանց մասին կարգադրելով և Մայր Աթոռին հասանելի որոշ գումարներ գանձելու հոգը տանելով, նա ամենայն

տեղ քարոզում էր սէր և հաւատարմութիւն դէպի Մայր Աթոռ, հայրենի կրօնն ու լեզուն. հիմնում էր դպրոցներ, կամ եղածները բարեկարգելուն փոյթ տանում. եկեղեցիների տարիներով խառն հաշիւները մաքրում, երեցփոխաններից հաշիւները պահանջելով, և որպէս զի երեցփոխաններն իրենց հաճոյքներով չվատնեն եկեղեցու եկամուտները կամ գոյքերը, հաշուատեսներ էր կարգում երեցփոխանների գործի համար: Այսպէս նա օրերով կամ շաբաթով այս ու այն տեղերում մնալով, անցնում է Ալեքսանդրապոլ, Ախլցխա, Ախալքալակ, Բորժոմ, Վլադիկաւկազ, ուր ընդառաջում է Հայրապետին նահանգապետ Լորիս-Մելիքով (60), որի տանը և երեք օր հիւրասիրուում է: Ապա ուղևորուում է դեպի Մոզդոք, ուր նոր դպրոց է բանում, և անցնելով Ղզլար և այստեղ ևս նոր դպրոցի հիմ դնելով՝ հասնում է Աստրախան, ուր դարձեալ դպրոց է բանում և գանձում է Սերովբէ եպիսկոպոսի անուամբ մնացած մեծ գումարը: Ապա Ցարիցինի ռուս հասարակութեան կողմից սիրալիր ընդունելութիւն գտնելուց և քաղաքին օրհնութեան կոնդակ և սրբոց մասունք բաշխելուց յետոյ՝ դառնում է Նոր-Նախիջեւան, ուր քաղաքի մէջ իշխող խռովայոյզ կուսակցութիւնները վերացնում է, հաշտեցնելով կուսակցութիւնների երկու պարագլուխներին, Խալիպեանին և Հայրապետեանին (61): Նախիջեւանում և Ս. Խաչի վանքում ևս նոր դպրոցներ բանալով և Մայր Աթոռի համար նուէրներ ու հնութիւններ ժողովելով, ուղևորուում է դէպի Մոսկուա: Այստեղ տասներկու օր հիւրասիրուում է Յովհաննէս Յովնանեանի տանը նորա բացակայութեան ժամանակ և սեպտեմբերի 3-ին մեկնում է դէպի Ս. Պետերբուրգ:

Ամենայն տեղ Կաթողիկոսը սիրալիր ընդունելութիւն է գտնում, ժողովրդի բազմութիւնը մեծ հանդիսով ընդառաջում էր եկեղեցական թափորի հետ, և հենց ինքը Կաթողի-

կոսը, հայրապետական բարձր դիրքին առանձին շուք տալու համար, բաց չէր թողնում ոչ մի արտաքին ձև, որ կարող էր կաթողիկոսական ճանապարհորդութիւնն առանձին կերպով հանդիսաւոր դարձնել: Հայրապետը դեռ քաղաք չհասած, առաջ էին գալի առանձին պատգամաւորներ: Ուղերձներն ու ճառերն անպակաս էին, ինչպէս և շքեղ և մեծածախս հացկերոյթները: Ս. Պետերբուրգում իջևանում է Հայոց եկեղեցու տանը: Այստեղ լաւ է համարում, որ հայ գաղութը, ի պատիւ իւր մեծ ծախսով ճաշ պատրաստելու փոխանակ, ճաշի համար ժողոված գումարը բարեգործական նպատակի յատկացնէ: Գնում են տասն ու վեց Ռուսաց ներքին փոխառութեան խաղատոմսեր, ութը Կաթողիկոսի կարգադրութեամբ Զեյթունի դպրոցների համար և ութը՝ Կ. Պոլսի Ազգային Ս. Փրկչեան հիւանդանոցի համար, այնուհետև տասներկու թանկագին շուրջառ Պրուսայի և իւր շրջակայքի եկեղեցիների համար:

Հոկտեմբերի 14-ին ներկայանում է Կաթողիկոսը Նորին Մեծութեան, Ալեքսանդր Բ. կայսին Զմեռային պալատում: Ներկայանալիս, արծաթեայ սկուտեղի վրայ մատուցանում է կայսրին ադամանդայեռ գեղեցիկ ոսկե տփի մէջ ամփոփուած Ս. Գէորգ Զօրավարի մասունք, որ և բարեպաշտ կայսրն ընդունում է մեծ ջերմեռանդութեամբ: Յաջորդ օրը Կաթողիկոսը հրաւիրուում է մեծ իշխան Կոստանդին Նիկոլայևիչի դստեր մեծ իշխանուհի Օլգայի Յունաց Գէորգի թագաւորի հետ, պսակադրութեան հանդէսին և տաճարի մէջ և հացկերոյթի ժամանակ իբրև պատրիարք իրեն արժանավայել առաջին տեղն է բռնում ռուս հոգևորականութեան մէջ: Ապա բաւական ժամանակ Ս. Պետերբուրգում է մնում, պաշտօնական այցելութիւններ տալով, և ընդունելով, քաղաքի նշանաւոր յիշատակարանները ու թանգարանները տեսնելով և արտաքին գործերի մինիստր կոմս Գորչակովից (62) հիւրասիրուելով և հոգալով, որ երկու մայրաքաղաքի՝ Ս. Պետերբուրգի և Մոսկուայի զինուորական դպրոցների մէջ հայ մանուկների համար կրօնագիտութեան դասեր մտցնեն, ուսուցչի ռոճիկը հայ եկեղեցիներից նշանակելով: Նոյեմբերի 25-ին նորից ներկայանում է Նորին Մեծութեանը հրաժեշտի հրաման խնդրելու: Վերադարձին անցնում է Վարշաւի, Կրակովի, Իլվովի վրայով մինչև աւստրիական Չերնովեց քաղաքը, ուր ընդառաջում են Բուքովինայի, Գալիցիայի, Մոլդովալաքիայի և Բեսարաբիայի երեսուն հինգ կալուածատէր հայ պատգամաւորներ, և Քիշնևվի, Օդեսայի, Սիմֆերոպոլի, Խարսասուբազարի, Թէոդոսիայի, Կերչի, Փոթի, Քութայիսի վրայով անցնելով հասնում է 1868 թ. յունուարի 26-ին Թիֆլիս և փետրուարի 27-ին ժամանում Մայր Աթոռ, մեծ ուրախութիւն և ոգևորութիւն պատճառելով Մայր Աթոռի միաբանութեանը:

Այնուհետև Կաթողիկոսն ամառները միայն օդափոխութեան պատճառով բացակայում էր կարճ ժամանակով Էջմիածնից, առաջին ամառը Ս. Գեղարդայ վանքը գտնելով, երկրորդ տարին երկու ամիս Հառիճոյ վանքում անցնելով: Իսկ 1870 թուին, մարտի 25-ին Պարսից շահից առաջին կարգի «Շերի խուրշիդ» շքանշանը Ս. Պետերբուրգի դեսպանի ձեռով ստանալուց յետոյ՝ ապրիլի 25-ին գնում է Թիֆլիս, բժիշկների խորհրդով ջերմուկներից օգտուելու համար, ուր և մնում է մինչև սեպտեմբերի 19-ը, երբ մեկնում է Մայր Աթոռը գալու: Թէ՛ գնալիս, թէ՛ գալիս ընդունուած շքեղութիւնն ու հայրապետական գնացքի վայել բոլոր հին կարգերը միշտ պահելով, ժողովրդից և կառավարութիւնից ստանում էր միշտ հարկաւոր յարգանքն ու պատիւները, Թիֆլիսից վերադարձին հիւրասիրուում է Երևանի նահանգապետից Ծաղկոցաձորում և առիթից օգտուելով, խնդրում

է նահանգապետին, որ ջանայ Երևանի նահանգում ծաղիկ հիվանդութեան պատուաստն ընդհանրացնելու:

Յաջորդ տարին յունիսի 24-ին Սևանայ վանք է գնում օդափոխութեան և մի ամսից յետոյ դարձեալ Թիֆլիզ է գնում, Աղեքսանդր Բ կայսրի Թիֆլիսին այցելելու պատճառով: Սեպտեմբերի 21-ին ներկայանում է կայսրին: Նոյն օրը երեկոյեան կայսեր կողմից այցելում են Կաթողիկոսին կոմս Շուվալով (63) և պաշտօնական զօրապետ Տէյլէն: 23-ին հիւրասիրուում է կայսերական ընթրիքին, իսկ 24-ին Կաթողիկոսին այցելուն են Մեծ Իշխան թագաժառանգ Ալեքսանդր Ալեքսանդրովիչ և Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ: Այնուհետև այցելութիւններ է ընդունում Կարնոյ նահանգի կուսակալ Մուստաֆայ փաշայից և Շահի եղբօրորդի Համզա Միրզա Հաշմեդիթ սպարապետից, որոնք իրենց տէրութիւնների կողնից Թիֆլիզ էին եկել մեծափառ կայսեր գալուստը շնորհաւորելու համար: Իւր սովորութեամբ, քանի Թիֆլիզում էր, այցելում է եկեղեցիները, դպրոցները և այլն. և նոյեմբերի 9-ին վերադառնում է Մայր Աթոռը, ուր և ընդունում է նոյեմբերի 28-ին Շահի եղբօր, Էշրէֆ Վալէտ խանի այցելութիւնը[1]: Յաջորդ տարին 1872 թ. գնում է դարձեալ Հառիճոյ վանքն օդափոխութեան:

Մեծ Կաթողիկոսը մի քանի տարի օդափոխութեան պատճառով՝ Մայր Աթոռից ամիսներ բացակայելով, շուտով արդէն նկատում է այն մեծ անյարմարութիւնը, որ կաթողիկոսները որոշ ամարանոցի տեղ չունենալով, ստիպուած էին մի վանքից միւսը թափառելու, շատ անգամ Մայր աթոռից բաւական հեռու տեղ: Նա տեսնում է շուտով,

[1] 1878 թուին Նասրէդդին շահը նոյնպես, իւր ճանապարհորդութեան ժամանակ, այցելում է Կաթողիկոսին, հիւրասիրուում է նորանից, դիտում է Տաճարն ու Ճեմարանը եւ նուիրում 1000 ռ., 700 Ճեմարանին եւ 300 աղքատների համար:

որ Կաթողիկոսի հեռաւոր բացակայութեան պատճառով եկեղեցական գործերի ընթացքը դանդաղանում էր, քանի որ Կաթողիկոսը անմիջապէս կարգադրութիւններ անել չէր կարող: Որպէսզի կաթողիկոսներն ամառային բացակայութեամբ անգամ վարչական գործերի, ինչպէս և Մայր Աթոռի միաբանութեան վրայ հսկելու հնարաւորութիւն ունենան, որոշում է մի հաստատուն ամարանոց շինել հայրապետների համար: Անձամբ շատ տեղեր ման գալուց յետոյ՝ ամարանոցի տեղ ընտրում է Ս. Էջմիածնից 18 վերստ հեռու, Արագած լեռան ստորոտում, Բիւրական գիւղը, որ զովասուն օդ և անոյշ ջուր ունի, և կառավարութիւնից խնդրելով՝ ստանում է 6 1\2 դեսեատին հող կաթողիկոսական ամարանոցի համար: Շուտով կանգնում է Բիւրականում մի վայելուչ շենք, որ ունի տասներկու սենեակ, երկու դահլիճ, բաղնիք, խոհանոց, հացատուն, գոմ և մեծ պարտեզ: 1873 թուին արդէն ամառն այդտէղ է անց կացնում և այնուհետև ամեն տարի ամառն այդտեղ էր օդափոխութեան գնում:

Ի.

ԳԷՈՐԳ Գ-Ի ՀԱՆԴԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՈՐԱ ՄԱՀԸ

Իւր տասնուվեցամեայ հայրապետութեան միջոցին չորս անգամ Ս. Միւռոնի օրհնութեան հանդէս է կատարում փառաւոր շքեղութեամբ և տասնուհինգ անգամ եպիսկոպոսական ձեռնադրութիւն է անում, ձեռնադրելով ընդամենը յիսունհինգ եպիսկոպոս: Վերջին միւռոնօրհնութեան փառաւոր հանդէսը կատարում է 1882 թ. մայիսի 16-ին տասնեակ հազարաւոր բազմութեան առաջ, ամենամեծ շքեղութեամբ: Առհասարակ նա սիրում էր եկեղեցական հանդէսների շքեղութիւն, քաջ իմանալով, որ այդ շքեղ հանդէսները, մեծ տպաւորութիւն թողնելով ժողովրդի վրայ, Մայր Աթոռի և կաթողիկոսութեան դիրքը բարձրացնում են ժողովրդի աչքին: Այսպիսի շքեղութեամբ նա կաթողիկոսական մեծ թափորով եկեղեցի էր իջնում ամեն հարկաւոր դէպքում ու ամեն մեծ տօնի, առանձնապէս Ս. Էջմիածնի տօնին, իւր օծման, անուանակոչութեան տարեդարձի օրերը և այլն, երբ երեկոյեանները հրախաղութիւն և լուսավառութիւն էր սարքել տալի ժողովրդի ու ուխտաւորների համար: Ամեն հանդիսաւոր տօնի օր՝ Զատկին, Ծննդեան, Նոր տարուն և այլն, հայրապետական մաղթանքը վեհարանի դիմացը կատարել տալուց յետոյ, որին

ինքը ներկայ էր լինում վեհարանի դահլիճում պատուհանի առաջ նստած, առջևը երկու աշտանակ վառած, ընդունում էր իւր միաբաններին, Ժառանգաւորաց Ճեմարանի սաներին, Վաղարշապատի՝ իւր հիմնած դպրոցի աշակերտուհիներին և աշակերտներին և ժողովրդին, ամենքին իրենց հարկաւոր խրատն ու յորդորը կարդալով:

Այդպիսի հանդէսներից վերջինը կատարուեցաւ 1882 թ. մայիսի 30-ին Կաթողիկէ Ս. Էջմիածնի տօնի օրը, երբ վերջին անգամ արժանացան ներկայ եղողները հայրապետական օրհնութեան և Ս. Աջի համբոյրին, երբ վերջին անգամ ալեզարդ Հայրապետը տկարութիւնից տանջուած և խոնջացած, կարծես զգալով, որ այս վերջինն է լինելու, իւր ամենամեծ խրատը տուաւ իւր Ճեմարանի երկու հարիւր քսան սաներին, տասն և աւելի անգան շեշտելով, որ «հայ լինին» նոքա, «լաւ հայ լինին», և ջանան շատ ուսում ձեռք բերել, «զի ուսումը միայն կեանք կուտայ հայութեան»: Ո՛րքան ազդու էին այդ խոսքերը, որոնք և կենդանացրել ու գեղեցկացրել էին Հայրապետի գունատ երեսը: Ոչ ոք չէր կարող առանց զգացուելու մնալ, տեսնելով թէ ի՜նչպես, մինչ ուսումնասէր Հայրապետի բերանից սիրայորդոր խրատներ էին հոսում, արտասուքի կաթիլներն յակամայից գլորուում էին նորա սպիտակափառ ալիքների վրայով ներքև: Անմոռաց կմնայ շատերի համար այդ վայրկեանը:

Այնուհետև յունիսի 10-ին Կաթողիկոսը պիտի գնար Բիւրականի ամարանոցը և փոխանակ կազդուրուելու իւր տկարութիւնից, յունիսի 7-ին պիտի ենթարկուէր նոր ցաւերի, ստանալով կաթուածի հարուած, իսկ միւս կողմից աւելի պիտի ծանրանար միզաքարի հիւանդութիւնը, որ ունէր: Բժշկական օգնութիւնն անօգուտ էր: Սեպտեմբերի 13-ին վերադարձաւ Մայր Աթոռը, բայց ոչ բոլորովին առողջ իւր ծանր և տագնապալից հիւանդութիւնից: Եւ նոյն ամսի

25-ին, Հայրապետի անուանակոչութեան օրը առաջին անգամ, Կաթողիկոսի Ս. Էջմիածնում եղած ժամանակը, հայապետական մաղթանքը Կաթողիկոսի ներկայութեամբ վեհարանի առաջ պիտի չկատարուէր, այլ Տաճարի զանգակատան դիմաց, և Կաթողիկոսը մաղթանքից յետոյ միայն երեք բարձրաստիճան եպիսկոպոսներ պիտի կարողանար ընդունել և օրհնել: Բայց և այնպէս երեկոյեան Մեծ Հայրապետը ցանկացաւ գոնէ իւր սաների երգեցողութունը լսել, և երեկոյեան Տաճարի գաւթում, հրախաղութեան և լուսավառութեան տակ, վեհարանի լուսամուտի առաջ նստած մխիթարուելով լսեց իւր մօտ երկու հարիւր քսան սաների երգեցուղութիւնը, և դիտեց իւր հոգևոր որդիներին ու հոգևոր հօտը, մինչև որ ժամը 9-ին իւր վերջին օրհնութիւնն ուղարկելով՝ ճանապարհ դրեց սաներին:

Հիւանդութիւնը քանի գնաց ծանրացավ, և Հայրապետն անտանելի ցաւերի մէջ դեկտեմբերի 6-ին ճաշից յետոյ կնքեց իւր մահկանացուն:

Մայր Տաճարի զանգակը երեք անգամ տխուր հնչեց ծանր, հաղորդելով ամեն սրտացաւ հայերի Մեծագործ Հայրապետի մահուան բօթը: Մեծ էր մանաւանդ Ժառանգաւորաց Ճեմարանի սաների վիշտն ու կսկիծը, որոնք անկեղծ սիրով սիրում էին իրենց Հոգևոր Տիրոջը և ցաւում էին, որ Նախախնամութիւնն այնպէս տնօրինեց, որ Հայրապետը չտեսաւ գոնէ իւր հիմնած Ճեմարանի առաջին պտուղը:

Մայր Աթոռի միաբանները և հայ ժողովուրդը, զանազան կողմերից պատգամաւորներ և պսակներ ուղարկելով, յուղարկաւորութեան փառաւոր հանդիսով պատուեցին Մեծագործ Հայրապետին: Մարմինը ամսի 8-12 մնաց Մայր Տաճարում, ուր ամենայն առաւօտ ու երեկոյ հոգեհանգիստ էր կատարուում: Հոգեհանգիստ էր կատարուում և Ճեմարանում: Ամսի 12-ին պատարագի ժամանակ կատարուեցաւ կաթողիկոսական վերջին օծման խորհուրդը, և ապա պատարագից յետոյ յուղարկաւորութեան մեծ հանդէսը:

Հանգուցեալի դագաղը մեծ թափորով Տաճարի արևմտեան դռնից ելնելով և Տաճարի հիւսիսային կողմից պտտելով, իւր շինած թանգարանի առջևից անցնելով՝ ելաւ Վանքի հարաւային կողմի ներքին և արտաքին մեծ պարիսպների երկու մեծ դռնից և մտնելով Ճեմարանի պարտէզը, ուղղուեցաւ դեպի Ճեմարան, ուր և շենքի հարաւային դռան առաջ կատարուեցաւ առաջին հոգեհանգիստը: Երկրորդ հոգեհանգիստը կատարուեցաւ Ճեմարանի հիւսիսային դռան առաջ: Ապա թափորը Վաղարշապատի հրապարակից անցնելով՝ երրորդ և չորրորդ հոգեհանգիստը կատարելուց յետոյ, մտաւ Վանքի արտաքին մեծ պարսպից ներս և ներքին պարսպի արևմտեան մեծ դռնից Վանքի գաւիթը մտնելով կանգ առաւ Տաճարի զանգակատան հիւսիսային առաջին սեան հիւսիսային կողմում: Այստեղ փորուած էր գերեզմանի տեղը, ուր և ամփոփուեցաւ հանգուցեալի մարմինը:Այնուհետև մինչև թաղման եօթներորդ օրը առաւօտ և երեկոյ կատարուում էր գերեզմանի վրայ հոգեհանգստի կարգը: Այնուհետև և ամենայն տարի Ժառանգավորաց Ճեմարանի աւարտող սաները պէտք է գնային այնտեղ՝ հոգեհանգիստ կատարել տալով՝ իրենց վերջին երախտագիտական պարտքը մատուցանելու իրենց բարերար Կաթողիկոսին և Մայր Աթոռին:

Թէ ինչ արաւ և ինչպէս ապրեց Գէորգ Կաթողիկոսն իւր եօթանասնամեայ կեանքի ընթացքում, այդ տեսանք մեր գծագրած նորա համառօտ կենսագրութեան մէջ: Նա ի զուր չապրեց: Եւ ի զուր չէր, որ հայ ազգը միաձայն կոչել էր նորան Ս. Լուսաւորչի Աթոռը բարձրանալու: Իւր նախորդը՝ Ներսես Ե մեծ մասանբ Թիֆլիսում ապրելով և ուրիշ

հոգսերով ծանրաբեռնուած լինելով, շատ ժամանակ չուներ Մայր Աթոռի մասին հոգալու: Աւելի ևս քիչ բան էր կարողացել անել Մատթէոս Կաթողիկոսն իւր կարճատև վշտալի կեանքի մէջ: Գէորգ Մեծագործ Կաթողիկոսին էր վերապահուած՝ ներքին ու արտաքին բարեզարդութեան վրայ հետևական և խոր մտածուած ծրագրով հոգալով՝ Մայր Աթոռին այն որոշ գոյնը տալ, որ Մայր Աթոռը մեծ մասամբ պահում է ցայսօր:

Կաթողիկոսական ամենայն իրաւանց քաջարի պաշտպանութիւն, կաթողիկոսական դիրքի բարձրացում, եկեղեցական հին կարգերի աւանդապահութիւն, ժամանակին կարևոր բարեփոխութիւնն ու բարեկարգութիւնը հասկանալով հանդերձ: Դպրոցների պաշտպանութեան և յառաջադիմութեան համար հոգալ, ուսումնական խորհուրդ կազմելով, դպրոցներ բանալով, ուսուցիչներ գնահատելով, ուսուցման ծրագիրներ և վարչական կանոններ կազմելով, թեմական վերատեսչութիւն հաստատելով: Կրթուած ու իրենց կոչման արժանի եկեղեցականներ ունենալու հոգսը տանել, Ս. Էջմիածնի Ժառանգավորաց Ճեմարանը բանալով, հոգևորականութեան և յատկապէս Մայր Աթոռի միաբանութեան ընդհանուր կարգապահութեան համար կարգադրութիւններ անելով, մտածուած կանոնական կոնդակներով շատ եկեղեցական գործեր կանոնաւորելով, ժամանակի պահանջի համեմատ կարևոր խստութեամբ վարուելով, այլև արժանաւորներին վարձատրել գիտենալով: Ազգային հնութիւնները ժողովել պահպանել. Ս. Էջմիածնի գրադարանը կարգաւորել և մանաւանդ հարստացնել, ամենահին յիշատակարանները ձեռ բերելով: Մայր Աթոռի արտաքին բարեզարդութեան և նորոգութեան ձեռնարկութիւնն ու շինութիւնը: Այնուհետև ձեռքից գրեթէ խլուած զանազան եկեղեցական կալուածքների և ստացուածքնե-

ի տիրանալու անդուլ աշխատանքը, որ մեծ մասամբ յաջողութեամբ էր պսակուում: Մայր Աթոռի աղքատ գանձարանը հարստացնելու մեծ ջանքը՝ եկամուտների վրայ մեծ հսկողութիւնը, տնտեսութեան համար առանձին վանական կառավարութիւն հաստատելով: Մեծ ծախսերի հետ և մեծ խնայողութիւն մտցնելով, այնպէս որ թանգարանի, Ճեմարանի և այլն մեծածախս գործերից յետոյ, չեղած տեղից Մայր Աթոռի գանձարանում, Մայր Տաճարի նորոգութեան, վեհարանի և միաբանների սենեակների շինութեան համար, որ նա ժամանակ չունեցաւ ձեռնարկելու՝ ինչպէս մտադիր էր, 375 հազար ռուբլի խնայած գանձ թողեց, չնայելով Մայր Աթոռի ծախքը 1878 թուին արդէն 70 հազարից աւելի էր, իսկ 1882 թուին մօտ 100 հազար, որից կէսը գրեթէ Ճեմարանի վրայ էր միայն գործ դնուում: Տպարանը կանոնաւորել և հարստացնել, տպարանական յանձնաժողով հաստատելով: Ժողովրդին գթած հայր հանդիսանալ, և սոցա և այսպիսիների հետ ոգևորութիւն և հաւատ ներշնչել ապագայ յառաջադիմութեան համար, - ահա Մեծագործ Կաթողիկոսի արարքնիրը:

Եթէ ժամանակակից սերունդը չկարողացաւ ըստ արժանւոյն գնահատել նորան, ապագայ սերունդն անշուշտ պիտի բարձր գնահատէ: Եւ հաւատացած ենք, որ Գէորգ Մեծագործ Կաթողիկոսի յիշատակը, որ այժմ արդէն սկսել է փայլել, ժամանակով այնպէս պիտի պայծառանայ, ինչպէս մեր ամենամեծ կաթողիկոսներինը: Նորան սիրելու համար՝ հարկաւոր է միայն նորա գործերին մօտից ծանօթ լինել (64): Մենք այդ գործերի պակասաւոր ստուերագիծը միայն տուինք շտապով:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

№№ 1-13

№ 1

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՕԾՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԵՒ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

Նախընթաց Մայիսի 25-ին բաղդաւոր գտնուեցանք ականատես լինելու երկու փառաւոր հանդիսակատարութեանց, որոց մինն էր Նորին Վեհափառութեան Օծման երկրորդ տարեդարձը և երկրորդը՝ տեղւոյս կառուցանելի Ուսումնարանի հիմնօրհնէքը: Առաւօտեան ժամերգութենից յետոյ Արմաշու Վանահայր Գերապատիւ Գէորգ Վարդապետը մի համառօտ, բայց ազդու ատենաբանութեամբ շնորհաւորեց Նորին Վեհափառութեան Օծման երկրորդ տարեդարձը, յայտնելով իւր վանուց միաբանութեան կողմից իրանց ամենայն ջերմեռանդութեամբ պատրաստ լինելը Նորա ազգաշահ մտադրութիւնքը և տնօրէնութիւնքը ի կատար հասուցանելու համար, և խնդրելով Նորա միակ քաղցր ակնարկութիւնը և խրախոյսը լուսաւորութիւն Ազգիս և ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ: Ժամից յետոյ Միաբանութիւնը ժողովեցաւ Վեհարանի մօտ, և Նորին Վեհափառութեան առջև կատարեց մեր նախնեաց սովորական Մաղթանքը, որոյ խորհրդաւոր խօսքերը նոր լսողին մի խոր մտածութեան մէջ էին ընկղմում և երևակայութեան առջև ներկայացնում մի անցեալ՝ լի՛ փառօք և

պատուով, ուրախութեամբ և երջանկութեամբ... Մաղթանքից յետոյ տեղւոյս Ուսումնարանի յառաջադէմ աշակերտներից մինը կարդաց մի իմաստալից ճառ, և ապա Վեհափառ Հայրապետը Պահպանիչ ասաց, օրհնեց միաբանութիւնը և բոլոր հանդիսականներին, որոնք արժանացան Նորին Սրբութեան աչն համբուրելու և ընդունելու Նորա հայրապետական օրհնութիւնը:

Ս. Պատարագից յետոյ գնաց Նորին Վեհափառութիւնը ամենայն ուխտիւք և միաբանութեամբ նոր Ուսումնարանի հիմնարկութիւնը օրհնելու: Այստեղ շարական և հոգոր ընթերցմունք ըստ կարգին կատարելից յետոյ՝ Վեհափառ Հայրապետը ինքնին իւր ձեռօք առաջին քարը դրաւ, և ապա գաղղիական լեզուի ուսուցիչ պարոն. Կ. Ֆոյեաջեանը ի դիմաց հանդասականաց կարդաց ճառ: Տեղւոյս ժողովուրդը՝ մեծ և փոքր, արական և իգական, աստիճանաւոր և հասարակ, որոնք ներկայ էին հանդիսի կատարմանը, ճառը աւարտելուց յետոյ՝ «Կեցցէ՛ մեր Վեհափառը» գոչելով և հրացաններ արձակելով՝ թնդացրին օդը փողհարների հետ ի միասին:

Ճաշը պատրաստած էր հասարակաց սեղանատանը, ուր հրաւիրուած էին բոլոր աստիճանաւորաց խումբը, Վաղարշապատու իշխանները և այլազգի պատուաւոր հիւրեր: Ճաշու ժամանակին Նորին Վեհափառութիւնը բաժակ առաջարկեց նախ վասն կենաց Օգոստոսափառ Կայսեր Աղէքսանդրի, երկրորդ՝ վասն կենաց Նորին Բարձրութեան Կովկասեան Փոխարքայ Միխայէլի, և վասն բարօրութեան ընդհանուր Ազգիս Հայոց. և ապա պատուաւոր հիւրերը առաջարկեցին բաժակ վասն կենաց Նորին Վեհափառութեան, երբ տեղւոյս Սինոդի դիւանատան ծառայող պարոն Փ. Նաւասարդեանցը կարդաց մի դրուատ, մի փունջ վարդ նուիրելով. յետ որոյ աշակերտք սկսեցին քաղցրաձայն երգել ազգային երգեր՝ լի հայրենասիրական և ազգասիրական զգացմամբ:

Երեկոյին ճրագալոյց էր, և հրեղէն տառերով փայլում էր յետագայ գրուածքը, - **Կեցցէ՛ ԳԷՈՐԳ Դ Կաթողիկոս ամենայն Հայոց:**

Հայոց Հաւատ, Հայոց Տուն,
Կեցցէ՛ յաւէտ հաստատուն:

Ահա այսպէս մեծ ուրախութեամբ և հրճուանօք անցուցինք նախընթաց մայիսի 25-րդ օրը, որոյ որքան նշանակութիւն ունենալը մեր հեռաւոր ազգակիցներին զգալի կացուցանելու համար, քաղցր է մեզ առաջարկել նոցա յետագայ խորհրդածութիւնը:

Մէկ մարդ այնքան մեծ է, որքան մեծ է նորա օգտաւէտութիւնը ընդհանուր մարդկութեան կամ մէկ ժողովրդի ընդհանրութեան համար: Օգտաւէտութիւնը գործի մէջ է կայանում և ոչ կոչման. կոչումը միայն մէկ միջոց է, որով մարդս կարող է շատ կամ սակաւ օգուտ տալու կարողութիւն և առիթ ունենալ: Համալսարանական վկայագիր ունեցող մի անձն աւելի միջոց և կարողութիւն ունի մեծամեծ օգուտներ բերելու, քան թէ մի հասարակ դպրոցէ ելածը, սակայն կարող է և ընդհակառակն լինիլ, եթէ առաջինը իւր կոչման համեմատ նախապատրաստուած չը լինի, և կամ այնքան բարոյական ձգտումն չունենայ, որ կարողանայ գործով ապացուցանել իւր կոչման բարձր նշանակութիւնը: Այսպէս՝ ուսումնական, վարժապետ, քահանայ, առաջնորդ, և այլ կոչմունք՝ աւելի բարձր սոցանից՝ առանց գործոց՝ լոկ անուններ են. և ա՛յն ժամանակ կարող են մեծ տիտղոսով պատուիլ, երբ նոցա գործերը անհամեմատ բարձր և ընդարձակ կը լինին և կանցնեն իրենց յանձնուած գործունէութեան ասպարիզի սահմանից. իսկ եթէ ընդհակառակն, նոյն սոսկ անունը անգամ արժանի չեն կրելու. և աւելի

փոքր են քան թէ մի անմեղ, բայց աշխատասէր հողագործ և մի պարզամիտ, բայց ժրաջան կօշկակար, վասն զի «Հա՛տ զդա, - կասէ, - և ընկեա՛ ի հնոցն, ընդէ՞ր և զերկիրդ խափանէ», և կամ. «Որում շատ տուաւ, շատ խնդրեսցի, և որում բազում աւանդեցաւ, առաւել ևս պահանջեսցեն ի նմանէ»:

Եւ ի՞նչ ասել է ինքն ըստ ինքեան «մեծ». մի՞թէ մէկ մարդ կարող է աւելի մեծ լինել քան թէ մի ամբողջ ժողովուրդ, քան թէ ամբողջ մարդկութիւնը: Ամենինի: Ժողովուրդ ասած բանդ բոլորովին նման է մէկ անհատի: Անհատը ունի ձեռք, ոտք, գլուխ և այլն: Կարո՞ղ ենք ասել միթէ, որ գլուխը մեծ է, քան թէ ոտները, ոտները՝ քան թէ ձեռները, ձեռները՝ քան թէ աչքերը և այլն: Աշխարհս համեմատական աշխարհ է, այդ իրա՛ւ է. բայց մի բան, որ պարզ է, ամբողջ է, որիշ է, ինքնուրոյն է, նորան իւր հետ համեմատել կարելի չէ, այլ մի ա՛յլ բան ա՛յլ բանի հետ կարելի է համեմատել՝ նոցա իրարու մէջ ունեցած տարբերութիւնը, մինի քան զմիւսը աւելի ունեցած արժանաւորութիւնը կամ թերութիւնը իմանալու համար: Մարդս մարդ է իւր բոլոր անդամներովն ի միասին. զատի՛ր ամենաչնչինը նոցանից (եթէ կարծում ես թէ կայ), նա կը զրկուի կատարեալ մարդ լինելուց: Այսպէս և ժողովուրդը մի ամբողջութիւն է, բաժանիր նորան զանազան դասակարգերի, մինը քան միւսը աւելի արտօնութիւն ունեցող, մինը ծառայ և միւսը տէր, ըստ դրական իրաւանց օրինաց, նա այլ ևս չէ ժողովուրդ, չէ՛ նա ժողով մարդոց, այլ գազաններից և անասուններից բաղկացած խառնիճաղանճ մի խումբ: Եւ այսպէս բնական է նորան լինել իւր մտաւոր զարգացման ստորին շրջաններումը, վասն զի մի բան, որ սկզբումը լինում է չար, յետոյ դորա չարութիւնը սովորութիւն դառնալով և ժառանգական կերպով անցնելով յետագայ սերնդին, չարութեան ժանիքները այլ ևս սարսուռ չեն բերում մարդոց վերայ, մինչև չէ բացվում նոցա մտքի

աչքը, որով միայն կարելի է նշմարել և լուծել արիւն և մարմին դարձած չարութիւնը:

Մի ժողովուրդ, քանի որ նա դեռ ևս մտաւոր զարգացման ստորին շրջաններումն է, նա այդ ժամանակ իւր ամենայն գործը ձգում է մի աներևութապէս կառավարողի ձեռք և ինքը իւր մասին բոլորովին անհոգ մնում: Փոքր ինչ յետոյ՝ երբ բնականապէս աւեի զօրացած անհատների մէջ զարթնում է բռնակալական կամ բարոյական ձգտողութիւն, նոքա ընդհանուրին իրենց ձեռքի տակ հաւաքելով՝ իրենք իրենց միջնորդ են ներկայացնում աներևութապէս ներգործողի և ժողովրդի մէջ: Այդ ժամանակ մարդիկ նոցա ճանաչելով իրենց երկրային տէրը ի վերուստ նշանակած, իրենց ամեն հոգսը և կարիքը նոցա վերայ բարձելով՝ ինքեանք մի կողմ են քաշվում և դառնում կոյր հրամանակատար, անում են այն, ինչ որ հրամայվում է նոցա անելու, և ոչինչ աւելի: Այսպէս աշխարհիս երևելի բռնակալները ամենայն կերպով ճնշել, տկարացրել են իրանց հպատակների մտաւոր զարգացումը, որպէս զի նոքա աչք չբանան, ազատութեան ձգտողութիւն չզարթի նոցա մէջ: Ինչպէս նաև քուրմերը և քրմապետերը ամենայն զգուշութեամբ աշխատել են ծածկել ժողովրդից իրանց դիւցաբանութիւնը և առասպելաբանութիւնը, իրենց իբր սուրբ գիրքը ի վերուստ իջած, պահպանել են նորան մի որոշ քաստի մէջ և չեն ուսուցել ժողովրդին, որ մի գուցէ նոքա աչք բանան և հասկանան, որ այդ ոչ թէ սուրբ գիրք է, այլ առասպելաբանութիւն է միանգամայն և խարդախութեան գործիք: Երբ մի ժողովուրդ ճնշուած է այսչափ, այդ միջոցին նորա համար մի բարոյական և անձնադիր Հովիւի նշանակութիւնը ևս այնքան է, որչափ և մի բռնակալի. վասն զի վատը, ինչպէս արդէն ասացինք, նոցա համար մի սովորական բան դառնալով՝ լաւ է թվում. իսկ ստուգապէս լաւին միտքը չէ հասնում: Քանի՛ քանի անգամ

Իսրայէլացիք ցաւեցուցին Մովսէսի պէս աստուածախօս, հայրենասէր, ազգասէր և անձնանուէր մարգարէի սիրտը, ասելով, թէ Եգիպտոսումն աւելի լաւ էինք ապրում: Եւ ինքը՝ մեծն ի մարգարէս Մովսէս՝ քաջ գիտէր, որ այսպիսի մի ժողովուրդ երբէք կարող չէ իմանալ իւր լաւն ու վատը, մինչև չզարգանայ նորա միտքը. ապա թէ ոչ՝ նորա համար միևնոյն կը լինի սոխն ու սխտորը Եգիպտոսի, մանանան և լորամարգին Սինայի: Նոցա մտաւոր զարգացմանը նայելով՝ աւելի բնական էր նոցա հորթի գլուխ պաշտելը, քան թէ երկինք և երկիր Ստեղծողին: Նա քաջ գիտէր, որ նախապաշարունքներից և բռնութիւններից կաշկանդուած ծերերին դժուարին է ճշմարտութեան մօտեցնել, դուք, կասէ չէք կարող տեսնել Աւետեաց երկիրը, այլ ձեր որդիքը կը տեսնեն: Եւ որպէս զի նախապատրաստէր մի ազնիւ սերունդ, ճշմարիտ Աստծուն ճանաչող և պաշտող մի ազգ, գրում է նա Աստծոյ պատուիրանքները և մեծագործութիւնները. մի ամբողջ ցեղի ուսուցանում է իւր գրքերի պարունակութիւնը և պատուիրում է նոցա ամենայն տօնի օր կարդան 'ի լուր ժողովրդեան, որ տեսնեն իրենց անցեալը, նոյնը համեմատելով իրանց ներկայի հետ, զգան իրանց խստասրտութիւնը և Աստուծոյ զգթառատութիւնը. իրանց տգիտութիւնը և Աստուծոյ իմաստութիւնն ու ներողամտութիւնը. իրանց մոլորութիւնը և Աստծուց հրաւէրը. իրանց օրէնքների սրբութիւնը և հեթանոսաց անօրէնութիւնը. իրանց լոյսը և նոցա խաւարը: Զգան էակների արարած լինելը և Արարչի անեղ և անսահման լինելը, որ չշեղին ուղիղ ճանապարհից, յընկղմին մոլորութեանց մէջ: Այս միակ ճանապարհով միայն կարողացաւ հասնել իւր նպատակին Մեծ Մարգարէն և այնքան յարգ ու պատիւ ստացաւ իւր նախապատրաստած սերնդից, որ վախենալով, թէ մի գուցէ յետագայ սերունդք աստուածացնեն նորան և պաշտեն, անհետացաւ

նոցանից, որ ակներև ապացոյց է, թէ ո՛չ փառք և ո՛չ պատուասիրութիւն ստիպեցին նորան այս մեծագործութիւնը կատարել, այլ միայն իւր առ Աստուած և առ իւր ազգն ունեցած անսահման սէրն էր նորան ոգևորողը և այն նորա միակ վարձքը:

Այսպէս մարդկութեան մէջ երբեմն երբեմն գիսաւոր աստղերի պէս երևցած բարոյասէր, ուսումնասէր և ազգասէր անձինք, որոնք զգացել են, որ մասնաւորի բաղդաւորութիւնը ապաբաղդ ընդհանուրի մէջ ապերջանկութիւն է միանգամայն և թշուառութիւն, ամենայն ջանք և ճիգն 'ի գործ են դրել մերթ բանիւ և մերթ գրով հասկացնել ժողովրդին իւր սեփական իրաւունքը, շարժել նորա ինքնագործունէութիւնը, և իբրև ամենահեշտ միջոց հասնելու այդ նպատակին, մատնացոյց են եղել Ուսումնարանի վերայ: Ուսումնարանը, այս մարդկային սեռի ջուրն ու հոգին, որից առանց կրկին ծնանելու նորա փրկութիւն չկայ. 'ի սկզբանէ անտի մինչև մեր օրերը մարդատեաց և բռնասէր մարդոց աչքում՝ փուշ է եղել. վասն զի դա՛ է, որ մի ամբողջ ժողովուրդ ստրկութեան, աղքատութեան, նախապաշարմանց և հազար ու մէկ քստմնելի հանգամանքների անգութ և զազրատեսիլ ճանկերից ազատում և մարդավայել վիճակի մէջ է ձգում: Դա՛ է, որ իբրև մի երկրորդական աւազան՝ մի ազգի բոլոր անդամներին նորէն ծնանում, մի սիրտ և մի հոգի, մի արիւն և մի մարմին է առնում ամենին: Դա՛ է, որ մի ազգի մէջ ցանուած չար որոմները ժողովում և այրում է անշէջ հրով. որ հերկում է մի բոլորովին խոպանացած անդաստան, և նախապատրաստում նորան բուսուցանելու այն բարի սերմերը, որ մեր Արարիչը 'ի սկզբանէ դրել է նորա մէջ և երկայնամտութեամբ սպասում է նորա աճելուն և բեղմնաւորելուն: Եւ որովհետև միայն գողը կուզէ մութ գիշեր, ձկնորսը պղտոր ջուր, խաբեբան՝ յիմարութիւն,

անզգամը՝ մոլութիւն, բռնակալը՝ երկիւղ և ստրկութիւն, աղուէսը՝ որջ, թռչունը՝ բոյն և այլն և այլն, Ուսումնարանը զտում, մաքրում է այդ աղտեղի և անվայել յատկութիւնքը, էլ այնուհետև մարդոց մոլութիւնը սնունդ չի գտնում և հետևապէս անհետանում է մոլութիւնը. երկիրը երկինք է փոխվում և մարդը Աստուած, զի «Որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս աստուծոյ լինիլ»:

Այս ամենակարևոր պահանջմունքը քաջ յայտնի լինելով և մեր հասարակաց Հօրը, Գթառատն Ազգասէր Հայրապետին, իւր վարդապետութեան օրերը անգամ, ուր որ դրել է իր ոտքը՝ նոյն տեղ կառուցել է և Ազգային Դպրոցներ: Եթէ ընդ իշխանութեամբ այլոց ժամանակը՝ այս փրկարար հիմնարկութիւնքը նորա սրտին մօտիկ և սիրելի առարկան է եղած, ո՞րչափ առաւել այս օրուան օրս նորա համար սիրելի և փափաքելի է բոլորովին իւր ազգօգուտ նպատակներին յարմարացուցած Ուսումնարանների կառուցումը: Բայց եթէ, Տէր մի արասցէ, յաջողի նորան հասնելու իւր նպատակին, արդեօք ո՞վ կը լինի մեղաւոր: Մենք արդէն պատասխանեցինք այս հարցին նախընթաց պարբերութեանց մէջ. բայց դարձեալ կը կրկնենք որ՝ եթէ մի ազգի մտաւոր անդաստան նախապատրաստուած չէ ընդունելու իւր մէջ բարի սերմեր, սերմանողը թող լինի Աստուծոյ որդի, չի՛ աճիլ, չի բեղմնաւորիլ նորա մէջ, զի «**Յիւրսն եկն և իւրքն զնա ոչ ընկալան**»: Բայց այսպիսի ենթադրութիւններ անտեղի է անել մեզ այժմ, երբ տեսնում ենք ակներև, որ մեր Ազգը էլ այն չէ, ինչ որ էր մի քանի դար առաջ: Մեր Ազգի պահանջմունքը այժմ մեծ է, կարօտութիւնը ակներև. նա զգում է իւր թերութիւնքը, չի հասել մտաւոր զարգացման այն կէտին, որ ինքնուրոյն լցուցանէ իւր թերութիւնքը. նա, հարազատ որդու հպատակութեամբ, ցանկանում է, որ իւր բոլոր ձեռնարկութեանց մէջ իւր սրտի միակ մխիթարութեան, իւր նախնի փառաց միակ ժառանգի սուրբ մատն ու օրհնութիւնը լինի նորան առաջնորդողը:

Այս օրուան օրս մեր ազգութիւնը քաղաքական չէ, այլ բարոյական: Այսպիսի դրութեան մէջ ի՞նչ տեսակ մարդոց մէջ աւելի կարօտութիւն ունինք մենք, եթէ ոչ բարեկիրթ, ժրաջան, ազգասէր և անձնանուէր հոգևորականների մէջ: Երբէք պատահած չէ, որ մի ազգ ունենալով լուսաւոր և գիտնական հոգևորականներ, նա թշվառութեան մէջ լինի եղած, և սորա հակառակ, երբէք պատահած չէ, որ մի ազգ երջանիկ լինի, եթէ նորա հոգևորականներից բաղկանում է մի տգէտ և խաբեբայ դասակարգ: Մարդկութեան պատմութիւնը ակներև ցոյց է տալիս, որ իւրաքանչիւր ազգ իւր հոգևորականների բարոյապէս և մտաւորապէս անկման հետ ընկնում է և կանգնման հետ կանգնում: Վասն զի ժողովրդի հոգին՝ կեանքը հոգևորականների ձեռին է, նոքա են նորա պաշտպանողը և մատնողը Աստուծոյ և թագաւորի առջև, նոցա հետ կապողը և արձակողը: Մենք չենք տեսնում ոչ մի ժամանակ, որ Աստուծոյ կամ թագաւորի ազդեցութիւնը առանց միջնորդութեան հոգևորականների ներգործելիս լինի ժողովրդի վերայ: Սկզբումը ժողովուրդը ներկայանում է մեզ իբրև մի երեխայ, որի լեզուն ոչ այլ ոք գիտէ, բայց միայն հոգևորականը. ուստի և անմիջապէս դառնում է նորա թարգմանը, որ ուրիշի միտքը նորան հասկացնէ, նորա միտքը ուրիշին: Մի կողմ դնենք հէթանոս ազգերը, որոնք անմիջապէս կախումն են ունեցել իրանց կրօնականներից. վերցնենք Աստուածաշունչ գիրքը, նորա մէջ անհամար օրինակներ կան, որոնցով կարող ենք ապացուցանել, թէ որչափ մեծ է եղել հոգևորականների ազդեցութիւնը ժողովրդեան վերայ: Աստուած Մովսէս մարգարէին Փարաւոնի մօտ ուղակելով՝ մատնացոյց է լինում Ահարոնի վերայ, որ նա խօսի թէ Փարաւոնի և թէ ժողովր-

դեան հետ. և սորա պատճառը ոչ այլ ինչ է եթէ ոչ նոյն իսկ Ահարոնի հոգևորական լինելը, որով անշուշտ աւելի ազդեցութիւն կունենար ժողովրդի վերայ, քան թէ Մովսէսն ինքը: Այսպէս Աստուած միշտ հոգևորականների ձեռով է խօսում ժողովրդի հետ ասելով. «Ասա՛ Փարաւոնին, որ արձակէ իմ ժողովուրդը: Ասա՛ ժողովրդին, որ սուրբ պահէ իրէն: Քեզ պահապան եմ դրել իմ ժողովրդի վերայ, եթէ դու չուսուցանես անօրինին և նա իւր անօրէնութեան մէջ մեռնի, նորա արիւնը քեզանից կը պահանջեմ: Թագաւորներն էլ հոգևորականներին են դիմում, որ նոքա ժողովրդի սէրը և հաւատարմութիւնը դէպի իրեն դարձնեն: Ժողովուրդն էլ հոգևորականներին է դիմում, և նոցա միջնորդ շինում իւր և Աստուծոյ մէջ, իւր և թագաւորի մէջ: Ասացէ՛ք թագաւորին, որ թեթևացնէ իւր հարկը, ասացէք թագաւորին որ վերցնէ իւր բռնութիւնը. աղօթեցէք Աստուծուն, որ այս ինչ պատիժը վերցնէ մեզանից: Նոքա էլ միշտ և ամեն ժամանակ կատարել են ժողովրդի խնդիրքը, պահպանել են նորա կեանքը, հարազատ մօր պէս խնամք են ունեցել նոցա վերայ՝ աստուծոյ հրամանին համեմատ, և երբ չեն կարողացել ուղղակի հասնել իրանց նպատակին, նոցա ոգուն ոյժ և զօրութիւն են տուել, մխիթարելով և ոգևորելով, որ առանց ընկճուելու՝ կարողանան տանել բնական և քաղաքական դժբաղդութեանցը»:

Մարդուս մտքի զարգացումը ընդհատումն չունի: Մի կէտի վերայ կանգ առնել և կաշկանդուել նորան անհնարին է: Իսկ բարոյական ճշմարտութիւնը միշտ մնում է անփոփոխ. նա ոչ աւելանալ ունի և ոչ նուազիլ. նա էր, կայ և կը լինի միշտ մի և նոյնը: Սկզբումը մարդոց միակ ուսմունքը այս բարոյական ճշմարտութիւնն է և դորան ուսուցիչ լինելով հոգևորականք, ժողովրդի միակ դաստիարակը լինելով հոգևորականք, այդ պատճառով մեծ յարգ ու պատիւ էլ

ունենում են նորա առջև, և հետևապէս մեծ ազդեցութիւն էլ գործում են նորա վերայ: Բայց՝ միայն հոգեկան յայտնութիւնքը չեն, որ ազդեցութիւն ունին մարդուս զարգացման վերայ. բնական և քաղաքական հանգամանքներն ևս ոչ պակաս ազդեցութիւն ունին մարդուս վերայ: Երբ որ այս վերջին հանգամանքները բարեյաջող են, այդ ժամանակ ժողովրդի մէջ ծաւալվում է այլ և այլ ուսմունք, որոնք միայն ըստ երևութին են տարբեր կրօնական ուսմունքից, բայց բուն հոգուն նայելով՝ առաջնոյ մի և նոյն նպատակն ունին: Հոգևորական մասը մեղք է համարում խոստովանել այս ճշմարտութիւնը, ուստի և զուրկ է մնում դորանից և դա դառնում է ժողովրդի սեփականութիւն: Այդ ժամանակ ժողովուրդը երեք գլխաւոր դասակարգի է բաժանվում - անուս, ուսումնական և կրօնական: Հետզհետէ շատանում է ուսելոց թիւը, և որքան շատանում է, այնքան նուազում է կրօնականների ազդեցութիւնը և նոցա ուսմունքը մի շինծու և խաբեբայ բան է թվում ժողովրդին, ինչպէս և առաջնոցը՝ նոցա: Եւ այս շրջանի մէջ թէև աւելանում է ժողովուրդի մտաւոր ոյժը, բայց միակողմանի լինելով՝ մի նոյն քան ևս պակասում է նորա կենսական, հոգեկան ոյժը, որ եթէ երկար ժամանակ շարունակուի այսպէս, նա հետզհետէ կը նուազի, կը ոչնչանայ և կանհետանայ: Բայց բանն այդ տեղը չէ հասնում: Երբ մարդ ինքնածանօթութեան է գալիս, զգում է իւր սխալմունքը, ձեռք է մեկնում կրօնականին և փոխանակ չարի չար հատուցանելու, նորան էլ բերում՝ իւր հաւասարակից է անում մտքի կողմանէ, որ նա կարողանայ հասկանալ նորա լեզուն և ուղիղ թարգմանը լինել, ինչպէս որ էր նորա երեխայ ժամանակը: Այսպէս երբ մի ազգի հոգևորականք և աշխարհականք ձեռք ձեռքի տուած միաբան սիրով յառաջ են գնում, այդպիսի ժողովրդի թէ ոգեկան և թէ մտաւոր ոյժը օրէցէր աճում և զարգանում է և հետևա-

պէս հոգևորականք ստանում են իրանց կորցրած նախկին փառքն ու պատիւը:

Այս օրուան օրս մենք գոհ չենք մեր հոգևորականներից, չենք պատվում նոցա ըստ արժանւոյն: Ի՞նչ է սորա պատճառը, ի՞նչու համար մեր նախնի երջանկայիշատակ հոգեւորականք ևս այս աստիճան անպատուած չէին, վասն զի այն ժամանակ նոքա ըստ զարգացման անհամեմատ բարձր էին ժողովրդեան զարգացմանից, ուստի և մեծ յարգ ու պատիւ ունէին նորա առաջև. բայց այժմ բոլորովին ընդհակառակն ենք տեսնում՝ Գիտութիւնը և ուսումը անցել է աշխարհականների ձեռքը, հոգևորականք յետ են մնացել. երկոցունց մէջ մտաց համապատասխանութիւն չկայ. մինը միւսին տգէտ է համարում, միւսը մէկէլին աղանդաւոր. և որոհետև այդ սուտանուն աղանդաւորների թիւը այժմ շատացել է, փոխանակ այստեղից այնտեղից հալածուելուց, այժմ իրանք են հալածում, անպատվում և նախատում: Հոգևորականը, որ պիտի լինի բարոյականութեան դաստիարակ, առաքինութեան հայելի, որբոց մխիթարիչ, միով բանիւ որ պիտի այն աստիճան յարգ ու պատիւ ունենայ իւր ժողովրդի մէջ, որ նորա ձայնը քարանձաւներու արձագանքը չը լինի, նորա խօսքը գետինը չընկնի, այդ համարմունքը պակսեցրել է նա ոչ թէ նորա համար, որ ժողովրդի սէրը, հաւատը սառել է, կամ իբր թէ աղանդաւորները շատացել են, այլ որովհետև մտաւոր զարգացման մէջ շատ և շատ յետ է մնացել նա[1]:

[1] Այսօրից չորս հինգ տարի առաջ մեր Մայր Աթոռը խելացի եւ ուսումնական մարդոց վերայ բանադրանաց եւ յանդիմանութեան կոնդակներ էր ուղարկում, իսկ մօտը եկողներին եւ իրանց ազգաշահ ծառայութիւնը առաջարկողներին դուրս անում անպատուելով: Այս մի քանի մասնաւորների սխալմունքը որ աւելի կրօնասիրութեան եւ բարեսրտութեան հետեւանք էր, քան թէ չարամտութեան եւ ազգատեցութեան, վերագրեցաւ Սուրբ Էջմիածնի ընհանուր միաբանութեանը, որ երբէք զուրկ չէ եղել հեռատես եւ խելացի անդամներից, եւ տեղիք տուաւ մեր ուսումնականներին մեր հոգեւորականութեան մէջ երեւակայել միջին դարու արեւմտեան հոգեւորականութեան պատկերը, որ անհերելի սխալմունք էր: Ս. Էջմիածինը բաց է այժմ ճշմարիտ ազգասէրների համար, գործունեայ եւ աշխատասէր մարդոց համար: Չունի այլեւս իւր առաջուան հարստութիւնը, որ կարողանայ դրամով գրաւել օգտաւէտ մարդոց, բայց ճշմարիտ ազգասիրի համար ցանկալի է առաւել գործունէութեան լայն ասպարէզ ունենալը, քան թէ դրամական մեծ վարձտրութիւնը: Կը յուսանք ուրեմն, որ մեր ազգի եռանդոտ եւ ազգին ծառայելու նախապատրաստուած անձինք այլ եւս չեն կասկածիր, որ Էջմիածնի մայրական գիրկը պատրաստ է նոցա ընդունելու: Եւ այսպիսի անձանց այստեղ գտնուելուց յետոյ, կասկած չկայ, որ ազգի ընդհանրութիւնն էլ անտարբեր չի մնալ, այլ ամենայն կերպով կը պահպանէ իւր կեանքի միակ կենտրոնը, իւր սիրտը, առանց որոյ մի օր չի կարող շունչ քաշել եւ կը մատնուի յաւիտենական կորստին: Ժամանակ է, որ մենք զգանք այս անհերքելի ճշմարտութիւնը եւ փոխանակ ճշմարիտ սրտացաւութեան, երեխայական թեթեւամտութեամբ չպղտորենք ազգի միտքը, յուսահատինք մասնաւորների մոլորութիւններից, խարդախութիւններից: Այս մասին ուրիշ անգամ երկար կը խօսինք:

Ահա՛ այս ազգակործան երևութքի առաջքն առնելու նպատակով՝ մեր հասարակաց հայրը, մեր Վեհափառ Հայրապետը՝ նախընթաց Մայիսի 25-ին՝ իւր Օծման երկրորդ տարեդարձի օրը մի հոյակապ ուսումնարանի հիմն դրաւ, որոյ միակ և եթ նպատակը պիտի լինի տալ մեր ազգին բարոյական և ուսումնական Հոգևորականներ: Ասում եմ տալ մեր Ազգին, ուրեմն Ազգի համար են լինելու այդ հոգևորականները, ազգի բարօրութեանը պիտի ծառայեն: Ուստի կը յուսանք, որ ազգը իւր սեփական, իւր անձին վերաբերեալ բոլոր հոգսերը չի բարձիլ մի այնպիսի Հայրապետի վերայ, որոյ շրջակայ հանգամանքներին նայելով, բացի Աստուծոյ միակ ողորմութեան և Ազգի միաբանական սիրով աշխատութեան՝ ուրիշ բանի վերայ կարող չէ դնել իւր յոյսը և հետևապէս տեսնել իւր հանրաշահ մտադրութեանց և ձեռնարկութեանց օգտաւէտ արդիւնքը: Այո՛, նա այս օրուան

օրս մեր Ազգի պետն և գլուխն է, սակայն, ինչպէս արդէն ասացինք, գլուխն ինքն ըստ ինքեան ոչինչ նշանակութիւն չունի, առանց ամբողջութեան միւս անդամների, որ է Ազգի ընդհանրութիւնը և ամբողջութիւնը, թէ՛ մեծ և թէ՛ փոքր, թէ՛ աղքատ, և թէ՛ հարուստ, թէ՛ աշխարհական և թէ՛ հոգևորական: Գլուխը մտածում է, ոտները պիտի երթան, ձեռները պիտի գործեն: Կը յուսանք ուրեմն, որ մեր Ազգը այս իրեն սրտի ամենամօտիկ հանգամանքի վերայ անտարբեր չի նայիլ, այլ ամենայն կերպով, թէ նիւթապէս կաշխատէ 'ի կատար հասուցանել իւր իսկ սրտի խորհուրդները, շնորհիւ իւր Վեհափառ Հայրապետին՝ ԳԷՈՐԳ Դ-ի և իւր Ողորմած Կայսեր՝ ԱՂԷՔՍԱՆԴՐ Բ-ի, որոց օրերումը արդէն սկսել է լուսաւորութեան արեգակը իւր ճառագայթները թափանցել բազմադարեան և բազմավաստակ Հայկազեան սերնդի մէջ:

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՑ

«Արարատ», 1869, № 1 էջ 25-32:

№ 2

ՀԱՄԱՌՕՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ա. Նպատակ Ճեմարանի Ս. Էջմիածնի է՝ պատրաստել զկուսակրօն եկեղեցականս բարեկիրթս եւ քաջահմուտս Եկեղեցական եւ Աստուածաբանական ուսմանց եւ արտաքին կարեւոր և կենցաղօգուտ գիտութեանց եւ լեզուաց ի պէտս Հայաստանեաց Եկեղեցւոյ:

Բ. Ճեմարան Ս. Էջմիածնի պարտի լինել ընդ ծայրագոյն իշխանութեամբ Կաթուղիկոսի ամենայն Հայոց:

Գ. Ճեմարան Ս. Էջմիածնի պահպանի արդեամբք Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի և նուիրաբերութեամբք Հայոց:

Դ. Բաց ի յընդհանուր վերահսկողութենէ Վեհ. Կաթուղիկոսի՝ վարէ զներքին եւ զարտաքին կառաւարութիւնս Ճեմարանի Ս. Էջմիածնի՝ Վերատեսուչն նորին՝ օգնականութեամբք 1. Ուսումնական եւ 2. Տնտեսական ժողովոց եւս 3. Ընդհանուր Խորհրդարանի:

Ե. Ի Ճեմարանի Ս. Էջմիածնի բաց ի Վերատեսչէ գոն՝ Օգնական Վերատեսչի, Ուսուցչապետք եւ ուսուցիչք, Վերակացուք, Բժիշկ, Մատենադարանապետ, Քարտուղար, Տնտես եւն:

Զ. Ի Ճեմարանի Ս. Էջմիածնի ընդունին Հայկազն պատանիք յամենայն վիճակաց Եկեղեցւոյ Հայաստանեաց, որք պարտին լինիլ որքք կամ ի դասակարգէ աղքատ ծնողաց, եւ ամենեքեան պահպանին եւ ուսանին ձրիապես:

Է. Ի Ճեմարանի Ս. Էջմիածնի ընդունին յառաջադէմ եւ ընդունակ աշակերտք, աւարտեալքն զուսմունս իւրեանց ի վանօրայս եւ ի թեմական Դպրանոցս, յուսումնարանս եւ ի Միջնակարգ եկեղեցական դպրոցս՝ ըստ նախընթաց հարցաքննութեան ի Ճեմարանի՝ համաձայն առանձին Հրահանգի:

Ը. Հասակ ցանկացողաց մտանել ի Ճեմարան պարտի լինել ոչ նուազ քան զ14 ամն եւ ոչ առաւել քան զ16:

Թ. Ճեմարանն ունի զվեց լսարանս (դասարան) իւրաքանչիւրն մի ամեայ ընթացիք (շրջանաւ):

Ժ. Ի Ճեմարանի ամենայն առարկայք եւ գիտութիւնք ավանդին յատկապէս ըստ սովորութեան մայրենի լեզուաւ:

ԺԱ. Ի Ճեմարանի աւանդին:

1. Կրօնագիտութիւն ընդարձակ՝ ըստ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ:
2. Պատմութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ:

3. Ընդհանուր Եկեղեցական պատմութիւն:
4. Գիտութիւն եւ մեկնութիւն Սուրբ Գրոց:
5. Աստուածաբանութիւն տեսական, գործնական, բարոյական եւ բաղդատական:
6. Տօմարագիտութիւն Եկեղեցական եւ հմտութիւն Ժամանակագրութեան:
7. Կրթութիւն Եկեղեցական բեմբասացութեան:
8. Վարք սրբոց հարց յիշատակելոց ի տօմարի Հայաստանեայց Եկեղեցւոյ:
9. Եկեղեցական իրաւաբանութիւն:
10. Ազգային եւ Ընդհանուր Դիցաբանութիւն:
11. Փիլիսոփայութիւն (Հոգեբանութիւն եւ Տրամաբանութիւն) եւ պատմութիւն փիլիսոփայութեան:
12. Ազգային պատմութիւն եւ Աշխարհագրութիւն:
13. Ընդհանուր եւ Ռուսաց պատմութիւն եւ աշխարհագրութիւն:
14. Թուաբանութիւն, Բնագիտութիւն (Ֆիզիքա) եւ Տիեզերագիտութիւն:
15. Բնական պատմութիւն:
16. Հայկաբանութիւն հարուստ եւ մատենագիտութիւն Հայոց:
17. Լեզու ռուսաց:
18. Լեզու գաղղիացւոց:
19. Լեզու լատինացւոց:
20. Լեզու հունաց:
21. Լեզու եբրայեցւոց:
22. Գծագրութիւն եւ Նկարչութիւն (առաւելապէս եկեղեցական):
23. Ձայնագրութիւն հայոց:

ԺԲ. Ուսումնաւարտ աշակերտք Ճեմարանի պարտին ընդունիլ յատկապես զաստիճան վարդապետութեան եւ առհասարակ եկեղեցականութեան, եւ իբրեւ բացառութիւն՝ (կարգին) յուսուցչութիւն յազգային ուսումնարանս:

ԺԳ. Վասն ներքին եւ արտաքին կառաւարութեան Ճեմարանի Ս. Էջմիածնի ունի հրատարակիլ առանձին ընդհանուր կանոնադրութիւն:

«Արարատ», 1874, № 7, էջ 263-265:

№ 3

ՃԵՄԱՐԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ներկայ տարւոյս յառաջիկայ Սեպտեմբեր ամսոյ մէջ Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի նորակառոյց Ճեմարանի բացուիլը կարգադրուած լինելով՝ Վեհ. Հայրապետ յատկապէս երեք Վարդապետներ՝ Արժ. Արիստակէս Սեդրակեան, Գէորգ Սուրէնեանց և Վահան Բաստամեանց, խրկեց Ռուսաստանի Հայոց վիճակաց մէջ նշանակեալ տեղերէն աշակերտները ընտրելոյ և յղելոյ համար յատուկ հրահանգներուն համաձայն, որք մինչև 20 Օգոստոսի այսր պէտք է հասանին և պատրաստ լինին:

Տաճկաստանի և Պարսկաստանի վիճակներէն ևս յատուկ Կոնդակօք աշակերտներ պահանջուեցան:

Յաջորդ թերթի մէջ պիտի հրատարակեմք կոնդակաց, հրահանգի, Ճեմարանի հիմնական ծրագրի պատճէնքը և աշակերտաց թուոյն վերայ համառօտ տեղեկութիւններ:

ՀՐԱՀԱՆԳ
ՍԱԿՍ ԸՆՏՐԵԼԻ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՃԵՄԱՐԱՆԻ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Որք (աշակերտք) պարտին լինել

1. 14-16 ամեայք:

2. Հակամէտ լիցին ի կղերականութիւն՝ սակս պատրաստելոյ զանձինս իւրեանց ի կուսակրօն պաշտօնեայ Եկեղեցւոյ Հայաստանեայց:

3. Իցեն, որքք, կամ որդիք աղքատ ծնողաց, առողջակազմք, փափկաձայնք, ուշիմք, վկայեալք ի բարի վարս, ո՛չ ապուշք կամ թոյլք՝ և անընդունակք ուսմանց և ո՛չ խեղանդամք:

4. Ունիցին զվկայական ծննդեան և մկրտութեան, և վկայագիր ի բժշկէ վասն պատուաստի ծաղկին և առողջ կազմուածոյն, ևս ազատ լիցին ի ցեղական ախտակրութենէ:

5. Գիտասցեն գո՛նէ՝

ա. յԱռաջին մասն Հայ. Քերականութեան,

բ. զՀամառօտ Քրիստոնէական վարդապետութիւն և զՊատմութիւն Հին և Նոր Կտակարանաց,

գ. զՌուսերէն (կամ զԳաղիարէն սակս այլոց սահմանաց),

դ. զՀամառօտ Ազգային Պատմութիւն,

ե. զՀամառօտ Ընդհանուր Պատմութիւն,

զ. զՀամառօտ Աշխարհագրութիւն,

է. զԱ. Մասն Թուաբանութեան:

6. Եթէ աշակերտք իցեն անհամմաձայն պահանջեալ վերոյիշելոց պայմանաց, անմիջապէս վերադառնան ուստի եկին:

ՄԻԻՍ ԿՈՆԴԱԿՆ

«Քանի՛ երջանիկ էր եկեղեցի Հայաստանեայց և ո՛րչափ բարձրագլուխ պանծայր փառօք և զարդու՝ մինչ առաջնորդէին նմին անձնուէր՝ բարեկիրթ և ուսեալ հովիւք և քաջ կրօնագէտ վարդապետք, որ գեղապաճոյճ իմն պսակ հանդիսացեալ ի գլուխ Մօրս մեր Հայաստանի՝ ընդ ամենայն տեղիս կանգնէին և հաստատէին զեկեղեցիս, զվանօրայս, զդպրոցս և զայլ բազում բարեգործական վայրս, յորս աստուածպաշտութեանն արփիական լոյս բոցաճաճանչ փայլէր և ծաւալէր ի սիրտս և ի միտս ամենից Հայազնեայց: Մայրենի լեզու մեր աստուածաշնորհ սքանչելի կատարելագործութեամբ Հայկական աթոռայիցն (այբուբեն) և գրականութիւն ազգիս օր քան զօր ընդհանրացեալ՝ զմտաւորական և զբարոյական յառաջադիմութիւն Հայ մանկտւոյն յապահովի կացուցանէր, բուռն ջանք ոխերիմ և գիշերավաստակ թշնամեաց Եկեղեցւոյ և Ազգի՝ հանդերձ բազմատեսակ որոգայթիւք ի նոցունց լարելովք՝ ինքեանք յինքեանս խորտակեալ կործանէին և անհետանային առաջի առաքինութեանց երանելի թարգմանչաց մերոց, և նաև ազգութեան մերոյ առաթուր հարեալ զլեռնակուտակ ամեհի ալիս յոգնախուռն արկածից և փորձանաց՝ ապահով իմն ժամանէր ի դէմ եղեալն նպատակ ի նաւահանգիստն փրկութեան, իսկ մանկունք նորոյս սիօնի պճնազարդեալ լուսով գիտութեանց և աստուածպաշտութեան մակաղէին ի վայրի դալարուջ երկնապատգամ աւետարանական վարդապետութեանց և առ ջուրս հանգստեան երջանկաւէտն խաղաղութեան:

Արդարև եղեն դառնակսկիծ ժամանակք՝ յորս հակառակորդք Եկեղեցւոյ մերոյ յանդուգն խիզախեալ սպառնային

սպառսպուռ կործանել զայն և զաւերակսն անգամ և յգիշատակս հայութեան և Հայորերոյ բառնալ յերեսաց երկրի, այլ սակայն բարեխնամ Աջն Անեղին յաւէտ հովանի և պաշտպան կացեալ առաքելական Եկեղեցւոյ մերում և Ազգիս հասանէր ի թիկունս օգնութեան՝ շնորհելով մեզ զանձնուրաց՝ զբարեկիրթ եկեղեցական և զհովիւս, որք զերկնայնոցն բերելով յանձինս զնմանութիւն՝ հանապազ զհետ կրթէին աստուածայնոցն պատուիրանաց, յամենայն դէպս պահապան և պաշտպան հանդիսանային իրաւանց՝ գոյութեան և ինքնուրոյնութեան Եկեղեցւոյ մերոյ և ի նոյն խրախուսէին զջերմեռանդ իշխանս և զհամօրէն ժողովուրդս, որ ի ստիպել հարկին արեամբ չափ շահակատեալ յաջողեցան անարատ և պայծառ պահպանել զկրօնս մեր և զսուրբ Եկեղեցի:

Այլ աւա՛ղ, քանի՛ անհամեմատ տարբերութիւն նշմարի յանցեալն ընդ ներկայիս, յորում թշուառ որդիք Հայկայ սփռեալք ի զանազան կողմանս աշխարհի՝ յանհնարինս տագնապին ի խաւարի տգիտութեան՝ ակնապիշ և անհամբեր հայցելով զօգնութիւն, և ձայն աղաղակի նոցա առ համազգայինս ի ժռումն բարոյական ձեռնտուութեան մինչև յերկինս հասանէ, բայց սակաւք են որ լսեն, և արժա՞ն իցէ արդօք անտարբեր կալ ի լուր աղիողորմ հեծեծանաց և ստրաճմլիկ տառապանաց համարիւն եղբարց սիրելեաց. զի եթէ այլ ևս յարատևեսցեն որդիք Հայկայ ի խաւարի տգիտութեան, ի ներկայիս քօղարկեալ վտանգք կորստեան ծանրագոյն կարեն լինել և անխուսափելիք. քանզի ըստ Փրկչականն բանի՝ հունձք բազում գոլով և մշակք սակաւ առ ի կարող լինելոյ օգնել բանաւոր Հօտիս սիրելւոյ՝ և որք ենն՝ ըստ մեծի մասին ի տգիտութիւն գոլով խոնարհեալ՝ անհամաձայն բոլորովին ընթացից և պահանջմանց լուսաւոր ժամանակիս, միթէ հնա՞ր ինչ իցէ ակնկալել ի նոցա-

նէ զփրկութիւն Եկեղեցւոյ. ապաքէն տարակուսելի է այն, որով և կարի վտանգալից՝ եթէ ո՛չ զէթ այժմէն կանխեսցուք զարժանն հոգալոյ: Եւ զիա՞րդ այս եղիցի, եթէ ոչ պատրաստելով զարժանաւոր հովիւս և զհմուտ վարդապետս ի պաշտպանութիւն Եկեղեցւոյ մերոյ սրբոյ և Ազգի:

Ապաքէն քաջ իսկ զգացեալ մեր կանխաւ զայս ամենայն ըստ սեպուհ և սրբազան պարտուց պաշտաման մերոյ՝ ահաւասիկ բազում ճգմամբ և դառն աշխատութեամբ պատրաստեցաք զՃեմարան Ժառանգաւորաց աստ ի Մայր Աթոռս մեր ի սուրբ Էջմիածին, զորոյ մտադիր եմք Տերամբ օրհնել զբացումն ի յառաջակայ ամսեան Սեպտեմբերի ներկայ տարւոյս: Այլ քանզի համայն աշակերտք պարտին լինիլ ձրիաթոշակ, որոց թիւ լրացի առ այժմ առ նուազն յեօթանասուն և հինգ անձինս, անձեռնհաս գտանիմք յարդեանց Աթոռոյս ևեթ հոգալոյ զամենայն նիւթական պէտս Ճեմարանի և զանհրաժեշտ զծախսն՝ որք լինիցին անշուշտ. վասն որոյ վստահացեալ յօգնութիւնս և ի ձեռնտուութիւնս սիրելի և հարազատ որդւոց Մայր Աթոռոյս Հայաստանեայց և մեր՝ փութամք խնդրել ի ձէնջ, զի որք ձեռնհասիցեն՝ ըստ կամաց իւրեանց և կարեաց յօժարամտեսցին ընդունել զմի կամ առաւել որդեգիրս՝ նուիրելով և հատուցանելով ի տարեկան ծախս նոցա՝ զերեքհարիւր ռուբլիս: Յուսամք զի ի նպաստից բարեպաշտ ազգայնոց մերոց սատարեալ՝ զպակասորդսն մեք մեզէն ամբողջացուցանել յայլոց աղբերաց յաջողեսցուք, որով և զյարատևութիւն Ճեմարանիս յապահովի կալցուք յապագային. իսկ բարոյական արգասիք նորին անշո՛ւշտ լիովին պսակեսցեն զակնկալութիւն մեր, և՛ Ազգի և՛ Եկեղեցւոյ:

Ո՛չ աւելորդ համարիմք յիշել աստանօր և զայն, զի որք միանուագ կամիցին՝ նուիրել զգումար ինչ, որոյ տոկոսիքն բաւական իցեն ի վճար տարեկան ծախուց զէ՛թ միոյ որ-

դեգրի, անուանք այնպիսեանց արձանագրեսցին ի վերջ իւրաքանչիւր մատենից հրատարակելոց ի տպարանէ Մայր Աթոռոյս սրբոյ Էջմիածնի սկսեալ յօրէ բացման Ճեմարանի:

Արդ՝ լիայոյս ակնկալութեամբք յանձն առնեմք զայս Կոնդակ մեր և զմատեան ի ձեռն ... Վարդապետի ... հարազատ միաբանի Սրբոյ Էջմիածնի, զոր յատկապէս առաքեալ եմք յայդոսիկ կողմանս առ ի ընտրել զաշակերտս Ճեմարանի ի քաղաքաց և գիւղօրէից կանխաւ առ ի մէնջ նշանակելոց ըստ տպագրեալ Հրահանգին, որում և պատուիրեալ եմք դիմել առ բարեպաշտութիւնս Ձեր և խնդրել զօգնութիւնս ի նպաստ բարենպատակ գործառնութեանց մերոց: Մնայ ազգասէր, ուսումնասէր և առաքինափայլ որդւոցդ մերոց սիրելեաց՝ ի սէր Ազգիս և Եկեղեցւոյ մտադիր սիրով ընդունել զիրաւէր մեր և զյորդորանս՝ ստորագրելով յայս մատեան զնուէրս ձեր ըստ իւրաքանչիւրոցդ բաղձանաց և կարողութեանց:

Մաղթեմք ի Տեառնէ մերմէ և ի Փրկչէ Յիսուսէ Քրիստոսէ փոխարինել օժանդակողացդ բարերարաց զհարիւրապատիկն և զհազարապատիկն աստ և ի հանդերձեալն, և Տէր զարդարեսցէ զձեզ ամենայն բարեմասնութեամբք հոգւոյ և մարմնոյ՝ շնորհելով զյաջողութիւն ամենայն գործանութեանց ձերոց և զվայելս երկնից Արքայութեան ի կեանսն յաւիտենականս»:

«Արարատ», 1874, № 7, էջ 265-268:

№ 4

ՀԱՆԴԷՍ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԱՆՈՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ՆԱՒԱԿԱՏԵԱՑ ԲԱՑՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Ի 28 ամսոյս՝ Վեհ. Հայրապետի Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգեայ Սրբազնագոյն Կաթուղիկոսի Անուան տօնախմբութիւն դիպելով՝ բարեյարմար և արժան դատուած էր ի նոյն աւուր կատարել Ճեմարանի բացման նաւակատիքը՝ ի պատիւ և ի փառաւորութիւն անուան բազմարդիւն Հիմնադրի սորին և արժանաւոր Գլխոյ Հայաստանեայցս Եկեղեցւոյ:

Ըստ այսմ կարգադրութեան՝ արդէն կարևոր և հնարաւոր պատրաստութիւնքը ևս հոգացուած էին, և ամսոյս 27-ի յերեկոյեան ժամուն նախ Տօնախմբութեան հանդէսը սկսաւ և շարունակեցաւ հետևեալ կարգաւ:

Երբ նշանաւոր՝ բազմաբաղձ և յաւիտենական յիշատակաց արժանի աւուր նախընթաց յերեկոյին՝ ըստ նախնի սովորութեան՝ ի պատիւ անուան Հայրապետի Ս. Գէորգեայ նախատօնակն պիտի կատարուէր զկնի սովորական երեկոյեան ժամերգութեան, զանգակաց արտաքոյ կարգի վայելուչ հնչմանդ արձագանքն ի վին կդղրդէր Արարատեան դաշտը և գոգցես աւետեա քաղցրալուր եղանակները կընծայէին լսելեաց և հրաւէրներ կուղղէին Հայկազանց. ի նոյն միջոցի՝ Կաթուղիկոսաց յատուկ եղած փառաւոր հանդիսով՝ Վեհարանի արտաքին դռան առջև՝ համայն Միաբանութիւն Մայր Աթոռոյս՝ եկեղեցական զգեստներով ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի զարդարուած, խաչվառ-

ներով և լապտերօք թափօր յօրինած, նա և ժողովրդեան մեծ բազմութենէ շրջապատեալ կանգնած էր. Վեհ. Հայրապետ իջաւ ի Վեհարանէ, և ի թիկունս՝ շուրջառ և ի ձեռս Խաչ և Գաւազան ընդունելով, ընդ գլխովն Ամպհովանի, յառաջոյ՝ Կաթուղիկոսական ՔՕՂ ունելով ևս երկու զոյգ բուրվառներ, և Կաթուղիկոսական պատուոյ և զարդու Խաչ և Գաւազան երկու քովերէն՝ պաշտելով սովորականը, երգեցիկ Դպիրք ևս ձայնագրեալ ***Հրաշափառ Աստուածը*** կգեղգեղէին, և այսպէս հանդէսն սիգաճեմ յառաջանալով դէպ ի Ս. Տաճարն, երգեցիկ Դպիրք, որք յառաջընթաց շաթիրներու յետուստ կերթային, և զհետ նոցա էին Սարկաւագունք, Վարդապետք, Եպիսկոպոսունք և ապա Վեհ. Հայրապետ, երբ մտին ի ներքս, սկսան երգել ***Ուրախ լեր սուրբ Եկեղեցի*** շարականը՝ մինչև Վեհ. Հայրապետ հասաւ Իշման Տեղւոյ Սեղանոյն առաջ և սաղմոսեց ***Ուրախ եղէ ես՝ ոյք ասէին ինձ ի տուն Տեառն երթիցուք***, և յաւարտմանն՝ ***Սուրբ եկեղեցեաւս*** քարոզէն յետոյ ***Ի մեջ Տաճարիս*** աղօթքը մատոյց առ Տէր, և ապա ***Սուրբ խաչիւս*** քարոզը ասացաւ, և դարձաւ առ ժողովուրդն ***Պահպանիչ*** ասաց և օրհնեց զնոսա:

Այսու հետև ***Եւ ևս խաղաղութեան*** քարոզով նախատօնական կատարեցաւ Իշման Տեղւոյ առաջ, և այսպէս Ուրբաթ երեկոյեան հանդէսը վերջացաւ:

Ի յաջորդ Շաբաթ աւուրն՝ առաւօտեան ժամերգութիւնը ևս արժանաւոր հանդիսով և ըստ աւուր պատշաճի կատարեցաւ: Ջկնի արձակման Եկեղեցւոյ սակաւ միջոց անցանելով՝ ***Մաղթանքի*** զանգակը հնչեցաւ, և Միաբանութիւնս Վեհարանի առջև բոլորելով՝ (Ճեմարանի աշակերտք ևս մեկուսի բոլորեալ կանգնած էին)՝ Մաղթանքը ասացին, յորում մի ճառ ևս կարդացուեցաւ: Ապա եկին ի Վեհարան և մեր Սրբազնագոյն Հայրապետի Աջը համբուրեցին և

Տօնախմբութիւնը շնորհաւորեցին: Սոցա յաջորդեցին Ճեմարանի աշակերտք, և ապա ժողովուրդք, և հուսկ յետոյ Վաղարշապատի երկսեռ Դպրոցաց աշակերտք: Յայսմ միջոցի ևս երգեցիկ Դպիրք մեկուսի կանգնած՝ *Ուխտ ի նոր տարին* (ԲԱԲԷ), ***Մաղթանք*** (ՈՎ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ ԼՈՒՐ ՄԵՐ ԲԱՐԲԱՌ) և ի ***Տարեդարձն*** (ՀՆՉԵՍՑԵՆ ԼԱՐՔ) վերնագրեալ երգերը երգեցին:

Սոյն հանդիսի աւարտմանէն յետոյ սկսան Ճաշու Ժամու զանգակները հնչել, և Պատարագի Ս. Խորհուրդը պաշտուեցաւ: Պատարագիչն էր Հոգեզգօն Ստեփան Եպիսկոպոս Սանտալճեանց: Ս. պատարագէն անմիջապէս յետոյ սկսաւ Ճեմարանի բացման նաւակատեաց հանդէս:

Թափօրն այսպէս կազմուած էր:

Պատարագամատոյց Եպիսկոպոսն ի ձեռին ունելով մեծ Խաչ, յորում զետեղեալ է մասն ի Կենաց Փայտէ, զառաջեաւն մոմակալք և բուրվառք, որոյ աջ և ձախ քովերէն Արքեպիսկոպոսունք, Եպիսկոպոսուք, Վարդապետք շուրջառներով՝ և Սարկաւագունք և երգեցիկ դպիրք շապիկներով՝ ***Նշանաւ ամենայաղթ*** Շարականը[1] եղանակելով Մայր Տաճարէն դուրս եկին և ուղղեցին զընթացս դէպ ի Ճեմարան երթալոյ հիւսիսային պարսպի արտաքին մեծ դռնէն ելնելով: Ճեմարանի աշակերտք ամենէն առաջ կերթային, որոց ետևէն էին Ուսուցիչ նշանակեալ Վարդապետքն Արժ. Սուքիաս Պարզեանց (որ և Փոխանորդ Տեսչի), Յոհաննէս Երեմեան, Արիստակէս Սեդրակեան և Գէորգ Սուրէնեանց: Ջկնի սոցա էին Դպիրք կլն:

[1] Ինչպէս բաւական ժամանակէ հետէ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մէջ շատ Շարականաց և Ս. Պատարագի ամբողջ երգեցողութիւնք ձայնագրութեամբ կերգուին, նոյնպէս այսօրեայ բոլոր Շարականք և երգք ևն Հայկական ձայնագրութեամբ եղանակուեցան:

Իսկ մերձաւոր քաղաքներէն (Երևանէն, Աղէքսանդրապոլէն կլն) և գիւղերէն եկած ուրախ՝ համակիր և եռանդուն երկսեռ ժողովրդեան բազմութիւն այնքան խուռն լցուած էր, որ բաւական լայնարձակ ճանապարհի մէջ հանդէսը գրեա՛թէ շրջապատելով՝ հոգեզուարճ մխիթարութեամբք և զգացմամբք ի միասին կերթային դէպ ի Ճեմարան բուռն անձկանօք: - Ճեմարանի դռնէն ներս մտանելոյ ժամանակն խուռն բազմութիւն թէպէտ հանդէսը պիտի շփոթէր, սակայն չկարեմք աւելի ինչ մեղադրանք դնել նոցա վերայ, և կգտհանամք Աստուծմէ՝ զի ի նոյն միջոցի որպիսի՛ և իցէ մի ծանր վտանգ չտեսնուեցաւ: Ինչ և իցէ:

Վեհ. Հայրապետ՝ յարձակման Ս. Պատարագին՝ կանխաւ Սուրբ Տաճարէն ելնելով՝ ուղղակի առանձինն կառքով իջած էր ի Ճեմարան և ի փառաւոր Հանդիսարանն բազմեալ, ուր թափօրի հանդէսն ևս հաւաքուեցաւ. ընդ նմին ժողովրդեան բաւական մեծ բազմութիւն, և ի Հանդիսարանի մի կողմն՝ արք, և ի միւսումն՝ կանայք կացած էին: Ի հարաւային կողմն՝ այս ինքն ի ճակատին՝ Վեհ. Հայրապետ շուրջառ ի թիկունս, և ի ձեռս Խաչ և Գաւազան՝ երկաստիճան պատուանդանի վերայ Աթոռոյ առջև կանգնելով և ի բոլորտիքն Միաբանութիւնն կլն, և կեդրոնն (մէջ տեղը) բաց մնալով՝ Վեհ. Հայրապետի յանդիման բոլորեալ կանգնած էին նոր աշակերտք կամ Ժառանգաւորք:

Իսկ դարձեալ մեծ բազմութիւնն Հանդիսարանէն դուրս՝ է՛որ վերը սանդղոց վերայ սրահը և է՛որ բակը կլն. խռնուած, հեռուէն կըդիտէին:

Եւ ևս խաղաղութեան քարոզով ***Օրհնութիւն և փառք*** մաղթանքէն զկնի՝ ***Այսօր երկնայինքն ուրախացան*** Շարականը դպիրք սկսան երգել, և գիրք և Աւետարան՝ հանդիսին յարմար քարոզ, իսկ աղօթքը Վեհ. Հայրապետ կարդալէն յետոյ՝ ***Խաչահանգիստ*** եղաւ:

Պահպանիչէն առաջ մի ճառ կարդացուեցաւ, և յետոյ Ճեմարանի նուիրուած Ուղերձը երգեցին, որ կրկնուեցաւ, և մի ուրիշ երգ ևս եղանակելէ վերջն՝ Վեհ. Հայրապետ համառօտ՝ բայց ազդու և սրտաշարժ մի ատենաբանութիւն խօսեցաւ, յորում բացատրելով մեր Ազգի և Եկեղեցւոյ ապագայն ապահովելոյ համար Ազգիս ի ներկայիս ունեցած անհրաժեշտ պարտաւորութիւնքը՝ որ և օր աւուր նոր օրինակ դէպքերով աւելի զգալի կլինին մեզ, նա և մեր ի նախնեաց ընդունած անգին և պատուական աւանդները անկորուստ պահպանելոյ և մշտանջենաւորելոյ հետ՝ Հայրենեաց աւերակաց վերայ երբեմն վերաշինութիւն բերելոյ և Հայաստանի վերակենդանութիւն և սուրբ Եկեղեցւոյս մեծապայծառ յարատևութիւն նուիրելոյ յոյսը հաւատով և սիրով արդիւնաւորելոյ համար ամենակարևոր միջոցները՝ ընդարձակ և պարզ փաստերով յայտնեց, և այսոցիկ ամենայնի իրագործութիւնը և կատարումը տեսնելոյ համար անձնուէր, ուսեալ և բարեկիրթ հոգևորականաց պէտքը և գերազանց և յատուկ յարմարութիւնը զգացոյց, որոց կարօտութիւն այլ ևս անհրաժեշտ եղած էր և հարկ էր պատրաստել, և նոյն նուիրական նպատակով ներկայ Ճեմարանի շինութեան ձեռնարկելը, աւարտելը և բացման հանդիսաւոր նաւակատեաց աւուր նշանաւոր՝ վսեմ և նոր դարագլուխ լինելը ևս յայտնելով, խանդակաթ եռանդեամբ բարեմաղթեց և աներկմիտ ակնկալութիւն ցցոյց Ճեմարանի աշակերտաց զէ՛թ տասանորդը ընդունելով՝ իւր բուն և գլխաւոր նպատակին համաձայն Եկեղեցւոյ Պաշտօնէութեան կընուիրէ, և այս նպատակին մէջ աւելի մեծայոյս լինելոյն գրաւականները յիշեց և խրախուսեց զԱրժ. Փոխանորդն Տեսչի, և զԱրժ. Ուսուցիչ Վարդապետս և զայլս. և այլ բաւական պատշաճ և գեղեցիկ խօսքեր ևս ուղղելով առ եկեղեցականս, ժողովուրդ և առ աշակերտս, խնդրեց և

յուսացաւ որ՝ փոխադարձ և ըստ իւրաքանչիւր աստիճանի և կարգի ձեռնտուութիւնքը և բարոյական աջակցութիւնքը ամենայն Հայ կգգայ և կփութայ ի կատարումն, որով Ճեմարանի ունեցած թեթև պակասութիւնքը ևս արժանաւոր խնամքով և անխոնջ ջանք և փութով լրանալով՝սուղ միջոցի մէջ կյաջողվի Հայ Ազգի համար ընտիր անդամներ և Եկեղեցւոյ անձնանուէր և բարի պաշտօնեայներ ընծայելոյ կլն կլն:

Ատենաբանութիւնը բարեմաղթութեամբք կնքուեցաւ, և հանդիսականաց իւրաքանչիւրին երեսաց վերայ տպաւորեալ նոր ոգևորեալ համակրութիւն, սէր և մեծայոյս խնդութիւն կարտափայլէր, որք անձկայրեաց և բազմաբաղձ սրտից բարախմանց ընկերացած կերևէին:

Այս Հանդէսը ևս վերջացաւ ***Պահպանիչով***. յայնժամ հանդիսականք սկսեալ յԱրքեպիսկոպոսաց մատեան ի համբոյր Վեհ. Կաթուղիկոսի Ս. Աջոյն և ի խնդակցութիւն շնորհաւորութեան բացման Ճեմարանի, և ապա Վեհ. Հայրապետի հետ Միաբանութիւնս և այլք մեկնեցան ի Ճեմարանէ և եկին ի Վանս:

Սեղանատան զանգակը հնչեցաւ, Վեհ. Հայրապետ և համայն Միաբանութիւն և հրաւիրեալք եկին ի սեղան և ճաշ վայելեցին. և ի նոյն միջոցի երբեմն զինուորական նուագածուաց խմբին եղանակներ, և մերթ դպրաց ազգային ընտիր և գեղգեղ երգեր՝ օդոյն գեղեցկութեան հետ գեղեցիկ և զմայլելի տեսարան կկազմէին:

Ի սեղանատան սովորական օրհնութեան մէջ[1] Վեհ. Հայրապետ՝ լիաշուրթն բերանով և զգածեալ սրտիւ օրհնեց

[1] Հին սովորութիւն է, զի երբ Հայրապետն՝ ի հանդիսաւոր աւուրս՝ ընդ Միաբանս սեղանակից կլինի, երբեմն երբեմն երաժիշտ մի Վարդապետ ի միջի սեղանատան՝ Վեղարը գլխէն վեր առած և ի ձեռին բռնած՝ կկանգնի, և բարձր ձայնիւ կերգէ՝ **Հրամայեա՛ Տէր**

զՄիաբանութիւն Մայր Աթոռոյս և զհամայն ուխտ Եկեղեցւոյ իմա՛ զընդհանուր Ազգս Հայոց՝ որ են ընդ ոլորտս տիեզերաց, մաղթեց ի Տեառնէ զհաստատութիւն և պայծառութիւն Մայ Աթոռոյս Էջմիածնի և Վանօրէից, Եկեղեցւոյս Հայաստանեայց, Ճեմարանի և ամենայն ուսումնարանաց և դպրոցաց Հայոց, բարեմաղթեց վասն կենաց Օգոստափառ Կայսեր համայն Ռուսաց և Կայսերազուն Փոխարքայի կլն:

Իսկ զկնի կերակրոյն՝ մրգեղէն ուտելոյ միջոցին՝ յանուն Վեհ. Հայրապետի բաժակ առաջարկուելով՝ ***Աղբիւր կենաց և փրկութեան*** Շարականի երգուելէն յետոյ՝ կրկնուած և երեքկնուած ԿԵՑՑԷ՛ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ սրտեռանդ և բարձրագոչ աղաղակներն զերկինս կթնդացնէին և արտաքուստ հրացանաձգութեանց արձագանքներ ևս միացած էին:

Յետ այսորիկ՝ Վեհ. Հայրապետ վասն կենաց Օգոստոսափառ Կայսեր բաժակ առաջարկեց, և ***Թագաւոր փառաց*** շարականը երգելէ վերջը՝ կեցցէներու աղաղակներով և հրացանաց արձագանքներով բաժակներ դատարկուեցան:

Յաւարտման սեղանոյն՝ վասն յառաջադիմութեան և պայծառ յարատևութեան և ապահովութեան կլն. համայն Ազգիս Հայոց բաժակ առաջարկելով Վեհ. Հայրապետ՝ և ***Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա*** Շարականը երգուեցաւ և ***Հայր մերով*** վերջացաւ:

Ի գիշերին պայծառ լուսավառութիւնք և գեղեցիկ հրախաղութիւնք եղան, և նուագածուաց խումբն ընտիր եղա-

օրհնութեամբ ասել, և Հայրապետն ըստ պատշաճին օրհնութիւն կը տայ: Այս է սովորական օրհնութիւնը: Եւ իւրաքանչիւր անդամի օրհնութեան յաւարտելն, Վարդապետն կեղանակէ **Ամէն, եղիցի եղիցի**: Եւ յետոյ գինւոյ բաժակներ կլցուին և կվայելեն:

նակները գեղգեղեց, որ ի յաջորդ Կիւրակէ օրն և յերեկոյին նս նոյնպէս նուագեց: Ահաւասիկ այսքանով համառօտ իմն ամփոփելով Վեհ. Հայրապետի Անուան տօնախմբութեան և Ճեմարանի նաւակատեաց հանդէսները[1], աստանօր կյաւելումք ըստ կարգին հրատարակել ի բազում ճառից և ոտանաւորաց միայն կարդացուածներուն հետ՝ նաև երգուած Ուղերձը հանդերձ ձայնագրութեամբ:

Յաջորդ թերթի մէջ կհաղորդեմք հաւաքուած և ընդունուած աշակերտաց անուանց և այլոց, դասական և առարկայից բաժանմանց ցուցակները, անհրաժեշտ կարևոր եղած նոր կարգադրութիւնը, բոլոր դասատուաց անուանքը և իւրաքանչիւրին առարկայքը ևն ևն:

«Արարատ», 1874, № 9, էջ 342-346:

№ 5

ՎՍԵՄ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՕՒՆԱՆԵԱՆՑ ԵՒ ԻՒՐ ՆՈՒԷՐՆԵՐ

Ի 12-ն ամսոյս՝ Մայր Աթոռս Էջմիածին ուրախութեամբ հիւրասիրեց զվսեմափայլ Յովհաննէս Ս. Յօւնանեանց՝ զայրն բազմաձանօթ եւ բարեհամբաւ, որ ընկերակցութեամբ իւր Մեծ՝ եղբօր Աղէքսանդրի Յօւնանեանց, որդւոյն Ստեփանի եւ Ալէքսան փեսային եւ այլոց երկուց անձանց՝ եկած էր յուխտ եւ յերկրպագութիւն Ս. Էջմիածնի եւ նուիրական Սրբութեանց որ ի սմա՝ եւ շրջակայ վանօրէից: Սովաւ կատարեց այնպիսի՛ մի պարտաւորութեան զգացումը, զոր ամենայն ճշմարիտ Հայ սրտին մէջ մշտավառ պէտք է ունենայ ի պանդխտութեան, եւ եթէ ձեռնհաս է՝ պարտական է անձամբ արտայայտել այն սէրը, զոր ունի առ Մայրն Հաւատոյ Ս. Էջմիածին. այն է գործնականապէս կատարելով իւր ուխտը եւ գալով յայցելութիւն այս սուրբ կեդրոնիս, որ յաւէտ լինելուց է անլուծանելի շաղկապ կրօնական եւ բարոյական միութեան ամբողջ Հայ Ազգի՝ ուր եւ ցրուած լինի նա իւր վերջին քաղաքական կենաց վերջանալէն յետոյ: Այսպիսի պարտուց ճանաչումն հետզհետէ պէտք է զօրանաց, եթէ Ազգն կցանկայ որ Ս. Էջմիածին, իւր Ազգային Հոգեւոր նշանակութիւնը անթերի կատարէ եւ իւր ազգաշահ ձեռնարկները անխափան իրագործէ:

Եւ ահա այս առթիւ Վսեմափայլ Յովհաննէս Յօւնանեանցի շրջանկատ տեսութենէն չկրցան ծածկուիլ այն բարեմիտ ձեռնարկներն ու նորահաստատ բարեկարգութիւնք՝ զորս մեր Վեհափառ Հայրապետ ընդ միշտ ջանացած է ի գործ դնել Ս. Աթոռոյս պայծառութեան, ներկայ և ապագայ Միաբանից մտաւոր եւ բարոյական յառաջադիմութեան նկատմամբ, ուստի ի նշան իւր խորին համակրութեան՝ եւ իբրեւ յայտարար իւր ազգային պարտքերը քաջ ճանաչելոյն՝ ի 15-ն ամսոյս նախ քան զմեկնիլն ի Ս. Էջմիածնէ՝ ուղղեց հետեւեալ գրութիւնը առ Վեհ. Հայրապետ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ

Բազմակարօտ սիրով եւ հոգեռանդն անձկանօք եկեալ գոլով իմ յուխտ և յերկրպագութիւն մեծահռչակ վանից Ս. Էջմիածնի և ամենայն նուիրական սուրբ տեղեաց՝ որք շուրջ զսովաւ գտանին, ախորժալիր իմն ցնծութեամբ սրտի նկա-

[1] Չմոռանամք յիշելոյ նա և՝ զի մի և նոյն օր թէ Վեհ. Հայրապետի անուան տօնախմբութիւնը և թէ Ճեմարանի բացումը շնորհաւորող և բարեմաղթու բազում հեռագիրներ ստացուեցան ի Տփխեաց, յԱխալցխայէ, ի Գզլարէ, ի Նոր-Նախիջևանէ, յԱստրախանայ, ի Ս. Պ. Բուրգոյ ևլն. ևլն:

Ընդ այսպիսի բարեգուշակ համակրութիւնս և զգացմունս յանչափս ուրախ եմք:

տեալ տեսի, զի նորանոր բարեկարգութեանց արդիւնք յայտ յանդիման ելանեն յամենայն քայլափոխս և վանքն զնոր իմն զգեցեալ է և զգենու կերպարան վայելչութեան և կենդանութեան եթէ նորակառոյց շինուածոց յաւելմամբ և եթէ արդէն եղելոցն բարեխնամ նորոգութեամբք:

Զայսոսիկ գովանի արարս մեծագործութեանց համարելով անուրանալի արգասիս ազգասիրական փութոյ Վեհիդ և քաղցրագին խնամոց, որովք ջանս ի ջանիս յաւելուք զԳերագահ Աթոռն Ս. Էջմիածնի օր քան զօր փառաւոր և պատկառելի կացուցանել յաչս մերայնոց և օտարաց և ըստ հոգևոր նշանակութեանն աղբերացուցանել ի սմանէ յընդհանուրս Հայաստան աշխարհի և յամենայն տեղիս, յորս ցրուեալ են պանդուխտ Հայկազունք, զհոգևոր դաստիարակութեան զյորդառատ ուղիս ընդ ձեռն Նորակառոյց Ճեմարանի և զբարոյական կրթութեան զկենցաղօգուտ արդիւնս ընդ ձեռն Արարատ պատուական Ամսագրոյ, թողից ասել զայլ բարեվաստակ ձեռնարկս Վեհիդ, յորոց սակի են խորանաշէն Թանգարանն, նորատունկ անտառն և այլ բազմատեսակ սխրագործութիւնք, որոց նպատակն է պայծառութիւն վանից Ս. Էջմիածնի և բարօրութիւն Միաբանից սորին. սոցին աղագաւ կամ եղև ինձ ի հաւատիս խորին յարգանաց իմոց առ ամենայն ձեռնարկ Վեհիդ և իբրև նպաստ դուզնաքեայ առ անվթար իրագործութիւն ազգաշահ նպատակաց ձերոց նուիրել նախ՝ ռուպլիս արծաթոյ **երեք հազար** նորակառոյց Ճեմարանի սակս կրթելոյ ի նմա տոկոսեօք այնր գումարին զորդեգիր մի, երկրորդ՝ **երկու հազար ռուպլիս** ի վերանորոգութիւն սրբոյ **Տաճարին Էջմիածնի**, որում կարօտի մեծապէս, և երրորդ՝ զտուեալն ինև փոխարինաբար **զհինգ հազար վեց հարիւր յիսուն և չորս ռուպլիս և զութսուն ութն կոպէկս** ի գինս եռատեսակ թղթոց, միոյ փոքրադիր արագատպի և տպարանական մամլոյ բաշխել յօգուտ Տպարանին և յարդիւնաւոր յառաջադիմութիւն նորին:

Լիայոյս գոլով, զի Վեհափառ Տէրդ իմ զգումարսն զայնոսիկ՝ զորս նուիրեմ յարդար վաստակոց իմոց, ընկալցի ի հաճոյս իւր և համարեսցի առհաւատչեայ մեծի համակրութեան իմոյ առ ամենայն մեծագործութիւնս իւր, որովք տեսի զԱթոռն զարդարեալ և վայելչացեալ, մնամ:

Վեհափառ Տէրութեանդ
Ամենախոնարհ ծառայ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՕՎՆԱՆԵԱՆՑ

ի 15 Հոկտեմբերի 1874 ամի:

«Արարատ», 1874, № 10, էջ 383-385:

№ 6

ՀՐԿԻԶՈՒԹԻՒՆ Ի ՃԵՄԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Երկայ թուոյս մէջ ակամայ և ի վիշտ պարտաւորուած եմք նորաբաց Ճեմարանի վերայ պատահած տխրառիթ մի ծանր դժբաղդութիւնը գուժելոյ, զորմէ անշո՛ւշտ իւրաքանչիւր Հայ պիտի վշտանայ և տրտմի:

Ամսոյս 16-ն էր՝ Չորեքշաբթի օր՝ մինչ առտուանց Ասիական ժամ իբր 2-3 ի միջոցներում՝ Ճեմարանի մէջ աշակերտք և դասատուք իւրեանց պարտաւորութեամբք զբաղեալ էին, արտաքուստ մի քանի անձինք վազ ի վազ կըսլանան դէպ ի Ճեմարան և կիմացնեն տանեաց յարևմտեան կողմն ծուխ ինչ երևիլը, և Ճեմարանի բակին արևմտեան կողմը կառուցուած նոր շինութեան աշխատաւորներէն մի քանի վարպետ անմիջապէս կդիմեն և կելնեն տանեաց վերայ:

Գոյժը կիասնի Ս. Էջմիածնի Վանուց մէջ ևս, և անտի թէ՛ Վեհարանէն, թէ՛ Տպարանէն և թէ այլ աշխատաւորներէն՝ ինչպէս նաև ամբողջ Միաբանութիւն Մայր Աթոռոյս՝ և հիւր գտնուած Գեր. Մակար և Սարգիս Ս. Արքեպիսկոպոսունք և Թադէոս Եպիսկոպոս, և վսեմ. Գաւառապետ Խանաղեանց իւր ստորադրելոց հետ՝ և Վաղարշապատէն բաւական մարդիկ փութով հասած էին և հետզհետէ կհասանէին Ճեմարան:

Յառաջահաս անձինքներէն ոմանք կարծելով որ ծուխը՝ հետևաբար նաև հուրն խոհանոցի ծխնելուզէն է, որովհետև նմին մօտիկ տեղէն կելնէր ծուխը, անմիջապէս կսկսանին երկաթեայ թիթեղները՝ տախտակները կլն քակելով ծխնելուզի բոլորտիքը բանալ կրակը արմատէն այս ինքն է՝ ծխնելուզին կից տանեաց պարագաներէն գտանելոյ և շիջուցանելոյ ակնկալութեամբ, սակայն կրակն ո՛չ թէ ծխնելուզին կից, այլ բաւական վերև, այս ինքն՝ ծխնելոյզն տանեաց կողին հարաւային բաժանման մէջ լայնութեան միջակիտին մօտ կգտնուէր, իսկ կրակն դէպ ի վեր հիւսիսային ծայրին մօտ էր, որոյ ներքև եղած (ճեմելիքի-սօֆա) կաճածեփ կամարին և տանեաց միջոցն կարի նեղ՝ իսկ դէպ ի վայր (ճեմելիքը և սենեակները ի միմեանց բաժանող պատերուն վերայ) բաւական արձակ լինելով, կրակն դէպ ի արձակ կողմերն դիմած միջոցին՝ կարողացած է ծխնելուզին մօտիկ տեղ գտանել և անտի ծուխ դուրս տալ, ինչպէս որ ականատես վարպետք պատմեցին, և երբ առանց կարևոր պատրաստութեան՝ ծխնելուզին շրջակայքը կբանան՝ կրակն աւելի օդ և հով կստանայ և կսկսանի արագ բորբոքուիլ և արծարծուիլ: Թէպէտ բաւական բազմութիւն հասած և դիզուած էր, այլ գրեթէ համայնն այսպիսի կրակին անսովոր և անփորձ գոլով՝ մանաւանդ ոչ հրշէջ ջրհան, ոչ կացին և տապար և այլ յարմար գործիք՝ ինչպէս նաև ջուր

կրելոյ ամաններ լինելով՝ բաց ի հողային կուժերէ, կրակին բոլորտիքը անմիջապէս փլուզանելով շիջուցանելոյ համար ևս ոմանց անխոնջ ջանքերն ապարդիւն կերթային այնքան՝ զի բազմավիշտ և սրտաբեկ յուսահատութիւնն համայնից վերայ կերեւէր: Ի վերայ այսր ամենայնի՝ դարձեալ ժողովուրդն՝ ծերք և երիտասարդք՝ անխոնջ ջանալով կաշխատէին մի կողմէն կրակը մարելոյ և միւս կողմէն մէջի համայն պարագայքը, հանդերձատան արկղները կլն մինչև դռները և մի քանի պատուհանները ազատելոյ:

Իսկ Վեհ. Հայրապետ՝ բոլորովին երեսաց գոյնը շրջած՝ քալելոյ կարողութենէ զրկուած՝ սրտաթունդ և դողդոջուն՝ հսպառ տխրազգեաց սրտիւ՝ մարելոյ վտանգի մէջ տագնապելով՝ աչքերը արտասուօք լցուած՝ ամենեցուն կաղաչէր և կյորդորէր աշխատել և միջոցներ ցուցանելով կջանայր կրակին առջևը առնուլ: Ուստի ժողովրդեան մեծ և եռանդուն մասն ևս աչք յարտասուս՝ և առաւել կարեվէր և կարեկից զգացմամբ ոգի ի բռին ունելով՝ սկսաւ այլ միջոցներ ձեռք առնուլ, և երեք-չորս կողմէն՝ յարտաքուստ և ի ներքուստ կրակին շարունակութիւնը և տարածումը ընդհատելոյ համար տեղ տեղ թէ՛ ի տանիս և թէ՛ ի միջին՝ Հանդիսարանի դրան առջև եղած ճեմելեաց մասի տախտակամածը կտրատել և քանդել: Հանդիսարանի և Հիւանդանոցի պատերուն բարձրութիւն և առանձին դիրքն թէև զՃեմարան որոշ մասերու բաժանածի պէս էր, այլ ի ներքուստ ճեմելիքի տախտակամածի վրայով՝ և յարտաքուստ բոցին բորբոքն և տաքութիւնն ներգործելով երկաթեայ թիթեղներու վերայ՝ այրելով կրկնկեցնէր և կբանայր ներքևի տախտակները, որով հետզհետէ տախտակներն ևս տաքանալով՝ կբռնկէին. և ահա սոցա առջևը առնլոյ համար՝ Հիւանդանոցի վերայ մարդիկ ելած կրակին դէմ կհսկէին և կժերով ջուր ստանալով՝ տաքութենէ և կրակէ ազատ կպահէին տանիքը՝

թէ և խառնաշունչ և հակառակ փչած հողմն՝ հրկիզութեան ծուխը նոցա վերայ շրջելով՝ կսպառնայր խեղդել զնոսա: Ըստ այսմ Հանդիսարանի կողմն ևս հսկելոյ համար մարդիկ կպակասէին՝ մանաւանդ թէ այն կողմն խիստ երկիւղալի և վտանգաւոր էր, ևս եղած գործիքն անբաւական, որ միայն կուժերով ջուր պիտի հասցնէին և թափէին կրակին բոլորտիքին: Վասն որոյ հանդիսարանի մի կողմէն ևս երկաթեայ թիթեղաց ներքեւէն կրակն կարողացած էր կամարին վերայ սպրդել և անշմարելի կերպով գմբէթի մէջէն այրել, որ Հանդիսարանի մէջէն՝ գմբէթի ներքև իսպառ կաճածեփ և քանդակագործ լինելով՝ չէր երևէր և կկարծուէր զի անվտանգ մնացած է, մինչև որ գմբէթի մէջի կապ եղած կաղնեայ ամուր փայտերն այրելով՝ միանգամայն ամբողջ գմբէթն ահագին շառաչմամբ խոնարհեցաւ: Այս միջոցիս՝ մի կողմէն յուսահատութիւնն և միւս կողմէն կարեկից զգացմանց եռանդուն սէրն աւելի ևս գրգռուելով և բազմապատկուելով՝ ծայրայեղ ջանքեր ի գործ դրուեցան, այնքան որ կարողացան թէ տանեաց վրայէն և թէ ի ներքուստ հանդիսարանի դռան առջևէն և նոյն ուղղութեամբ ներքին յարկէն կէտ նպատակի դրուածին համաձայն կրակին դէմ կատաղութեամբ մաքառել՝ գործիք ունենալով միայն՝ կուժերով և պղնձեայ ամաններով ջուր թափելը և թիակներով հողախառն (ցեխոտ) ջուր նետել կրակին մօտեցած տեղուանքը, միանգամայն վերնայարկի՝ հանդիսարանի դռան մերձ կտրուած տեղէն՝ թրջած գորգով՝ հանդիսարանի ներքին յարկի Ճեմարանի մէջ բանած դռնէն դուրս ելած բոցոյն դէպ ի ներքին յարկի առաստաղը յառաջանալոյն և բռնկցնելոյ սպառնալեաց արգելք դրին:

Այսպիսի ջանիւք՝ հակառակ ոմանց յուսահատ բանից՝ երեկոյեան դէմ ասիական ժամ 10-ի միջոցներում՝ կրակի կատաղութիւնը հանդարտուեցաւ, և Ճեմարանի կէս մասն

ազատութեան շաւղին մէջ մտաւ: Ուստի ժողովուրդն ուրախութեամբ լցուած այնքան ոգևորեալ էր՝ որ սկսաւ վտանգին առաջը բոլորովին առնլոյ համար՝ թէ հանդիսարանի ներքեւ խոնարհած և այրուող փայտերը՝ է որ կիսայրեաց՝ է որ ամբողջ կրակ դարձած կտորները՝ տաք երկաթները նլն դուրս քաշել և արտաքին բակին մէջ նետել: Յայսմ պահու սրարշաւ հասան Երևանի արքունական պաժարնի կոչուած հրշէջ խումբն իւր գլխաւորի հետ, որ քառասուն հոգիէ կբաղկանային՝ և հետներն ունէին մի քանի բահ, թիթեղեայ դոյլ և մի երկաթ քիւլիւնկ կոչուած: Սոքա առտուանց կրակին նոր սկսած միջոցում՝ Գաւառապետի կողմանէ խրկուած յատուկ սուրհանդակաւ կոչուած էին: Այս խումբ ևս միանալով և գոգցէս նոր ոյժ տալով վաստակաբեկ աշխատաւորաց՝ ջրով և բահերով կրակին վտանգաւոր եղած տեղեաց մէջ մտան և մարելով՝ և կիսայրեաց փայտերը արտաքս քաշելով և նետելով՝ գիշերոյ առաջին պահու ժ. 1 1/2-ին բաւական ապահովութիւն տեսնուեցաւ կրակին դէմ: Որով արքունական հրշէջ խմբին կէս մասը յԵրևան վերադառնալով՝ մնացեալն՝ և նոցա հետ մերձ յիսուն հոգի պահապան դրուեցան, և մինչև առաւօտ հսկելոյ համար կարևոր այլ պատրաստութիւնքը ևս կարգադրած՝ ժամ ճիշտ 3-ին՝ Վեհ. Հայրապետ վերադարձաւ ի Վեհարան՝ գիշերապահներու հետ ի Ճեմարանի թողլով զոմանս ի Միաբանից՝ և զիւր հոգեսուն որդի Ստեփան Եպիսկոպոս Սանտալճեան, որք մինչև ցառաւօտ հսկեցին[1]:

Ճեմարանի այրեցեալ մասին մէջ հրկիզեցան Հանդիսարան, երկու Ննջարանք, Հանդերձատունն, Սեղանատունն, Խոհանոցն, Տնտեսատունն, տնտեսի սենեակն, վերին և ներքին յարկաց հարկաւորք և լուացարանք, լուացատունն,

[1] Ոչ սակաւ մխիթարութիւն է և այս՝ զի կրակն գիշերայն չպատահեցաւ և աշակերտաց և այլոց աշխատաւոր մարդկանց կորուստ և փսաս ինչ չդիպաւ:

Հանդիսարանի ներքև եղած ի պէտս վերակացուաց յատկացած երկու սենեակք: Իսկ ազատեցեալ մասին մէջ մնացին Հանդիսարանի դիմաց երկու սենեակէ բաղկացեալ Հիւանդանոցն, Սերտարանն, ամբողջ դասարանք, վարժապետական խորհրդարանն, Տեսչի սենեակն, և այլ երեք սենեակք և մի պահարան:

Արդ այս դժբաղդ արկածին հարուած ո՛րքան ևս քսան հազար մանէթէն աւելի նիւթական վնաս տուաւ Ս. Էջմիածնի և Ազգիս՝ ևս բարոյապես բաւական մեծ վիշտ և տրտմութիւն տպաւորեց Վեհ. Հայրապետի՝ ինչպէս նաև համայն ողջամիտ և ճշմարիտ Հայոց սրտից մէջ, սակայն սոքա երբէք չպիտի զօրեղ և ոչ ինչ վիատութիւն չպիտի ներգործեն ինչպէս որ ներգործած չեն Վեհ. Հայրապետի մերում, ընդհակառակն՝ առաւել ևս ոգեւորուելով և զօտէպնդուելով՝ առ Աստուած ապաւինուած պէտք է ջանալ նպատակը և ձեռնարկուած մեծ գործը՝ առանց ընդհատելոյ և թուլանալոյ՝ շարունակել և արդիւնաւորել: Ուր եռանդուն սէր և հաստատամիտ նպատակ կայ, անդ վիատութիւն չկայ և ամեն արգելք և արկած կյաղթուի, և այս բազմիցս ապացուցեալ է բազում օրինակօք: Վեհ. Հայրապետ՝ առանց երբէք վիատելոյ՝ և բազում խնամօք և տաժանմամբք՝ երկարժամանակեայ խորհրդովք և պատրաստութեամբք յարդարած և ի գործադրութիւն բերած բուն և նուիրական նպատակը՝ յաւէտ ապաւինելով առ Աստուած և Ազգիս համակրութեան և ձեռնտուութեան՝ ինչպէս նաև Օգոստ. Կայսեր Ռուսաց բարեմիտ ակնարկութեան և խնամոյ հանդիպելով՝ պիտի շարունակէ և Աստուծոյ յաջողութեամբ պիտի արդիւնաւորէ, ինչպէս որ փորձով ևս կտեսնուի, զի Ճեմարանի կէս մասին այրուելէն զկնի՝ հազիւ մի քանի օր անցաւ՝ Ս. Էջմիածնի Ղազարապատ հիւրանոցը[1] ի Ճեմարան փոխարկեց և աշակերտները տեղաւորեց, ուր իւրեանց պարտաւորութիւնքը կկատարեն և կշարունակեն: Այսպիսի հանգամանաց մէջ տեղւոյ անձկութիւն և այլ ինչ ինչ անյարմարութիւնքն ներելի են: Եւ ոչ միայն այսչափ. այլ և Երևանայ նահանգին արքունական ճարտարապետը հրաւիրելով և Ճեմարանի այրեցեալ մասին ամբողջ պատերուն հաստատութեան և անվնաս մնացած լինելոյն վերայ ապահովուելով՝ զկնի կարևոր խորհրդածութեանց ընդ որոց արժան էր՝ յիշեալ ճարտարապետի հետ ի ստորև հրատարակեալ պայմանը կռեցաւ, որով արդէն վերաշինութեան նախապատրաստութիւնք սկսուած են և 21/2 ամիսէն զկնի այս պայմանի մէջ յիշուած մասերը աւարտուելով՝ այնուհետև մնացելոց համար ևս կարևորը կհոգացուի. որով Աստուծով մինչև յառաջակայ տարւոյ Յունիսի ցվերջ՝ ամբողջ վերաշինութիւնք կաւարտուին և աշակերտք գո՛նէ յաշնանն կը փոխադրուին ի Ճեմարանական շէնքն:

Մեր խօսքերը կնքելէ յառաջ կբաղձամք յայտնել և անշո՛ւշտ կյուսամք նա և, զի այս առթիւ մեր սիրելի եղբարք ևս կփութան կարեկից լինել և դարձեալ կարևոր եղած օժանդակութիւնը առատաձեռնելով՝ արդեամբք կպարզեն իւրեանց զգացմունքը և համակրութիւնքը, որում անտարակոյս եմք՝ զի մեր Ազգ. թերթերն ևս կձայնակցին և յորդոր կկարդան՝ ինչպէս որ արդէն «Մեղու Հայաստանի» լրագիրն 22-րդ թուոյն մէջ այսպիսի բարի նպատակաւ յառաջընթաց հանդիսացած էր, որով մեր շնորհակալութիւնը ևս գրաւեց:

«Արարատ», 1874, № 10, էջ 385-389:

---

[1] Եթէ հարկ լինէր՝ Վեհ. Հայրապետ պատրաստ էր իւր բնակած Վեհարանը ի Ճեմարան փոխարկել՝ անձկալով յաւէտ՝ զի նուիրական ազգօգուտ նպատակը և ձեռնարկութիւնը չընդհատուի և Յօնանու դդմենւոյն չնմանի:

№ 7

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ

Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս Այվազեանց՝ ի Վեհ. Հայրապետէ՝ յատուկ Կոնդակաւ՝ Մայր Աթոռոյս նորաբաց Ճեմարանի Տեսուչ կարգեցաւ:

Նորին Գերապատուութեան ստացած և բարեհամբաւեալ մտավորական և բարոյական բարձր և բազում արժանաւորութեանց հետ՝ դաստիարակութեան կենսական խնդրոյ և արդեանց մէջ ևս ունեցած ողջամիտ՝ բազմափորձ հմտութիւնն և յաջողակութիւնն մեծ գրաւական պիտի լինի Ճեմարանի ապագային համար, և կյուսամք որ կարևոր աջակցութեամբք և օժանդակութեամբ նպաստաւորեալ՝ Աստուծով կյաջողի իւր մեծ Անուան և բազմափորձ հմտութեանցըն համաձայն մեծ և փառաւոր արդեամբք զարդարել և ճոխացնել զՃեմարան Մայր Աթոռոյս, և Վեհ. Հայրապետի՝ ինչպէս նաև Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգի արդար և մեծալոյս ակնկալութիւնքը պսակել, միանգամայն առաւել ևս շքեղացնել և պայծառացնել իւր մեծահամբաւ և արժանաւոր անունը և փառքը:

«Արարատ», 1875, № 6, էջ 230:

№ 8

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՒ ՏԱՐԵԴԱՐՁ Ս. ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ

Ի 27-ն ամսոյս՝ յաւուր Շաբաթու՝ ամենայն Հայոց Վեհ. Հայրապետի Անուան տօնախմբութիւնը եւ Ս. Գէորգեան Ճեմարանի առաջին Տարեդարձը արժանաւոր հանդիսիւ կատարուեցաւ:

Այս առթիւ զկնի Ս. Պատարագի՝ ի ճեմարանի կատարուած հանդիսի[1] ժամանակ՝ Վերատեսուչ Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս Այվազեանցի, որ եւ ի նոյն աւուր Պատարագիչ եղաւ, կարդացած հետեւեալ պատուական եւ ուշադրութեան արժանի ճառը արժան եւ կարեւոր կհամարիմք հրատարակել:

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ

«Օրինեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քոյս»:

Բոլորեցաւ ահա տարի մի ողջոյն, յորմէ հետէ Ձերովդ փոյթեռանդն խնամակալութեամբ և Հայրապետական օրինութեամբ, և բարեհաճ հրամանաւ Օգոստոսափառ Կայսեր ամենայն Ռուսաց, կատարեցաւ բազմապայծառ հանդիսիւ բացումն Ճեմարանիս Սրբոյ Էջմիածնի ի մխիթարութիւն Հայաստան ժողովրդոց՝ հրաւիրելոց առ ի Ձերմէ իմաստութենէդ բարձր քարոզութեամբ ի վայելումն

[1] Ուր եւ Պաշտօն կատարուեցաւ վասն հոգւոց ի Տէր հանգուցեալ ծնողաց Հիմնադրի Ճեմարանիս Վեհ. Հայրապետի, եւ ամեն տարի պիտի կատարուի:

հոգեկան և մտաւորական խրախճանութեանց՝ զորս պատրաստէ Աչ Ձեր ի նորակառոյց տաճարիս: «**Օրհնեսցի՛ ուրեմն Վեհափառ Տէր, պսակ տարւոյ քաղցրութեան քոյ**»:

Այս պսակ շքեղաշուք՝ ոչ յոսկւոյ և յարծաթոյ և յականց պատուականաց շարահիւսեալ փայլէ ի ճակատ մերոյ Վեհապետիդ, այլ ի Ձերմէ ճաճանչագեղ հաւատոյ Հարցն մերոց առաջնոց, յանդրդուելի յուսոյ ի նախախնամութիւն Բարձրելոյն և յեռանդագին սիրոյ առ Աստուած և առ ազգս մեր. պսակ արդարև յոյժ վայելչական ի զարդ Գլխոյդ Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ Փոխանորդի ճշմարիտ Գլխոյն Ընդհանրական Եկեղեցւոյ՝ Քրիստոսի Յիսուսի Փրկչին մերոյ. որոյ վասն արդեօք և ոչ անմասն ի փշատիպ չարչարանացն խոցուածոց ... Սակայն օ՜ն անդր ի բաց մերժեսցին այսօր գամ մի ի մտաց մերոց և ի բանից՝ տրտմականացն անցից յիշատակք ի վեհավայր տաճարի աստ, որ իբրև զնոր փիւնիկ վերաթևեալ ի հրաբորբոք խարուկէ՝ ճախր առնու վերստին յԱրարատեանս դաշտի Ձերովդ ճգմամբ և սիրասուն որդեկացդ ձեռնտու օժանդակութեամբ: Մոռացո՛նք եղիցին և դառնութեան լեղւոյն և քացախի զոր արբէքն յայնժամ և քամեցէք, և պարարեսցին միտք մեր աներկմիտ յուսով միայն ուղիղցն փափկութեան՝ զորս տացէ Տէր Ձեզ և մեզ առ հասարակ ընդել ուրախութեամբ և ի տանս իւրում և յերանաւէտ օթևանս երկնիցն Արքայութեան:

«Օրհնեսցի՛ ուրեմն,- գոչեսցին ընդ մեզ որդիք Հայաստանի,- օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քոյ», և երկնեսցին որ զմեօք լերինքս Աստուծոյ, «Օրհնելով օրհնեսցի»:

Բայց Դուք, ո՛ Աստուածարեալ Հայրապետ, առ ի՞նչ արդեօք և կամ յորմէ՞ շարժեալ խորհրդոյ՝ թևակոխեցէք, ի գործոյս մեծի ձեռնարկութիւն՝ առ ոտն հարեալ զամենայն խաչ

և զխութ նիւթական անտես արարեալ զդժուարութիւնս անթիւս գործոյդ կատարման, և չլսելոյն առնելով զդատողութիւնս՝ ոչ միշտ յաննախանձ և յողջամիտ ոգւոյ գիտնոց ոմանց և անգիտաց յոլովից թելադրեալս: Զի անո՞ւն արդեօք ժառանգիցէք սնոտի յանցաւոր կենցաղումս՝ իբրու քար ի քարի վերայ կուտակելով և յամայացեալ ոտինս Մասեաց շինուած այսպիսի մեծագործ կառուցանելով, որպէս երբեմն Փարաւոնեանքն արարին՝ յանապատին Լիբիոյ զհաստաբեստ և զբարձրաբերձ բրգունսն կանգնելով, և ոյր վասն ձեռն ի գործն արկեալ էին՝ այնմ չեղեն արժանի, և անուանք նոցա անհետացեալ կորեան ի միջոյ: Կամ զի շա՞հս ինչ օգտից նիւթականաց աստի քաղիցէք՝ իբր ի գործարանէ ուստեք մեծ է բովուց ոսկւոյ և արծաթոյ, որպէս մերումս շահախնդիր դարու մարդիկն սովորեցին առնել ի տեղիս տեղիս: - Քա՛ւ և մի՛ լիցի երբէք: - Այլ զի՞նչ:

Ներեսցէ ինձ Ձերդ Վեհութիւն թարգման հաւատարիմ՝ թէև ոչ պերճախօս հանդիսանալ աստանօր առաջի սրբագումար պատկառելի Ժողովոյս, և համօրէն իսկ համազգի եղբարց, Ձերոցդ վսեմախոհ դիտաւորութեանց և բազմաբաղձիկ աշխարհաշէն տենչանաց:

Ամբարձեալ աստուածընտիր Հայրապետիդ մերոյ սրտեռանդն հրաւիրանաւ լրութեան Ազգիս Հայոց ի Գերագահդ այդ Աթոռ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, ի բարձրադիտակ կայից այտի իբր ի սպիտակափառ յամպածրար գագաթանց մեծի լերինդ Մասեաց՝ տեսանելով տեսիք շուրջանակի գլխումս խումբս Հայաստանեայցս գրոհի ուր շատ և ուր սակաւ վարատական սփռեալս ընդ ամենայն աշխարհ՝ ընկղմեալս տակաւին ի մէգ և ի մռայլ տգիտութեան՝ մօրն ամենայն աղետից հոգեկանաց և մարմնականաց, և այն ի ժամանակի՝ որում ազգք և ազինք որ ընդ ոլորտս տիեզերաց, մանաւանդ որք յարևմուտս կոյս: Եւրոպայ, մա-

նաւանդ որք հպատրագոյնք ևս զմեօք մածեալ կան բիւրաւորք ժողովրդոց լայնածաւալ պետութեանս Ռուսիոյ ի լոյս պայծառութեան գիտութեանց և արուեստից և քաղաքակիրթ զարգացման յառաջադէմ ընթացեալք՝ օր քան զօր բարգաւաճեն, քաջ քաջ խելամուտ եղէք՝ զի ոչ այլազգ հնար է վանել փարատել յերեսաց ազգիս մերոյ զմառախլապատն զայն թանձրութիւն տգիտութեան, բայց մեծաւ իւիք արփիահրաշ լուսոյ ծագման պայծառութեամբ:

Եւ արդէն երկնեցէք ի միտս Ձեր զհեռատեսն խորհուրդ կառուցման Ճեմարանիս իբր զբազմաջահեան աշտանակի մեծի, յորում լուսաբորբոք վառիցին խարոյկք անշէջք պէս-պէս գիտութեանց ի լուսաւորութիւն խուռն բազմութեան ժողովրդոց՝ ի Հայրապետական խնամս Ձեր հաւատեցելոց: Իւղ սորա ճշմարիտն է Աստուածպաշտութիւն՝ շող կաթեալ ի վերուստ անտի հրաշապէս, իւղ որ աղբերացեալ գետահետեալ ընթանայ յԱթոռոյ այտի Լուսաւորչին հոգւոց մերոց: Հարկ ի վերայ կայր պաշտօնեայս նեթ պատրաստել արժանաւորս և հաւատարիմս, որք զիւղն զայն սրբալոյս ցանգ արկեալ զեղուցուն ի սրբավայր Ճեմարանիս ճրագաբերանսն:

Զդոյն զայդոսիկ պաշտօնեայս ճշմարտապէս լուսաւորեալս և ջահաբորբոք լուսատուս ազգիս Հայոց նկրտիք ահա պատրաստել, Վեհափառ Տէր, ի հայասերունդ մանկտւոյս՝ յարդեացս և յապագայից: Կամիք զի իցեն սոքա ճշմարտիւ արդարև արժանաւոր աշակերտք ընտելագունիցն յաստուածընտիր նախորդաց Ձերոց՝ հարց և հայրապետաց, արք լցեալք հոգւով իմաստութեան, հոգւով երկիւղի Աստուծոյ, հոգւով գիտութեան ամենայնի որ ինչ կարևորն իցէ ի պայծառութիւն Եկեղեցւոյ և ի բարգաւաճանս Հայաստան ժողովրդոց, գիտութեան զանազան լեզուաց հնոց և նորոց, գիտութեան բնականացն և աստուածաբանականաց, գիտութեան իմաստասիրականաց և համօրէն ամենայն ազգային և արտաքին մակացութեանց. զի այս իսկ է ճեմարանիս անուն և իսկութիւն, և մի միայն կէտ նպատակի:

Քաղցր էր ինձ ապաքէն: Վեհափառ Հայրապետ, ի սոյն միտս յուսապատարս յարանալ, և մղտափարատ լուսոյն նմանութեամբ զյարազուարճ խնդութեան միայն ըմբոշխնել զվայելումն: Սակայն աւա՛ղ, հարկ ի վերայ կայ ինձ և ահընկէց իմն շինուածոյ զսա նմանեցուցանել. մարտկոցի ասեմ հզօրի և ամուր պատուարի կանգնեցելոյ ընդդէմ բուռն յարձակմանց ներքին և արտաքին թշնամեաց Եկեղեցւոյ մերոյ սրբոյ:

Եւ ո՞յք արդեօք ներքինքն իցեն թշնամիք, եթէ ոչ դասք դասք որդւոց հարազատ կարծեցելոց Հայաստանեայցս Եկեղեցւոյ, որք զթերութիւնս ոմանց կամ զբազմաց իսկ ի մերոց եկեղեցական եղբարց զհամօրէն եկեղեցականօք ազգիս և զնովիմբ իսկ զանարատ Եկեղեցեաւն մերով ախորժեն շփել, և հիմն ի վեր զսա տապալել, և ի տեղւոջ սորա կանգնեալ կառուցանել՝ զի՞նչ, ո՞հ մեծի ամբարշտութեանն, զբագինն կռեալ կոփեալ ի նիւթապաշտից ոմանց մերոյ ժամանակիս և յանխտրականաց ի հաւատոյս՝ յաճախելոցն յարևմտեայ աշխարհս, զօրէն իմն մերոյն Արտաշիսի Պարթևի, որ յԵլլադա երբեմն ուրեմն արշաւեալ, և փոխանակ զողջամիտ իմաստնոցն Հելլենացւոց զիմաստասիրութեան արգասիս բարեաց ի Հայս փոխադրելոյ՝ զկուռս նոցին զանմռունչս ի մեր աշխարհս խաղաղացուցանէր թագապսակն այն՝ գուցէ և բարեմիտ՝ աշխարհակալ հեթանոս: Սոքա ներքինք ըստ առաջինում կարգի, և վտանգաւորագոյնք արդեօք՝ որպէս բանիս կարգ է ասել՝ թշնամիք մերոյս Եկեղեցւոյ: Իսկ զսոցին կնի երկրորդս ինձ ներեսցի զայնոսիկ անուանել, որք ի լրումն թշուառութեանց ազգիս

մերոյ հատուածեալք զոր և վայրապար առ ի մէնջ, և զհետ օտարոտեանց ոմանց վարդապետութեանց զակատեալք, զազգային աւանդս սրբութեան և բարեպաշտիկ ազգասիրութեան անգոսնեն և պախարակեն՝ իբրև զփուտս ինչ և զնեխահոտ սովորոյթս վաղնջուցն ժամանակաց: Իսկ զարտաքնոցն մերոց ճառել թշնամեաց՝ յաւելեաց գրեսցի ինձ համարի. քանզի ո՞վ ոք չտեսանիցէ զպապական և զլուտերական քարոզչացն խռովութեան՝ հերձուածոյ՝ զազգակործման մեքենայագործութիւնս՝ տիրանալ անառիկ ամրոցի մերոյս Եկեղեցւոյ, որ ինքն ըստ ինքեան վէմ է անվանի ի դրանց դժոխոց:

Եվ ահա Դուք, ո՞վ աստուածարեալ Հայապետ, զնոյն մեր զԵկեղեցի նորովս այսուիկ ամրակառոյց պարսպու պատսպարեալ հաստարմատ արարէք: Քանզի ի զարգանալ և ի բարգաւաճել Գէորգեան Ճեմարանիս Աստուածայնոյ Տեսչութեանն շնորհիւ և Ձերովդ Հայրապետական խնամօք, ապաքէն ոչ ևս յաշխարհս այլազգեաց իցջեն որդիք նորոյս Իսրայէլի՝ թեքել կազմել իւրաքանչիւր զսուսեր իւր և զգերանդի մտաւորական, այլ ի հոյակապս յայս դաստակերտ՝ իբր ի գործարան ամենայն հոգևորական զինուց և այլոց պիտոյից ազգիս և Եկեղեցւոյ: Ո՞ր այն իցէ այնուհետև Կղեմէս Գալանոս, որ կեծաւորութիւն յոյժ ի տգիտութիւն անձինն խառնեալ՝ ամբաստանութիւնս անյարիրս զանարատ վարդապետութենէ հաւատոց մերոց կուտիցէ, կամ ո՞ր այն Լատինահայ ազգուրաց, որ նախանձ իմն չար ընդ Գալանոսին բերելով՝ հիմնական ինչ խտիրս ի մէջ արկանել յաւակնիցի ընդ մերս և ընդ ընդհանրական Եկեղեցին Քրիստոսի (զոր անհնարին տգիտութեամբ՝ մի համարիցի ընդ պապականին աթոռոյ նորաձևութեանց), և կամ ո՞ր այն Թռոյիցքի՝ նոր ոմն յարուցեալ Կղեմէն Գալանոս՝ ի մեր իսկ աւուրս, յանդգնեսցի յայնժամ չարաբանել այնպէս զմերմէ

Եկեղեցւոյս առաջի աստուածաբանից արևելեան Եկեղեցւոյ՝ որպէս նախորդն իւր առաջի արևմտականին արար: Եւ բնաւ իսկ ո՞ր այն Տուայթ և Ջարեմպա և Տի՛թրիխ և յաջորդք նոցին համարձակեսցին այնուհետև դարձեալ լուտերաբար զգեղեցիկ գեղեցիկ կարգս աստուածպաշտութեան մերոյ:

Բայց այս չէ շատ Վեհափառ Հայրապետ, այլ և հայկազնեան լեզուիս մերոյ պատուականի Ճեմարանս այս եղիցի կենդրոն յստակութեան և գանձարան հաւատարիմ անդրժելի աւանդութեան, և պէսպէս լեզուաց օտարոտեաց ներակրթութեան հետևողս և նախանձաւորս յանճախեսցէ թարգմանչացն մերոց երանելաց. որք ի սմին յայսմ քաղաքի և ի տեղւոջ հաւաքեալ ամբարեալ երբեմն իբր ի շահաստան վայրի զայլալեզու ճոխութիւնս իմաստնոցն օտարաց՝ ի մերս զնոսին ընտրանաւ փոխաբերեցին:

Դարձեալ և ի նոցին իսկ յԵւրոպականացն ազգաց լեզուս քաջ ներհմտացեալք աշակերտեալքն Ճեմարանիս, եկեսցէ ժամանակ՝ զի զմերոց ազգային աւանդից՝ զեկեղեցականացն և զքաղաքականաց՝ զստոյգ նկարագիրս առաջի արասցեն իմաստնոց նոցին, և ոչ ևս իշխեսցէ ոք ուրեք խրամատս իմն ճշմարտութեան ի ստուգապատում մատենագիրս մեր արկանել կամ գտանել, որպէս ոմանք յանզգաստիցն և ի հարևանցիկ հնախուզից ժամանակիս, թէպէտև յազգայնոցն իսկ մերոց՝ և յայլմէ կողմանէ պատկառելի արանց՝ յախուռն կարծիս և կասկածանս նիւթելին ի մեր իսկ աւուրս զանկեղծիկ հաւատարմութենէ առաջնոցն մերոց պատմագրաց, և մանաւանդ զանկանառու ճշմարտասիրութենէ և զմանրակրկիտ ընտրողութենէ քերթողահօրն իսկ մերոյ Մեծին Մովսիսի Խորենացւոյ, և զառաջնո՞ղդի նորա զՄայր Իբայն Կատինայ զանգին յիշատակարանսն ընդ ստայօդս ինչ և ընդ առասպելախառն կեղծիս այլոց ոմանց աննշան ազգաց գրել ոչ զանգիտեցին:

Բայց ես զիա՞րդ ի սակաւամասնեայ բանից սահմանս զօրեցից արդեօք բովանդակել և զայլսն ևս բիւրապատիկ արգասիս բարեաց, որոց ի ճեմարանէ աստի սրբոյ Աթոռոյդ իրաւամբ սպասէ ազգս մեր և աշխարհ և Եկեղեցի, եթէ ոչ այժմիկ վաղվաղակի՝ սակայն անշուշտ զկնի ամաց ինչ անցանելոյ՝ սովիմբ այսու գոգցես կարգաւորութեամբ և սոյնպիսեաւ տածողական անխոնջ խնամարկութեամբ Հայրապետից մերոյ մեծի: Յայնժամ ապա լիովին արդարացուսցէ սա զիւրն անուանակոչութիւն՝ այժմէն տենչալի և ախորժ հնչեցեալ յունկն ամենայն մերազնեայց, և պանծասցի յամս յամայր պսակեալ յոյժ արդարացի և յոյժ պատշաճական ըստ իս վերտառութեամբս, «Գէորգեան Ճեմարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի»՝ ի հիացումն կարգեալ յաւերժաբար մերոցն և օտարաց:

Կեցցէ՛ ուրեմն Ձերդ Վեհութիւն՝ օրհնեալ և բարեբանեալ այսօր ի մէնջ և ի բովանդակ Հայկազանս գրոհէ բանիւ սաղմոսերգուին՝ եթէ «Օրհնեսցի պսակ տարւոյ քաղցրութեան քոյ»:

Կեցցէ՛ մինչև ցյիսներեակ յոբելենի գեղայօրէն տաճարիս իմաստութեան, և անդր ևս ընդ դարս յոլովս՝ յանմահութիւն կնքեալ զԱնուն Ձեր և զմեծագործութիւն:

«Արարատ», 1875, № 9, էջ 353-356:

№ 9

ՅՈՒՇԵՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

1874 թուի ամառը Աղէք-պոլ եկաւ Արիստակէս վարդապետ (յետո եպիսկոպոս) Սեդրաքեանը, որը Ախալցխայից իւր հետ բերել էր երեք աշակերտներ՝ Ստեփան Մալխասեան, Մինաս Ազնաւուրեան եւ Գալուստ Տէր-Մկրտչեան (Ծուղրութ գիւղացի)՝ Էջմիածին նոր բացուելիք Գեւորգեան ճեմարան տանելու համար. երեք-չորս աշակերտ էլ մեր քաղաքից պիտի ընտրէին, եւ ես շնորհիւ մեծ եղբօրս՝ Յարութիւնի, եւ նորա ընկեր երեւանցի Եգոր Իւանիչի, բախտ ունեցայ այդ ընտրուածների շարքն ընկնել. Ենովք Գեօնջեան, Պօղոս Պօղոսեան, Ստեփան Տէր-Անտոնեան՝ յիշեալ Եգոր Իւանիչի եղբօր որդին եւ ես: Չափազանց ուրախացել էի, որ վերջապէս պիտի ազատուեմ բարոյապէս ընկած հայրենի քաղաքից, եւ որ գլխաւորն է, պիտի կարողանամ ուսումս շարունակել – մարդ դառնալ... Օգոստոս ամսու մէջ մի օր քաղաքից մեծ բազմութեան ուղեկցութեամբ ճանապարհ ընկանք: Քաղաքից դուրս եղբայրս եւ Եգոր Իւանիչը սեղան էին պատրաստել, որի շուրջը մեծ ուրախութեամբ խմեցին, բարի երթ մաղթեցին եւ ճանապարհ դրին...

Աղեքսանդրապոլից դուրս գալու երրորդ օրը մենք արդէն Էջմիածնում էինք. ժամանակաւորապէս Ղազարապատ կոչուած հիւրատան սենեակներում տեղաւորեցին մեզ. ուրիշ տեղերից եւս աշակերտներ էին հաւաքւած: Բոլորիս շորերն էլ փոխեցին եւ միատեսակ մոխրագոյն վանականի ձեւով հագցրին: Սպասում էինք ճեմարանի հանդիսաւոր

բացմանը, որ տեղի պիտի ունենար սեպտեմբերի վերջին Ս. Գեւորգի տօնի օրը...

Վերջապէս հասաւ ցանկալի օրը. սեպտեմբերի 28-ին՝ շաբաթ, Ս. Գեւորգի տօնի օրը պիտի տեղի ունենար հանդիսաւոր բացումը, որի համար մեծ պատրաստութիւններ էին տեսնւում: Մի քանի օր առաջ մեզ բաղանիք տարան, մաքուր շորեր հագցրին ու տեղափոխեցին ճեմարան: Այդ փառաւոր երկյարկանի շինութիւնը առանձին բակում սիրուն հարսի նման կանգնած էր հպարտ: Վերի յարկը երեք սենեակ յատկացուած էր ննջարանի համար, երկաթե մահճակալների վերայ փռուած մաքուր տեղաշոր-վերմակով (բրդէ, գունաւոր) ծածկուած, երեսսրբիչն էլ գլխավերեւը՝ բարձի վերայ փռուած, իսկ ներքեւում կախուած էին մեր համարները. իմս 24-րդ համարն էր: Վերին յարկումն էին զետեղուած նաեւ գրադարանը, տեսչի եւ օգնականի կամ վերակացուների սենեակները, բայց ամենից գեղեցիկն էր կիսակլոր գմբեթաւոր հանդիսարանը: Ներքեւի յարկում զետեղուած էին դասարանները, սեղանատունը եւ խոհանոցը...

28-ին՝ շաբաթ օրը, ս. Պատարագից յետոյ, եկեղեցական թափորով, Վեհափառ Հայրապետի գլխաւորութեամբ, եկան ճեմարան, մաղթանք կատարեցին, ճառեր արտասանեցին, շնորհաւորութիւններ եւ ճաշկերոյթ, երեկոյեան էլ հրավառութիւն տեղի ունեցաւ: Վանքի բակում, լճի ափին եւ գիւղամեջ լցուած ուխտաւորները ամեն կողմ դափ ու զուռնայով ուրախութիւն էին անում, եայլի երգում ու պարում կէսգիշերից անց...

Հանդէսի յաջորդ շաբաթում սկսեցին մեր դասերը, դպրոցական պարապմունքները: Ինձ եւ աղէքսադրապոլցի ընկերներիս տեղաւորել էին առաջին դասարանում, իսկ ախլցխացոց, ղարաբաղցոց՝ երկրորդ դասարանում:

Հրաւիրուած էին մի քանի վարդապետ եւ աշխարհական դասատուներ: Պարզեանը տեսուչի օգնականի պաշտօն էր վարում, իսկ Սեդրաքեան եւ Սուրէնեան Գեւորգ վարդապետները՝ դասատուի: Աղէք-պոլից մեր ռուսաց լեզուի ուսուցիչ Միքայէլեանը նոյնպէս հարաւիրուած էր, Ներսէս Սիմէոնեանն էլ վերակացուի պաշտօն էր վարում: Ասում էին, որ նոր տեսուչ եւ ուրիշ ուսուցիչներ պիտի հրաւիրեն: Մենք սկսեցինք եռանդով պարապել, բայց բախտը ուրիշ տեսակ էր տնօրինել:

Ճեմարանի այրելը

Երկու շաբաթ հազիւ էր անցել, երբ մի սեւ առաւօտ՝ հոկտեմբերի 14-ին, լուր տարածուեց, որ ճեմարանը այրում է, եւ սոսկալի իրարանցում տեղի ունեցաւ: Դողս կրկնվելու պատճառով ես հիւանդանոցումն էի, դուրս եկայ միջանցքը եւ տեսայ՝ արեւմտեան կողմից առաստաղի անկիւնից ծուխ է բարձրանում, եւ մարդիկ ջրի դոյլերով վազում են կտուրը: Իսկոյն ներս մտայ, հիւանդ ընկերներիս յայտնեցի, շտապով շորերս հագայ եւ Աղէք-պոլից հետս բերած գրքերից միայն գերմաներէնի դասագիրքս վերցրի ու դուրս փախայ. հետզհետէ ահագին բազմութիւն հաւաքուեց, ամեն կերպ աշխատում էին իրերը դուրս կրել ու կրակը հանգցնել: Այնտեղ էր եւ Վեհափառ հայրապետը՝ բարձր հոգեւորականներով ու պաշտօնական անձերով շրջապատված: Պէտք էր տեսնել, թե ծերունի Հայրապետը որպիսի ճիչեր էր արձակում եւ ձգտում մտնել ճեմարան, բայց շրջապատողները չէին թողնում: Մինչև երեկոյ հազիւ կրակը հանգցրին, բայց արդէն կես մասից աւել այրել էր. ցաւալի էր մանաւանդ հրաշալի հանդիսարանի անկումը...

Մեզ՝ աշակերտներիս, նորից հաւաքեցին ու տեղավորեցին Ղազարապատում, եւ բաւական հանդարտելուց յետոյ

այստեղ էլ շարունակեցին դասաւանդումը, մինչև ճեմարանը նորից կը շինէր: Իմացանք, որ բարի մարդիկ յուսադրել էին վշտաբեկ Հայրապետին, որ մի տարեայ ընթացքում նորից աւելի լաւ կը նորոգեն, եւ հետեւեալ տօնը նորից ճեմարանում կը կատարի: Այդպէս էլ եղաւ...

Վերջապէս սեպտեմբերն եկաւ, նոր տեսուչը՝ Գաբրիէլ եպիսկոպոս Այվազեանն էլ եկաւ, նոր ուսուցիչներ բերեց, հները փոխեցին, մեզ նորից տեղափոխեցին ճեմարան, եւ հանդիսաւոր բացումից հետոյ (որ նորից փառահեղ եւ շքեղ էր) նոր ուժերով ու եռանդով սկսեցինք եւ շարունակեցինք ուսումնական պարապմունքները...

Աշակերտներս բառի բուն նշանակութեամբ վանական կեանք էինք անցկացնում: Առաւօտ զանգակի ձայնով քնից վեր էինք կենում, լուացուելուց յետոյ անմիջապէս վերեւի միջանցքում աղօթքի կանգնում, յետոյ սերտողութեան գնում հանդիսարանում, թեյից յետոյ սկսում էին դասերը: Երեք դասից յետոյ նախաճաշ էին տալիս, եւ երկու դասից յետոյ էլ ճաշում էինք սեղանատանը, որը տեղաւորուած էր ներքեւի յարկում (վանքի սեղանատանը միայն հանդիսաւոր օրերին էինք գնում ճաշելու միաբանների հետ, ուր երբեմն Վեհափառն էլ էր ներկայ լինում): Ճաշի ժամանակ մեծ աշակերտներից մեկը հերթով Ս. Գիրք էր կարդում՝ այդ բանի համար յատկացուած տեղում, իսկ մենք պարտաւոր էինք լռութեամբ լսել եւ ուտել (իրաւունք չունէինք իրար հետ խօսելու): Ճաշից յետոյ, եթե տեսուչը ներկայ էր լինում, հաւաքում էր իւր գլխին եւ բարոյական պատմութիւններ ու խրատներ տալիս... Ճաշից յետոյ ընդհանրապէս (լաւ եղանակներին) խաղում էինք կամ հարաւային կողմը գտնուած պարտիզում (որի մարգերը աշակերտների վերայ բաժանուած ու նորանց ձեռքով էր մշակուած) աշխատում էինք, երբեմն էլ (գլխաւորապէս տօն օրերին) խմբովին վերակացուի

հսկողութեամբ գնում էինք լճի ափը կամ անտառում զբօսնելու... Երեկոյեան ընթրիքից յետոյ նորից սերտողութեան էինք գնում հանդիսարանում, ուր աշակերտական ժողովներ էին տեղի ունենում: Տեսուչի տուած հարցերի վերայ հերթով ճառեր էինք գրում, կարդում և քննադատում գրած ճառերը ... Բացի այս ժողովներից, մանրանկար «Օրագիր» անունով թերթ էլ ունէինք՝ հիմնուած տեսչի ղեկաւարութեամբ, որի մէջ զանազան յօդուածներ եւ լուրեր էինք գրում եւ նկարներով զարդարում ու երեկոյեան սերտողութեան ժամանակ կարդում... Իմ կարծիքով՝ շատ օգտակար ու գեղեցիկ մտքով էին հիմնուած թէ՛ ժողովները եւ թէ՛ լրագիրը՝ մեզ կեանքի համար պատրաստելու նպատակով: Բայց ափսոս, որ մեծ աշակերտների համար սուր վիճաբանութեան եւ վիրաւորանքի առարկայ դարձան այդ ժողովները, որի պատճառով էլ փակուեցան, իսկ «Օրագիրը» շարունակում էր:

Տեսչի բացակայութեան ժամանակ նորա պաշտօնը կատարում էր «կարգապահ» անունով մի ուսուցիչ՝ Յովհաննէս Գալստեան, որը մի շատ համեստ, սուսուփուս եւ լռակեաց մարդ էր ու այնքան էլ ազդեցութիւն չուներ:

Սերտողութիւնից յետոյ մի քիչ հանգստանում էինք եւ երեկոյեան աղօթքից յետոյ գնում քնելու: Ահա այս էր մեր ամենօրեայ կեանքը. բոլորովին կտրուած էինք դրսի աշխարհից: Նոյնիսկ վաղարշապատցիք դժուարութեամբ էին թոյլտութիւն ստանում՝ ճեմարանից դուրս գալու, ծնողներին ու բարեկամներին այցելութիւն անելու: Իսկ եթե մէկն ու մէկիս բարեկամներից կամ ծնողներից հեռու տեղից եկած լինէին մեզ տեսութեան, իրաւունք չունէինք առանց թոյլտութեան հետները տեսնելու կամ որեւէ բան ստանալու: Աշակերտներիս նիստուկացը միշտ գրի էր առնում եւ շաբաթը մի անգամ նկատողութեան ենթարկում, մին-

չեւ իսկ եթէ սահմանուած «եղբայր» բառը չէինք գործածում՝ սխալմամբ կամ մոռացութեամբ, խիստ նկատողութեան էինք արժանանում... Շաբաթ եւ կիրակի եւ տօն օրերին միշտ եկեղեցի էինք գնում, վերարկուներ հագած, եւ բոլոր պասերն էլ խստութեամբ պահում էինք...

Ռուս-տաճկական պատերազմն սկսած էր արդէն, գիւղը եւ նոյնիսկ ճեմարանը կենդանութիւն էին ստացել, շարունակ զինուորներ, թնդանօթներ ու սայլեր գնում էին դէպի սահման, շարունակ լսւում էր զինուորական երաժշտութիւն, նոր-նոր այցելուներ էին գալիս ճեմարան, զինուորականներ, կանայք ու տղամարդիկ. կարծես բոլորովին փոխուել էին մեր կեանքի տխրութիւնն ու միօրինակութիւնը...

Տ. Խորէն աւագ քահանայ Ստամբոլցեան

№ 10

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԸ ՀԱՐԿԱՒՈՐ ԷՐ ԹԷ ՈՉ

«Գնա՛ մեռիր՝ արի՛ սիրեմ» առաձին գործադրութիւնը ուրիշ ազգերէն աւելի ճշդութեամբ կարծես թէ մեր մէջ կկատարուի՝ գլխաւորապէս մեծ մարդոց եւ մեծ գործոց վերաբերութեամբ:

Վասն զի տակաւին օրինակ եղած չէ՝ որ մեր մէջ նոր եւ ազգօգուտ հաստատութիւն մի սիրալիր մտօք ի սկզբան ողջունուի, կամ մէկ որ եւ է ընդհանուր կամ մասնաւոր ձեռնարկ ըստ արժանւոյն եւ անաչառապէս գնահատուի:

Յոռեդատները կամ վատթարականները (pessimiste) մեր մէջ ամեն ժամանակէ աւելի այժմ յաճախած են կերեւի անոր համար, որ ազգին մէջ՝ մանաւանդ Մայր Ս. Աթոռոյն չորս կողմը՝ նոր ու լաւ բաներ ամեն ժամանակէ աւելի այժմ երեւան կելնեն:

Մեք չեմք զարմանար մեր ազգային գրչաց յոռեդատ ընթացքին, հաւաստի գիտնալով, որ իւրաքանչիւր ազգի գրականութիւնը իւր ինքուրոյն ուղղութիւնը ունենալով՝ կերպով մի այն ազգին զուարթ կամ տխուր ոգւոյն յատկանշանը իւր մէջ ճշդիւ կպարունակէ:

Ցայտնի է, որ մեր հայկական նախնի մատենագրութիւնը մեծաւ մասամբ **ողբական** ձեւ ունի, եւ ի ներկայումս տխուր եւ ծանր տպաւորութիւն ընող լրագրական երեւոյթները տեղիք կուտան ենթադրելու, թէ հին **ողբական** ուղղութիւնը փոխարկուած է մեր մէջ **վատթարական** ուղղութեան, որոց երկուքին պատճառն ալ միեւնոյն աղբիւրէն կբղխի, այն է՝ օտարազգի դաստիարակութենէ:

Մեր նպատակէն շեղուած կլինէինք, եթէ առ տեղեաւս յօժարէինք այս մեր ասածին ճշտութիւնը փաստերով ապացուցանել. այսչափ միայն ասեմք, որ իւր հայրենիքէն տարիներով հեռացած, օտար երկնի եւ ազգաց մէջ դաստիարակուած անձը, յետ վերադարձին ի հայրենիս՝ չկրնար **չողբալ** եւ **չվատաբանել** ազգիս մէջ կատարուած երեւոյթները երբեմն իրաւացի եւ շատ անգամ անիրաւ տեսութեամբ:

Օտարուսումն ազգայնոց տեսութիւնը, հայեացքը եւ ազգային խնդրոց քննութիւնը, ազգի թերութեանց դարմանումը միշտ **արդար** եւ **ուղիղ** կլինի այն ատեն, երբ արեւմտեան դաստիարակութիւն ընդունող ազգայինները արեւմտեան կամ օտար ոգի եւս բերած չլինին իրենց հայրենիքը. հապա այդ դաստիարակութիւնը իբրեւ գործի եւ միջոց ծառայեցնեն իրենց բուն հայկական ոգւոյ եւ նպատակի արդիւնքները հայրենեաց մէջ տարածելու համար:

Այս ինքն թէ մեք կդադրիմք **վատթարական** լինելէն, եթէ օտարասահման դաստիարակութիւնը ջանամք հնազանդեցնել մեր ազգային գաղափարներուն. եւ սորա հակառակ՝ ետեւէ չլինիմք մեր ազգային պարտքերը, շահերը,

ոգին եւ նոյն իսկ կրօնը զոհել ստրկացնել այդ մեր ընդունած մուրացածոյ, օտար եւ շատ անգամ վնասակար դաստիարակութեանը:

Վասն զի մեր մտաց այդ օրինակ յոռեղատ տրամադրութեան հանդէպ չեն կարող տոկալ դիմանալ ո՛չ ազգային դպրոցներ, ո՛չ ազգաշահ գործառնութիւններ եւ ո՛չ իսկ կրօն - այս ազգապահ ամենագլխաւոր տարրը, որոյ կեդրոն համարուած սրբավայրը այս օրուան օրս նիւթ է քննութեանց, յարձակմանց եւ անոր մէջ կատարուած բարոյական եւ ուսումնական յեղափոխութիւնները առարկայ դարձած են ազգայնոց զարգացեալ համարուած մասին արդարեւ անիրաւ խորհրդածութեանցը: Ըստ մեզ՝ Մայր Աթոռը կամ մեր հաւատոյ կեդրոնը իւր թմրութեամբ կամ վերակենդանութեամբ ճիշդ փորձաքարի մը յատկութիւն ունի, որով կյաջողի իւր մօտաբնակ եւ հեռաբնակ որդւոց կրօնական զարգացման եւ առ Աթոռն ունեցած հարազատութեան չափն ու աստիճանը կամ երակը հետզհետէ ստուգել, կամ զարգացելոց դասուն մէջ որոշել, եթէ ներուի մեզ ասել, իւր կեդրոնախոյս եւ կեդրոնաձիգ զօրութիւնները:

Ընդ նմին Մայր Աթոռը բնական յատկութիւն մի ունի ազգի ժամանակակից կենաց ստոյգ պատկեր լինելու կամ հայելի մեր ներկայ հոգեւոր, բարոյական եւ ուսումնական կացութեանը: Մեք չեմք կրնար զայն նաեւ աղբիւր չհամարիլ մեր դպրոցական յառաջադիմութեանը. վասն զի այս նուիրական պարտքը կկրէ իւր վերայ դարաւոր ժամանակներէ հետէ, թէպէտ փոփոխ յաջողութեամբ կամ գործունէութեամբ կատարէ իւր այս ամենագլխաւոր դերը դպրոցաց բարեկարգութեան նկատմամբ, համաձայնելով ի հարկէ ժամանակի այլ եւ այլ հանգամանաց հետ:

Ի ներկայումս այդ կեդրոնի մէջ, իբրեւ հայելի եւ պատկեր մեր ազգի ներկայ դրութեանը՝ վանուց մէկ կողմը բարձրացած կեցած է Հոգեւոր ճեմարանի հոյակապ շինութիւնը:

Արդ, մեք եւս այլոց շատերուն պէս կհարցանեմք, թէ հարկաւո՞ր էր մեզ այդ ճեմարանը թէ ոչ: Այս հարցման պատասխան տալու համար, հարկ կը համարիմ մեր ազգին մէջ բացուած նաեւ ուրիշ քանի մի դպրոցներուն հարեւանցի քննութիւնը ընել, ստուգել անոնց ունեցած կարեւորութիւնը եւ օգտակարութիւնը, բացատրել Ս. Էջմիածնայ Աթոռոյն հետ ունեցած կապը, անոնց ուղղութեանն եւ նշանակութեանը խելամուտ լինել, որպէս զի Հոգեւոր ճեմարանի նշանակութիւնը լաւ դուրս ելնէ. վասն զի խնդիր **յարուցանել** դիւրին է, բայց քննութիւնն ու արդար եզրակացութիւնը ամենայն մշակի գործը չէ:

Դպրոցական խնդիրը փափուկ լինելով եւ աւելի կրօնական կամ բարոյական, փափուկ եւ բարեխնամ մշակութեան հարկը կզգացուի, որպէս զի ուսմանց բարոյականութեան պարտէզ համարուող դպրոցները անզգուշութեամբ չվնասուին...

Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանին հարկաւորութիւնը չհասկացողները յօրէ անտի բացման նորին նախ ուսմանց ծրագիրը, ապա ուսումնական դասագրոց պակասութիւնը, յետոյ ուսուցիչները, յետոյ տեսուչը ձեռք առին անխնայ, եւ հուսկ ուրեմն տեղւոյ անյարմարութիւնը առարկեցին:

Ասոնց մէջ այնպիսի ծիծաղաշարժ առարկաներ կան, որ մարդ կզարմանայ, թէ ի՜նչպէս առողջ դատողութեան տէ՛ր մարդիկ կարողացան տեղ շնորհել իւրեանց հանդէսներուն մէջ այդ տեսակ այլանդակ խորհրդածութեանց[1]:

[1] Թո՛ղ որ ըստ մեծի մասին նոքա էին կեղծ անուամբք գրողներն, մի և նոյն ժամանակ դարձեալ նոքա գաղափարակից էին և աւելի ինքեանք կթելադրէին գրել, որոց մէջ համայն գաւառացիք

Աւելի ծիծաղաշարժը վերջին առարկայն է, զոր քննեմք տեսնեմք, թէ ո՛ւր կհանէ զմեզ եւ կրնա՞յ օգնել հաստատելու համար ճեմարանին հարկաւորութիւնը Մայր Ս. Աթոռոյն մէջ, թէ ո՛չ:

Վաղարշապատը կամ Ս. Աթոռը անյարմար դատող խելքը ո՞ւր կուզէր արդեօք տեսնել կամ զետեղել Ս. Էջմիածնի ճեմարանը: Ս. Էջմիածնի վանքը ի Վաղարշապատ է, իսկ անոր ճեմարանը կերեւի, թէ ըստ դատողութեան յոռեդատին պիտի լինէր Տփխիս:

Չգիտեմ թէ ո՛ր ազգի մէջ նմանը տեսնուեր է եւ ի՞նչ ուղղութեան կը ծառայեն այդպիսի ենթադրութիւն ընողները: Այս առարկութիւնը ճիշդ կը նմանի անոր, որ կասեն թէ Հայրապետութիւնը թո՛ղ լինի Ս. Էջմիածին, իսկ Վեհ. Հայրապետը նստի ի Տփխիս: Կլինի՞: Ինչու չէ՞, կասեն, արդէն եղած է եւ այդ գործադրուած դրութեան մեծ մնացորդն է Ներսիսեան դպրոցը, որ տակաւին կապրի Տփխեաց մէջ:

Մեք Երջանկայիշատակ Հիմնադրի անմահական արձանը խիստ քննութեան տակ ձգելու աշխատանքը յանձն չեմք առնուր եւ յանձն առնելու եւս լիէինք պիտի ասէինք, թէ ժամանակին հանգամանքները կամ քաղաքականութիւնը այդ կերպը աւելի օգտակար համարել տուած է ազգասէր Հայրապետին, բայց շատ կարճատեւ եղած է իւր ձեռակերտին փառքն ու պայծառութիւնը, եւ անոր յիսնամեայ կեանքը անցած գնացած է իբրեւ **զօր երէկի** տարաբաղդաբար՝ առանց պսակել կարողանալոյ, երբ եւ իցէ իւր Հիմնադրին հեռատես դիտաւորութիւնները[1]:

մասնակցութիւն չունէին և չունին (ծանօթագրութիւն «Արարատ»-ի խմբագրութեան):

[1] Յաւելուլ պէտք է, որ սպառսպուռ եւս ապարդիւն եղած չէ (ծանօթագրութիւն «Արարատ»-ի խմբագրութեան):

Ասկէ վերջը թերեւս յոյս լինի, որ այդ նիւթապէս ապահովուած բաւական բարձր դիրք ունեցող դպրոցը իւր իսկական նշանակութիւնը ձեռք բերէ, եւ իւր հոգեւոր եւ ազգային պիտոյից կատարման ընդունակ առաքինի աշխարհականներ եւ բարեկիրթ ամուսնաւոր եւլն եկեղեցականներ պատրաստէ, բայց առանց բնաւ շեղելու իւր թեմական ուղղութենէն, իւր հոգեւոր եւ ազգային նշանակութենէն, որ յայսմ մասին մեծապէս կտարբերի Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանի ուղղութենէն, եւ երբէք կարելի չէ զայն ծառայեցնել ճեմարանի յատուկ նպատակաց արդիւնագործութեանը:

Բայց ի՞նչ է, պիտի ասեն ընթերցողները, այդ ճեմարանին նպատակը, ինչ թաքուն ուղղութիւն ունի այդ նոր հաստատութիւնը, որ պարզ եւ որոշ ձեւի տակ չներկայանար յաչս հասարակութեան, մանաւանդ զարգացեալ համարուող հետաքրքիր դասուն:

Դորա բուն նպատակը ի ժամանակին տպուեցաւ Արարատայ մէջ կոնդակի ձեւով ի կողմանէ Վեհափառ Հիմնադրի նորին, յորում բացայայտ կերպով կփայլի անոր նշանակութիւնը եւ առանձին նպատակը, որ է գլխաւորապէս **արժանաւոր կուսակրօն հոգևորականներ պատրաստել. որպէս զի նոքա՝ ըստ նախնական սովորութեան ազգին՝ նաև մեր ազգի գրականութեան** եւլն **ծաղկելուն նպաստեն:**

Մեք գոնէ այդպէս կհասկանամք այն Կոնդակին միտքը, եւ Վեհափառ Հայրապետի գործառութեանց ի մօտոյ ծանօթ լինելու բաղդը ունենալով, այդ լուսաւոր նպատակը նորա մէջ տեսած ենք դեռ Հայրապետութեան Աթոռը նոր ամբարձած օրերը:

Վեհափառ Տէրը լաւ հասկացած պիտի լինի լուսաւորութեան անհրաժեշտ կարեւորութիւնը, իսկ անոր յաջողու-

թիւնը իրաւամբ ազգին դպրոցաց բարեկարգութեանը մէջ տեսած է:

Բայց այդ բարեկարգութիւնը դպրոցաց մէջ պահանջելու համար, ապաքէն հարկաւոր էր այնպիսի կեդրոնական հաստատութիւն մի, այնպիսի աղբիւր մի, որ լուսաւորութեան ծառին բողբոջները կամ շառաւիղները յաւէտ թարմ ու կենդանի պահպանէ, կեդրոն մի, որ կարողանային դիմել ի հարկաւոր դէպս դասագրոց, դպրոցական ընթացից, ծրագրաց, կանոնադրութեանց եւ այլ ուսումնական եւ տնտեսական պիտոյից համար խորհուրդ, պատուէր կամ հրահանգութիւն ընդունելու:

Չկա՛յ ուրիշ ազգաց մէջ այպիսի կեդրոնական հաստատութիւն մի: Ապաքէն ամենայն ազգ իւր զանազան նմանօրինակ ուսումնական կեդրոնները եւ շրջանները ունի առանձին առանձին, ուստի ինչո՞ւ չպիտի ներուի դոցա մանրանկարը (en miniature) ունենալ Մայր Ս. Աթոռոյ մէջ, որոյ ընդհանուր ազգին վերայ ունեցած հոգեւոր եւ բարոյական ազդեցութիւնը ամենայն քայլափոխի մէջ կզգացուի. որոյ զբաղմունքը եւ միակ պաշտօնը եղած է յաւէտ առանց որ եւ է քաղաքական խնդիրներ յուզելու, ազգապահ երկու սկզբանց - **կրօնի** եւ **լեզուի** - հաւատարիմ աւանդապահը լինել, իսկ այս երկու սկզբանց յառաջադէմ պայծառութիւնը իւր որդուոց հաւատարիմ հպատակութեանը մէջ տեսնելով առ իշխող տէրութիւնս:

Ով որ այլապէս ըմբռնած է Ս. Աթոռոյ քաղաքական կամ ազգային դիրքը նա սաստիկ կսխալուի, եւ երբէք չկրնար Ս. Աթոռոյ հետ համամիտ եւ համաձայն գործ տեսնել, եւ եթէ գործէ եւս՝ գիտնայ, որ գործը իւր ազգային հոգեւոր ներդաշնակութիւնը կորուսանելով շատ շուտ կխանգարուի:

Ս. Աթոռոյ այս **ազգային-հոգեւոր** իրաւասութիւնը ամենայն տէրութիւնները յաւէտ ճանչցած ու յարգած են. որոյ անժխտելի ապացոյց են ի նախնեաց մինչեւ ցարդ ազգային թէ՛ դպրոցաց եւ թէ՛ եկեղեցւոյն ի միասին Ծայրագոյն Հոգեւոր իշխանութեան հովանւոյն տակ գտնուիլը. ասոնց միոյն օտարանալը ի Հայրապետական իշխանութենէ՝ միւսոյն անկումն ու անշքութիւն անտարակոյս կպատճառէ:

Այս բանին պատկառ կեցած ատենը քաղաքական իշխանութեանց, մեր մէջէն «Մշակ»-ի նմաններ կելնեն յանկարծ կհարցնեն, թէ Հայոց կաթուղիկոսը **հայ լեզուի ևս կաթուղիկո՞ս է, թէ ոչ:**

Ինչ անհեթեթ խորհրդածութիւն...

Դեռ 1868 թուին, Վեհափառ Հայրապետը կարծեմ թէ հաստատած էր Ս. Էջմիածնի մէջ Ուսումնական յանձնաժողով, որոյ պարտքն էր հսկել դպրոցաց ներքին եւ արտաքին բարեկարգութեան վերայ, ընդունել անոնց տարեկան հաշուոց ցուցակները, տեղեկանալ ուսուցչաց եւ ուսանողաց եւ ուսանելի առարկայից յառաջադիմութեանը, միով բանիւ կատարել այն պաշտօնը, զոր այժմ նոր ձեւակերպած Ճեմարանական ժողովը կերեւի, թէ յանձին պիտի բառնայ[1] աւելի ընդարձակ գործունէութեամբ:

Ուրեմն դեռ 1868 թուին Վեհափառը զգացած է Ս. Աթոռոյ ճեմարանին անհրաժեշտ կարեւորութիւնը, որոյ հիմն ալ, եթէ չեմք սխալուիր, մէկ տարի վերջը դրուեցաւ եւ յետ բազմատեսակ նիւթական եւ բարոյական փոփոխութեանց հանդիպելու, հազիւ ուրեմն իւր բուն ձեւակերպութիւնը այժմ ընդունելու վերայ է փորձառու Վերատեսչի մը եռանդուն գործունէութեամբը:

[1] Ճեմարանի Տեսչութեան և Ուսուցչաց Ժողովոյն յանձնուած է, և ի պատեհ ժամանակի կձեռնարկէ ի գործ (ծանօթագրութիւն «Արարատ»-ի խմբագրութեան):

Բայց պէտք է խոստովանիլ, որ 1868 թուին Ուսումնական յանձնաժողովոյ պաշտօնը այժմ բաւական թեթեւցած է, եւ աւելի եւս կթեթեւնայ անշուշտ, երբ մեր Թեմական Դպրանոցաց հաստատութիւնը կհետեւի ի կողմանէ բարեխնամ Պետութեան, որով մեր դպրոցական գործը իւր պարտեւպատշաճ կարգաւորութիւնը ընդունելով՝ Ս. Էջմիածնի ճեմարանական ժողովն եւս Թեմական Տեսուչներէն բարեկարգ եւ յիւրումն ժամանակի պէտք եղած հաշիւները կընդունի:

Ուրեմն մեր ընդունած գրութեամբ եւ համոզմունքով յապագային Ս. Աթոռոյ կրօնական եւ ազգային իրաւութիւնը իւր հովանաւորութեան ներքոյ պէտք է ունենայ **ազգային-հոգևոր** դպրոցներ ըստ հետեւեալ կարգի կամ կազմակերպութեան:

1) Իւրաքանչիւր գիւղի մէջ կլինի **սկզբնական ծխական-հոգևոր դպրոց:**
2) Իւրաքանչիւր գործակալութեան կեդրոնատեղւոյն մէջ՝ կեդրոնական հոգևոր դպրոց:
3) Իւրաքանչիւր նահանգական կամ Առաջնորդանիստ քաղաքի մէջ **Թեմական դպրանոց:**
4) Իւրաքանչիւր փոքր վանք **սկզբնական Վանական դպրոց,** իսկ մեծերուն մէջ՝ **կեդրոնական վանական դպրոց,** եւ
5) Ս. Էջմիածնի մէջ՝ **Ճեմարան:**

Թէ՛ գեղերու եւ թէ՛ քաղաքներու մէջ եղած սկզբնական դպրոցները կենթարկուին կեդրոնական-հոգեւոր դպրոցներուն: Սոքա թեմականներուն, իսկ թեմականները՝ Ս. Էջմիածնի Ճեմարանի Ժողովոյն, որոյ հետ ի հարկաւոր դէպս

կրնան եւ պարտին հաղորդագրութիւն ընել նաեւ թեմական Տեսուչները եւ վանաց վանահայրերը:

Այսպէս պարզաբանելով Ս. Էջմիածնի հոգեւոր Ճեմարանին նշանակութիւնը, կհարցնեմք մեր բանախնդիր պարոններուն, թէ ո՞ր կուզէին զետեղել այդ Ճեմարանը իւր այս պաշտօնը յարմար ու անթերի կերպով կատարելոյ համար:

Նոյն եւ նման խնդիր մը ասկէ տասը տարի յառաջ ծագած էր Խալիպեան ուսումնարանի նկատմամբ նոյն տեղէն, ուստի այժմ ալ տաք ու պաղ քամիներ մերթ ընդ մերթ կփչեն եւ դոցա հեղինակները սնապարծութեամբ այնպէս կերեւակայեն, թէ **խորհող հասարակութեան** պարագլուխ կամ ներկայացուցիչներ են:

Առանց ծիծաղելու մտքերնիս չեմք կարող բերել նոյն ժամանակուան գրչի մը կարծիքը Կովկասեան խորհող հասարակութեան ներկայացուցիչ պարոնի մը նկատմամբ, որ **ի մէջ կուրաց միականի** տիտղոսովը պսակուեցաւ իւր այն ենթադրութեան համար, թէ Խալիպեան ուսումնարանը Թէոդոսիոյ մէջ չկրնար արդիւնաւոր գոյութիւն ստանալ:

Եւ թէպէտ այդ դպրոցին գոյութիւնը վերը յիշած վատթարական փիլիսոփայից նման մարդոց խծբիծներովն ու անհեռատես խորհուրդներովը առ ժամանակ մի սպառեցաւ, բայց իբրեւ նոր փիւնիկ, իբրեւ նոր արծիւ նորա մանկութեանը կրկին կենդանանալու յոյս կայ ի դէմս Հոգեւոր Դպրանոցին Նոր Նախիջեւանի եւ Պեսարապիոյ, եւս առաւել Ճեմարանին Ս. Էջմիածնի՝ անոր համար, որ անոր ոգին եւ ներքին զօրութիւնը,- այդ քաղցր ու վսեմ կրօնական եւ ազգային ուղղութեան զգացումը,- անմահ էր յաւէտ եւ կենդանի, թէպէտ եւ արտաքին գոյութիւնը վաղանցիկ եղաւ ժամանակի ներգործող հանգամանաց այլ եւ այլ պատճառներովը:

Այսպէս պիտի վերածնին ամենայն բարի գործառնութիւնք եւ բարի սերմեր. բարին չկորսուիր, այլ կմոռացուի. ոսկին չմաշուիր, այլ կժանգոտի. կրօնը չմեռնիր, այլ կթուլանայ, բայց յետոյ նոր զօրութեամբ եւ անդիմադրելի զօրութեամբ ու հոսանքով կգրկէ եւ կերջանկացնէ զմարդ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ:

Վեհափառ Տէրը իւր բնական հեռատեսութեամբը վաղուց դիտած եւ գնահատած էր Խալիպեան ուսումնարանին անուրանալի արդիւնքները, ինչպէս որ Լազարեան ճեմարանին թիւր ընթացքը եւ անոր բարեմիտ հիմնադրաց դիտաւորութենէն օտար ուղղութիւնը թէ՛ իրեն եւ թէ՛ այլոց անյայտ լինել չկրնար: Խալիպեան ուսումնարանէն ելած աշակերտաց, եթէ կարելի է մէկ մեղադրանք գտնել, այն անշուշտ իրենց պախարակելի լռութիւնն ու անտարբերութիւնն էր մինչեւ ցարդ, որով այդ բազմաշահ հաստատութեան նպատակն ու արդիւնքները պարտք չը համարեցին իրենց ի ժամանակին գրով հրատարակել, թերեւս հաւատաով՝ որ գործով եւ փորձով լաւ եւս կստուգուին անոր արժանիքը. եւ արդարեւ այսօր Հայաստանի շատ տեղերու մանկավարժները Խալիպեան ուսումնարանի որդեգիրներն լինելով՝ ի փորձոյ ստուգուեցաւ այդ ուսումնարանին օգտակարութիւնը: Իսկ գլխաւոր գովասանք այդ որդեգիրներուն համար թող բաւական համարուի ազգային հոգեւոր ուղղութեան ունեցած զգացման պարծանքն ու ազգին պիտանացու լինելու հոգեւոր եթէ ոչ նիւթական մխիթարութիւնը:

Ո՞չ ապաքէն նոյն դիտաւորութիւնը եւ յոյսերը կսնուցանէ արդ Ս. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանը իւր աշխատասէր որդեգրաց համար, որոնք՝ ինչպէս որ կլսեմք՝ բաց ի կուսակրօնութենէ, ազատ պիտի լինին նաեւ ուսուցչութեան եւ ամուսնաւոր եկեղեցականութեան ելն ասպարէզները

մուտ գործել, որպէս զի այդ ճեմարանին եւ Մայր Ս. Աթոռոյ ազգային հոգեւոր նշանակութիւնը ազգին մէջ հաւատարիմ հարազատութեամբ տարածեն: Ինչո՞ւ չմաղթեմք ուրեմն նոցա համար յապագային կատարեալ յաջողութիւն:

Այս մէկ տեսութիւնը առ ժամս բաւական համարելով սիրելի ընթերցողաց զգացուցանելու համար Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանին անհրաժեշտ կարեւորութիւնը, որ կարճ ասելով՝ ազգային դպրոցաց նկատմամբ նոյն է՝ ինչ որ կհամարուին օտար ազգաց մէջ ուսումնական հոգաբարձութիւնները, որ եւ կրօնի բարգաւաճութեան նկատմամբ Ս. Էջմիածնի պարսպաց մէջ ամենակարեւոր հաստատութիւն կհամարուի, մեք բծախնդիր պարոններուն միւս բաեզմաթիւ անհեռատես ու թշնամական առարկութեանց համար ի մասին դասագրոց, ուսուցչաց այլովքն հանդերձ՝ ի կարճոյ կպատասխանեմք նոյն բանը, ինչ որ յառաջագոյն եւս ասած եմք, թէ որ եւ է հաստատութիւն անստուգիւտ կարգաւորութիւն ձեռք ձգելու համար՝ ժամանակի եւ փորձոյ կարօտ է, եւ թէ բարի գործոյ յառաջատութեան համար արդարեւ **նպատակը կարդարացնէ միջոցները.** բայց կխնդրեմք նոյն վատ մտքով չընմբռնել այս խօսքը, որով մէջ բերած է զայն «Մշակ»-ը իւր թերթին մէջ եկեղեցականները պախարակելու համար:

Մեք կուզեմք ըսել, թէ ազգը առ այժմ Ս. Էջմիածնի տկար միջոցներու եւ արդեանց նկատմամբ ներողամիտ պիտի լինի, գիտնալով որ նպատակը բարի է եւ ի ժամանակին միջոցները եւ արդիւնքը աւելնալով Ազգի եւ Եկեղեցւոյ արդար ակնկալութիւնը կը պսակէ, որոց ճշմարիտ օգտին եւ յառաջադիմութեան փափաքող է նաեւ **ՀԱՅԿՈՐԴԻՆ**:

«Արարատ», 1876, № 10, էջ 361-368:

№ 11

ՀԱՆԴԷՍ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ ԱՆՈՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ. ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԲԱՑՄԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Ի 25-ն Սեպտեմբեր ամսոյս՝ յաւուր տօնի սրբոյն Գէորգայ Զօրավարի՝ Վեհափառ եւ Սրբազնագոյն Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգայ Դ. Կաթուղիկոսի Անուան Տօնախմբումթիւնը եւ Մայր Աթոռոյս Ճեմարանի բացման երկրորդ Տարեդարձը արժանաւոր եւ մեծաշուք հանդիսիւ կատարեցաւ:

Յայտնի է որ Ճեմարանի սկզբնական օրինութեան եւ բացման հանդէսը առաջին անգամ կատարուած էր 1874-ին Սեպտեմբերի 28-ին. այնուհետեւ մինչեւ յաջորդ տարին, այս ինքն մինչեւ Ճեմարանին հրդեհեալ մասին նորոգման աւարտիլը, աշակերտք Սուրբ Էջմիածնայ Ղազարապատ անուանեալ մասին մէջ պատսպարուած լինելով՝ առաջ տարին ըստ կարի իրենց ուսումն ու կրթութիւնը՝ մէկ նախակրթարան եւ երկու դասարան բաժանուած: Իսկ անցեալ 1875-ին Յունիսի 10-ին փոխադրուելով ի վերանորոգեալ շինուած Ճեմարանին, աշակերտք երեք դասարան բաժանուեցան՝ առանց նախակրթարանի, եւ այնուհետեւ աւելի կանոնաւոր կերպիւ սկսաւ Ճեմարանին ուսումնական ընթացքը՝ այնպիսի կարգադրութեամբք՝ որ իւրաքանչիւր տարի մէկ մէկ նոր դասարան բացուելով՝ վեց

տարուան մէջ՝ վեցերորդ դասարանի աշակերտները կարողանան աւարտել Դպրանոցական ուսմունքը, եւ այնուհետեւ սկզբնաւորութիւն լինի Ճեմարանական բարձրագոյն դասախօսութեանց:

Անցաւ մէկ տարի եւս, եւ ահա Սեպտեմբերի 25-ին երկրորդ տարեդարձը կատարեցաւ, բայց կարելի է համարել այս անցեալ տարին զօրութեամբ առաջին տարի ուսմանց Ճեմարանիս, որովհետեւ այժմ կարելի եղաւ գրեթէ աւելի բացայայտ կերպով իմանալ՝ որ հաստատուն յոյսեր կան Ճեմարանին անխափան յառաջանալուն եւ իւր գեղեցիկ նպատակին հասնելուն ի դէպ ժամանակի՝ եթէ անակնալ կերպիւ արտաքին հզօր արգելքներ չծագին:

Տարեկան հարցաքննութիւնները եղած էին մասամբ Յունիս ամսոյն սկիզբները, եւ մասամբ Օգոստոսի վերջերում, միշտ ի ներկայութեան Վերատեսչին եւ վարժապետաց, ըստ այնմ եղաւ դասարանաց փոփոխութիւնը եւ բացուեցաւ չորրորդ դասարան. իսկ կանոնաւոր դասառութեանց սկզբնաւորութիւնը եղաւ Սեպտեմբերի 1-ին՝ երբ եկան հասան բարձրագոյն դասարանաց համար հրաւիրեալ նոր վարժապետները:

Չորրորդ դասարանին բացուելովը կարելի եղած էր այս տարի առաջին դասարանին մէջ մնացող աշակերտաց թիւը լրացնել՝ ընդունելով 20-ի չափ նորեկ աշակերտներ՝ Տեսչութեան հրատարակած պայմաններուն համեմատ. ասով բոլոր աշակերտաց թիւը, որ հերու 70-էն աւելի չէր, եղաւ 95, եւ թէպէտ հարիւրաւոր խնդրատուք եւս ցանկացան ի Ճեմարանն մտնելու, բայց կարելի չեղաւ առ այժմ ընդունել շինուածոյն համեմատաբար անձուկ լինելուն՝ պատճառաւ:

Արդ Սրբոյն Գէորգայ Զօրավարի տօնին օրը[1] զկնի առաւօտեան ժամերգութեան՝ բոլոր Միաբանք եւ Ճեմա-

[1] Նաև նախընթաց աւուր յերեկոյեան ժամերգութեան՝ ի պատիւ Վեհ.

բանական աշակերտք, Սինոդական եւ քաղաքական պաշտօնատեարք եւ ուրիշ բազմաթիւ պատուաւոր անձինք՝ ինչպէս նաեւ Վաղարշապատայ օրիորդաց եւ արականց դպրոցաց աշակերտք եւ այլն, յետ կատարման վաղեմի սովորական Մաղթանաց վասն Հայրապետի Ամենայն Հայոց՝ ներկայացան Վեհափառ Կաթուղիկոսին օրհնութիւնը առնելու՝ Ս. Աջը համբուրելով եւ շնորհաւորելով (մեր Վեհ. Հայրապետի) անուանակոչութեան տօնը[1]: Սուրբ Պատարագէն յետոյ (զոր մատոյց Գեր. Վերատեսուչն Ճեմարանի Տ. Գաբրիէլ Սրբազան Արքեպիսկոպոս) բոլոր եկեղեցական դասքն զգեստաւորեալք ելան թափորապէս ի Տաճարէն Սրբոյ Էջմիածնի՝ եւ Սրբոյն Գէորգայ շարականը երգելով գնացին ի ճեմարան: Ճեմարանի մեծ դրան առջեւը կամարակապին ներքեւը պատրաստուած էր Վեհափառ Հայրապետի համար բարձրաւանդակ Գահը. Նորին Վեհափառութիւնը այն գահին առջեւը կանգնած էր՝ երբ թափօրը մտաւ Ճեմարանին ընդարձակ գաւիթը՝ երգելով սրբոց թարգմանչացն մերոց շարականը: Յետ այնորիկ եկեղեցականք շուրջանակի պար առեալ կատարեցին պաշտօն հանգստեան վասն հոգւոց ծնողաց Վեհափառ Հայրապետի մերոյ հիմնադրի Ճեմարանին, ինչպէս որ հաւանութեամբ Վեհապետիս սահմանած է կատարել այն պաշտօնը ամեն տարի նոյն օրը ի հանգիստ հոգւոց բարեյիշատակ ծնողացն իւրոց, եւ այլն:

Կանչուած էին օրուան հանդիսին վայելչութիւնը աւելցընելու համար նաեւ զինուորական նուագածուներ, որ այն միջոցին իրենց նուագարանները զարկին՝ մինչեւ որ Ժամարը եւ միւս եկեղեցականք իրենց զգեստները հանեցին ներս, եւ եկան շարուեցան ըստ կարգի Վեհափառ Կաթուղիկոսի երկու կողմը. այն ատեն Ճեմարանին Վերատեսուչ Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոսը կարդաց իւր ճառը, զոր ամբողջ կդնեմք այս տեղ:

Ճառին ընթերցմանէն վերջը աշակերտք զանազան երգեր երգեցին, եւ մէջ ընդ մէջ կարդացուեցան վարժապետաց եւ աշակերտաց յօրինած ոտանաւորները ի խորհուրդ օրուան հանդիսին, որոց հրատարակութիւնքը եւս արժան կհամարիմք:

Ի վերջ ամենայնի Վեհափառ Հայրապետ ոտք ելաւ իմաստալի եւ սրտաշարժ խօսքերով յայտնեց իւր հայրական սրտին ուրախութիւնը զոր կզգար՝ տեսնելով իւր բազմամեայ փափաքանաց (այս ինքն կանոնաւոր եւ ընդարձակ եկեղեցական Ուսումնարան կանգնելուն եւ յաջողելուն) կատարուելու մեծամեծ յոյսերը: Յուսադրական բանիւք կքաջալերէր ոչ միայն Ճեմարանի կառավարիչները, այլեւ ժողովականքը եւ բովանդակ մեր Ազգը որ քաջալերուին, սիրտ առնուն, եւ իրեն պէս չվհատելով ամենեւին յերեսաց պէս պէս դժուարութեանց՝ աշխատել որ այս Ճեմարանը հասնի իւր վսեմ՝ ազգաշահ եւ կենցաղօգուտ նպատակին, եւ Հայրապետական օրհնութիւնը տալով արձակեց հանդիսականները: Իսկ նոքա ելան Ճեմարանին ութանկիւնի մեծ հանդիսարանը, որոյ ճակատը զարդարուած էր Վեհափառի մեծադիր իւղաներկ կենդանագրովը, եւ այն տեղ զննեցին աշակերտաց բազմաթիւ գծագրութիւնները եւ նկարները, եւս հայերէն եւ ռուսերէն վայելչագրութեան օրինակները:

Այս ազգային հանդէսը վերջաւորեցաւ յերեկոյին գեղեցիկ լուսավառութեամբ Վեհարանին, Վանքին եւ Ճեմարա-

Հայրապետի մերոյ՝ և ի փառս Սրբոյն Գէորգայ՝ արժանաւոր շքով և հանդիսիւ՝ նախատօնակ կատարեցաւ:

[1] Այս առթիւ Ճեմարանի և օրիորդաց ծխական դպրոցի աշակերտաց ի դիմաց մի մի ճառ կարդացուեցաւ, զորս արժան կհամարիմք ի ստորև հրատարակել:

նին, եւ զանազան հրարուեստական խաղերով ու նուագարաններով մինչեւ ուշ ժամանակ:

Կմնայ մեզ մաղթել Վեհափառ Հայրեպտի մերում երկար կեանք եւ յաւելում այսպիսի ուրախութեանց եւ միսիթարութեանց ի փառս աստուծոյ եւ յօգուտ եւ ի պայծառութիւն Հայաստանեայցս առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Ահաւասիկ Ճեմարանի Գեր. Վերատեսչին ընթերցած ճառը:

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ,
ԱՍՏՈՒԾԱՐԵԱԼ ՀԱՅՐԱՊԵՏ

Զի՞նչ ինչ քաղցրագոյն կայցէ յաշխարհի որոց միանգամ յուսովն վաստակեցին՝ քան զտեսանել՝ թէ եւ բացուստ ի բաց՝ զարդեաց աշխատութեանցն իւրեանց զբարենշան զբազմաբեղուն արգասիս: Զայսր քաղցրութեան եւ զբերկրառիթ ուրախութեան առեալ այսօր եւ մեր զճաշակ՝ ողորմութեամբ Բարձրելոյն՝ ի գործ տեսչութեան Գէորգեան Ճեմարանիս Սրբոյ Էջմիածնի, համարձակիմք աւասիկ ի հրճուանօք հրաւէր կարդալ ո՛չ միայն սրբագումար Ուխտիս միաբանութեան Հարց եւ Եղբարց բարեսիրաց, այլ եւ համօրէն ամենայն որդւոց հարազատից Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ՝ հաղորդս մեզ հանդիսանալ ի խնդութեանս մերում: Եւ արդեօք կարի իսկ յիրաւունս:

Վեհափառ Տէր, տեսանէք աւասիկ շուրջ բոլորեալ երամովին զՁերովդ Աթոռով զայնոսիկ յորդեկացն Ձերոց՝ յորդւոց Հայաստանի, յորոց ի գլուխս հեղեղքն առատապէս զհայրապետականին Ձերոյ զօրհնութեան զցօղ զուարթարար անդստին ի սկզբանէ, եւ մանաւանդ յառաջնումն տարեդարձի բացման հոյակապ Ճեմարանիս: Տեսէք արդ յերկրորդումս, տեսէք որքա՛ն աճեցին եւ արգասաբերք եղեն ի հոլովել տարեկան շրջանիս՝ շնորհիւ անդուլ աղօթից, եւ անթերի խնամոց Հայրեպտիդ մեծի եւ անխոնջ վաստակովք աշխատաւորացն առ ի Ձէնջ կարգելոց եւ ցանգ ի յառաջադէմսն նկրտել խրախուսելոց:

Է՞ ինչ ապաքէն ի տեսարանս այսպիսի, Վեհափառ Տէր, որ ակներեւ առաջի կայ ամենեցուն, որպէս աճումն թուոյ սանուցդ որդեգրելոց Մայր Աթոռոյս, հանդերձ քաջառողջ կենդանութեամբ նոցին եւ զուարթածաղիկ գոհութեամբ սրտի, եւ է՞ ինչ դարձեալ որ յաւէտ նշմարի հոգւոց որոյ ոչ կարծեօք ինչ եւ ոչ վեր ի վերոյ, այլ ճշդիւ գտակաւ հմտացեալ իցեն դաստիարակութեանն արուեստի: Արդ ներեսցէ ինձ Ձերդ Վեհափառութիւն զերկաքանչիւրդ ազգ յառաջադիմութեան երեւութացեալ ի Ձերում դաստակերտիս՝ պարգել ըստ կարի աստանօր ի մեծահանդէս աւուրս տօնի առաջի յոգնախուռն ակմբիս, ոչ ի սնոտի ինչ պարծանս խաբէութեան, եւ ոչ զմարդահաճոյից ոմանց բերել կամելով զամօթապարտ կերպարանս, այլ իբր զհամարատուութիւն տնտեսի հաւատարմի կոչեցելոյ ի Տեառնէդ իրմէ յայս գործ տաժանական, բայց աստուածահաճոյ եւ ազգային:

Ապաքէն ոչ ըստ չափու մեծութեան շինուածոյ վայելչակերտ ճեմարանիս էր ի հերուն թիւ աշակերտաց սորին՝ ըստ պէսպէս պատճառաց. որոց առաջինն եւ գլխաւոր այն իսկ էր՝ զի չէր մարթ անդէն ի սկզբանն բացումն առնել բազում դասարանաց միանգամայն. որոյ վասն որք ի հերուն չէին ինչ աւելի քան զվաթսուն եւ վեց, այսօր եղեն իննսուն եւ հինգ աշակերտք. թող եւ զբազմաթիւ պատանիս ցանկացողս այսր մտանել, ոչ ի չքաւորացն եւեթ դասուէ, այլ եւ ի խոստացողացն զթոշակ հատուցանել տարեւորական, զոր իրաւամբ չներեն այժմու կանոնք Ճեմարանի: Եւ յետինս այս երեւոյթ՝ զարմանալի իմն թուեցեալ յաչս յոլովից՝ զի՞նչ

իցէ, եթէ ոչ գործնական եւ սպառնալուռ փարատումն կասկածին երկիւղի այնոցիկ ի բարեմիտ մարդկանէն, որք համարէին՝ թէ ոչ ոք ոչ ուրեք հաւան գտցի երբէք տալ զորդիս իւր յաշակերտութիւն Ճեմարանիս, թէ եւ ձրիաբար (բա՛բէ, բա՛բէ), թէ եւ ձրիաբար առնուլ զնոսին մտաբերիցէ ոք: Ո՛չ ո՛չ այդպէս իցէ, եղբարք պատուականք: Ահա այժմէն իսկ զաղաղակ հարկանեն առ Ձեզ, Վեհափառ Հայրապետ, ուսումնատենչիկ մանկունք Հայաստան ժողովրդոց՝ հազարաւորաց եւ բիւրաւորաց՝ փութալ ի կատարումն գեղեցիկ խոստմանդ, ընդարձակագոյնս յօրինել զբնակութիւն Ճեմարանիս. քանզի նեղ եւ անձուկ է մեզ, - գոչեն ամենեքեան, - դաստակերտդ գեղեցիկ:

Փարատեցա՛ւ արդեօք ի տարեւոր ժամանակիս եւ միւս եւս կասկածն երկիւղի՝ թէ գուցէ ծանրութիւն օդոց եւ եղանակիս Վաղարշապատու վնասաբեր լինիցի առողջութեան մանկտւոյն, մանաւանդ ի տօթագին աւուրս ամարայնոյ: Եւ զիա՞րդ ոչ քանզի ոչ. միայն որ բնիկքն եւ Կովկասեան գաւառացս աշակերտք՝ ի քաջողջութեան վայելեն ահա՝ զերծք յամենայն երկարատեւ խօթութեանց եւ ի պէսպէս ցաւոց վնասակարաց, եւ այն՝ զկնի տապախառն եւ ջերմաջերմ աւուրց անգամ ամարայնոյն անցելոյ, այլեւ որ եկեալքն են ի հեռաւոր աշխարհաց եւ ի հովասուն վայրաց աշակերտք, յԱժտէրխանէ ասեմ եւ յԱսպահանէ, ի Կոստանդնուպօլսոյ եւ ի Ղարաբաղէ, ի Դավրիժէ եւ ի Շամախւոյ, յԱգուլեաց եւ ի Պեսարապիոյ, ի Կիլիկիոյ եւ ի Նորոյն Նախիջեւանէ, ի Տրապիզոնէ եւ յԵւդոկիոյ եւ որ այլքն եւս միօրինակ ունին աւասիկ քաջողջութիւն եւ զուարթութիւն: Եւ այս եթէ ոչ այնչափ օդոցս բարեխառնութեան թուիցի ումեք շնորհ, որչափ մանաւանդ քաջարթուն խնամոց դաստիարակաց ի վերայ սանուցս մերոց արգասիք, սակայն չիք երկբայութիւն՝ զի զո՛ւր եւ ունայն ամբաստանութիւնքն են որ զանի-

նարին վնասակարութենէն օդոյ Վաղարշապատու մօրն եղելոյ երբեմն քաղաքաց Արարատեան նահանգիս:

Բայց հզօրագոյն քան զառարկուածսդ զայդոսիկ՝ ո՞չ ապաքէն այն էր ի հերուն ի միտս եւ ի բերանս իսկ բազմաց ի մերազնեայ եղբարց տագնապ տարակուսի՝ թէ ո՛ւստ ուստեք հայթհայթեսցին արդեօք ուսուցիչք եւ վարժեար՝ որք արիցին կամ բնաւ իսկ մտաբերիցեն այսր եկաւորել՝ յաշխարհս խոպանացեալ ըստ բազում գլխոց, յաշխարհ լոկ եւ թափուր ի յոլովից կենցաղական զբօսանաց եւ զօրինաւորն զուարճութեանց, եւ ի կարեւորագունից անգամ կենսական պիտոյից եւ դիւրութեանց: Սակայն տեսաք աւասիկ, տեսանեն եւ ամենեքեան, զի ուրանօր ունիցի զտեղի ի միոյ կողմանէ հեռատեսն չափաւորութիւն եւ զգուշաւոր ընտրութիւն՝ համեմատ նախնական պիտոյից այսպիսւոյ ուսումնարանի, եւ ի միւսմէն՝ անձնանուէր եռանդուն ճշմարիտ ազգասիրութեան՝ անշէջ մնացեալ տակաւին ի սիրտս ուսումնասէր եւ աշխատասէր երիտասարդաց բազմաց, անդ ոչ դժուարին ինչ է կանգնել զյաղթութիւն ի վերայ խափանարար խոչից այնպիսեաց: Եւ ահա տարեկան յառաջադիմութիւնք աշակերտաց Ճեմարանիս յերեսին դասարանս մեր՝ պերճագոյն քան զամենայն բան ապացուցական երաշխաւորեն ստուգութեան իրացդ: Բայց աղէ՛ եւ զայն տեսցուք միանգամ, զի եկին հասին աւանիկ եւ յուսելոց անտի ի համալսարանս Եւրոպայ՝ արք արդարեւ քաջահմուտք պիտոյից հայկազն մանկտւոյն եւ հայասեռ ժողովրդոց կողմանց կողմանց, եւ գիտակք առնել զպարտուապատշաճն ընտրողութիւն ամենայնի որ ինչ առ Եւրոպական ազինս գտանիցին ոճք եւ յեղանակք դաստիարակութեան, եւ մերուս նպատակի զնոսին պատշաճեցուցանել: Այսպիսիք ոմանք են ահա Պարոնայք Յարութիւն Քէշքէկեան՝ ուսուցիչ Գաղղիարէն եւ Լատին լեզուաց,

Լեւոն Թիւսիկեան՝ ուսուցիչ Գրահաշուի եւ Երկրաչափութեան, Վարդան Աբովեան՝ ուսուցիչ Ռուսացն Դպրութեան եւ պատմութեան Ռուսաց եւ Աշխարհագրութեան Ռուսաստանի, եւ Յովհաննէս Գալստեան՝ ուսուցիչ Հայերէն դպրութեան եւ Թուաբանութեան եւ Կարգապահ, չորեքին եւս ի նորումս առ մեզ եկաւորեալք, որոց վաղածանօթն վաստակք լծորդեալք ընդ անխոնջ աշխատութեան եղելոցն արդէն ի Ճեմարանիս՝ որք են Արժանապ. Կիւրեղ Վարդապետ Սրապեան՝ ուսուցիչ Կրօնագիտութեան եւ Թուաբանութեան, Պարոնայք Վասակ Պապաջանեան՝ ուսուցիչ Բնական Պատմութեան, Մկրտիչ Պալեան՝ ուսուցիչ Հայկաբանութեան եւ Պատմութեան Մատենագրութեան Հայոց, Ներսէս Սիմէօնեան՝ ուսուցիչ Ընդհանուր Պատմութեան եւ Աշխարհագրութեան եւ գաղղիական լեզուի, Միքայէլ Միքայէլեան՝ ուսուցիչ Ռուսերէն լեզուի: Պօղոս Ճէպէճեան՝ ուսուցիչ Ձայնագրութեան եւ Պատմութեան Հայոց՝ եւ Տնտես, Առաքել Սագինեան՝ ուսուցիչ Գծագրութեան եւ Նկարչութեան, եւ Մարտիրոս Քէրեսթէճեան՝ ուսուցիչ Վայելչագրութեան՝ եւ քարտուղար՝ քաջ քաջ երաշխաւորեն մեզ, թէ եւ յառաջիկայսն եւս յաջողագոյն գտցէ Ճեմարանս մեր զարգացումն եւ բարգաւաճանս ցանկալիս:

Թող ուրեմն եւ այնոքիկ յիմաստնոց՝ որոց հնչիցեն իմն ականջքն փափկասունք ի լուր իբրու եթէ ահաւորագոչ անուանակոչութեան ճեմարանի եւ նպատակի սորին, եւ գոգ ի զարմանս իմն կրթեցին կամաւորապէս, թո՛ղ անմոռաց եւ զայս ինչ ունիցին յուշի, զի ընթացք ուսմանցն յորս պարապեն արդ աշակերտք ի սմա, եւ յորս պարապեսցին գէթ այլ եւս ամս երիս փոխագրեալքն զարդիս ի չորրորդ դասարան, նախաշաւիղք եւեթ են ճեմարանական դասախօսութեանց. ուստի գուցէ ոչ այնչափ որչափ կարծելին

էր՝ կարօտանան արդեօք առաջնոց ոմանց ի քաջահամբաւ վարժապետաց պսակաւորելոց ի համալսարանս Եւրոպայ:

Այլ եւ կամէի թէ գիտիցեն այժմէն այնպիսիքն զոր ինչ Ձերդ Վեհափառութիւն վսեմախոհ եւ յառաջատես խնամարկութեամբ եղեալ է արդէն ի մտի, այն է զընտրելագոյնսն ըստ ամենայն գլխոց յուսումնաւարտ աշակերտաց վեցերորդի դասարանին առաքել ի դէպ ժամուն ի համալսարանս Եւրոպայ ծախիւք ճեմարանիս, որպէս զի անդանօր զամս երկուս կամ երիս կատարելագործեալք ի պէսպէս մակացութիւնս եւ ի հմտութիւնս՝ դարձ այսրէն առնիցեն, եթէ հնար է՝ մէն մի Խորենացիք եւ Եղիշայք եւ Եզնիկք եւ Ղազարիկք, եւ վարժապետիցեն այնուհետեւ յազգայնումս ճեմարանի՝ չափաւորապէս վարձու շատացեալք:

Մատուցեալ արդ յոճ եւ յեղանակ հանրական ընթացից ճեմարանիս յանցելումս տարեկան շրջանի, արժան համարիմ նախ զնիւթականացն պիտոյից մատակարարութենէ խօսել համառօտիւ:

Սնունդ եւ հանդերձք եւ ամենայն արտաքին պէտք աշակերտաց ճեմարանիս՝ մատակարարին սոցա Ձերովդ խոհական վերադիտողութեամբ եւ հայրական խնամարկութեամբ առատապէս, եւ միանգամայն ճշգրիտ պահպանութեամբ տնտեսականին խնայութեան կանոնաց, ի Վանքական անուանեալ Կառավարութենէն, ազատս զմեզ կացուցանելով այսու ի դրամականացն հաշուատուութեանց հասիցն եւ ծախուց. որով ի միոյ կողմանէ չտեսանի ինչ թերութիւն եւ ոչ մի յանկարօտն պահպանութիւն սանուցդ, եւ ի միւսմէն ճշդին ըստ կարի եւ ի բաց պարուրին ծախք աւելորդք, առանց զանց առնելոյ եւ զյաւելուածով շինուածեանց կարեւորաց առ նորակառոյց ճեմարանաւս, որպիսի են լուացարանն ընդարձակ եւ հիւանդանոցդ վայելչակերտ: Հաշուեմատեանք ծախուցն եղելոց յայսմ ամի

ակներեւ ցուցանեն աւանիկ զբանիցս ստուգութիւն, եւ յուսադիր մեզ զինին՝ աներկբայապէս, զի ուրանօր զուգընթաց միմեանց գտանիցին անխարդախ հաւատարմութիւն եւ անշահասէրն տնտեսութիւն, անդ ոչ սակաւ խնայութիւն ի ծախս գործի, եւ յաւելուած ազգաշահ օգտից:

Իսկ հասքն կամ մուտք ուսումնարանիս մեծի՝ հանդերձեալք են բազմիմաստ հանճարով Ձերոյ Վեհափառութեանդ՝ գլխաւորապէս ի շահուց անտի մեծագումար դրամագլխոյն պատրաստելոյ ի գնոց տպագրեալ գրենոյ եւ ի նուիրաբերութեանց բարեպաշտ իշխանաւորաց եւ ժողովրդոց, եւ յանուանէ՝ յառատաձեռն նուիրանաց մշտենջանական եւ ժամանակաւոր բարերարաց եւ սատարաց ճեմարանիս, զորոց քաղցր է մեզ յիշատակ առնել զանուանց ազգասիրացն ճշմարիտից յաւուրս հանդիսի: Քանզի բաց ի հանգուցելոցն ի Քրիստոս՝ ի բարեյիշատակ Կարապետ Արքեպիսկոպոսէ յԱռաջնորդէն Կարնոյ եւ Տփխեաց, ի Գէորգայ Մանուկեան Կալկաթացւոյ, յԱկիւլինեայ Ալաճալեան Նոր Նախիջեւանեցւոյ, եւ ի Կարապետէ Թիլքիեան Գրիգորուպոլսեցւոյ, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, արժանաւորք մերոցս շնորհակալեաց գտանին Սոփիա տիկին Չավչաւածէ Տփխիսեցի, Յովհաննէս Ստեփանեան Յովնանեանց, քաղաքացիք Նորոյն Նախիջեւանի, Ղզլարայ եւ Մոզտոքի, Սուլթան տիկին Մելիք-Բէկլարեանց Տփխիսեցի, Սարգիս Արքեպսիկոպոս Ջալալեանց, Գէորգ Արքեպիսկոպոս Վեհապետեան, Եսայի Իզմիրեանց Ղզլարեցի, Բարեգործական ընկերութիւնք Հայոց Նոր Նախիջեւանի եւ Բագուայ[1], Մկրտիչ Սանասարեանց, եւ Յովհաննէս Մուրատ իշխան Մանուկ Պէյ, յորոց ոմանք դրամագլուխս

[1] Կյուսամք՝ զի Ն. Նախիջևանի Բարեգործական և Բագուայ Մարդասիրական ընկերութիւնք ևս կփութան արդիւնաւորել իւրեանց բարի մտադրութիւնը և իղձերը (ծանօթագրութիւն «Արարատ»-ի խմբագրութեան):

հաստատունս նուիրեցին ի նպաստ ճեմարանիս, ոմանք զտոկոսիսն միայն, եւ այլք եւս միանուագ օժանդակութեամբ հաղորդք եղեն այսմ աստուածահաճոյ բարերարութեան:

Բայց ես փութամ ճեպիմ զդաստիարակութենէ մանկտւոյն մերոյ ասել բան հակիրճ եւ համառօտ, ոչ ինչ խէթ կասկածանաց ի մտի ունելով՝ թէ յաչս ոմանց ի քննասիրացն եւ ի պարսաւադիտաց զանձնասէր ծնգոտի եւ զսնոտիապարծ մարդոյ տայցեմ զանձնէ զկարծիս, բայց ասացից զիրաւունս:

Վեհափառ Հայրապե՛տ, ըստ Ձերումդ իսկ պաշտելի հրամանաց՝ հիմն եւ հաստատութիւն տաճարիդ իմաստութեան զերկիւղն Աստուծոյ եւ զոգի աստուածպաշտութեան գիտելով՝ հանդերձ ողջամիտ բարոյականութեամբ զամենայն ջան եւ զփոյթ ի կիր արկեալ է մեր՝ զի կանոնքն բարեկարգութեան եւ համօրէն ամենայն առաքինութիւնք եկեղեցական եւ քաղաքական կենցաղավարութեան օր ըստ օրէ բարգաւաճեալ ծաղկեսցին ի սմա: Եւ թէ ո՛րչափ ինչ կամ որպիսի՛ գտեալ իցեմք յայսմ Տեառն շնորհիւ յաջողութիւն, եթէ ոչ տարապայման ինչ գրեսցի ինձ վստահութիւնս՝ համարձակիմ զուարթամիտ ոգւով տալ վկայութիւն, զի հիմնաւորն հոգեսիրութիւն՝ հեռի յամենայն կեղծաւորութենէ՝ լծորդեալ ընդ անյեղլի հաւատարմութեան առ Հայաստանեայցս Սուրբ Եկեղեցի, եւ ընդ անդրդուելի հարազատութեան առ Մայր Աթոռս մեր՝ հանդերձ երախտագէտ զգացմամբ առ արժանաժառանգ Հայրդ հասարակաց, առ բազմարդիւն Հիմնադիրդ ճեմարանիս, ոչ զաղփաղփուն ինչ կանդաղեալք են, այլ արմատս ի խոր ձգեալ անդստին յառաջնմէ իսկ տարւոյ ի սիրտս մատաղերամ մանկտւոյդ՝ աճումնաձիգ բողբոջս զուարթարարս տեսանելեաց այժմէն իսկ արձակեն: Հանրական իմն ասեմ ջանասիրութիւն

անխոնջ, որով ի կրկնակի հանդէսս հարցաքննութեան՝ ի սկիզբն Յունիսի եւ ի վերջին աւուրս Օգոստոսի տարւոյս՝ ոչ բերկրութեան եւեթ եղեն մեզ առիթք, այլ եւ ոչ սակաւ զարմանաց, եւ յառաջիկայսն մեծաց յուսից ակնկալութեան:

Արդարեւ իսկ տեսաւ յայտնապէս ի հարցաքննութիւնս անդ՝ զի առաւելագոյն իմն եւ գոգցես անակնկալ գործեալ են դոքա յառաժադիմութիւն ի վարժս Հայկաբանութեան, ոչ ի գիր միայն՝ այլ եւ ի բան եւ ի գրոյց ի գրոցն մեր բարբառ պատուական՝ ճոխ եւ պատկառելի: Քաջավարժք հանդիսացան եւ ի Թուաբանականին գիտութեան՝ քաջահմուտ վարժապետութեամբ ուսուցչին իւրեանց. արիացեալ են եւ ի յաղթել սկզբնական դժուարութեանց ուսման կարեւորագունին մեզ Ռուսացն լեզուի, եւս եւ Գաղղիականին: Պատմականքն եւ Աշխարհագրական հմտութիւնք՝ հանդերձ սկզբամբք Բնական պատմութեան՝ յերրորդումն դասարանի գոգցես աւարտեալք, իսկ յառաջնումն եւ յերկրորդին իբր ի կէս հասեալք՝ պատրաստեալ գտանին զսանս ճեմարանիս ի ճոխագունիցն ըստ այսոցիկ մասանց գիտութիւնս:

Թէ ո՛րքան ի Վայելչագրութեան եւ ի Գծագրութեան եւ Նկարչութեան արուեստս իցեն զարգացեալք՝ տեսանի աւանիկ ի շարս անդ աշխատութեանց սոցին ի հանդիսականի ճեմարանիս. եւ Ձայնագրութեան նորոյ չքնաղ արուեստի հրահանգաց այնչափ տիրացեալ են երրորդի դասուն աշակերտք՝ հանդերձ ոմամբք յերկրորդէն եւ յառաջնոյն, զի զուրեսին զձայն շարականաց եւ զդարձուածս նոցին սերտ ի մտի ունելով՝ կարող են երգել անսայթաք զդժուաագոյնսն անգամ յեղանակաց, եւ նորանորս եւս ձայնագրել տաղս եւ երգս ըստ հաճոյից թելադրողացն, եւ երգել համարձակ:

Աստանօր արժան էր արդեօք ընդ անուանց մերոյ միոյ յաշակերտացն եւ ցուսմունս նոցին ի մէջ բերել, եւ ասել՝ թէ ո՛վ ոք յորում բաժնի գիտութեանցն եւ լեզուաց առաւելապէս քաջացաւ ի հարցաքննութեան ժամանակսն. այլ զի մի՛ ծանրատաղտուկ լսելեաց գերյարգոյ ունկնդրացս զբանս իմ առնիցիմ, շատ գրեմ առ տեղեաւս զանուանցն եւեթ առնել յիշատակութիւն, առաջնակարգս եւ յոյժ գովելիս զայնոսիկ ընծայելով՝ որք հանդերձ անստգիւտ վարուքն եւ գնացիւք միանգամայն գրեա թէ յամենայն իսկ ի մասունս ուսմանցն անվրէպ ճշգրտութեամբ վկայեցան քաջավարժք, եւ լիաբերան գովութեան եւ մրցանակաց արժանաւորք: Եւ երկրորդակարգս եւ գովելիս զթերացեալսն փոքր ի շատէ ի տարեկան ընթացս ուսմանցն եւ ի հարցաքննութիւնս: Ըստ այսմ Առաջնակարգ աշակերտք յոյժ գովելիք վկայեցան, եւ այսպիսիք ոմանք գտան յառաջնումն Դասարանի:

Յովհաննէս Թամազեան ի Ստաւրափոլէ.
Նիկողայոս Քարամեան ի Շամախւոյ.
Սիմէոն Փիլիպոսեան յԱսպահանէ.
Հայրապետ Պօղոսեան ի Դավրիժէ.
Աբրահամ Ջամինեան ի Նոր Նախիջեւանէ.
Տիգրան Ասլանեան յԵւդոկիոյ.
Ռափայէլ Գրիգորեան ի Դավրիժէ.
Գրիգորիս Փափազեան ի Վան քաղաքէ.
Բարթուղիմէոս Սուքիասեան յԱշտարակէ.
Համբարձում Սաֆարեան ի Դարբանդայ:

Երկրորդակարգ աշակերտք գովելիք ի նմին Դասարանի.

Յակոբ Պէքեարեան յԱնթապէ Կիլիկիոյ.

Վահան Մինասեան ի Վաղարշապատ.
Տիգրան Սաֆարեան ի Նոր Արմաւիր.
Առաքել Վարդանեան ի Վաղարշապատ.
Գէորգ Այվազեան յԱլիբէկու գեղջ.
Ալեքսան Քաթանեան ի Վաղարշապատ.
Խաչատուր Թադէոսեան ի Մաստարա գեղջ.
Արշակ Էտիլեան ի Քարվանսարայ Ղազախու.
Գէորգ Մինասեան ի Պաթումէ.
Մելքոն Աբէլեան ի Վաղարշապատ.
Մկրտիչ Աբէլեան ի Վաղարշապատ.

Ընդ ամենայն աշակերտք քսան եւ մի, որք եւ ի սկիզբն ուսումնական տարւոյս փոխադրեցան յԵրկրորդն դասարան:

Յերկրորդում Դասարանին զառաջինսն կալան զտեղիս ի յառաջադիմութեան ասպարիսին Առաջնակարգք եւ յոյժ գովելիք.

Սարգիս Տէր Գաբրիէլեան ի Քութայիսէ.
Թադէոս Զաքարեան ի Շամախւոյ.
Կարապետ Տէր Մկրտչեան յԱգուլեաց.
Հմայեակ Խուշպուլեան ի Տրապիզոնէ.
Միսաք Ասիլեանց ի Վաղարշապատ.
Միքայէլ Աստուածատրեան յԱղքիրմանէ.
Ենովք Կէօնճեան եւ Պօղոս Տէր Պօղոսեան յԱղեքսանդրապոլսոյ.
Յովհաննէս Անգլիցեան յԱժտերխանէ.
Համբարձում Ստամպօլցեան յԱղեքսանդրապօլսոյ.
Աւետիս Զարկարեան յԱգուլեաց.
Յովհաննէս Առաքելեանց ի Հին Նախիջեւանէ.
Գալուստ Թումանեան ի Մոզտոքէ.

Պօղոս Սահակեան եւ Հայրապետ Ստեփաննոսեան ի Տփխեաց.
Գէորգ Տէր Բարթուղիմէոսեան ի Պրուսայէ.
Յովհաննէս Տէր Դակթեան յԱղքիրմանէ.

Եւ Երկրորդակարգ աշակերտք գովելիք.

Սահակ Յարութիւնեան ի Կ. Պոլսոյ.
Յարութիւն Այվազեան յԱլիբէկլու գեղջ.
Գրիգոր Թառումեան ի Շուշւոյ.
Գալուստ Տէր Խաչատրեն ի Չալթր գեղջ Նոր Նաքիջեւանի.
Վարդան Տէր Մկտրչեան ի Վաղարշապատ.
Ստեփաննոս Տէր Անտոնեան յԵրեւանէ.
Վահան Շահինեան ի Կէչրլու գեղջ.
Միքայէլ Տէր Գաբրիէլեան ի Սաչխերէթ աւանէ, եւ Թադէոս Տէր Մանուէլեան ի Բլուր գեղջ.

Ընդ ամենայն աշակերտք քսան եւ վեց, եւ սոքա յԵրրորդն փոխեցան Դասարան:

Իսկ որք յերորդի դասուն յառաջադէմք հանդիսացան՝ եւ յոյժ գովելիք սոքա են.

Գաբրիէլ Առաքելեան ի Ղզլարէ.
Կոստանդին Մելիք Շահնազարեան եւ Սիմէոն Հախումեան ի Շուշւոյ.
Ստեփաննոս Մալխասեան.
Գալուստ Տէր Մկրտչեան եւ Հմայեակ Սողոմոնեան յԱխալցխայէ.
Մինաս Պանճուլազեան ի Ղզլարէ.
Նիկողայոս Տէր Աւետիքեան ի Շուշւոյ.

Գէորգ Խանըմեան եւ Սերովբէ Սամարցեան ի Նոր Նախիջեւանէ.

Մուշեղ Մամիկոնեան

Յարութիւն Պահլաւունի եւ Սեդրաք Գրիգորեան յԱղեքսանդրապոլսոյ.

Աղեքսանդր Շաւարշեան յԻգտիրէ.

Երկրորդակարգ աշակերտք գովելիք.

Մկրտիչ Զաքարեան եւ Ստեփան Մկրտչեան յԻկտիրէ.

Բաղտասար Մելիքեան ի Ղզլարէ, եւ Յովակիմ Իւզբաշեան ի Շուշւոյ:

Ընդ ամենայն աշակերտք երիցագոյնք ութեւտասն, որք եւ փոխադրեցան ի նոր դասարան չորրորդ: Եւ այսպէս մնան այլ եւս Դասարանք երկու, որ բացցին յամսն 1877 եւ 1878, եւ ապա այնուհետեւ սկիզբն արասցի ճեմարանականացն բաժնից, յորս դասախօսութիւնքն եղիցին՝ ոչ եւս սովորական կամ Դպրոցական ոճով, այլ մանաւանդ իբրու ատենախօսութիւնք վարդապետականք զպէսպէս գիտելեաց, զուսումնականաց եւ զբանասիրականաց:

Իսկ յորոց մնացինն առ տխեղծ հասակացն չներելոյ՝ ի նորումս յառաջնում դասարանի յոյժ գովելի աշակերտք՝ սոքա են.

Արշակ Գէորգեան ի Տաշղալա գեղջէ Աղեքսանդրապոլսոյ.

Ստեփաննոս Թորոսեանց յԱսպահանէ.

Մանուկ Խաչատրեան յԱստապատէ.

Ներսէս Պօսնեան յԱնթապէ Կիլիկոյ:

Եւ ի սոսա յաւելեան զարդիս նորեկ աշակերտք քսան եւ չորք, առհասարակ ընկալեալք յԱ Դասարան, եւ երկուքն յԵրկրորդ եւ յԵրրորդ:

Արդ ի տես եւ ի լուր այսքանոյ յուսապատար խնդութեան ընդ արգասիս օրհնութեան Վեհիդ եւ աղօթից սրբոյ Ուխտիս միաբանութեան, որպէս եւ անդուլ ջանից վարդապետացն մերոց եւ աշակերտաց, ներեսցէ ինձ Ձերդ Վեհափառութիւն թռիչս արձակել առ վայր մի մտացս թեւօք, եւ վերասլացեալ ի լուսափայլ գագաթն մեծի լերինդ Մասեաց, ի Հայկազնեանդ ասեմ Ողիմպոս, շուրջ յածել զականողիս ի կայս եւ ի կոյս արեւելից եւ արեւմտից, հիւսիսոյ եւ հարաւոյ, եւ իբր ի պատկերի մեծի զԳէորգեանս ճեմարան մատնանիշ ցուցանելով որդւոց Հայաստանի որ ի սփիւռս իցեն քարոզ կարդալ առ նոսա եւ ասել. մանկո՛ւնք Հայաստանի, որդիք սիրասունք Վեհափառ Հայրապետիս մերոյ Գէորգայ Դ, զարթի՛մք ի ձերմէ մահահանգոյն թմբրութենէդ. յուսահատութեան, յոր ընկղմեալ կայք յամաց բազմաց հետէ, մոռացօնս գործեցէք վայրիկ մի աղետիցն մեծաց զորս կրեցէքն եւ սպառեցէք սրբեցէ՛ք զարտասուս յաչաց ձերոց, եւ տեսէք զակնկալութեանցն ձերոց նշոյլս պայծառապէս փայլատակեալ առ տեղեօքն՝ յորս կոխեցին լուսաշաւիղ ոտք Նահապետին Նոյի եւ Լուսաւորչին ազգիս Գրիգորի Պարթեւի եւ Ներսիսի Մեծի, եւ Սահակեանցն եւ Մեսրոպեանց, եւ զմայլեալք բաժակաւ անտրտում ուրախութեան՝ եկայք խառնեցէք զձայնս հրճուանաց ձերոց ընդ բարեբանութեանց մերոց յորդորմունս եւ օրհնեցէք զսկզբնապատճառն այսմ բարեաց:

Հապա՛, օրհնեցէք, որդիք շնորհապարտք, զբարեխնամս ձեր Հայրապետ ի բարենշան յայսմ տարեկանի, ի մեծաշուք հանդիսի տօնական աւուրս Սրբոյն Գէորգայ քաջա-

յաղթ զօրավարի: Մաղթեցէ՛ք Անուանակցի նորին կեանս երկարաձիգս, զի եւս քան զեւս զուարճասցի ի տեսիլ բարգաւաճելոյ իւրումն ձեռակերտի ընդ մեծազօր հովանաւորութեամբ Օգոստոսափառ Կայսերն Ռուսաց, եւ աստուտին վայելեսցէ ընդ ամս բազումս ի յոգնաբեղուն արդիւնս բարեաց օժտելոց յիւրմէն ի փառս եւ ի պայծառութիւն Հայաստանեայցս Եկեղեցւոյ եւ Ազգի:

«Արարատ», 1876, № 9, էջ 335-348:

№ 12

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԷՋ ԱՒԱՆԴԵԼԻ ԱՌԱՐԿԱՆԵՐ ԵՒ ՇԱԲԱԹԱԿԱՆ ԴԱՍԵՐԻ ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՑ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ՄԷՋ

Ա. Դասարան

Կրօն ..... 3 դաս
Հայկական լեզու ..... 5 դաս
Ռուսական լեզու ..... 5 դաս
Թուաբանութիւն ..... 4 դաս
Բնական պատմ. սկզբունք ..... 2 դաս
Աշխարհագրութիւն ..... 2 դաս
Վայելչագր. հայ. եւ ռուս. ..... 4 դաս
Գծագրութիւն ..... 1 դաս
Ձայնագրութիւն ..... 4 դաս

Ընդամենը՝ 50դաս:

Բ. Դասարան

Կրօն ..... 3 դաս

Հայկական լեզու ..... 5 դաս
Ռուսական լեզու ..... 5 դաս
Ֆրանսական լեզու ..... 4 դաս
Թուաբանութիւն ..... 4 դաս
Հայաստանի արդի աշխարհագրութիւն ..... 1 դաս
Բնական պատմութիւն ..... 3 դաս
Ընդհան. աշխարհագր. ..... 2 դաս
Վայելչագր. ռուս. եւ հայ. ..... 3 դաս
Ձայնագր ..... 4 դաս
ճաշից հետո

Ընդամենը՝ 50դաս:

Գ. Դասարան

Կրօն ..... 3 դաս
Հայկական լեզու ..... 4 դաս
Ռուսական լեզու ..... 4 դաս
Ֆրանսական լեզու ..... 4 դաս
Հայկական պատմութիւն ..... 3 դաս
Ընդհան. աշխարհագր. ..... 3 դաս
Մատեմատիկա ..... 3 դաս
Բնական պատմութիւն ..... 3 դաս
Նկարչութիւն ..... 3 դաս
Ձայնագր ..... 3 դաս
ճաշից հետո

Ընդամենը՝ 50 դաս:

Դ. Դասարան

Կրօն ..... 3 դաս
Հայկական լեզու ..... 4 դաս
Ռուսական լեզու ..... 3 դաս

Ֆրանսական լեզու ..... 4 դաս
Հայկական պատմութիւն ..... 3 դաս
Ընդհանուր պատմութիւն ..... 3 դաս
Ռուսիայի աշխարհագր. ..... 2 դաս
Ռուսիայի պատմութիւն ..... 1 դաս
Մատեմատիկա ..... 4 դաս
Նկարչութիւն ..... 3 դաս

Ընդամենը՝ 50 դաս:

Ե. Դասարան

Կրօն ..... 3 դաս
Հայ. Մատենագրութիւն ..... 4 դաս
Ռուսական լեզու ..... 4 դաս
Ֆրանսական լեզու ..... 3 դաս
Բնագիտութիւն ..... 3 դաս
Մատեմատիկա ..... 3 դաս
Եկեղեցական պատմութիւն ..... 2 դաս
Ընդհանուր պատմութիւն ..... 3 դաս
Ռուսիայի պատմութիւն ..... 1 դաս
Նկարչութիւն ..... 2 դաս
Տրամաբանութիւն ..... 2 դաս

Ընդամենը՝ 50դաս:

Զ. Դասարան

Կրօն ..... 3 դաս
Հայ. Մատենագրութիւն ..... 3 դաս
Հայերէն շարադրութիւն ..... 1 դաս
Ռուսական լեզու ..... 3 դաս
Ֆրանսական լեզու ..... 3 դաս
Բնագիտութիւն ..... 3 դաս

Մատեմատիկա ..... 3 դաս
Տիեզերագրութիւն ..... 2 դաս
Ընդհանուր պատմութիւն ..... 2 դաս
Եկեղեցական պատմութիւն ..... 2 դաս
Աստուածպաշտութեան կարգ
եւ տօմարագիտութիւն ..... 1 դաս
Առողջապահութիւն ..... 2 դաս
Նկարչութիւն ..... 2 դաս

Ընդամենը՝ 50 դաս:

Առարկաներն ըստ ուսուցիչների՝

Կրօն ..... 18 դաս
Աստուածպաշտութեան կարգ
եւ տօմարագիտութիւն ..... 1 դաս

19 դաս:

1) Ուսուցիչն է Մերովբէ եպիսկոպոս Արարատեան:
Ռոճիկը – 600 մանէթ (սնունդը վանքից ունի եւ կստանայ նոյնպէս 240 ման. Վեհ. Կաթուղիկոսի կոնդակներ գրելու):

Հայկական լեզու ..... 19 դաս
Տրամաբանութիւն ..... 2 դաս

21 դաս:

Ռուսական լեզու ..... 24 դաս
Ռուսիայի աշխարհագր. ..... 2 դաս

26 դաս:

2) Ուսուցիչն է Վարդան Աբովեան: Ռոճիկը – 1900 մանէթ:

Ֆրանսական լեզու ..... 18 դաս
Ռուսիայի պատմութիւն ..... 2 դաս
Ընդհանուր պատմութիւն ..... 6 դաս

26 դաս:

3) Ուսուցիչն է Խորէն վարդապետ Ստեփանէ: Ռոճիկը – 1000 մանէթ (Հայր Խորէն կվարէ եւ ուսուցչական ժողովի քարտուղարի պաշտօն):

Հայ. Մատենագր. պատմ. ..... 6 դաս
Հայաստանի պատմութիւն եւ արդի աշխարհագրութիւն ..... 7 դաս
Հայ. Եկեղեց. պատմ. ..... 4 դաս

17 դաս:

4) Ուսուցիչն է Կարապետ Կոստանեան: Ռոճիկը – 1450 մանէթ (Պարոն Կոստանեան կստանայ նոյնպէս վանքից վայելուչ բնակարան գիւղում անվարձ):

Ընդհանուր աշխարհագրութիւն ..... 7 դաս

5) Ուսուցիչն է Բարսեղ Բաստամեան, նոյն եւ վերակացու: Ռոճիկը – 900 մանէթ:

Մատեմատիկա ..... 21 դաս
Տիեզերագրութիւն ..... 2 դաս

23 դաս:

6) Ուսուցիչն է Մարտիրոս Սիմէօնեան: Ռոճիկը – 2100 մանէթ:

Բնական պատմութիւն ..... 8 դաս
Առողջապահութիւն ..... 2 դաս
Բնագիտութիւն ..... 6 դաս

16 դաս:

7) Ուսուցիչն է Գրիգոր Տէր-Գրիգորեան, նոյն եւ բժիշկ: Ռոճիկը – 2000 մանէթ (Պարոն Տէր-Գրիգորեան իբրեւ բժիշկ վանքից կստանայ 300 մանէթ առանձին):

Նկարչութիւն եւ գծագր. ..... 11 դաս

8) Ուսուցիչն է Առաքել Սագինեան: Ռոճիկը – 660 մանէթ (Վանքից կստանայ բնակարան, հաց, պանիր, իւղ):

Կրթութիւն երգեցողութեան

9) **Ուսուցիչն է Մաքսուտ Կարապետեան:** Ռոճիկը – 360 մանէթ (Վանքից կստանայ բնակարան եւ սնունդ: Նոյն հաշուով կուսուցանէ ձայնագրութիւն վանքի դպրոցում):

Ձայնագրութիւն ..... 11 դաս

10) Ուսուցիչն է Սահակ սարկ. Ամատունի:

Վայելչագրութիւն ..... 7 դաս

11) **Ուսուցիչն է Մարտիրոս Քէրէստեճեան, նոյն եւ ճեմարանի վարչութեան քարտուղար:** Ռոճիկը – 820 մանէթ:

Տաճկերեն ..... 6 դաս

Տաճկերեն կսովորեն միայն թուրքիահպատակ աշակերտներն եւ կամաւոր ցանկացողները:

12) **Ուսուցիչն է Գարեգին Փայլակեան:** Ռոճիկը – 400 մանէթ (Վանքից կստանայ բնակարան եւ սնունդ):

Ճեմարանի վերակացուներն են.

Սողոմոն Աբամելիքեան: Ռոճիկը – 900 մանէթ (նոյն հաշուով թուաբանութիւն կուսուցանէ վանքի դպրոցում):

Աստուածատուր Աստուածատրեան: Ռոճիկը – 600 մանէթ (նոյն հաշուով ռուսական լեզու կուսուցանէ վանքի դպրոցում):

Բարսեղ Բաստամեան (վերեւ յիշվեցաւ): Ռոճիկը – 900 մանէթ (նոյն հաշուով ընդհանուր աշխարհագրութիւն կուսուցանէ ճեմարանում):

Գէորգեան ճեմարանի աշակերտների ամենօրեայ պարապմունքի ժամերը:

Առաւօտեան	Ճաշից հետո
5 1/2 ժամին կզարթնեն:	3 ժամից 4 սերտողութիւն եւ դասախոսութիւն տաճկերեն:
1/2 – պատրաստութիւն:	1/4 – հանգիստ:
6 – կաղօթեն:	4 1/4-5 1/4 սերտողութիւն:
6-7 – դասերի սերտողութիւն:	1/4 – հանգիստ:
7 – թեյ:	5 1/2-6 1/2 սերտողութիւն:
8-8:55 / դաս:	1/4 – հանգիստ:
10 րոպէ հանգիստ	6 3/4-7 3/4 սերտողութիւն:
9:5-10 II դաս:	1/4 – հանգիստ:
30 րոպէ նախաճաշ եւ հանգիստ:	8 – կընթրեն:
10-11:15 III դաս:	9 – կաղօթեն:
10 րոպէ հանգիստ:	9 1/4 – կքնեն:
11:15-12:30 IV դաս	
10 րոպէ հանգիստ:	
12:40-1:35 V դաս:	
1:35 ճաշ:	

«Արարատ», 1879, № 12, էջ 406-409:

№ 13

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ

Հպատակելով Ս. կամաց Վեհ. Հայրապետիդ՝ յանցելումն 1881-82 ուս. ամի ընկալայ զտեսչութիւն Գէորգեան Ճեմարանիս Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, որ ի հաճն էր ապաքէն այլում ումեք հմտագունի քան զիս, եւ փորձառուի. այլ որ յիս՝ վստահութիւն Վեհ. Հիմնադրիդ՝ եւ քաջալերութիւնն խրախուսեցին զիս ստանձնել զպաշտօնս ծանր. եւ աշխատեալ ըստ չափու կարողութեան իմոյ՝ յուսամ թէ ոչ ապարդիւն անցանիցէ ժամանակն՝ ցորչափ ինձ եւ անզօր ուժոյ իմում յանձն իցէ կառավարութիւն նուիրական Տաճարիս:

Այս յոյս բորբոք է յիս եւ այժմ իսկ, տեսեալ՝ զի ճեմարանի աստ խումբ ինչ կարող ուսուցչաց՝ յորոց ոմանք յառաջ քան զիս էին, եւ ոմանք ի հրաւէր իմ եկին հասին՝ գործէ ի ճեմարանիս ի փոյթ կատարեալ եւ յեռանդն ճշմարիտ. յորոց իւրաքանչիւր ըստ չափում կարողութեան իւրեանց թեթեւացուցանեն ինձ զծանրութիւն պաշտամանս իմոյ, զոր տեսեալ քաջալերիմ:

Ահա բոլորեցաւ շրջան մի ուս. տարւոյ եւ համաձայն 20-րդ յօդուածոյ կանոնադրութեան ճեմարանիս, պատիւ ունիմ ամենախոնարհաբար առաջի առնել Վեհ. Տեսչութեան Ձերում զտեղեկագիրս զարդի վիճակէ ճեմարանիս: Այլ չեւ եւս եկեալ ի համար տեղեկագրիս՝ զայս ինչ յաւելում ասել,

զի յամենայն ի վարչական գործս ճեմարանիս՝ դիմեցի ի խորհուրդ Մանկ. Ժողովոյն, եւ զոչինչ որոշումն գլխաւոր որոշեալ է իմ առանց խորհրդոյ Մանկ. Ժողովոյն, քաջ ի միտ առեալ՝ թէ ի ղեկավարութեան մեծի ինչ հաստատութեան, որպիսի ինչ ճեմարանս է, անհրաժեշտ է պահպանել միութիւն յամենայն կարգս. եւ թէ՛ այս միութիւն կարգի եւ կանոնաց պահպանի արդեամբ, եթէ ամենեքեան՝ որ գործենն՝ մասնակցիցին վարչութեանն, թողեալ տեսչին զգործադրութիւնն: Ի մի բան՝ զհետ եղէ պահպանել զհամերաշխութիւն խմբին ուսուցչաց:

Արդ եկից ի հաշիւ տեղեկագրին:

Տեղեկագիր 1881-1882 ամի

Յընթացս 1881-1882 ուս. ամին եղեւ գումարել Մանկ. Ժողովոյն երեսուն անգամ՝ ըստ այլ եւ այլ խնդրոց ճեմարանիս, յորոց կարեւորագոյնքն եւ ուշադրութեան են այսոքիկ:

Ի սկզբանէ անցելոյ ուս. ամին օրհնութեամբ Վեհ. Հօրդ բացաւ Բ. Լսարան, եւ ի պատճառս նորոգ կազմակերպութեան խմբին ուսուցչաց փոխեցաւ ծրագիր Ա. Լսարանին, եւ երկոցուն մասնգիտական Լսարանացս տուաւ ուղղութիւն ինչ մանկավարժական: Որոշելով ընդ նմին զի եւ յառաջակայն Գ. Լսարան ըստ նմին ուղղութեան ընթացցի, որպէս եւ եղեւ իսկ յայսմ ամի: Ընդ այս կազմակերպութիւն յուսայ Մանկ. խորհուրդ ճեմարանիս պատրաստել ուսուցիչս մանկավարժս ի պէտս ազգային ուսումնարանաց, մեծ ինչ ծառայութիւն մատուցանել կրթութեան ազգիս յընդհանուրս:

Ի սկզբանէ անցելոյ ուս. ամին ուսանողք Ա. եւ Բ. Լսարանաց սկսան լսել զմանկավարժութիւն եւ զփիլիսոփա-

յական օժանդակ մակացութիւնս, եւ մնայր մարզել նոցա եւ ի հմտութիւնս վարժապետական արուեստին: Այս գործ դժուարին ըստ ինքեան եւ ծանր սկսաւ ի պայմանս եւս դժուարինս. նախ՝ զի նորավարժ ուսանողք անպատրաստք էին եւ ոչինչ օրինակ տեսեալ էր նոցա ի մարզիլ ի տեսական կրթութիւնս, եւ պարտաւորութեան. եւ երկրորդ՝ զի չեւ եւս էր ճեմարանիս վարժոց իւր սեպհական հանդերձ կարեւոր պարագայիւք՝ որչափ հարկն էր ի յաջող ելս գործոյն, վասն որոյ եւ ուսանողք ճեմարանիս առ ժամանակ ինչ հարկեցան առ ի փորձ փորձնական դասախօսութեանց յաճախել յերկսեռ ուսումնարանն Վաղարշապատայ. ուր եւ Հոգաբարձութիւնն՝ ըստ ներելոյ հանգամանացն, ընձեռեաց նոցա զկարեւոր դիւրութիւնն ի մարզումն նոցա: Ի հարկէ եւ մեզ մնայր ի շնորհակալիս Հոգաբարձութեանն եւս ապացուցանել, թէ մի՛ յապագային անցանիցեն փորձք մեր, եւ այս՝ ոչ միայն ըստ օգտի ուսանողացն մերոց, այլ նաեւ ի մասնաւորի յօգուտ մանկանց նոցա, որոց էր ուսանել ուսումն եւ կրթութիւն յուսանողացն մերոց իբրեւ ի վարժապետաց: Առ ի հասանել ի կրկին նպատակս յայսոսիկ, եւ առ ի թեթեւացուցանել զդժուարութիւնս յառաջացեալս յերեսաց անյաջող պայմանացն վերոյիշելոց, Վարչութիւն ճեմարանիս զհետ եղեւ հնարաւոր միջոցաց եւ զհնարաւորսն անօրինեաց այսպէս:

Որոշեցաւ փոխանակ երից բաժանմանց վարժոցին իբրեւ ի տիպ ծխական դպրոցի ունել՝ միայն զմին ի վարժութիւն ուսանողաց մերոց ի դասախօսել անդ, քանի անհրաժեշտ էր հսկողութիւն Մանկավարժին ի վերայ նոցա, եւ քանի ոչ էր մեր տալ նմա օգնական զոք՝ յոր հաւատայր մանկավարժն զհսկողութիւն իւր՝ ի լինելն իւրում յայլում բաժնի՝ ի հսկել ըստ անհրաժեշտ պահանջիցն:

Բաժանմունք Վարժոցիս յանձն եղեւ պարոն Մեդրակայ Մանդինեան, որ ոչ միայն հանապազօր՝ այլ եւ ի հարկին յամենայն ժամու անձամբ ներկայ գտանէր դասատուութեան նորավարժիցն ուսանողաց, երբեմն յուշ առնելով նոցա զկարգ վարժութեան, եւ երբեմն ինքնին իսկ աւարտէր զդասախօսութիւնն յօրինակ եւ ի կրթութիւն վարժելոցն: Եւ զի այսպէս միշտ ներկայութիւն Մանկավարժին ո՛չ հայէր արդեօք ի նպատակ անդր մեր, յայտ է ի կատարեալն կրթութիւն ուսանողացն մերոց, եւ զի մի՛ նոքա՝ նորավարժքն յանգէտս անփոյթ մնայցեն պարտուց իւրեանց եւ հեղգայցեն, յուսացեալ, թէ Մանկավարժն առընթեր կայ՝ եւ լնու զթերին իւրեանց, այլ զի եւ ինքեանք իսկ նորավարժքն ազատ մտցեն յասպարէզ անդր դասախօսութեան եւ անցցեն ի գլուխ գործոյն, պարոն Մանդինեան նուազեցուցանէր տակաւ ի ժամ փորոյն զազդարարութիւնս իւր եւ զմիջամտութիւն: Նաեւ բացակայ իսկ երբեմն գտանէր, սակայն ըստ մանկավարժական կարգաց պահանջէր ի նոցանէ զհամար գործառնութեանց նոցա, եւ այսպէս կրթէր զնոսա եւ ի նոյն իսկ ի հսկել անձանց իւրեանց եւ գործոց: Յայս նպատակ հայէին արդարեւ եւ այն ամենայն գրաւոր եւ բերանացի հաշիւք երրակի ժողովոցն ըստ եօթնեկաց՝ յորս պարտ էր ներկայ գտանել նորավարժիցն ամենեցուն, որոց եւ նախագահէր պարոն Մանդինեան: Գործ երրակի ժողովոցս շաբաթական կազմէին ամբողջութիւն ինչ անբաժան, ի միումն միայն՝ի շաբաթ աւուրս՝ պահէր կարգ արձանագրութեան: Այս երրորդ ժողով բաց էր եւ առաջի այցելուաց՝ որք ցանկայինն: Ես իսկ անձամբ յաճախէ յայսոսիկ ժողովս, զի մարթացայց հետեւել ուղութեան գործոյն: Երբեմն ներկայ լինէին անդ եւ ոմանք յուսուցչաց:

Ժողովն որ ի շաբաթ աւուրս՝ անուանէր խորհուրդ, եւ նուիրեալ էր համարատուութեան՝ եթէ զի՞նչ գործեալ էր

նորավարժիցն յընթացս եօթնեկին անցելոյ, եւ խորհրդակցութեան՝ թէ յի՞նչ արդեօք ունին ձեռնարկել յառաջիկայն, յորս էր զի հաստատէր պարոն Մանդինեան զխորհուրդ ուսանողացն՝ եւ էր՝ զի հաղորդէր նոցա ինչ ինչ կարեւոր բացատրութիւնս, եւ հրահանգէր զնոսա ի զգուշութիւն յառաջիկային, յիշելով նոցա միշտ եւ զնախորդ հրահանգաց: Խօսէին ի ժողովի այդ զնիւթոց դասուցն՝ զորս ունէին աւանդել, եւ զվարուց աշակերտացն եւ առհասարակ զհանգամանաց դասուցն, թէ յորում էր յաջողութիւնն եւ յորո՞ւմ անյաջողութիւնն: Քննէին զգրաւոր հաշիւս դասատուաց եւ զնկատողութիւնս ընկերակցաց նոցա. եւ ինքն իսկ պարոն Մանդինեան հաղորդէր նոցա զայն ամենայն որ միանգամ գրաւեալ ունէին զուշադրութիւն նոցա յընթացս այնր եօթնեկի ըստ ամենայն հանգամանաց: Նոյնպէս եւ ի քնին առնուին եւ զյաջող կամ անհաջող ելս փորձառական դասուցն հանդերձ կարեւոր բացատրութեամբք քննչացն՝ որ ի նոցունց իսկ ուսանողացն եւ յայլոց ընկերակցաց նոցա. զժողովսն կնքէր ինքն պարոն Մանդինեան: Արդարեւ ի սկզբան անդ նորավարժք ցուցանէին անփորձութիւնս ինչ ի համարատուութեան՝ որ կատարէրն հրապարակաւ եւ ամենայն անկեղծութեամբ. այլ ուրախութեամբ տեսանել էր մեզ, զի հետզհետէ ըմբռնէին զմիտս եւ զխորհուրդ համարատուութեանցն, սովորէին համբերութեամբ լսել դատողութեանցն այլոց զգործոց իրեանց, եւ ըստ քաղաքավարութեան պատասխանել ընդդիմախօսացն եւ խոստովան լինել զսխալանս իրեանց: Հասու լինէին, եթէ զի՞նչ իցէ միաբանութեամբն գործել եւ խորհրդով, եւ թէ զիա՞րդ զգործ քան զանձնաւորութիւն նախադասել արժան է եւ թէ զի՞նչ իցէ միահամուռն պատասխանատու արդեանց իրացն լինել, եւ կամ անզգուշութեամբ խանգարել զգործ ինչ հանրական. ի մի բան, հասու լինէին ծանրութեան պատասխանատուութեան իրեանց: Նորավարժքն իբրեւ ի հայելւոջ տեսանէի ի ժողովս անդ, զճշգրիտ պատկեր գործոց իրեանց, թէ արդեօք դասախօսութիւնքն զոր դասախօսեն՝ արտաքին ցո՞յք ինչ իցեն, կամ լոկ ժամավաճառութի՞ւն, եւ թէ իցե՞ն արդեօք բաւական ի սաստել աշակերտացն առանց խոստանալոյ, եւ թէ վարժե՞ն արդեօք զնոսա ի բարոյական կարգս եւ ի կանոնս առանց աւելորդ բծախնդրութեան, եւ թէ պահե՞ն արդեօք անեղծ զեռանդն մանկան՝ ոչ իւիք արտաքս քան ըստ սահման ճշմարիտ եւ վայելուչ կրթութեան վազեալ, եւ թէ յաջողիցի՞ն արդեօք հեշտ եւ դիւրին յաչս եւ ի միտս մանկանցն ընծայել զուսումն՝ անկորուստ պահելով եւ զլրջութիւն. եւ թէ հաստատիցե՞ն զուսումն ի հիմունս բնականս, եթէ հեռի անդր մղիցեն զմանուկն ի կենաց եւ յազգայնութենէ. եւ հուսկ ուրեմն հասու լինէին, թէ ո՞րչափ ինչ դժուարութիւնք եւս մնան՝ կրթելոյ զանձինս յայսմ ամենայնի ի կարեւոր նկատումս ուսուցչութեան:

Որպէս ի վեր անդր ասացաւ, եթէ եւ այն երկոքին ժողովք սերտիւ իմն լծորդեալ էին խորհրդոց նոցա: Յընթացս միոյ եօթնեկի մին ի սովորական դասուց վարժոցիս լինէր «դաս փորձոյ» ի հինգ շաբաթի աւուրս, յորում ամենայն նորավարժք պարտաւորապէս ներկայ լինէին փորձոյ դասախօսութեան միոյ յընկերացն իրեանց. որպէս զի իւրաքանչիւր առանձին զդիտողութիւն իւրեանց եւ զտպաւորութիւն յանդիման կացուցեն ի խոհրդին ի քննել զնոսա: Առ այս եւ երկու երկու ի նոցանէ նշանակէին ըստ իւրաքանչիւր եօթնեկի իբրեւ ի պաշտօնէ դիտել զդասախօսութիւնն, եւ առաջի առնել խորհրդոյն մին՝ բանիւ բերանոյ, եւ միւսն՝ գրելով զմանր հանգամանս դասախօսին թէ՛ ըստ արտաքին եւ թէ՛ ըստ ներքին հանգամանաց: Նպատակ ժողովոյս էր, զի ի մէն մի եօթնեակս գէթ մի անգամ ամենեքին ուսանողքն ի միասին տեսցեն եւ լուիցեն զդասախօսութիւն ի

վարժոցին, քանի ոչ էր նոցա յամենայն աւուրս հասանել եւ ներկայ լինել ամենայն դասախօսութեանցն վարժոցին, ունելով իւրեանց առանձին պատրաստութիւն դասուց ի ճեմարանի. իսկ որոց միանգամ պատահէրն եւ զդասն պատրաստել եւ ի վարժոցն ի ժամու հասանել, այն ի կամս նոցա թողեալ էր: Ոչ առանց պատրաստութեան էր եւ փորձառականն դաս, այլ պարտիք ի վերայ կային նորավարժին կանխաւ առաջի առնել պարոն Մանկավարժին զգրաւոր ծրագիր դասուն ըստ մանրամասն հանգամանացն, զոր ի չորաքշաբաթի աւուրս քննէր առաջի ամենեցուն ի նախապատրաստական ժողովին եւ կանխաւ զգուշացուցանէր զդասախօսն չտալ տեղի թերութեանց, եւ կամ հաւանեալ գրաւոր բացատրութեան նորա, քաջալերէր զնա ըստ այնմ եւ գործել. տայր եւ հրահանգս ինչ կարեւորս ըստ հարկի: Ի խորհուրդս շաբաթ աւուրց, եթէ քննիչքն եւ եթէ պարոն Նախագահն քննէին, թէ ո՞րչափ ճիշդ վարեցաւ դասատուն ըստ հրահանգացն տուելոց, եւ թէ՛ զիա՞րդ խոտորեցաւ ի հրահանգացն, եւ թէ՛ զի՞նչ պատճառքն էին:

Այսչափ ինչ զներքին վարչութենէ վարժոցին եկից արդ տալ տեղեկութիւնս ինչ եւ զմիամեայ ընթացից վարժոցին. - Երկու երկու դաս առ օր յանձնեցաւ ուսանողաց Բ. Լսարանին. իսկ ուսանողք Ա. լսարանին ի Յունվար ամսոյ եւ այսր սկսան մասնակցել փորձառական դասուցն միայն: Եւ զի յաշակերտս վարժոցին դժուարին իմն եղեւ գումարել ի սկզբան, հարկ եղեւ կանխաւ տալ ուսանողացն հրահանգս առ այն, եւ սկզբն եղեւ ուսման ի վարժոցին ի 29 Սեպտեմբերի: Ի սկզբան՝ թիւ աշակերտացն եւ աշակերտուհեաց յաճախ փոփոխէր ի պատճառս յապաղելոյ ոմանց մտանել յուսումնարան, եւ ի պատճառս դասաւորութեան նոցա, յորոց բազումք էին՝ որ մտին յառաջին դասարան, յորժամ ուսուցիչքն կարգեցան ի ջանս հոգաբարձուաց, եւ մնացին մեզ տղայք 29, յորոց եօթնեւտասն՝ օրիորդք էին: Թէպէտ եւ ոմանց ի սոցանէ ուսեալ էր կանխաւ եւ ճանաչէին զգիրս, սակայն այնչափ անվարժք էին, մինչ զի հարկ եղեւ դասաւորել զնոսա ի մի եւ նոյն բաժնի՝ ուսանել եւ նոցա զմասն Ա. տարւոյ: Իբրեւ կենդրոնացուցիչ առարկայ ուսման ընտրեցաւ «Ազգ. ընտանեկան աշխարհ» պարոն Մեդրակայ Մանդինեան, յորոյ ի հիմունս յեցեալ՝ աւանդեցին մանկանց եւ ըստ այլ եւ այլ պատահական հանգամանաց ինչ ինչ տեղեկութիւնս զԱստուծոյ զմարդոյ եւ զբնութենէ. եւ զի փոքր էր առ օրին ժամ դասուցն, վասնորոյ եւ մեծ մասն պարապմանց տուաւ ի գրել եւ յընթեռնուլ ըստ նորագոյն եղանակի, այն է՛ ոչ ուրոյն հնչելով զբաղաձայսն, եւ ոչ առանձին այբբենարան ի գործ ածեալ: Ի վախճան տարւոյն ըստ արդեանցն երեւեցաւ, զի երեք աշակերտք եւ երեք աշակերտուհիք միայն մնացին ի նմին դասարանի, իսկ այլքն առհասարակ գովութեան արժանիք, եւ փոխեցին զդասարանս իւրեանց:

Ի վարժոցին անընդհատ յառաջ գնայր դասատուութիւնն ըստ կանոնի, եւ ընդհատէր ի տօնի աւուրս, յորս եւ ճեմարանս տօնէր: Այլ ի վերջին աւուրս տարւոյն թուլացաւ, այն ինչ մերձեցան, հասին աւուրք քննութեան նոյն իսկ ուսուցչացն ուսանողաց ի Ճեմարանի. սրոց ի հարկէ էր ամփոփել զուշ եւ զուրուշ ի պատրաստութիւն դասուց իւրեանց եւ ի քննութիւն: Աստանօր զառաջինն զգալի եղեւ եթէ՝ անհրաժեշտ է մեզ ունել եւ զայլ ոք օգնական ուսուցչի, որ եւ ի հարկին պատրաստ գտանիցի շարունակել զգործ նորավարժիցն ուսուցչաց, մինչ նոքա գայցեն ի պատրաստութիւն դասուց իւրեանց ի Ճեմարանի: Այս պակասութիւն օգնականի մինչեւ յայն զգալի եղեւ, զի հասին աւուրք քննութեան աշակերտաց վարժոցին, եւ չէր հնար եւ ոչ ումեք ի նորավարժ ուսուցչացն ներկայ լինել անդ ի քննելն

զաշակերտս իւրեանց. եւ առանձին քննեցին զնոսա ուսուցիչքն վարժարանին Վաղարշապատայ:

Նաեւ պէս պէս դժուարութեանց տարան նորավարժքն մեր ուսուցիչք, մինչեւ յաջողեցան զաշկերտս վարժոցին ընդելացուցանել կարգացն եւ կանոնաց, զորս ընկալեալ էր մեր: Եւ այս ամենայն ըստ մասին յառաջ գային յանփորձութենէ նորավարժիցն, եւ ըստ մասին՝ զի վարժոցն ընդ կրկին վարչութեամբ էր. այսինքն զերկուս ժամս աւուրն ընդ հսկողութեամբ վարչութեան Ճեմարանիս, եւ զմնացեալ ժամս աւուրն ընդ հսկողութեամբ վարչութեան ուսումնարանին Վաղարշապատայ. նաեւս կրկին վարչութիւնքս անկախ ի միմեանց վարէին, եւ որ ինչ պարտաւորիչ էր միումն, ոչ այնպէս էր եւ միւսումն. եւ այսպէս յառաջ գային այն ամենայն անյարմարութիւնք, յորս ստիպէին աշակերտքն պահ ըստ պահէ փոխել զպահպանութիւն կարգին, եւ այլապէս զգուշանալ:

Եւ որպէս զի սովորեսցին աշակերտքն ի մաքրութիւն, եւ մի՛ ընդ առաւօտ յամեսցեն գալ ի դասարան, եւ զի առհասարկ կատարեսցեն զպատուիրեալսն եւ ի տունս իւրեանց, հարկ համարեցաւ, զի նորավարժքն ուսուցիչքն ինքնին խօսեսցին ծնողաց աշակերտացն եւ ոչ ի ձեռն միջնորդի ուրուք, այն է ի ձեռն ուսուցչին Վաղարշապատայ. զի այնպէս անկատար մնային պատուէրքն տուեալք աշակերտացն եւ հարկ էր կրկնել եւ երեքկնել մինչեւ լսելի առնել եւ ծնողաց աշակերտացն: Բազում անգամ խանգարէին ընթացք դասուցն առ պակասութեան դասարանական պիտոյից, զորօրինակ գրոց, գրատախտակաց, քարեայ գրչաց, քանոնաց եւ այլոց այսպիսեաց. այնպէս զի հարկեցան ուսուցիչքս նորավարժք կազմել գանձարան ինչ փոքր յիւրեանս, եւ լնուլ զպիտոյսն պակասեալս: Առ ի զառաջս առնուլ այսպիսեաց անպատեհութեանց յապագայի, վարչութիւն ճեմարանիս արժան դատեցաւ պահանջել ի ծնողաց աշակերտացն առ իւրաքանչիւր՝ գումար ինչ որոշեալ ի սկզբան տարւոյն, եւ անթերի հոգալ զպիտոյս վարժոցին եւ միանգամայն ազատ մնալ ի տարապարտ ազդարարութենէն, զոր յանցելումն բազում անգամ կրկնեցին ի լուր ծնողաց աշակերտացն եւ ուսուցիչքն եւ այլք ոմանք, եւ դարձեալ անլուր մնացին եւ ապարդիւն: Նաեւ պակասութիւն մեծ էր արդարեւ եւ անյարմարութիւն կազմութեան վարժոցին, եւ նստարանաց նորա, որ եւ պատճառս անհանգստութեան տային մատաղահաս աշակերտացն, եւ բնականապէս նպաստէին նոցա յայլ ինչ դարձուցանել զուշադրութիւն իւրեանց ի ժամս դասուցն:

Յետ միամեայ փորձառութեան որոշեաց Մանկ. խորհուրդս. զի ճեմարանս առանձին ունիցի իւր զերիս բաժանմունս վարժոցին. առ որ որոշեաց խնդրել կանխաւ զհաճութիւն Վեհ. Հայրապետիդ, եւ ըստ այնմ միացուցանել զԺառանգաւորաց Դպրոցն ընդ Ճեմարանիս. այնպէս՝ զի որ գիշերօթիկքն էին ի նմին դպրոցի, առանձին զգուշաւոր քննութեամբ զետեղեսցին ի դասարանս դասարանս ճեմարանին ըստ համեմատութեան նոցա, եւ որ փոքունքն են՝ մնասցեն ի նմին դպրոցի, իբր ի վարժոցի, եւ յաւելցուք ի նոսա եւ զայլս եւս երթեւեկ աշակերտս: Այլ եւ ի նկատի առեալ՝ զի պակասին սենեակք ի Ճեմարանիս, եւ մանաւանդ զի ցանկալի էր մեզ հոգ ունել զծախուց նորա ի մասին տնտեսութեան, որոշեաց Մանկ. խորհուրդն, զի կցեսցուք ընդ վարժոցին եւ զառաջին դասարան ճեմարանիս, յանձնելով զկառավարութիւն նոցա, զվարժոցին եւ զԱ. դասարանին պարոն Սեդրակայ Մանդինեան, տալով նմա առ այժմ զոք յօժանդակ ուսուցիչ, ունել զտեղի նորա ի վարժոցին կամ զԱ. դասարանի, ի լինելն նորա ի միումն կամ ի միւսում:

Եւ զի աշակերտք Ժառանգաւորաց Դպրոցին հանապազօր յառաւօտու եւ յերեկոյի յաճախէին ի Ս. Եկեղեցի ի ժամասացութիւն, զայս եւս ի նկատի առեալ Մանկ. խորհրդոյն, որոշեաց տալ կատարել աշակերտաց ճեմարանիս զայն պարտաւորութիւն, առաքելով զնոսա օր ըստ օրէ ըստ առանձին կարգի, ի Ս. Եկեղեցի ի դպրութիւն եւ ի սպասաւորութիւն: Ընդ որոշումնս լիայոյս է Մանկ. խորհուրդս, եթէ յաջողիցի ճեմարանս պաշտօնեայս արժանաւորս պատրաստել Ս. Եկեղեցւոյ. որ եւ համաձայն գոլով ըղձից եւ նպատակի Վեհափառ Հայրապետիդ, ըստ բարեհաճ կամաց Ձերոց հաստատեցէք զայն եւ թոյլ ետուք ըստ այնմ առնել յառաջիկայ եւ յամենայն տարւոջ, եւ որ կատարեցաւ իսկ: Նա՝ փափագելի էր Վարչութեան ճեմարանիս՝ որպէս եւ ակն ունիմք յապագայի, զի եւ երկրորդ եւ երրորդ դասարանքն փոխադրիցին ի վարժոց անդր իբրեւ ի լրումն ամբողջութեան դպրոցական մասին. եւ ի Ճեմարանի աստ մնայցեն միայն դպրանոցական երեք դասարանքն եւ ճեմարանական երեք լսարանքն, որով եւ տնտեսութիւն ի ծախսն եւ կանոնաւորութիւն ի ներքին ընթացս ճեմարանին լինէր արդեօք:

Այսչափ ինչ զվարժոցէն եւ զվիճակէ վարժապետացուացն. այժմ անցցուք ի հաշիւս ճեմարանին, տալ տեղեկութիւնս եւ զներքին վիճակէ նորա:

Մանկ. խոհ. ի սկզբան անդ ուսումնական ամին անցելոյ՝ յետ որոշելոյ առ ժամն զառարկայս աւանդելիս եւ զթիւս դասուց՝ թէ ի կրկին լսարանս եւ թէ ի վեց դասարանս դպրանոցին, ի շարունակելն զդասս, սկսաւ կազմել եւ ծրագիր ինչ ընդհանուր, որով միայն մարթ էր տալ կանոնաւոր ընթացս ուսման եւ դասատուութեան: Ապաքէն ոչ նոր իմն է խնդիր ընդհանուր ծրագրին յուսումնարանս Հայոց. եւ ամենայն հոգաբարձուք ազգային ուսումնարանաց եւ Մանկ. խորհուրդք ի տեղիս տեղիս զբաղեցան եւ զբաղին զխնդրովս, սակայն դարձեալ կանոնաւոր եւ մշակեալ ծրագիր չէ այսօր եւ ոչ միոյ ուսումնարանի, նոյնպէս եւ ոչ Ճեմարանիս. վասն որոյ եւ յանցելումն ամի ամենայն լրջմտութեամբ ձեռն ի գործ արկ Մանկ. խորհուրդս կազմել զկարեւոր ծրագիր. եւ ակն ունիմք յայսմ ամի ի լումն ածել զայն ըստ կարի, եւ մատուցանել Վեհափառ Տէրութեան Ձերում ի հաստատութիւն: Իսկ զոր առ ժամն որոշեաց Մանկ. խորհուրդն՝ այսոքիկ էին առարկայք աւանդեալք ի Ճեմարանիս եւ թիւք դասուցն՝ յանցելումն ամի:

ՅԱ. Լսարան, առարկ. 2բթ. դասք.

Աստուածաբանութիւն	2
Պատմ. ընդհ. եկեղ.	2
Նոր Մատեն. Հայոց	4
Քննակ. Քերականութիւն	1
Ընդհ. Գրակ. Պատմ.	2
Ռուս. Գրականութիւն	2
Տրամաբանութիւն	3
Հոգեբանութիւն.	3
Գերմաներէն	3
Գաղղիերէն	2
Ֆիզիքական աշխարհագր.	2
	26

ՅԲ. Լսարարան, առարկ. 2բթ. դասք.

Աստուածաբանութիւն	2
Պատմ. ընդհ. եկեղ.	2

Ընդհանուր Գրականութիւն.....2
Ռուս. Գրականութիւն.....2
Մանկավարժութիւն.....3
Հոգեբանութիւն.....6
Բար. փիլիսոփայութիւն.....3
Գերմաներէն.....3
Տարրալուծութիւն.....1

24

յԱ. Դասարարան, առարկ. 2բ. դասք.

Կրօն (Սրբ. պատմ.).....3
Հայոց լեզու.....5
Ռուսաց լեզու.....5
Թուաբանութիւն.....4
Բնակ. պատմութիւն.....2
Աշխարհագրութիւն.....2
Ձայնագրութիւն.....4
Նկարչութիւն.....2
Գեղագրութիւն.....3

30

յԲ. Դասարան, առարկ. 2բ. դասք.

Կրօն (Սրբ. պատմ.....3
Հայոց լեզու.....5
Ռուսաց լեզու.....4
Թուաբանութիւն.....4
Բնակ. Պատմ.....3

Աշխարհագրութիւն.....2
Ձայնագրութիւն.....4
Նկարչութիւն.....2
Գեղագրութիւն.....3

30

յԳ. Դասարան, առարկ. 2բթ. դասք

Կրօն.....2
Հայոց լեզու.....4
Ռուսաց լեզու.....4
Գաղղիերէն.....4
Ալգէբրայ եւ Թուաբան.....4
Աշխարհ. Հայաստանի.....2
Աշխարհագր. Ընդհ.....3
Բնական պատմ.....3
Ընդհ. Պատմ.....2
Ձայնագրութիւն.....2
Գեղագրութիւն.....2

32

ի Դ. Դասարան առարկ. 2բթ. դասք.

Կրօն.....3
Հայոց լեզու.....5
Ռուսաց լեզու.....5
Գաղղիերօն.....4
Ալգէբրայ.....2
Երկրաչափութիւն.....2

Հայոց պատմ. 2
Ընդհ. Պատմ. 2
Բնակ. Պատմ. 3
Ռուսաց Աշխարհագր. 2

30

ի Ե. Դասարան առարկ. շբթ. դասք.

Եկեղեց. պատմութիւն.....1
Հայոց լեզու.....3
Հայոց մատենագր. 3
Ռուսաց լեզու 4
Գաղղիերէն.....3
Մատեմատիկայ 3
Ֆիզիքայ.....3
Հայոց պատմութիւն 2
Ռուսաց պատմութիւն.....1
Ընդհ. Աշխարհագր. 2

30

ի Զ. Դասարան առարկ. շբթ. դասք

Տօմար եւ կարգ
Աստուածպաշտութեան.....1
Հայոց լեզու.....2
Հայոց Մատենագր. 3
Ռուսաց լեզու 3
Գաղղիերէն.....3
Մատեմատիկայ 3

Ֆիզիքայ.....3
Հայոց Պատմութիւն.....3
Ընդհ. Պատմութիւն.....3
Ֆիզիք. Աշխարհագ. 2
Տիեզերագրութիւն 2
Բնախօսութիւն եւ
Առողջապահութիւն 2

30

Մանկ. խորհուրդս ի սկզբան անդ անցելոյ 1881-1882 ուսումնական ամին ի քնին առ ուշադրութեամբ եւ զկազմակերպութիւն դասարանաց ճեմարանիս եւ արդիւնքն երեւեցան, զի աշակերտք զետեղեալ են ի դասարանս այնպէս, զի չհամեմատին իրերաց ոչ ըստ հասակի եւ ոչ ըստ պատրաստութեան: Այս հանգամանք կազմակերպութեան դասարանացն ծանրացուցանէր զգործն. եւ արգել յառաջադիմութեան աշակերտացն առհասարակ լինէր: Առ ի զառաջս առնուլ չարեացս, անդամք Մանկ. խորհրդոյն փութացան ճշդիւ եւ գրեթէ խստիւ պահանջել յաշակերտացն զդասս, հոգացեալ ընդ նմին եւ զյորդորանացն՝ զի լրջմտութեամբ իմն գայցեն աշակերտք յընթերցասիրութիւն: Առ այս գործ դժուարաձեռն, որչափ ինչ առնելի էր ի միում ամի, փութացաք ի նոյն, սակայն եւ այնպէս անակնուելի էր կատարեալն յաջողութիւն:

Յանցելումն ամի ի լինելն մեր հանդիսատես Է-րդ Տարեդարձին Ճեմարանիս, եւ մեք լուաք ի մեծ զարմացումն՝ թէ յամենայն աշակերտաց ճեմարանիս ինն աշակերտք միայն մնացին ի դասարանս իւրեանց յորս էին, իսկ հարիւր քսան աշակերտք փոխադրեցան ըստ կարգի ի բարձրագոյն դասարանս զարմացաք արդարեւ ընդ նորանշան երեւոյթն,

եթէ $^{1}/_{45}$ մասն միայն յետադէմ էին, իսկ $1^{2}/_{45}$ մասն ըստ արժանւոյն յառաջացեալ: Մինչդեռ այլուր գովաբանեն եւ ծափահարեն առ յառաջադիմութեան $^{5}/_{4}$ մասին աշակերտաց, եւ ոչ յաշակերտս ժողովեալս ընտրանաւ՝ լուեալ է երբէք նոյնօրինակ հսկայաքայլ յառաջադիմութիւն: Զի ոչ սնապաշտութեան է տեղիս, այլ գործոյ, պարտիմ յանդիման կացուցանել զվիճակ ճեմարանիս այնպէս, որպէս եւ է. անկեղծութեամբ իսկ ասեմ, թէ ի պաշտօնավարութեան իմում յանցելումն ճշմարտիւ հասու եղէ, թէ չէր Ճեմարանիս յառաջադիմութիւնն այնպէս, որպէս խոստանային մեզ թիւքն ի հաշուին:

Այո՛, հաւատամ, զի յառաջին ամս բացման Ճեմարանիս մարթ էր մեծի յառաջադիմութեան ակն ունել, քանի հոգ եւ խնամ ունէր վարչութիւնն յընտրութիւն աշակերտացն, նուիրակս առաքեալ յայլ եւ այլ տեղիս, եւ որք՝ որպէս եւ ինձ յայտնի է ի լրոյ, մեծաւ զգուշութեամբ կատարէին զպաշտամունս իւրեանց: Իսկ ընտրութիւնքն՝ որում ներկայ եղէ յանցելումն ամի, ոչ գոհացուցիչ էին արդարեւ, զոր եւ ցաւերով յայտնեմ Վեհափառութեան Ձերում: Նաեւ յայսմ ամի ոչ էր իսկապէս ընդունելութիւն աշակերտաց, այլ որոշեալ էր արդէն միացուցանել զԺառանգաւորաց Դպրոցն. ուստի եւ անմարթ էր առնել ընտրութիւն ինչ. յայսմհետէ ոչ ի շնորհուկս ումեք, այլ միայն յօգուտ Ճեմարանիս հայեցեալ պարտ է ըստ կարգի ընտրել եւ ընդունել զաշակերտսն. նաեւ գլխաւոր այն է, զի ջանասցուք հաստատութիւն ազգային յընդհանուրս կացուցանել զՃեմարանս, եւ ոչ զմին ի նահանգաց կամ ի գաւառաց նախադասեալ այլոցն ամենեցուն, եւ միումն պատճառ բարօրութեան լինել եւ զայլովք զանց առնել: Այսօր իսկ թիւ աշակերտաց մերոց՝ որ ի Վաղարշապատայ եւ յԵրեւանայ եւ ի շրջակայից նոցա, յանհամեմատն առաւելու քան զայլոցն. իսկ ի բնակչացն

Պարսկաստանի երկու աշակերտք միայն են: Են եւ այլ եւս գաւառք եւ ի նոյն իսկ նահանգէն Երեւանայ՝ ուստի ոչ է ի Ճեմարանիս աշակերտ եւ ոչ մի:

Ըստ որոշման Մանկ. խորհրդոյն եղեն կիսամեայ գրաւոր քննութիւնք ի վերջն Դեկտեմբերի, յորս երեւեցաւ զի լեզուն Հայոց ոչ որպէս արժանն է՝ յառաջադէմ էր ընդհանրապէս ի Ճեմարանիս, եւ աստիճան մտաւորական զարգացման աշակերտացն ընդհանրապէս ոչ բարձր էր: Առ այս ի նկատի առեալ Մանկ. խորհրդոյն զպահանջս դասատուի լեզուին Հայոց՝ յաւելուլ զժամանակ գրաւոր աշխատութեան աշակերտացն, որպէս եւ յայտնի եղեւ յարդեանց քննութեանն, որոշեաց յաճախակի կրկնել զգրաւոր պարապմունսն ըստ այլ եւ այլ առարկայից, եւ ի տարեկան բանաւոր քննութիւնսն լծորդել եւ զգրաւոր քննութիւն ի գլխաւոր առարկայից, որպէս զի մի՛ վրիպեսցուք, որչափ եւ հնարն իցէ՝ ի տեղափոխելն զաշակերտս: Նոյնպէս ցանկալի լինելով մեզ նպաստել մտաւորական զարգացման աշակերտաց՝ որոշեցաք տալ գրականական երեկոյս յամենայն երկու եօթնեակս, յանձնեալ ուսանողաց կրկին լսարանացն՝ ի գիր առնուլ յօդուածս ինչ ի հայկական դպրութենէ եւ ընթեռնուլ ի լուր ընկերակցացն: Զայս որոշումն օգտակար ոչ եղեւ մեզ յարդիւնս ածել յանցելումն ամի. քանզի ուսանողք ծանրաբեռնեալ էին դասուք իւրեանց եւ գործնական աշխատութեամբք: Իսկ յայսմ ամի փոյթ յանձին կալայց իրագործել զորոշումնս Մանկ. խորհրդոյն եւ ըստ այնմ տալ գրականական երեկոյս, ընդ որ լիայոյս եմք, եթէ օգուտ մեծ ընծայիցեմք մտաւորական զարգացման ուսանող ճառախօսացն եւ ունկնդիր աշակերտաց: Յանցելումն ամի զերիս եւ եթ գրականական ժողովս յաջողեցաք տալ, մի՛ ի տօնի Ս. Վարդանանց զօրավարաց, մի՛ ի տօնի Ս. Սահակայ եւ Ս. Մեսրոպայ եւ մի՛ ի տօնի Ս. Հօրն մերոյ

Գրիգորի Լուսաւորչին ելին ի Վիրապէն, յորս ակն յայտնի երեւեցաւ, զի մարթ է շարունակել զայն յայսմ ամի ըստ աենայն կանոնաւորութեան: Ի տօնական աւուրսն յայնոսիկ ճառախօսեցին նաեւ ոմանք յուսուցչաց Ճեմարանիս՝ եւ շքեղ իմն փայլ յաւելին ի հանդէսն: Ի դէպ է ինձ եւ աստ խոստովան լինել, եթէ կարեւոր է արդարեւ մասնակցութիւն ուսուցչաց ի գործս այսպիսիս:

Մանկ. խորհուրդն առ ի բարձրացուցանել զմտաւորական զարգացումն աշակերտաց, ուշադիր եղեւ եւ ի մատենադարանն, եւ ընտրեաց ի մատենապետ զպարոն Փիլիպպոս Վարդանեան, տալով նմա օգնական զմին յուսանողաց բ. լսարանի զՄարգիս Տ. Գաբրիէլեան, այլ ցաւ է ինձ ասել, զի զուրկ է մատենադարան մեր եւ ի կարեւոր գրոց՝ մանաւանդ յընթերցանելեացն, ըստ որում եւ անբաւական ի լրացուցանել զպիտոյս աշակերտաց, թողումք ասել թէ՛ ոչ համեմատի ամենեւին ցանկութեան Մանկ. խորհրդոյն: Հարկ ի վերայ կայ եւ ամենայն ուսումնարանի տալ գումար ինչ որոշեալ ամ ըստ ամէ առ ի ձեռս բերել զգիրս օգտակարս ընթերցանութեան, բայց Ճեմարանիս առ այս յաւելուն բազում արգելք եւ խոչընդոտք:

Առ ի նպաստել կրօնական եւ բարոյական դաստիարակութեան աշակերտաց Ճեմարանիս ըստ որոշման Մանկ. խորհրդոյն մեկնեն աշակերտաց զՍ. Աւետարանն Գեր. Գրիգոր Սրբ. Աղափիրեան եւ Արժ. Կիւրեղ վարդապետ Սրապեանց կցորդեալ նմին եւ զբարոյական խրատս եւ դարձուցեալ զուշադրութիւն աշակերտացն յայլ եւ այլ թերութիւնս նոցա:

Այլ եւ զներքին կացութենէ Ճեմարանիս, պարտ է ինձ յայտնել. զի ուսանողք լսարանաց կառավարեն զամենայն ինչ, սկսեալ ի խոհանոցէ մինչեւ ի թանգարան ֆիզիքական գործեաց՝ ընդ պատասխանատուութեամբ վարչութեան

ըստ առանձին հրահանգաց, որով թեթեւացուցին ըստ մասին զգործ վարչութեանս, եւ ինքեանք եւս ընդելացան ուսումնարանական կառավարութեան: Ցաւելում եւ զայն՝ զի ի Յուլիս ամսոյ եւ այսր ուսանողք սկսան կատարել եւ զպաշտօն օգնական վերակացուի, եւ ակն ունելի է՝ եթէ Ճեմարանս ընծայեսցէ առ յապայն ոչ միայն մանկավարժ ուսուցիչս, այլ կառավարիչս ի պէտս ազգային ուսումնարանաց, որոց պակասութիւնն արդարեւ զգալի է այսօր ամենայն ուրեք: Ի նկատի ունէաք մանաւանդ եւ զայն, զի կառավարութիւն ո՛ եւ է այսպիսի հաստատութեան՝ եթէ յանձն իցէ աշակերտաց. խաղաղ եւ կանոնաւոր եւս ընթայնացեն ներքին կեանք հաստատութեանն, որպէս եւ փորձն յանդիման կացոյց մեզ:

Եւ այս խորին համոզումն է մեր, եթէ ուղղութիւնս արդիւնաբեր եւս լինիցի յապագայի, եւ Ճեմարանս մտցէ արդեօք ի շաւիղ ինչ այնպիսի, ընդ որ արտաքս ելանել ոչ եւս լինիցի նմա յայսմ ապահով եմք մեք:

Եւ ժամանակ գործառնութեան Ճեմարանիս է այսպէս բաժանեալ ըստ որոշելոյ Մանկ. Խորհրդոյն:

$5^1/_2$ - $6^5/_4$ Աղօթք, թէյ եւ հանգիստ

$6^5/_4$ - $7^5/_4$ Սերտողութիւն

$7\ ^5/_4$ - 8 Հանգիստ

8 - 8^{55} Ա. դաս

8^{55} - 9^5 հանգիստ

9^5 - 10 Բ. դաս

10 - 10^{45} Նախաճաշ եւ հանգիստ

10^{45} - 11^{40} Գ. դաս

11^{40} - 11^{55} Հանգիստ

11^{55} - 12^{50} Դ. դաս

12^{50} - 1^{5} Հանգիստ

1^{5} - 2 Ե. դաս

2 - 5 Ճաշ եւ հանգիստ

5 - 7 Սերտողութիւն

7 - $7^{1}/_{4}$ Հանգիստ

$7^{1}/_{4}$ - $7^{5}/_{4}$ Ընթրիք

$7^{5}/_{4}$ - $8^{1}/_{2}$ Հանգիստ

$8^{1}/_{2}$ - Աղօթք եւ ննջեսցեն:

Յետ աղօթիցն $9^{1}/_{2}$ ժամ պարապեսցին աշակերտք Ե. եւ Զ. դասարանաց եւ Ա. եւ Բ. լսարանաց որոց պէտք իցեն:

Միայն ի շաբաթ երեկոյս եւ ի նախատօնակս տօնիցն, յորս աշակերտք վաղայարոյց գնան յեկեղեցի, չլինի սերտողութիւն, եւ հանգիստն երեկոյեան կանխէ ժամու միով յառաջ քան զայս սահման:

Նոյնպէս եւ ի կիւրակէ եւ ի տօնի աւուրս նախաճաշիկն լինի զոյգ ընդ թէյին յետ արձակման եկեղեցւոյն, եւ ճաշն կանխէ երկու ժամուք յառաջ, եւ յերեկոյին սերտողութիւնն աւարտի ի միում ժամու:

Ցուցակ դասուց ի շաբաթ աւուրս

8 - 8^{40} Ա. դաս

8^{40} - 8^{50} Հանգիստ

8^{50} - 9^{50} Բ. դաս

9^{50} - 10^{15} Նախաճաշ եւ հանգիստ

10^{15} - 10^{55} Գ. դաս

10^{55} - 11^{10} Հանգիստ

11^{10} - 11^{50} Դ. դաս

11^{50} - 12^{5} Հանգիստ

12^{5} - 12^{45} Ե. դաս

12^{45} - 1 Հանգիստ

1 - 2 Մեկնութիւն Աւետարանի եւ խրատ:

Զայս առանձին ցուցակ որոշեաց Մանկ. խորհուրդն առ այն՝ զի ժամ լիցի եւ մեկնութեան սուրբ Աւետարանին եւ բարոյական խրատուցն յետ աւարտելոյ օրական դասուցն որպէս տեսանի ի ցուցակին:

Իսկ զաղօթս աշակերտաց այսպէս կարգաւորեաց Մանկ. խորհուրդն:

Աղօթք առաւօտեան

Ա. Հայր մեր որ յերկինս:
Բ. Տէր եթէ զշրթունս իմ բանաս:
Գ. (յաւուրս աձ. բձ. գձ. դձ.) Լոյս արարիչ լուսոյ (յաւուրս ակ. բկ. գկ. դկ.) Անեղանելիդ Աստուած:
Դ. Զառաւօտու զաղօթս եւ զբանաւոր պաշտօնս:
Ե. Գլուխ մի բանից Ս. Աւետարանի (ըստ ունելոյ օրինակին թարգմանութեանն Հայոց):
Զ. Օրհնեսցուք զՏէր յամենայն ժամ. յամենայն ժամ օրհն.:

Աղօթք ի սկսանելն զդասս յառաջին ժամու

Հայր մեր յԱ. եւ Բ. դասարանս
Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա յԳ. ի Զ. դասարանս
եւ յԱ. եւ Բ. լսարանս

Աղօթք յառաջ քան զնախաճաշիկն, զճաշն և զընթրիս

Հայր մեր որ յերկինս:
Աղօթք յետ նախաճաշին, ճաշու և ընթերաց
Զլիութիւն սեղանոյս:

Աղօթք ի վերջ դասուց յաւարտ հինգերորդ դասին

Հայր մեր որ յերկինս:

Աղօթք երեկոյեան

Ա Հայր մեր որ յերկինս:
Բ. Զհանգստեան զաղօթս:
Գ. Փառք քեզ տէր Աստուած:
Դ. Հրեշտակ զուարթուն:
Ե. Ողորմութիւն քո, Տէր, զհետ մեր եկեսցէ:

Ցամին 1880-1881 130 աշակերտք ներկայ գտան ի քննութեան. մին ի սոցանէ արձակեալ էր ըստ որոշման նախորդ Մանկ. ժողովոյն, իսկ 124 աշակերտք ի Սեպտեմբերի հաւաքեցան ի Ճեմարանս: Ցընթացս ամին անցելոյ ընկալեալ

եղեն այլ եւս 55 աշակերտք, ուստի եւ թիւ աշակերտաց միահամուռն եղեւ 179 յանցեալ 1881-1882 ուս. ամին, որք եւ զետեղեցան յերկոսին լսարանս եւ ի վեց դասարանս ըստ այսմ.

յԲ. լսարանի	7 ուսանողք
յԱ. լսարանի	14 ուսանողք
ի Զ. դասարանի	19 աշակերտք
ի Ե. դասարանի	22 աշակերտք
ի Դ. դասարանի	23 աշակերտք
յԳ. դասարանի	24 աշակերտք
յԲ. դասարանի	37 աշակերտք
յԱ. դասարանի	33 աշակերտք

Ընդ. ամենայն ուսանողք 21 եւ աշակերտք 158. համագումար 179:

Ցուցակ աշակերտաց, թէ ուստի՞ իցեն:

Ի. ՌՈՒՍԱՍՏԱՆ – 144

Ա. ԲԵՍԱՐԱԲԻՈՅ ՎԻՃԱԿ – 13

Քիշնեւ	2
Ն. Նախիջեւան	4
Նիսվիթա գիւղ	1
Թօփթի գիւղ	1
Օրբազար	2
Խարասուբազար	3
	13

Բ. ԱՍՏՐԱԽԱՆԱՅ ՎԻՃԱԿ – 5

Աստրախան	1
Մոզդոկ	1
Ղզլար	1
Ղարաչալիլ գիւղ	1
Արմաւիր	1
	5

Գ. ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՎԻՃԱԿ – 26

1. Տփխիս	2
Մանգլիս գիւղ	1
Ջալալօղլի	2
Վարդաբլուր	1
Օձուն	1
Դիլիջան	2
Պօղոսքիլիսայ	1
Ղոշխոթան	1
Թելաւ	2
Սղնախ	1
Ջաքաթալայ	1
Քութայիս	2
	17

2. Ախալցխայի փոխանորդութիւն

Ախալցխայ	4
Ծուղրութ գիւղ	1
Սուլդայ	1
	6

3. Գորուայ փոխանորդութիւն

Գորի	1
Ցխինվալ գիւղ	1
	2

4. Գանձակայ փոխանորդութիւն

Գանձակ	1
	1

Դ. ԱՐՑԱԽՈՒ ՎԻՃԱԿ – 16

1. Շուշի	4
Հատրուդ գիւղ	1
Խլաթաղ	1
Նորշէն	1
Փիրաջամալ	1
	8

2. Նուխուայ փոխանորդութիւն

Նուխի	3
Նիժ գիւղ	2
Վարդաշէն	2
Դաշբուլաղ	1
	8

Ե. ՇԱՄԱԽՈՒ ՎԻՃԱԿ – 3

Սաղիան գիւղ	1
Խաչմազ	1

Գիրք	1
	3

Զ. ԵՐԵՒԱՆԱՅ ՎԻՃԱԿ – 81

1. Երեւանայ փոխանորդութիւն

Երեւան	17
Չիդամլու գիւղ	1
Դաւալու	1
Օվայ	1
Ապարան	2
Փարաքար	1
	23

2. Ալեքսանդրապոլու փոխանորդութիւն

Ալէքսանդրապոլ	5
Մեծ Ղարաքիլիս գիւղ	3
	8

3. Հին Նախիջեւանի փոխանորդութիւն

Աստապատ գիւղ	1
Ագուլիս	3
Փորադաշտ	1
	5

4. Տաթեւու փոխանորդութիւն

Տաթեւ գիւղ	3
Մեղրի	2

Լորի	1
Դարապաս	1
Քաջարանց	1
Բռնակոթ	1
Արջաձոր	1
Խնձորէսկ	1
	11

5. Ս. Էջմիածնի գործակալութիւն

Վաղարշապատ գիւղ	15
Աշտարակ	3
Օշական	1
Ֆրանգանոց	1
Ալիբէգլու	1
Ջէյվայ	1
	22

6. Նոր Բայազիտու գործակալութիւն

Նոր Բայազէտ	2
	2

7. Սուրմառուի գործակալութիւն

Իգդիր գիւղ	3
Իգդիրմաի	1
Բլուր	1
Հ. Էվջիլար	1
	6

8. Արմաւիրի գործակալութիւն

Ղուզիկի - տան	1
	1

9. Թալինի գործակալութիւն

Թալին	1
Թաշիսալայ	1
Ադիաման	1
	3

II. ՏԱՃԿԱՍՏԱՆ – 32

Ա. ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆ - 13

Հին Բայազէտ	1
Իւչքիլիսէի վանք	1
Արաբկիր	2
Երզնկայ	1
Վան	4
Տիգրանակերտ	3
Մուշ	1
	13

Բ. ԱՆԱՏՈԼԻԱՅ – 10

Պիլեճիկ	1
Իւնիա	1
Պրուսա	3
Տրապիզօն	1
Շ. Քարահիսար	1

Սեբաստիա	1
Կուտինա	1
Նիկոմեդիա	1
	10

Գ. ԿԻԼԻԿԻԱ – 2

Այնթափ	2
	2

Դ. ԵՒՐՈՊԱԿԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆ – 7

Կ. Պոլիս	5
Աղրիանուպոլիս	1
Ռօդոստոյ	1
	7

III. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ – 2

Դավրէժ	1
Ասպահան	1
	2

IV. ՌՈՒՄԱՆԻԱ – 1

Ֆոքշանի	1
	1

Մանկավարժական խորհուրդս ի վախճան ուս. ամին անցելոյ այսպէս որոշեաց կատարել զքննութիւն աշակերտացն: Զրկել ի քննութենէ զայնոսիկ աշակերտս՝ որք յընթացս դասուցն ոչինչ յառաջադիմութիւն ցուցին, եւ քննել զյառաջադէմսն միայն յառարկայսն՝ զորս աւարտեցին: Իսկ ի մատեմատիքական առարկայս եւ ի լեզուս՝ քննեսցին ի գրութեան միայն: Ըստ այսմ.

Ա. Դասարան

Ս. Պատմութիւն	բանաւոր
Հայոց լեզու	գրաւոր
Ռուսաց լեզու	գրաւոր
Թուաբանութիւն	գրաւոր

Բ. դասարան

Ս. Պատմութիւն	բանաւոր
Հայոց լեզու	գրաւոր
Ռուսաց լեզու	գրաւոր
Թուաբանութիւն	գրաւոր

Գ. դասարան

Ս. Պատմութիւն	բանաւոր
Հայոց լեզու	գրաւոր
Ռուսաց լեզու	գրաւոր
Ֆրանսերէն	գրաւոր
Թուաբանութիւն	գրաւոր եւ բանաւոր
Ալգեբրա	գրաւոր
Հայաստ. Աշխարհագր.	գրաւոր եւ բանաւոր

Աշխարհագրութիւն	բանաւոր
Բուսաբանութիւն	բանաւոր
Զայնագրութիւն	բանաւոր

Դ. դասարան

Կրօն	բանաւոր
Հայոց լեզու	գրաւոր
Ռուսաց լեզու	գրաւոր
Ֆրանսերէն	գրաւոր
Ալգեբրա	գրաւոր
Երկրաչափութիւն	գրաւոր
Ռուսաստ. Աշխարհ.	բանաւոր
Բնական Պատմութիւն	բանաւոր

Ե. դասարան

Հայոց լեզու եւ Մատեն.	գրաւոր
Ռուսաց լեզու	գրաւոր
Ֆրանսերէն	գրաւոր
Ալգեբրա	գրաւոր
Երկրաչափութիւն	գրաւոր
Ֆիզիքա	գրաւոր
Ռուսաց Պատմ.	բանաւոր
Եւրոպ. Աշխարհագր.	բանաւոր
Ֆիզիք Աշխարհագր.	բանաւոր

Զ. դասարան

Հարցաքննութիւն յամենայն առարկայից
եթէ բանաւոր եւ եթէ գրաւոր

Ա. լսարան

Աստուածաբանութիւն	բանաւոր
Քննակ. քերականութ.	գրաւոր եւ բանաւոր
Ռուսաց գրականութ.	գրաւոր եւ բանաւոր
Գերմաներէն	գրաւոր
Ֆրանսերէն	գրաւոր
Ընդհ. գրականութիւն	գրաւոր
Հոգեբանութիւն	բանաւոր
Տրամաբանութիւն	բանաւոր

Բ. լսարան

Ընդհ. Եկեղ. պատմ.	բանաւոր
Ռուսաց գրականոթ.	գրաւոր
Ընդհ.	գրաւոր
Գերմաներէն	գրաւոր
Հոգեբանութիւն	բանաւոր
Բարոյական. Փիլիսոփ.	բանաւոր
Մանկավարժութիւն	բանաւոր

Յուցակ փոխադրութեան աշակերտաց

	Փոխ արդեալք	Ավարտողք	Մնացողք	Միամեայ արձակուրդ առացողք	Արձակեալք ըստ կանոնաց	Արձակեալք ըստ որոշ-ման Ս. Ժ.
յ Բ. լսարանէ	7	_	_	_	_	_
յ Ա. լսարանէ	12	_	2	_	_	_
ի Զ. դասարանէ	14	4	_	1	_	_
ի Ե. դասարանէ	10	_	9	1	_	2
ի Դ. դասարանէ	12	_	7	_	1	3
յ Գ. դասարանէ	13	_	7	_	3	1
յ Բ դասարանէ	19	_	12	_	_	6
յԱ. դասարանէ	23	_	8	_	_	2
	110	4	45	2	4	14

Չորեցուն աշակերտաց Զ. դասարանի հարկ եղեւ տալ վկայական, եթէ օրհնութեամբ Վեհափառ Հօրդ աւարտեցին նոքա զդպրանոցական շրջանն, որք են. Ստեփաննոս Թորոսեան Ասպահանցի, Գրիգոր Ղարիբեան Բագրեւանդացի, Համբարձում Սաֆարեան Աստրախանցի եւ Յովհաննէս Տ. Գրիգորեան Մեղրեցի: Ոչ աւելորդ է արդեօք յիշել աստանօր, զի մին ի չորիցս Համբարձում Սաֆարեան, վերադարձեալ ի հայրենիս իւր եւ ի 24 Օգոստոսի մաշեալ

ի թոքախտութենէ՝ յոր տառապէր յերկուց ամաց հետէ, կնքեաց զկեանս իւր:

Արդ՝ ըստ հաշուիս երեւի, զի աշակերտք 62 առ հարիւր փոխադրեցան, 25 առ հարիւր մնացին ի դասարանս, ուր էին՝ եւ գրեթէ 8 առ հարիւր արձակեցան. անշուշտ եմք զի կանոնաւորեսցի այս թիւ առ յապայն, քանզի ներդաշնակ եւս կազմակերպեցան այժմ դասարանքն:

Յանցեալ 1881-1882 ուս. ամին դասատուք Ճեմարանիս էին.

Գեր. Գրիգոր Եպիսկոպոս Աղափիրեան. Կրօն եւ ընդհ. եկեղ. պատմ.	– շաբաթական 14:
Գեր. Արիստակէս Եպիսկոպոս Մեդրակեան. Կրօն եւ Հայոց լեզու.	– շաբաթական 15 դաս:
Արժ. Կիւրեղ վարդապետ Սրապեանց. Կարգ Աստուածպաշտ. Տօմար եւ Հայոց լեզու.	– շաբաթական 15 դաս:
Արժ. Ղեւոնդ վարդապետ Յովակիմեան. Ձայնագրութիւն.	– շաբաթական 12 դաս. յորոց 2 խմբին երգչաց:
Պարոն Ս. Մանդինեան. Տրամաբանութիւն, Մանկավարժութիւն, Բարոյակ. Փիլիսոփայութիւն, Հոգեբանութիւն եւ գործնական պարապմանց ղեկավարութիւն.	– շաբաթական 24դաս:

Պարոն Փիլիպպոս Վարդանեան. Գերմաներէն, Ընդհ. Պատմ., Ընդհ. Ռուս. Գրակ. եւ Ընդհ. Աշխահագրութիւն.	– շաբաթական 24 դաս:
Պարոն Ստեփաննոս Պալասանեան. Հայ. Պատմ. եւ Ֆրանսերէն.	– շաբաթական 20 դաս:
Պարոն Կարապետ Կոստանեան. Հայ. Պատմ., Հայ. Մատեն., Քննական քերակ., Հայաստ. Աշխարհագրութիւն եւ Եկեղեցական Պատմութիւն.	– շաբաթական 16 դաս:
Պարոն Մարտիրոս Սիմէոնեան. Մատեմ., Տիեզերագրութիւն.	– շաբաթական 20 դաս:
Պարոն Բժիշկ Գրիգոր Տէր Գրիգորեան. Բնագիտ. Բնակ. Պատմ. Բնախօսութիւն եւ Առողջապահութիւն.	– շաբաթական 16 դաս:
Պարոն Մանդէն Մանդինեան. Ռուսաց լեզու եւ Ռուսաց պատմ.	– շաբաթական 21 դաս:
Պարոն Բարսեղ Բաստամեան. Ընդհ. եւ Ռուսաց աշխարհագրութիւն, Ռուսաց լեզու.	– շաբաթական 14 դաս:
Պարոն Մարտիրոս Քէրէսթէճեան. Գեղագրութիւն.	– շաբաթական 8 դաս:

Պարոն Առաքել Սագինեան. Գծագրութիւն եւ Նկարչութիւն.	– շաբաթական դաս. յորոց 2 յետ ճաշու՝ ցանկացողաց:	6
Պարոն Ռուբէն Ռուբինեան. Տաճկերէն.	– շաբաթական դաս:	5
Պարոն Ոսկան Յովհաննիսեան. Պարսկերէն.	– շաբաթական դաս:	2

Ի սկզբն ամին յիմ վերայ ծանրացան երեքտասան դասք՝ Ֆիզիք. Աշխարհագրութեան, Բնական Պատմութեան եւ Տարրալուծութեան: Ուսուցիչք ընդհանրապէս ըստ կանոնի յաճախեցին ի դասախօսութիւնս իւրեանց, եւ հիւանդութիւն միայն երբեմն առթեաց նոցա յետս մնալ ի պարտեաց: Ի պատճառս երկարատեւ հիւանդութեանն Պարոն Մ. Սիմէօնեան չկարաց ի Յունվարէ եւ այսր շարունակել զդասախօսութիւն իւր. սակայն ըստ ընկերական պարտեաց յանձն առին ոմանք ի դասատուաց ունել զտեղի նորա, որպէս Պարոն բժիշկ Տ. Գրիգորեան եւ Պարոն Աղէքսանդր Սիմէօնեան. նոյնպէս եւ ես յանձն առի զմետասան դաս. եւ այսպէս յերկրորդում մասին ուս. ամին ծանրանային յիմ վերայ 2 դասք ըստ եօթնեկաց:

Ճեմարանս ունի զիւր առանձին հիւանդանոց եւ զբժիշկ զՊարոն Տ. Գրիգորեան. անհրաժեշտ էր ունել եւ առանձին տեղի պահել դեղորայս, այլ յանցելումն ամի հարկեցաք բերել զդեղորայսն յԵրեւանայ, որ բազում անպատեհութեանց եղեւ առիթ[1]. իսկ յայսմ ամի ապսպարեցան դեղորայք առ ի բառնալ զանպատեհութիւնսն:

[1] Յանցեալ ամս ունէր Ս. Էջմիածինն և Ճեմարանն զառտնին

Ի վերջ տեղեկագրոյս պարտ է ինձ, Վեհ. Տէր, յարել եւ զայս, զի եւ մեք ամենեքին ոգեւորեալ եմք ի մի եւ նոյն նպատակ, յայտ է, արդիւնաւոր կացուցանել զՀաստատութիւնս, որում Վեհափառութիւն Ձեր, Հիմնադիրդ սորին յոչ ինչ խնայեցէք մինչեւ ցայսօր առ ի հասուցանել զայն յայս վիճակ՝ յորում գտանի: Տացէ՛ Աստուած, զի եւ յայս ամ եւ յայլ եւս բազում ամս ի խաղաղ եւ ի կանոնաւոր ընթացս յառաջ ընթանայցէ Հաստատութիւնս, տալ Ազգիս Հայոց եւ Հայաստանեայց Եկեղեցւոյ անդամս դաստիարակեալս ի բարոյական կրթութեան եւ ի հոգի ազգայնութեան ի պարծանս լրութեան ազգիս եւ ի յաւէրժական յիշատակ պանծալի Անուան Վեհափառ Հիմնադրիդ Ճեմարանիս:

ՁԵՐՈՅԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ԱՄՆԵԱԽՈՆԱՐՀ ԾԱՌԱՅ ԵՒ ՈՐԴԻ
Տեսուչ Գէորգեան Ճեմարանի
ԱՐԾԱԿ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

«Արարատ», 1882, № 11, էջ 389-412:

դեղարան, որ ըստ ինչ ինչ պատճառաց դադարեալ էր յանցելում ամի միայն, թէպէտ դարձեալ մսային ի դեղարանի կարևոր դեղք ինչ (ծանօթագրութիւն «Արարատ»-ի խմբագրութեան):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Հարություն ամիրա Պեզճյան** (1771-1834) – հասարակական, պետական նշանավոր գործիչ, ամիրա, Մահմուդ II սուլթանի խորհրդականն ու անձնական բանկիրը: Նրա նյութական միջոցներով են կառուցվել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի նոր շենքը, Ս. Փրկիչ Ազգային հիվանդանոցը և յոթ վարժարաններ:
2. **Կարապետ Գ Պալատեցի** (1783-1850) – Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1823-1831): Հեղինակել է «Լապտեր հոգւոյ» (Կ. Պոլիս 1826) և այլ երկասիրություններ, հիմնադրել վարժարաններ, մասնավորապես «Սուրբ Հռիփսիմեանց – Սուրբ Գայանեանց» օրիորդաց դպրոցը:
3. **Գրիգոր պատվելի Փեշտիմալճյան** (1774-1837) – նշանավոր մանկավարժ, բառարանագիր, փիլիսոփա: Գումգափուի «Ընծայարան» վարժարանի և Պեզճյան Մայր վարժարանի տնօրեն: Կարևոր դերակատարություն է ունեցել Գևորգ Դ-ի կրթության և հայացքների ձավորման գործում:
4. Պատրիարքական փոխանորդ (վեքիլ) Առաքել քահանան՝ քինախնդիր ու կոպիտ մի անձնավորություն, շարունակաբար ճնշել ու կոպտել է պատանի Գրիգորին, որը, սակայն, տոկունությամբ ու համբերությամբ տարել է ամեն մի դժվարություն և սիրով կատարել իր պարտականությունները:

5. **Պողոս վարդապետ** [ապագա պատրիարք՝ Պողոս Բ Թագթագյանը (1863-1869)], պատրիարքական փոխանորդությունը ստանձնել է 1832-ին: Նա չափազանց դրական է գնահատել փոխանորդության գրագրին և դարձրել իր օգնականը, խրախուսել նրա գրական փորձերը:

6. **Ստեփանոս արքեպ. Աղավնի** (Ստեփանոս Բ Աղավնի Պրուսացի Զաքարյան, 1777-1853), Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1831-1839, 1840-1841): Եռանդուն գործունեություն է ծավալել եկեղեցաշինության և դպրոցաշինության բնագավառներում, հիմնադրել Ազգային հիվանդանոցը: Հովանավորել է երիտասարդ Գրիգորին, հետագայում (1835 թ.) ձեռնադրել կուսակրոն քահանա:

7. **Մկրտիչ ամիրա Ճեզաիրլյան** (1805-1861) – մեծահարուստ, սադրազամ Ռեշիդ փաշայի բանկիրն ու անձնական բարեկամը, Կ. Պոլսի մաքսատան տնօրեն: Հովանավորել է պոլսահայ դպրոցական ու թաթերական ձեռնարկները:

8. Վրիպակ է. հայ կաթոլիկները, որպես Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանից անկախ և առանձին կրոնական համայնք Օսմանյան կայսրությունում ճանաչվել են 1829 թ. սեպտեմբերի 14-ին:

9. **Հակոբոս եպիսկոպոս** (Հակոբոս Գ Պալատեցի Սերոբյան) – Կ. Պոլսի Հայոց պատրիարք 1839-1840, 1848-1856:

10. **Կարապետ ամիրա Պալյան** (1800-1866) - արքունի ճարտարապետ, 26-ից ավելի արքունական նշանավոր կառույցների, սուլթանական պալատների հեղինակ (Թաքսիմ, Պեշիկթաշ, Դոլմաբահչե և այլն): Եղել է հայ մշակույթի հովանավոր, բազմաթիվ դպրոցների հիմնադիր:

11. **Աստվածատուր եպիսկոպոս** (1768-1846) - Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1841-1844) Աստվածատուր Բ Կոստանդնուպոլսեցի:

12. **Մատթեոս պատրիարք** (1802-1865) - Կ. Պոլսի Հայոց պատրիարք(1844-1848), հետագայում՝ Ամենայն Հայոց կաթողիկոս (1858-1865): Հեղինակ է բազմաթիվ կրոնադավանաբանական ու աստվածաբանական երկասիրությունների:

13. **Մաքսուտ և Ճանիկ ամիրաներ** - խոսքը արևմտահայոց մշակութային ու տնտեսական կյանքում կարևոր դերակատարություն ունեցած ամիրայական նշանավոր ընտանիքի ներկայացուցիչներ Փափազյան եղբայրների մասին է:

14. **Աբդուլ Մեջիդ I** – Օսմանյան կայսրության սուլթան (1839-1861):

15. Խոսքը Ամենայն Հայոց Կաթողիկոս (1843-1857) Ներսես Ե Աշտարակեցի Շահ - Ազիզյանի (1770-1857) կողմից 1824թ. Թիֆլիսում հիմնադրված Ներսիսյան դպրոցի մասին է:

16. Նկատի ունի ռուսական պետական և ռազմական նշանավոր գործիչ, Կովկասի փոխարքա իշխան Մ. Ս. Վորոնցովին (1782-1856):

17. **Մեհեմմեդ** - խոսքը օսմանյան սուլթան Մուհամմադ II Ֆաթիհի (1451-1481) մասին է:

18. **Սարգիս եպիսկոպոս** – Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1860-1861) Սարգիս Ե Ադրիանապոլսեցի Գույումճյան:

19. **Պողոս եպիսկոպոս** – Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1863-1869) Պողոս Բ Պրուսացի Թագթագյան (տե՛ս ծան. 5):

20. **Աբդուլ Ազիզ I** – Օսմանյան կայսրության սուլթան (1861-1876):

21. Գևորգ եպիսկոպոս Քերեստեճյանը միաձայն Ամենայն Հայոց կաթողիկոս է ընտրվել 1866 թ. սեպտեմբերի 15-ին Խաչվերացի հինգշաբթի օրը: Ալեքսանդր II ցարը ընտրությունը վավերացրել է նույն թվականի նոյեմբերի 23-ին:

22. **Ն. Պ. Իգնատև** (1832-1908) – ռուս դիվանագետ, պետական գործիչ: 1864-1877 թթ. Կոստանդնուպոլսում նախ դեսպանորդ, ապա՝ Ռուսական կայսրության դեսպան:

23. **Հակոբ Էֆենտի Նորատունկյան** (1812-1896) – Նորատունկյանների նշանավոր ընտանիքից, արքունի հացագործապետ, ազգային բարերար, հովանավորել է դպրոցաշինությանը:

24. **Սարգիս արքեպ. Ջալալյան** (1810-1879) - եկեղեցական ու մշակութային գործիչ: Եղել է Իմերեթիայի և Վրաստանի (1857-1863), ապա Ղարաբաղի (1867-1870) հայոց թեմական առաջնորդ: Գևորգ Դ կաթողիկոսի մերձավորագույն զինակիցը:

25. Խոսքը Մեծ իշխան, Կովկասի փոխարքա Միխայիլ Նիկոլայևիչի (1862-1882) մասին է:

26. **Ստեփան Փափազյան** (1839-1888) - արևմտահայ նշանավոր գրող, մանկավարժ, լրագրող:

27. **Ստեփանոս ավագ քահանա Մանդինյան** (1805-1876) – Ճանաչված մանկավարժ, Ներսիսյան դպրոցի երկարամյա ուսուցիչ:

28. **Ստեփանոս Նազարյանց** (1812-1879) – նշանավոր մտավորական, մանկավարժ, գրականագետ: Բարձր է գնահատել Գևորգ Դ կաթողիկոսի լուսավորչական գործունեությունը, առաջարկել իր աջակցությունը:

29. **Սիմեոն Ա Երևանցի** (1710-1780) - Ամենայն Հայոց կաթողիկոս (1763-1780): Գևորգ Դ կաթողիկոսը չափազանց բարձ է գնահատել Սիմեոն Երևանցու գործունեությունը, նրան համարել իր հոգևոր ծնողը:

30. **Պապա Համբարձում** – խոսքը երգահան, երաժիշտ, մանկավարժ, նոր հայկական ձայնագրության ստեղծող Համբարձում Լիմոնճյանի (1768-1839) մասին է:

31. **Նիկողայոս Թաշճյան** (1841-1885) - երաժշտագետ, երգահան, մանկավարժ: Գևորգ Դ կաթողիկոսի մերձավորագույն զինակիցներից:

32. Նկատի ունի «Ձայնագրեալ երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի» (1874), «Ձայնագրեալ շարական հոգեւոր երգոց» (1875), «Ժամագիրք» (1877), «Ձայնագրեալ քաղուածք օրհնութեանց» (1882) գրքերը:

33. **Պիոս Թ պապ** (1846-1878) – կաթոլիկական – հռոմեական եկեղեցու նշանավոր գործիչ: Հռչակել է պապի անսխալականության դոգման: Ուժեղացրել է կաթոլիական քարոզչությունը հայության շրջանում, որի դեմ հաջողությամբ պայքարել է Գևորգ Դ կաթողիկոսը:

34. Տվյալ ժամանակահատվածի Կիլիկիո և Աղթամարի կաթողիկոսությունների գահացանկը ըստ Մաղաքիա արքեպ. Օրմանյանի, հետևյալ տեսքն ունի՝

Աթոռ Կիլիկիո

Տեր Միքայել Բ Սսեցի Աջապահյան – 1833-1855

Տեր Կիրակոս Բ Սսեցի Աջապահյան – 1855-1866

Տեր Մկրտիչ Քեֆսիզյան Մարաշցի – 1871-1894

Աթոռ Աղթամարի

Տեր Պետրոս (Պյուլպյուլ) – 1858-1864

Տեր Խաչատուր Բ Շիրոյան – 1864-1895

35. **Մկրտիչ եպիսկոպոս Խրիմյան** (1820-1907) - ականավոր հոգևոր-եկեղեցական գործիչ, Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1869-1873), Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Վանեցի Խրիմյան (1892-1907):

36. **Մկրտիչ եպիսկոպոս** – խոսքը վերաբերում է Կիլիկիո Մկրտիչ Քեֆսիզյան Մարաշցի կաթողիկոսին:

37. **Ներսես եպիսկոպոս Վարժապետյան** (1837-1884) - եկեղեցական, հասարակական գործիչ, Կ. Պոլսի Հայոց պատրիարք (1874-1884):

38. Աղթամարի վերջին կաթողիկոս Խաչատուր Բ Շիրոյան (1864-1895):

39. Ամենայն Հայոց կաթողիկոս Հակոբ Դ Ջուղայեցին մահացել է 1680 օգոստոսի 1-ի կիրակի օրը Կ. Պոլսում: Հուղարկավորությունը տեղի է ունեցել մեկ օր անց՝ Բերայի հայկական գերեզմանոցում:

40. Չնայած սուլթանական արգելքին՝ թաղապետարանը տարիների ընթացքում աստիճանաբար զավթել է հայկական գերեզմանոցը, հարթեցրել և կառուցել զանազան շինություններ:

41. **Հովհաննես Ը Կարբեցի** (1762-1842), Ամենայն Հայոց կաթողիկոս (1831-1842):

42. **Մկրտիչ Սանասարյան** (1818-1889) – ռուսական պետական պաշտոնյա, մեծահարուստ, ազգային բարերար: Հովանավորել է դպրոցաշինությանը, Վանում հիմնադրել Մարիամյան, Կարինում՝ Սանասարյան և

այլ բազմաթիվ վարժարաններ: Նյութական հսկայական միջոցներ է տրամադրել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և մասնավորապես Գևորգյան ճեմարանին:

43. **Հովհաննես Հովնանյան** – պետական գաղտնի խորհրդական, մեծահարուստ, ազգային բարերար: Հիմնադրել և նյութապես աջակցել է բազմաթիվ դպրոցների, մասնավորապես Թիֆլիսի «Մարիամյան – Հովնանյան օրիորդաց դպրոցը»:Մերտ, բարեկամական հարաբերություններ է ունեցել Գևորգ Դ կաթողիկոսի հետ: Հատկանշական է, որ 1867 թ. օգոստոսին Ս. Պետերբուրգ ուղևորության ժամանակ Հայրապետին Մոսկվայում հյուրընկալել է Հովնանյան ընտանիքը: Ֆինանսական զգալի միջոցներ է տրամադրել հատկապես Գևորգյան ճեմարանին, ինչպես հիմնադրմանը, այնպես էլ կահավորմանը, կառուցել ճեմարանի ննջարանային մասնաշենքն ու սեղանատուն:

44. **Աբել արքեպս. Մխիթարյան** (1804-1873) – նշանավոր մշակութային, եկեղեցական ու հասարակական գործիչ, պատմաբան: Եղել է «Արարատ» ամսագրի հիմնադիր խմբագիրը: Հեղինակել է «Պատմութիւն մենաստանին Հառիճոյ ի Շիրակ» (1856), «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ» (1874) և այլ երկասիրություններ:

45. **Խորեն եպիսկոպոս Ստեփանե** (1840-1900) – հոգևոր-եկեղեցական և մշակութային նշանավոր գործիչ, մանկավարժ, խմբագիր: Մերտ համագործակցել է Գևորգ Դ կաթողիկոսի հետ: Դասավանդել է Գևորգյան ճեմարանում, խմբագրել «Արարատ» ամսագիրը:

46. **Անդրեաս աքեպս. Տեր-Անդրեասյան** (1834-1882) - եկեղեցական նշանավոր գործիչ, Գևորգ Դ կաթողիկոսի մերձավորագույն օգնականներից: Եղել է Մայր

Աթոռի մատենադարանապետ, վանական կառավարության նախագահ, Գևորգյան ճեմարանի տեսուչ:

47. **Մովսես Գ Տաթևացի** (Սյունեցի, 1578-1632) - Ամենայն Հայոց կաթողիկոս (1629-1632): Հայկական եկեղեցական կյանքի, մշակութային վերազարթոնքի հիմնադիր: Վերականգնել ու կառուցել է բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, հիմնադրել դպրոցներ:

48. **Խորեն արքեպս. Գալֆայան** (Նար Պեյ, 1832-1892) - եկեղեցական, հասարակական, մշակութային գործիչ, գրող, մանկավարժ: Ժամանակին Վեհափառ Հայրապետը մտադրություն է ունեցել Խորեն Գալֆայանին նշանակելու Գևորգյան ճեմարանի տեսուչ, սակայն հանգամանքները թույլ չեն տվել:

49. **Գաբրել արքեպս. Այվազովսկի** (Այվազյան, 1812-1880) - եկեղեցական նշանավոր գործիչ, մանկավարժ, խմբագիր, պատմաբան, Սինոդի անդամ: Գևորգյան ճեմարանի առաջին տեսուչ:

50. **Աբգարյան Հարություն** – Ճարտարապետ, հեղինակ է Կ. Պոլսում կառուցված մի քանի նշանավոր կառույցների: Վեհափառ Հայրապետի հետ ուներ անձնական մտերմություն, որի կողմից էլ 1869-ին հրավիրվել է Ս. Էջմիածին՝ Գևորգյան ճեմարանի շենքը կառուցելու: 1870 թ. չբացահայտված հանգամանքներում սպանվել է Վաղարշապատում:

51. **Սարգիս Պալյան** (1835-1899) - արքունի ճարտարապետ, կառուցել է ծովեզրյա արքունի ամենանշանավոր ապարանքները: Հիմնադրել է մի քանի հայկական դպրոցներ: Գևորգ Դ կաթողիկոսի վստահված անձը:

52. **Վահան ծ. Վարդապետ Բաստամյան** (1842-1881) – հոգևոր-եկեղեցական գործիչ, մանկավարժ, հայագետ: Գևորգյան ճեմարանի հիմնադիր ուսուցիչներից, 1878-

ից ժամանակավոր տեսուչ: Իրականացրել է Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակությունը (1884):

53. **Արիստակես արքեպ. Մեդրակյան** (Մելիք-Առաքելյան, 1845-1906) - եկեղեցական գործիչ, մանկավարժ, պատմաբան, Գևորգյան ճեմարանի առաջին ուսուցիչներից, տեսուչ (1891-1893): Հեղինակ է «Հայաստանեայց եկեղեցու պատկերայարգութիւնը» (1904) ուսումնասիրության:

54. **Գևորգ Վարդապետ Սուրենյանց** (1847-1930) – նշանավոր եկեղեցական, ազգային գործիչ, Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե (1911-1930): Գևորգյան ճեմարանի առաջին ուսուցիչներից:

55. **Սուքիաս արքեպս. Պարգյանց** (1837-1914) – հոգևոր-եկեղեցական նշանավոր գործիչ, բանասեր, մանկավարժ: Գևորգյան ճեմարանի առաջին ուսուցիչներից, տեսուչ (1895-1899): «Արարատ» ամսագրի խմբագրապետ (1897-1899):

56. «Երևանի արքունի ճարտարապետ» - խոսքը Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, կապիտան Ս. Ի. Վորոնցով – Վելյամինովի մասին է:

57. **Սիմոնականություն** – Որոշակի վարձի դիմաց հոգևոր աստիճան ձեռք բերելը:

58. **Ա. Հ. Տեր Ղուկասով** (1819-1881) – ռուսական բանակի զորավար, գեներալ-լեյտենանտ:

59. **Ի. Դ. Լազարև** (1820-1879) – ռուսական բանակի զորավար, գեներալ-լեյտենանտ: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ գլխավորել է Կարսի գրոհը և գրավումը:

60. **Մ. Տ. Լոռիս-Մելիքով** (1825-1888) - ռուսական պետական և ռազմական նշանավոր գործիչ, գեներալ-համիարգ: Դաղստանի զինվորական կառավարիչ, Դերբեն-

դի քաղաքապետ, Թերեքի մարզի պետ, Աստրախանի, Սարատովի, Սամարայի, Խարկովի նահանգապետ, ներքին գործերի նախարար:

61. Ակնարկը վերաբերում է Նոր Նախիջևանի քաղաքագլուխներ Կարապետ Հայրապետյանի և Հարություն Խալիբյանի, ինչպես նաև նրանց կողմնակիցների միջև 1860-ական թվականներին ծավալված անհաշտ պայքարին, որը խիստ բացասաբար էր անդրադարձել տվյալ գաղթավայրի հասարակական-քաղաքական և ազգային կյանքին վերաբերող բազում խնդիրների վրա:

62. **Ա. Մ. Գորչակով** (1798-1883) – ռուսական պետական նշանավոր գործիչ, դիվանագետ, արտաքին գործոց նախարար (1856-1882):

63. **Պ. Ա. Շուվալով** (1827-1889) – ռուսական պետական գործիչ, դիվանագետ, Ալեքսադր II կայսեր մերձավորագույն խորհրդականը:

64. Ավելի ուշ Գևորգ Դ կաթողիկոսի կյանքի և գործունեության առաջին շրջանի նկարագիրը ներկայացրել է Վեհափառի մտերիմներից Վահրամ արքեպս. Մանկունին (1846-1920): Նրա «Գևորգ Դ և իր ժամանակը» ուսումնասիրության առաջին մասը լույս է տեսել Փարիզում հրատարակվող «Վեմ» հանդեսում (1934-1937 թթ. համարներում, մնացել է անավարտ): 2004 թ. «Մուղնի» հրատարակությունը «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» մատենաշարով (Գիրք ԺԱ) լույս է ընծայել «Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի Քերեստեճեան. Կաթողիկոս Ամենայն հայոց (1866-1882)» մեծադիր հատորը (1024 էջ)՝ Սանդրո Բեհբուդյանի աշխատակցությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեծագործ Հայրապետի կենսապատումը (Պ. Հ. Հովհաննիսյան) 7

Գլուխ Ա. – Ծնունդ եւ մանկութիւն 17

Գլուխ Բ. – Վարդապետ եւ քարոզիչ 19

Գլուխ Գ. – Պրուսայի առաջնորդ 25

Գլուխ Դ. – Եպիսկոպոս 32

Գլուխ Ե. – Կ. Պոլսի պատրիարք 37

Գլուխ Զ. – Կրկին Պրուսայի առաջնորդ 42

Գլուխ Է. – Ս. Էջմիածին գալը 45

Գլուխ Ը. – Ժամանակի պահանջները կաթողիկոսից 48

Գլուխ Թ. – Անդրանիկ կոնդակը եւ ձեռնարկութիւնները եկեղեցու բարեկարգութեան եւ պահպանութեան համար 53

Գլուխ Ժ. – Սսոյ եւ Աղթամարայ կաթողիկոսութեանց խնդիրը 60

Գլուխ ԺԱ. – Եկեղեցու շահերի եւ գոյքերի պաշտպանութիւն եւ բարեկարգութիւն 69

Գլուխ ԺԲ. – Վանական կեանքի բարեկարգութեան հոգս 77

Գլուխ ԺԳ. – Վանական կառավարութիւն, տպարանական յանձնաժողով եւ «Արարատ» ամսագիր 80

Գլուխ ԺԴ. – Եկեղեցականների ժառանգութեան խնդիր 83
Գլուխ ԺԵ. – Դպրոցներ 86
Գլուխ ԺԶ. – Ժառանգաւորաց Ճեմարան 92
Գլուխ ԺԷ. – Արժանաւոր եկեղեցականներ ունենալու համար տարած հոգսերը 101
Գլուխ ԺԸ. – Անիրաւ յարձակումներից Մեծ Հայրապետի կրած վշտերը իւր կեանքի վերջին տարիներում 109
Գլուխ ԺԹ. – Ճանապարհորդութիւն դէպի Պետերբուրգ եւ այլ մանր ուղեգնացութիւններ ու օդափոխութիւններ. Բիւրականի ամառանոց 114
Գլուխ Ի. – Գէորգ Դ-ի հանդիսակատարութիւնները եւ նորա մահը 120

Հավելվածներ №№ 1-13 127

Ծանոթագրություններ 259

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՎԱՐ

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

Գևորգ Դ
Մեծագործ Կաթողիկոս
Ամենայն Հայոց

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ – 2014

Հրատարակչական բաժնի տնօրեն՝ Շահե վրդ. Անանյան

Հրատարակչական խորհրդի անդամներ՝ Տ. Գևորգ եպս. Սարոյան,
Տ. Զաքարիա վրդ. Բաղումյան,
Տ. Գարեգին աբդ. Համբարձումյան,
Ա. Մադոյան, Պ. Հովհաննիսյան,
Գ. Տեր-Վարդանյան

Սրբագրիչ՝ Լևոն սրկ. Սահակյան

Էջադրումը՝ Ղևոնդ քահանա Մայիլյանի

Թուղթ՝ օֆսեթ 80 գր., չափսը՝ 60x84 1/16,
ծավալը՝ 272 էջ, տպաքանակը՝ 300:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ

ԱՅԼ ԸՍՏ ՈՐՈՒՄ ԱՌ
ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ
ՈՒՄԱՆ ՀԱՐԿԱՒՈՐ ԷԻՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՔ
ՅՈՐՍ ԼԻՆԷԻՆ ՊԱՏՐԱՍՏԵԱԼ ԱՇԱԿԵՐՏԻՆ,
ՎԱՍՆ ՈՐՈՅ ԿԱՆԽԱՒ Ի ՀԻՄՆԱՐԿԵԼ
ՃԵՄԱՐԱՆԻՍ ԱՋԴԵՑԱՒ ՎԻՃԱԿԱՒՈՐ
ԱՌԱՋՆՈՐԴԱՅ ՌՈՒՍԱՍՏԱՆԵԱՅՑ ԲԱՆԱԼ
ԵՒ ՀԱՍՏԱՏԵԼ Ի ՎԱՆՕՐԱՅՍ ՎԻՃԱԿԱՅ
ԻՒՐԵԱՆՑ ՋԴՊՐՈՅՍ ԻԲՐԵՒ
ՋՆԱԽԱԿՐԹԱՐԱՆՍ ՋԻ Ի ԺԱՄԱՆԱԿԻՆ Ի
ՆՈՅՈՒՆՑ ԸՆՏՐԱՆՕՔ ԸՆԿԱԼՑԻՆ
Ի ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ, ՍԱԿԱՅՆ
ԸՍՏ ՆԿԱՏԵԼՈՅ ՄԵՐՈՅ ՅԱՐԴ ՈՉ ԳՈԼՈՎ
ԸՍՏ ԱՐԺԱՆԻՈՅՆ ԵՒ ԸՍՏ ՊԱՀԱՆՋՄԱՆ
ՊԱՏՐԱՍՏԵԱԼ Ի ՎԱՆՕՐԱՅՍ ԵՒ ՔԱՆՋԻ
ՃԵՄԱՐԱՆՆ ՏՐԱՄԱՐԴԵԱԼ Է ՈՒՆԵԼ
ԱՇԱԿԵՐՏՍ ԱՌ ԱՅԺՄ ԸՍՏ ՆԵՐԵԼՈՅ
ՆԻՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՅ ԵՕԹԱՆԱՍՈՒՆ
ԵՒ ՀԻՆԳ, ՈՅՐ ՍԱԿՍ ՅԱՅՍ ՆՈՒԱԳ ՄՆԱՅ
ՄԵՋ ԺՈՂՈՎԵԼ ՋՆՈՍԻՆ ԸՆՏՐԱՆՕՔ Ի
ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԴՊՐԱՆՈՑԱՅ
ԵՒ ԴՊՐՈՑԱՅ ՄԵՐՈՅ ԸՍՏ ՎԻՃԱԿԱՅ
ՌՈՒՍԱՍՏԱՆԵԱՅՑ ԹՈՒՈՎ ՔԱՌԱՍՈՒՆ
ԵՒ ԻՆՆ, ԻՍԿ ՅԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՎԻՃԱԿԱՅ
ՀԱՅՈՑ՝ ՔՍԱՆ ԵՒ ՎԵՑ ԸՍՏ ՅՈՒՅԱԿԻ
ԵԴԵԼՈՅ Ի ՍՄԻՆ: ԻՍԿ ԱՌ Ի ՋԱՌԱՋՍ
ԱՌՆԵԼՈՅ ԱՊԱԳԱՅ ԴԺՈՒԱՐՈՒԹԵԱՆՑ,
ՈՐՔ ՅԱՅՍՊԻՍԻ ԴԷՊՍ ԿԱՐԵՆ
ԸՆԴԱՌԱՋԵԼ ԿԱՆՈՆԱՒՈՐ ԵՒ ԱՆԽԱՓԱՆ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ, ՄՏԱԳԻՐ
ԵՄՔ ՈՉ ԱՆԱԳԱՆ ԱՌՆԵԼ ՋՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
ՋԻ ԱՌԱՋՆՈՐԴՔ ԵՒ ՓՈԽԱՆՈՐԴՔ ԻԲՐԵՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՇԻՆՔ ՋԱՆ Ի ԿԻՐ
ԱՐԿՅԻՆ ԲԱՆԱԼ ԱՆՊԱՏՃԱՌ Ի
ՅԱՐՄԱՐԱՒՈՐ ՎԱՆՕՐԱՅՍ... ՋՎԱՆԱԿԱՆ
ԴՊՐՈՅՍ ԵՒ ՋԱԿԶԲՆԱՒՈՐԵԱԼՍՆ Ի
ԲԱՐԵԿԱՐԳԻ ՎԵՐԱՇԵԼ... ԿԱՆՈՆԱՅՆ,
ԱՄՕՔ ՅԱՌԱՋ ԱՒԱՆԴԵԼՈՅՆ Ի ՄԷՆՋ Ի
ՀՐԱՀԱՆԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՊԱԳՐԵԼՈՅՆ ՅԷՋՍ
«ԱՐԱՐԱՏԱՅ», ՈՐՈՎ ԴԻՏԵԱՒ ԵԻՍ ՄԱՐԹ
ԻՏԷ Ի ՄԻՍՈՒՄ... ՋԱՇԱԿԵՐՏՍ ՏԵՍԱՆԵԼ
ՊՍԱԿԵԱԼ ՋԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՋՓԱՓԱԳ
ՍՐՏԻՑ ՄԵՐՈՅ ԿԱՄԵՑԱՒ ԿՈՆԴԱԿՍ ԱՅՍ
Ի ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՍԻՆՕԴԻԿ:

1874 ԱՄԻ ԱՊՐԻԼ
ԷՋՄԻԱԾԻՆ

9(47.925)
Հ-13
Հշ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ
(1874)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՑՔՈՎ ՄԵԿԱՐԱՆՈՒՄ

Վ. ՖԱՄԻԳԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿՈՄԿԱՐ

ՀԱՅԿԱՐ ԱԳՈՒՄ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ